# Մեր հարեւան Եվրոպական Միությունը

# ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ



## Our Neighbour the European Union - Great Britain

# Մեր հարեւան Եվրոպական Միությունը

# Մեծ Բրիտանիա

**(Our Neighbor the European Union: Great Britain)**

Երեւան
2009

ՀՏԴ 940:327
ԳՄԴ 63.3 (4ՄԲ)+66.4
Մ 660

Մեր հարեւան Եվրոպական
Մ660 Միությունը. Մեծ Բրիտանիա.-Եր._«Նշանակ»
ՍՊԸ, 2010.-232 էջ

## «Մեր հարեւան Եվրոպական Միությունը. Մեծ Բրիտանիա»

Ձեռնարկը կազմվել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատան աջակցությամբ "Արմենդիա" տեղեկատվական, վերլուծական գործակալության կողմից իրականացված ծրագրի շրջանակում: Ծրագիրն անդրադարձել է Միացյալ Թագավորության քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային կյանքին: Փորձ է արվել ներկայացնել նաեւ բրիտանացու այսօրը, խնդիրներն ու մոտեցումներն ապագային: Ծրագրում տեղ գտած բացառիկ հարցազրույցների հիմնական մասն իրականացվել է Լոնդոնում՝ խորհրդարանի անդամների, փորձագետների եւ հայտնի կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ձեռնարկը փորձում է հայ ընթերցողին հնարավորինս ընդգրկուն տեղեկատվություն փոխանցել Միացյալ Թագավորության վերաբերյալ, ուստի գրքում ներկայացված են ինչպես Մեծ Բրիտանիայի համառոտ պատմությունը, այնպես էլ քաղաքական համակարգը, քաղաքացիական հասարակության ինստիտուտները, թագավորության մշակույթը, գիտական կյանքը: Անդրադարձ է կատարվել հայ-բրիտանական կապերին ինչպես երկկողմ, այնպես էլ ԵՀՔ ձեւաչափով:

*ISBN 978-9939-827-12-4* *© “Արմենդիա“ ՏՎԳ*

*“Արմեդիա” ՏՎԳ-ն ծրագրի իրականացման եւ ձեռնարկի պատրաստման ընթացքում ցուցաբերված օժանդակության համար շնորհակալություն է հայտնում ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանությանը, Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակին, ինչպես նաեւ “Եվրոպական ինտեգրացիա” ՀԿ-ին խորհրդատվական աջակցության համար:*

**“Our Neighbor the European Union: Great Britain”**

The handbook was compiled by “Armedia” Information, Analytical Agency within the project realized with the support of the Embassy of the United Kingdom of Great Britain and Northern Ireland in Armenia. The project has reflected upon the political, social, economic, cultural life of Great Britain. An attempt was made to introduce also daily life of British people, their problems and approaches to future. Most of the exclusive interviews were conducted in London, with the participation of the Parliament members, experts, representatives of famous structures. The aim of the handbook is to present to the Armenian reader most comprehensive information about Great Britain. So, one can find brief history, as well as political system, civil society institutes, culture, science life of the United Kingdom. The handbook touches upon the Armenian-British relations both on bilateral and ENP formats.

*© “Armedia” IAA, 2009*

*“Armedia” IAA sends its gratitude to the Embassy of the United Kingdom of Great Britain and Northern Ireland, the British Council Armenia for support to realize the project and prepare the handbook, as well as to NGO “European Integration” for consultation support.*

# The introductory words

Britain joined what was then the European Economic Community in 1973, some 15 years after it was originally established. But the UK is now a full and enthusiastic member of the EU. As Prime Minister Gordon Brown has said, "The European Union is essential to the success of Britain and a Britain fully engaged in Europe is essential to the success of the European Union."

Why do we think this is so important? In brief, the EU has cemented peace between European nations after centuries of war. It is founded on shared values which are deeply rooted in our history, including democracy, clean and effective government, the rule of law, and respect for human rights. The EU has used this peace to build the largest single market in the developed world, bringing greater prosperity to all member states (including the UK). It offers a vital layer of cooperation in tackling those threats which cross geographical borders, from climate change and organised crime to the fight against terrorism. And it has a much more powerful voice in the world for the UK's interests than would be possible for Britain on its own. Our membership of the EU has also opened up new opportunities for UK citizens, who are now free to live, work and travel across Europe.

We strongly support enlargement of the EU. With each previous enlargement the EU has emerged stronger - both more confident and more capable of acting on the world stage. Further enlargement will enhance economic dynamism in the EU. It will improve our ability to meet the challenges and opportunities presented by globalisation. And it will help us tackle cross-border problems, which can only be challenged by international cooperation.

We also strongly believe in the value of the European Neighbourhood Programme to the EU and to our partner countries, including Armenia. The cooperation we already have benefits us all and lays the foundation for closer engagement in the future. It is important for us, as neighbours, to get to know each other and to understand better each other's values, history and culture. I hope this book will give you an introduction to Britain and encourage you to get to know us better.

***Charles Lonsdale***
*HM Ambassador, Yerevan*

# ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Բրիտանիան Եվրոպական տնտեսական համայնքին միացել է 1973 թվականին՝ կառույցի ձեւավորումից  տասնհինգ տարի անց: Սակայն Միացյալ Թագավորությունը (ՄԹ) լիիրավ ու խանդավառ անդամ է: Ինչպես ասել է վարչապետ Գորդոն Բրաունը. «Եվրոպական Միությունը կարեւոր է Բրիտանիայի հաջողության համար, իսկ Բրիտանիան կարեւոր է Եվրոպական Միության հաջողության համար»:

Ինչո՞ւ ենք մենք կարծում, որ դա այդքան կարեւոր է: Մի խոսքով՝ ԵՄ-ն կայուն  խաղաղություն է հաստատել եվրոպական երկրների միջեւ դարավոր պատերազմից հետո: Այն հիմնված է համատեղ արժեքների վրա, որոնք խորն արմատներ ունեն մեր պատմության մեջ՝ ներառյալ ժողովրդավարությունը, պարզ եւ արդյունավետ կառավարումը, օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: ԵՄ-ն օգտագործել է այս խաղաղությունը, որպեսզի կառուցի ամենամեծ ընդհանուր շուկան զարգացած աշխարհում՝ առավել մեծ բարգավաճում ապահովելով բոլոր անդամ պետությունների, այդ թվում ՄԹ-ի համար:  Այն էական համագործակցություն է առաջարկում՝ չեզոքացնելու սահմաններ չունեցող  սպառնալիքներ, ինչպիսիք են կլիմայական փոփոխությունները եւ կազմակերպված հանցավորությունը, ահաբեկչության դեմ պայքարը: ԵՄ-ի ձայնն աշխարհում ՄԹ-ի շահերի պաշտպանության տեսանկյունից ավելի բարձր է, քան Բրիտանիան կունենար միայնակ: ԵՄ-ին մեր անդամակցությունը նաեւ նոր հնարավորություններ է  բացել ՄԹ-ի քաղաքացիների համար, ովքեր այժմ ազատ կարող են ապրել, աշխատել ու ճամփորդել ամբողջ Եվրոպայում:

Մենք մեծապես խրախուսում ենք ԵՄ-ի ընդլայնումը: Յուրաքանչյուր ընդլայնումից հետո ԵՄ-ն ավելի է ուժեղացել՝ դառնալով թե՛ավելի ինքնավստահ, թե՛աշխարհում առավել կենսունակ: Հետագա ընդլայնումն ավելի կամրապնդի ԵՄ ճկունությունը: Այն կամրացնի մեր հնարավորությունները՝ դիմակայելու գլոբալիզացիայի առաջացրած մարտահրավերներին ու հնարավորություններին: Այն կօգնի մեզ նաեւ կարգավորելու միջսահմանային խնդիրները, որոնք կարող են հաղթահարվել միայն միջազգային համագործակցության միջոցով:

Մենք նաեւ մեծապես հավատում ենք Եվրոպական հարեւանության քաղաքականության նշանակությանը ԵՄ-ի, ինչպես եւ մեր գործընկեր երկրների՝ ներառյալ Հայաստանի համար: Մեր արդեն իսկ ունեցած համագործակցությունը օգնում է մեզ բոլորիս՝ սահմանելով հետագայում ավելի սերտ համագործակցելու հիմքեր: Մեզ՝ հարեւաններիս համար կարեւոր է ճանաչել եւ հասկանալ միմյանց արժեքները, պատմությունը եւ ձեզ խրախուսել ճանաչել մեզ ավելի լավ:

***Չարլզ Լոնսդեյլ***
*ՆՄ դեսպան, Երեւան*

■

As Head of Delegation of the European Commission, I would like to highlight the importance of the project "Our New Neighbour – the European Union", which has been developed and implemented by "Armedia" Information Analytical Agency. This kind of projects, which are aimed to introduce the European Union and its Member State countries to the Armenian society are always highly assessed by us. The Delegation always tries to raise EU awareness among Armenians. And all the efforts made by any organization, in this case by "Armedia", are very welcome by us.

Armenia is one of the countries included in the European Neighbourhood Policy, which aims to share the EU's common values of freedom, democracy, and the rule of law, respect for human rights, peace, prosperity and stability. Thus, the project "Our New Neighbour – the European Union" will help the process for the population get more information on EU, its Member States, as well as about the European values.

***Raul de Luzenberger****, Ambassador,*
*Head of the EC Delegation to Armenia.*

Որպես Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության ղեկավար՝ ես կցանկանայի ընդգծել «Մեր նոր հարեւանը՝ Եվրոպական Միությունը» նախագծի կարեւորությունը, որը մշակվել ու իրականացվել է «Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության կողմից: Նման նախագծերը, որոնց նպատակն է ներկայացնել Եվրոպական Միությունը եւ դրա անդամ պետությունները հայ հասարակությանը, միշտ բարձր են գնահատվում մեր կողմից: Պատվիրակությունը մշտապես ջանում է բարձրացնել ԵՄ-ի մասին հայերի տեղեկացվածությունը: Եվ ցանկացած կազմակերպության կողմից արված բոլոր ջանքերը, այս պարագայում՝ «Արմեդիա»-ի կողմից, մեծապես ողջունելի են մեր կողմից:

Հայաստանն այն երկրներից մեկն է, որոնք ընդգրկված են Եվրոպական հարեւանության քաղաքականության մեջ, որի նպատակն է կիսել ազատության, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ու մարդու իրավունքների, խաղաղության, բարգավաճման ու կայունության ԵՄ ընդհանուր արժեքները: Այսպիսով՝ «Մեր նոր հարեւանը՝ Եվրոպական Միությունը» նախագիծը կօժանդակի այն գործընթացին, որն ուղղված է բնակչությանը տեղեկացնելու ԵՄ-ի, դրա անդամ պետությունների, ինչպես նաեւ եվրոպական արժեքների մասին:

***Ռաուլ դը Լուցենբերգեր****, դեսպան,*
*ԵՀ պատվիրակության ղեկավար Հայաստանում*

■

***«Եթե տիրապետում եք գիտելիքի, թույլ տվեք մյուսներին այրել իրենց ճրագները դրանից»***

*Թոմաս Ֆուլլեր*
*(1608-1661թթ.)*

Ապրել ազատ, արժանապատիվ, պաշտպանված... Համամարդկային այս ձգտումը հատուկ է ինքնագիտակցման որոշակի մակարդակ ունեցող բոլոր անհատներին: Մարդու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարությունը, ազատականությունը գործիքներ են եւ սոցիումի կազմակերպման եղանակներ՝ կոչված ապահովելու համամարդկային այդ արժեքների կենսունակությունը: Ժամանակակից իմաստով «ժողովրդավարության» կենսագործունեության մեխանիզմները ծնվել եւ դարերով մշակվել են շարունակական պետականության հնարավորություն ունեցած երկրներում, երկրներում, որտեղ ուշ միջնադարյան եւ նոր ժամանակների լուսավորիչների հանճարի շնորհիվ անհատը հնարավորություն է ստացել գիտակցել իր բնական իրավունքը, դրա պաշտպանության եւ իրացման մեխանիզմներ ստեղծել: Մինչ Հին աշխարհը զարգանում էր իրեն հատուկ ռացիոնալիզմի այս տրամաբանությամբ, Արեւելքում ծաղկում էին կայսրությունները:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդին, կորցնելով պետականությունը դեռեւս միջնադարում՝ մենք զրկված ենք եղել սեփական արժեքները պաշտպանելու հնարավորությունից եւ ընդունել պարտադրվածը: Վերագտնելով մեր անկախությունը՝ այժմ ստիպված ենք լրացնել դարերի այդ բացը, վերակազմակերպել մեր՝ որպես սոցիումի կյանքը՝ ըստ մեր իրական ցանկությունների, ձգտումների եւ արժեքների: Այս գործընթացում մեզ համար անգնահատելի է կայացած ժողովրդավարությունների փորձը:

Եվրոպական երկրների ինտեգրման ու ԵՄ կազմավորման արդյունքում ավելի ու ավելի հաճախ է գործածվում «եվրոպական արժեհամակարգ» եզրույթը. ընդհանրական այս հասկացությունը, սակայն, միշտ չէ, որ բացահայտում է այդ համակարգի ձեւավորման եւ գործունեության մեխանիզմները, որոնց գոյությունը նաեւ այսօր ապահովում են եվրոպական ազգային պետությունները: Ուստի «եվրոպականն» առավել հստակ պատկերացնելու, մոդելի արդյունավետ կիրառման մեխանիզմներ մշակելու հարցում մեզ համար առավել ուսանելի կարող է լինել ԵՄ առանձին բաղկացուցիչների փորձը:

«Մեր հարեւան Եվրոպական Միությունը. Մեծ Բրիտանիա» ձեռնարկը հայ ընթերցողին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ «եվրոպա-

կանի» ինքատիպ բաղկացուցիչներից մեկին, որը թեեւ եվրաինտեգրման ժամանակակից գործընթացում ամենաակտիվ դերակատարներից չէ, սակայն եվրոպական արժեքների ձեւավորման ակունքում է կանգնած: Ձեռնարկը բավականին տեղեկատվական է հատկապես երիտասարդների համար. գրքում ներկայացված են բրիտանական տարբեր հիմնադրամների, կազմակերպությունների կրթաթոշակներ, որոնց նպատակը երիտասարդ ժողովրդավարություններում արդյունավետ կառավարողների սերունդ դաստիարակելն է, սոցիալական արդարության, ազատ շուկայական տնտեսության կայացմանը նպաստելը: Այս իմաստով՝ գրքում բավականաչափ տեղ է հատկացված Բրիտանական խորհրդի, Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի գործունեությանը, կրթական ծրագրերին, որոնցում ներգրավված է նաեւ Հայաստանը:

Ձեռնարկի միջոցով հայ ընթերցողը հնարավորություն է ստանում հետեւել ժամանակակից աշխարհի առաջատար երկրներից մեկի՝ Մեծ Բրիտանիայի պատմական զարգացման ընթացքին, ծանոթանալ քաղաքական համակարգի կառուցվածքին, մշակույթին, հայ-բրիտանական պատմական կապերին եւ ժամանակակից հարաբերություններին, Միացյալ Թագավորությունում հայկական համայնքի կյանքին:

ՀՀ ԱԺ եվրաինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, կարեւորելով նախաձեռնության նշանակությունը մեր երկրում ժողովրդավարության զարգացման գործում, հույս է հայտնում, որ այն կունենա իր շարունակությունը, իսկ հայ ընթերցողը հնարավորություն կստանա ծանոթանալ «եվրոպական» կոչվածի մյուս բաղկացուցիչներին՝ ամբողջականացնելով պատկերացումը արեւմտյան արժեքների, կենսակերպի, ժողովրդավարության ավանդույթների մասին:

***Ավետ Ադոնց***
*ՀՀ ԱԺ Եվրաինտեգրման հարցերի մշտական*
*հանձնաժողովի նախագահ*

# ԳԼՈՒԽ I

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



***Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը*** *պետություն է հյուսիսարեւմտյան Եվրոպայում: Տեղակայված է Բրիտանական կղզիների վրա, Եվրոպական մայրցամաքից բաժանված է Հյուսիսային ծովով, Պա դը Կալե եւ Լա Մանշի նեղուցներով: Միացյալ Թագավորության կազմում են Անգլիան, Շոտլանդիան, Ուելսը, որոնք զբաղեցնում են Մեծ Բրիտանիա կղզին, եւ Հյուսիսային Իռլանդիան: Մենը եւ Նորմանդական կղզիները Միացյալ Թագավորության դոմինիոններն են:*

*Տարածքը՝ 244 111 կմ²:*

*Բնակչությունը՝ շուրջ 58 970 100 (1998թ.):*

*Էթնիկ խմբերը՝ անգլիացիներ՝ 81,5 %, իռլանդացիներ՝ 2,4%, ուելսցիներ՝ 1,9%, օլսթերցիներ՝ 1,8%, հնդիկներ, պակիստանցիներ, չինացիներ, արաբներ, աֆրիկացիներ:*

## Պատմական ակնարկ

Մ.թ. 43 թվականից Բրիտանիան գտնվել է Հռոմի կայսրության տիրապետության ներքո: 410թ.-ին հռոմեացիներին կղզուց դուրս են մղում կելտերը, սաքսերը եւ մյուս ցեղերը: 1066թ.-ին Մեծ Բրիտանիայի փոքր թագավորությունները նվաճում է նորմանների զորապետ Վիլիամը՝ միավորելով մեկ պետության կազմում: 1215 թվականին Անգլիայի թագավոր Հովհան Անհողը ստորագրում է օրենքի գերակայություն ենթադրող իրավունքների երաշխիք՝ Magna Carta-ն (փաստաթուղթը մինչեւ այժմ Մեծ Բրիտանիայի սահմանադրության հիմնական մասերից է):

1338թ.-ին Անգլիան պատերազմ է սկսում Ֆրանսիայի դեմ, որը շարունակվում է ավելի քան 100 տարի (մինչեւ 1453թ.): Հարյուրամյա պատերազմի ավարտից հետո պատերազմ է սկսվում անգլիական գահի համար (Կարմիր եւ Սպիտակ վարդերի պատերազմ), որն ավարտվում է 1485թ.-ին Թյուդորների տոհմի հաղթանակով: Եղիսաբեթ I թագուհու իշխանության օրոք (1558-1603թթ.) Անգլիան վերածվում է ծովային հզոր տերության՝ գաղութներ նվաճելով տարբեր մայրցամաքներում: Իսկ 1603թ.-ին, երբ Շոտլանդիայի Ջեյմս VI արքան գահ է բարձրանում Անգլիայում Ջեյմս I անվամբ, Շոտլանդիան եւ Անգլիան փաստացիորեն միավորվում են: Սակայն Մեծ Բրիտանիայի Թագավորությունը հռչակվում է 1707թ.-ին՝ միավորման ակտի ստորագրումից հետո, որից հետո Լոնդոնը դառնում է միավորված պետության մայրաքաղաք: 1642-1649թթ.-ին Ստյուարտների թագավորական տան եւ խորհրդարանի միջեւ հակասությունները քաղաքացիական արյունահեղ պատերազմի են վերածվում, որի արդյունքում Մեծ Բրիտանիան հռչակվում է հանրապետություն՝ Օլիվեր Կրոմվելի գլխավորությամբ: Միապետությունը շուտով վերականգնվում

է, սակայն թագավորի իրավունքները զգալի սահմանափակվում են, եւ խորհրդարանը լիարժեք իշխանություն է ստանում: XVIIIդ.-ում Մեծ Բրիտանիան կորցնում է ամերիկյան 13 նահանգները, սակայն զգալիորեն ամրապնդում է դիրքերը Կանադայում եւ Հնդկաստանում: 1801թ.-ին թագավորությանը միանում է նաեւ Իռլանդիան: 1815թ.-ին Մեծ Բրիտանիան կարեւոր դեր է ունեցել նապոլեոնյան բանակի ջախջախման հարցում, ինչն ամրապնդել է նրա դիրքերը՝ որպես եվրոպական կարեւորագույն տերություն: Դրանից հետո Թագավորությունը գրեթե մեկ հարյուրամյակ ապրել է առանց պատերազմների՝ ընդլայնելով գաղութների սահմանները, որոնք հատկապես ծավալվում եմ Վիկտորյա թագուհու կառավարման տարիներին (1837-1901թթ.): Առաջին աշխարհամարտից հետո Մեծ Բրիտանիան տնտեսական ծանր վիճակում էր, ինչի հետեւանքով Իռլանդիայում ակտիվանում է ազատագրական պայքարը, եւ 1921թ.-ին կղզին անկախություն է հռչակում: Սակայն պատմական Օլսթեր գավառի ինը կոմսություններից վեցը շարունակում են մնալ Միացյալ Թագավորության կազմում: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո սրվում են Շոտլանդիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի ազգային խնդիրները: Հատկապես սուր պայքար է սկսվում Հյուսիսային Իռլանդիայում, որտեղ 1969թ.-ին փաստացիորեն պատերազմ էր ընթանում: 1994թ. օգոստոսին Իռլանդիայի Հանրապետական Բանակը (ԻՀԲ) հայտարարում է կրակը միակողմանի դադարեցնելու մասին: Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի կառավարությունների միջեւ ակտիվանում է խաղաղ բանակցային գործընթացը: Սակայն բանակցությունների ընթացքից դժգոհ՝ ԻՀԲ-ի զինյալները 1996թ.-ի սկզբում ակտիվացնում են զինված գործողությունները: Միաժամանակ Անգլիան եւ Իռլանդիան պարաձայնությունները քաղաքական ճանապարհով հարթելու համաձայնության են հասնում: 2005թ. հուլիսի 28-ին ԻՀԲ-ն հայտարարում է զինված պայքարից հրաժարվելու մասին: Երկու ամիս անց այն ամբողջովին զինաթափվում է:

Տարիներ շարունակ Բրիտանիան հսկայական տարածքների է տիրապետել, որոնցից աստիճանաբար հրաժարվել է 1945թ.-ից հետո: 1990-ականների սկզբում Միացյալ Թագավորությունը տնօրինում էր միայն 14 մանր հողային սեփականության, որոնցից ամենակարեւորն ու ամենախոշորը՝ Սյանտյագոն (Հոնկոնգ), 1997թ.-ին անցել է Չինաստանի իշխանության ներքո: Այնուամենայնիվ, Բրիտանիան շարունակում է գլխավորել 50 նախկին գաղութների եւ դոմինիոնների կամավոր ընկերակցությունը՝ Ազգերի Բրիտանական Համագործակցություն անվամբ: Պաշտոնապես Միությունը գլխավորում է միապետը, որը նախագահում է Համագործակցության կառավարությունների ղեկավարների՝ տարին 2 անգամ գումարվող խորհրդակցությունը:

## Պետական կառուցվածքը

### *Սահմանադրություն*

Մեծ Բրիտանիայի պատմական զարգացման առանձնահատկություններով է պայմանավորված երկրի սահմանադրության ոչ ավանդական բնույթը: Միացյալ Թագավորության հիմնական օրենքը միասնական ակտի տեսք չունի: Սահմանադրության առանձնահատկությունները վերաբերում են միայն ձեւին, այլ ոչ թե բովանդակությանը: Կոմբինացված, ոչ համակարգված հիմնական օրենքը կազմված է գրավոր եւ բանավոր մասերից, որոնք բավականին տարբեր աղբյուրներ ունեն: Գրավոր մասը ներառում է ստատուսային իրավունքը, այսինքն՝ տարբեր ժամանակահատվածներում (տարիների, դարերի ընթացքում) սահմանադրական բնույթի հարցեր լուծող խորհրդարանի ընդունած օրենքները եւ դատական որոշումները (նախադեպերը), որոնց առարկան եւս սահմանադրական բնույթի է: Թեեւ դատական վճիռները, ըստ էության, գրված են՝ արձանագրված են թղթի վրա, այնուամենայնիվ վերաբերում են իրավունքի բանավոր թեւին. «գրված օրենք» արտահայտությունը կիրառվում է միայն խորհրդարանի ընդունած օրենքների համար: Դատական որոշումները կազմում են ընդհանուր «իրավունքի» համակարգը, հիմնականում վերաբերում են քաղաքացիական իրավունքներին եւ ազատություններին, պետական տարբեր մարմինների հարաբերություններին: Դատական նախադեպերը բազմաթիվ են, առավել մեծ նշանակություն է տրվում դատական բարձր ատյանների վճիռներին՝ հատկապես երկրի բարձրագույն դատական մարմնի՝ Լորդերի պալատի որոշումներին, որոնք պարտադիր են բոլոր դատարանների համար:

Հիմնական օրենքի չգրված մասն են կազմում սահմանադրական համաձայնագրերը, որոնք իրավաբանորեն գրանցված չեն, սակայն կարգավորում են պետական կյանքի կարեւորագույն հարցեր: Այդ համաձայնագրերը կամ սովորութային իրավունքի համակարգը Մեծ Բրիտանիայում սահմանադրական իրավունքի հիմքն են համարվում: Սովորույթը տարիների ընթացքում ձեւավորված կանոնների ամբողջություն է, որոնք դատական պաշտպանվածություն չեն վայելում: Սովորութային իրավունքի մաս են, օրինակ, թագավորի արտոնությունները, որոնք ներառում են նախարարների նշանակման կարգի, կառավարության հավաքական պատասխանատվության, խորհրդարանը ցրելու, միջազգային պայմանագրերի ստորագրման մասին նորմեր: Գործնականում այս արտոնությունները միապետն իրականացնում է կառավարության կամ խորհրդարանի հավանությունը ստանալուց հետո միայն:

Խորհրդարանի ինքնիշխանությունը բրիտանական սահմանադրական իրավունքի հիմնարար սկզբունքն է: Պատմականորեն սահմանադրական համաձայնագրերը տարբեր ծագում ունեն: Դրանք կարող են

առաջանալ միջկուսակցական պայքարի հետեւանքով, հարմարեցվել ժամանակի պահանջներին:

Ստատուսային իրավունքը հատվածական բնույթ է կրում. սահմանադրական հարցերին վերաբերող խորհրդարանական ակտերը գերազանցում են 4000-ը, դրանց թիվն անընդհատ աճում է:

### *Ազգային կառավարություն*

Մեծ Բրիտանիայի սահմանադրությամբ երկրի ղեկավարման հարցում հանգուցային է «գահի իշխանությունը խորհրդարանում», այսինքն՝ միապետի, լորդերի եւ համայնքների պալատի միացյալ իշխանությունը, որոնք միասին կազմում են խորհրդարանը: Այս մարմինը բոլոր հարցերում, մարդկանց, հողերի նկատմամբ օրենքով նախատեսված գրեթե անսահմանափակ իշխանությամբ է օժտված: Նրա որոշումները կարող է վերանայել միայն հաջորդ գումարման խորհրդարանը: Սահմանադրական բնույթի կարեւորագույն փոփոխությունները իրականացվում են սովորական օրինաստեղծ գործունեության կարգով եւ բրիտանական դատարաններում բողոքարկման ենթակա չեն: Դրանք կարող է վիճարկել միայն եվրոպական 2 դատական ատյան. Եվրոպական դատարանը հետեւում է, որպեսզի պահպանվեն Եվրամիության օրենքներն ու պայմանագրերը, իսկ Ստրասբուրգի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հսկում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների պահպանումը:

### *Միապետություն*

Համաձայն Միացյալ Թագավորության՝ Գահաժառանգության ակտի (1701թ.)՝ միապետի որդիները գահը ժառանգում են ավագության սկզբունքով, արու զավակների բացակայության դեպքում այն փոխանցվում է ավագ դստերը: Գահին տիրելու իրավունք ունեն միայն բողոքականները:

Այժմ սյուզերենը Եղիսաբեթ II թագուհին է, որը գահ է բարձրացել 1953թ.-ին: Միապետը երկրի եւ վարչակազմի ղեկավարն է, զինված ուժերի գլխավոր հրամանատարը, Անգլիայի պաշտոնական եկեղեցու աշխարհիկ առաջնորդը: Միապետն ազգային միասնության կարեւոր խորհրդանիշ է: Գահին հավատարմության երդում են տալիս նախարարները, պետական ծառայողները, ոստիկաններն ու զինված ուժերը, երկիրը ղեկավարվում է Նորին Գերազանցության անունից: Վիկտորյա թագուհու ժամանակներից միապետը «թագավորում է», սակայն չի կառավարում, ունի 2 հիմնականում ձեւական արտոնություն՝ կարող է ցրել խորհրդարանը եւ նոր վարչապետ նշանակել: Պահպանվել է միապետի եւ վարչապետի խորհրդապտվական հանդիպումների ավանդույթը, որ տեղի է ունենում յուրաքանչյուր երեքշաբթի երեկոյան:

### *Օրենսդիր իշխանություն*

Բրիտանական պառլամենտը, որ ձեւավորվել է 13-14-րդ դարերում, համարվում է բոլոր խորհրդարանների նախահայրը, թեեւ Իսլանդիայի ալթինգը գումարվել է մ.թ. 930թ.-ին:

Ինչեւէ, Մեծ Բրիտանիայի օրենսդիր մարմինն այժմ երկպալատ խորհրդարանն է՝ կազմված Լորդերի (վերին) եւ Համայնքների (ստորին) պալատներից: Լորդերի պալատը ձեւավորվում է ժառանգականության սկզբունքով, ինչը ժամանակակից հեղինակավոր ժողովրդավարությունների համար եզակի երեւույթ է: Համայնքների պալատը Մեծ Բրիտանիայի քաղաքական կյանքի կենտրոնն է: Գրեթե բոլոր նախարարներն ընտրվում են Համայնքների պալատի անդամների շարքից: Ավանդաբար վարչապետը եւ նախարարների կաբինետի բարձրագույն պաշտոնյաները եւս պետք է խորհրդարանականներ լինեն: Մինչեւ 1911թ. երկու պալատներն էլ ձեւականորեն հավասար էին համարվում, թեեւ ավանդաբար նախապատվությունը տրվում էր Համայնքների պալատին: 1911թ.-ին լիբերալների կառավարությունը Խորհրդարանական ակտով ամրագրում է ստորին պալատի գերակայությունը՝ զգալիորեն սահմանափակելով Լորդերի պալատի լիազորությունները:

Համայնքների պալատն ընտրվում է համընդհանուր քվեարկության միջոցով, հնգամյա ժամկետով, ժամկետից շուտ այն կարող է ցրել վարչապետը՝ միապետի համաձայնությամբ: Համայնքների պալատը կարող է երկարացնել իր գործունեության ժամկետը, ինչպես Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Խորհրդարանը ցրելուց հետո համընդհանուր քվեարկություն է կազմակերպվում: Ընտրելու իրավունք ունեն Միացյալ Թագավորության՝ 18 տարին լրացած բոլոր հպատակները, ինչպես եւ ընտրատարածքներում գրանցված եւ քվեաթերթիկներում ընդգրկված Համագործակցության ու Իռլանդիայի Հանրապետության բնակիչներ: Ընտրություններին մասնակցելու իրավունք չունեն Լորդերի պալատի անդամները, բանտարկյալները, հոգեբուժարաններում գտնվող անձինք եւ նրանք, ովքեր ընտրախախտումների պատճառով դատարանի կողմից 5-ամյա ժամկետով զրկվել են ընտրելու իրավունքից:

Համայնքների պալատի անդամ կարող է դառնալ Միացյալ Թագավորության, Իռլանդիայի Հանրապետության կամ Համագործակցության երկրների՝ 21 տարին լրացած ցանկացած քաղաքացի՝ բացի Լորդերի պալատի անդամներից, հոգեւորականներից, հոգեկան հիվանդներից, որոշակի հանցագործությունների համար դատապարտված անձանցից եւ այլն:

20-րդ դարի վերջում Համայնքների պալատի անդամների թիվը 651-ից (1991թ.) հասել է 659-ի (1997թ.):

### *Գործադիր իշխանություն*

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի առաջնության սկզբունքը չի համապատասխանում քաղաքական կյանքի իրական պատկերին: Երբ միապետը հեռացել է իշխանությունից՝ ձեւականորեն պահպանելով գահը, սյուզերենի գործադիր լիազորությունները փոխանցվել են ոչ թե խորհրդարանին, այլ թագավորական նախարարներին, այսինքն՝ վարչապետին եւ շուրջ 20 նախարարներից կազմված կաբինետին: Վարչապետն ու կաբինետը խորհրդարանի կազմում են գտնվում եւ նրա անդամներն են համարվում: Թագավորն արտոնված է վարչապետին եւ նախարարների կաբինետին փոխանցել միջազգային համաձայնագրեր ստորագրելու, պատերազմ հայտարարելու, անվտանգության ուժերը ղեկավարելու, պետական ծառայությունը կարգավորելու, առանց խորհրդարանի հավանության, երբեմն նույնիսկ առանց տեղեկացնելու կադրային նշանակումներ անելու լիազորություններ: Ի տարբերություն ժամանակակից մյուս ժողովրդավարությունների՝ Մեծ Բրիտանիայի քաղաքական համակարգն օրենսդիր եւ գործադիր իշխանությունների հստակ տարանջատում չի ենթադրում:

Կաբինետի անդամները որոշում են կառավարության քաղաքական ուղեգիծը եւ դրա իրականացման համար պատասխանատու են խորհրդարանի առջեւ: Կաբինետի նախարարները նաեւ հիմնական պետքարտուղարությունների քաղաքական ղեկավարներն են: Նրանց օգնում են կրտսեր նախարարների թիմերը: Վարչապետն օժտված է լիազորությունների լայն շրջանակով, իրավասու է նշանակել եւ պաշտոնաթող անել կաբինետի անդամներին ու կրտսեր նախարարներին, նշանակում է պետական տարբեր պաշտոնյաների, վերահսկում է արտոնությունների եւ պատվավոր կոչումների շնորհման համակարգը:

1997 թվականից Մեծ Բրիտանիայի վարչապետի պաշտոնը զբաղեցնում էր լեյբորիստների առաջնորդ Թոնի Բլերը: 2005թ. մայիսին նա երրորդ անգամ անընդմեջ ապահովեց իր կուսակցության հաղթանակը խորհրդարանական ընտրություններում, ինչն աննախադեպ երեւույթ էր Լեյբորիստական կուսակցության համար: 2007թ. Թոնի Բլերի հրաժարականից հետո, Մեծ Բրիտանիայի վարչապետի, ինչպես եւ Լեյբորիստական կուսակցության առաջնորդի պաշտոնում նրան փոխարինում է Գորդոն Բրաունը:

### *Պետական ծառայություն*

Ժամանակակից Բրիտանիայում իշխանության եւս մեկ կենտրոն կա՝ վարչական էլիտան, որը հաճախ անվանում են «Ուայթհոլլ»: Բրիտանիայում բարձրաստիճան պաշտոնյաները՝ նախարարների մշտական տեղակալները, որոնք անմիջականորեն ղեկավարում են նախարարնե-

րի աշխատակազմերի գործունեությունը, եւ նրանց բարձրաստիճան գործընկերները կառավարության կազմի փոփոխմանը զուգահեռ չեն կորցնում իրենց պաշտոնները: Քանի որ Բրիտանիայում պետական ծառայությունը փաստացիորեն տարանջատված է քաղաքական պայքարից, պետծառայողներն ընտրվում են ազատ մրցութային հիմքով: Այս կառավարիչներին հաճախ անվանում են «մշտական կառավարություն»: Պետծառայողների պարտավորությունները բազմազան են. նրանք քաղաքական հարցերով խորհրդատվություն են ներկայացնում նախարարներին, կազմում են ելույթները եւ խորհրդարանի անդամների հարցումների պատասխանների նախագծերը:

1980-ական, 90-ական թթ.-ին՝ պահպանողականների կառավարման տարիներին, պետծառայողների շատ գործառույթներ փոխանցվել են հանրային անկախ գործակալություններին, որոնք հաշվետու են նախարարությունների առջեւ:

### Տեղական ինքնակառավարում

1990-ականների սկզբին Մեծ Բրիտանիայում գործում էր տեղական կառավարման 516 մարմին, որոնք տարբեր գործառույթներ էին իրականացնում՝ ամբողջովին ենթարկվելով իշխանության կենտրոնական մարմիններին:

### Դատական համակարգը

Միացյալ Թագավորության դատական գլխավոր մարմինը Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Գերագույն ատյանի վճռաբեկ դատարանն է, որը կազմված է դատավոր լորդերից (Լորդերի պալատի անդամներից)՝ լորդ-կանցլերի գլխավորությամբ: Լորդ-կանցլերի պաշտոնը, որ գոյություն ունի 605 թվականից, հնագույնն է բրիտանական կառավարությունում: Լորդ-կանցլերը Լորդերի պալատի խոսնակն է, դատական բարձրագույն պաշտոնատար անձը, իրավական հարցերով կառավարության գլխավոր խորհրդականը եւ նախարարների կաբինետի անդամ:

Բրիտանական դատական համակարգի հիերարխիայի հաջորդ աստիճանին է Վճռաբեկ՝ քաղաքացիական գերագույն դատարանը, որին հաջորդում են Արդարադատության բարձր դատարանն ու թագապատկան 90 դատարաններ, որտեղ քննվում են քրեական լուրջ հանցագործություններ՝ դատավորի եւ երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Սովորական քաղաքացին, սակայն, ամենայն հավանականությամբ, կկանգնի մագիստրատի կամ համաշխարհային դատավորի առջեւ, որի պաշտոնը հիմնվել է 1361թ.-ին: Համաշխարհային դատավորների մեծ մասն անվճար աշխատող քաղաքացիներ են՝ ընտրված հասարակութ-

յան տարբեր խավերից, որոնց նշանակում է լորդ-կանցլերը: Նրանք լսում են քրեական ոչ լուրջ գործերը: Քաղաքացիական փոքր գործերը լսվում են կոմսությունների դատարաններում, որտեղ նախագահում են համապատասխան կրթություն ունեցող դատավորներ:

Շոտլանդիան եւ Հյուսիսային Իռլանդիան դատական ուրույն համակարգեր ունեն: Քրեական լուրջ գործերի հարուցման մասին որոշումներ ընդունում է Թագապատկան դատախազությունը՝ դատախազական ծառայության ղեկավարի գլխավորությամբ:

### *Քաղաքական կուսակցությունները*

Մեծ Բրիտանիայի քաղաքական կուսակցությունների պատմությունը սկսվում է 17-րդ դարից: Այդ ժամանակ գոյություն ունեցող խորհրդարանական ընդդիմությունը ձեւավորում է վիգերի կուսակցությունը, իսկ թագավորի կողմնակիցներին կոչում են տորի: «Տորի» գելական լեզվով նշանակում է «ավազակ», իսկ «վիգ» անվանում էին շոտլանդացի քարոզիչ-երեցներին: Այս միավորումներից ոչ մեկը ժամանակակից իմաստով կուսակցություն չէր: Շուրջ 150 տարի տորիները հանդես են եկել պահպանողական դիրքերից՝ պաշտպանելով թագավորի իշխանությունն ու անգլիական եկեղեցին, ներկայացնելով հողատեր ազնվականության շահերը: Մինչդեռ վիգերն ուժեղ խորհրդարանի կողմնակից էին համարվում՝ հենվելով առեւտրով եւ արդյունաբերությամբ զբաղվող բուրժուազիայի վրա:

19-րդ դարի վերջին տորիներից ձեւավորվում է Պահպանողականների, վիգերից՝ Լիբերալ կուսակցությունը: Այս երկու ուժերը քաղաքական ասպարեզում գերակշիռ դեր են ունեցել մինչեւ 1920-ական թթ., երբ ներքին պառակտվածությունը լիբերալների անկման պատճառ դարձավ: Քաղաքական ասպարեզում վերջինիս փոխարինելու եկավ աշխատավորների շահերը ներկայացնող Լեյբորիստական կուսակցությունը:

Հետպատերազմյան շրջանի երկու հիմնական կուսակցությունները՝ Պահպանողական եւ Լեյբորիստական, բավականին կարգապահ եւ համախմբված կոալիցիաներ են: Նրանց հիմնական խնդիրը ընտրողների դատին մրցակցող ծրագրեր ներկայացնելն է եւ Համայնքների պալատում հաղթանակի դեպքում դրանք իրագործելը: Սակայն վերջին տասնամյակներում ուժեղանում է քաղաքական երրորդ ուժերի՝ հատկապես Լիբերալ-դեմոկրատականների կուսակցության ազդեցությունը, որը ձեւավորվել է 1988թ.-ին Լիբերալների եւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միավորման արդյունքում:

Մեծ Բրիտանիայում գործում են նաեւ մի շարք այլ քաղաքական ուժեր, որոնց թվում են «Ուղեցույց», «Լեյբորիստական բարեփոխում», «Ընկերություն հանուն սոցիալիզմի», «Ֆաբիանների ընկերակցություն» կուսակցությունները, «Սոցիալիստական ընկերությունների խմբերի ցանցը»:

Իրենց քաղաքական ուժերն ունեն նաեւ Ուելսը, Շոտլանդիան եւ Հյուսիսային Իռլանդիան: *(Առավել մանրամասն ընթերցեք «Մեծ Բրիտանիայի քաղաքական համակարգը եւ կուսակցությունները» գլխում:)*

## Տնտեսություն

Մեծ Բրիտանիան Գերմանիայից հետո  2-րդ խոշորագույն տնտեսությունն է Եվրոպայում: Այն համարվում է աշխարհի ամենագլոբալիզացված պետություններից մեկը: Մայրաքաղաքը՝ Լոնդոնը, աշխարհի երեք ամենախոշոր ֆինանսական կենտրոններից մեկն է Նյու Յորքից եւ Տոկիոյից հետո:

Բրիտանական տնտեսությունը հաճախ անվանում են անգլոսաքսոնական, որն իր մեջ ներառում է Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի եւ Հյուսիսային Իռլանդիայի տնտեսությունները:

1980-ական թթ.-ին՝ Մարգարեթ Թետչերի ղեկավարման տարիներին, արդյունաբերական եւ սպասարկման ոլորտներում պետությանը պատկանող կազմակերպությունների մեծ մասը, որոնք ազգայնացվել էին 1940-ականներին, մասնավորեցվեցին: Այժմ բրիտանական կառավարությանն են պատկանում միայն մի քանի արտադրություն կամ բիզնեսի տեսակներ:

Այժմ Միացյալ Թագավորության (ՄԹ) դրամը ֆունտ ստեռլինգն է: ՄԹ-ը մեկն է այն մի քանի պետություններից, որոնք դեռեւս հրաժարվում են միանալ միասնական արժույթի տարածքին եւ ընդունել եվրոն: Միացյալ Թագավորության կառավարությունը բազմաթիվ ուսումնասիրություններից հետո եկավ այն եզրակացության, որ ներքին գների տատանումները խոչընդոտում են անմիջապես եվրոյին անցում կատարելուն: Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄԹ-ի բնակիչների մեծ մասը դեռեւս դեմ է միասնական արժույթին:

Բացի սեփական չափանիշներից՝ ՄԹ-ը պետք է բավարարի նաեւ ԵՄ տնտեսական համապատասխանության չափանիշը (Մաաստրիխտի համաձայնագիր), մինչ նրան կթույլատրվի ընդունել եվրոն: Այժմ ՄԹ-ի բյուջեի տարեկան սղաճը ՀՆԱ-ի հանդեպ սահմանված շեմից բարձր է:

Ֆունտը եվրոյով փոխարինելը վիճելի է բրիտանական պետության համար, քանի որ, նախ՝ ֆունտը համարվում է բրիտանական ինքնավարության խորհրդանիշ, բացի այդ՝  քննադատների կարծիքով, եվրոյի շրջանառումը կարող է վնասել բրիտանական տնտեսությանը:

Միացյալ թագավորության 2007-2008 թթ. բյուջեն կազմել է մոտ 520 մլն ֆունտ ստեռլինգ:

ԵՄ մի շարք երկրներում եվրոյի շրջանառումից հետո ստեռլինգը դարձավ աշխարհի ամենահին արժույթը, որն օգտագործվում է մինչեւ այժմ:

Մինչեւ 1971թ. 1 ֆունտ ստեռլինգը բաղկացած էր 12 շիլինգից, մեկ շիլինգը՝ 12 պենսից: 1971 թ. դեսիմիլյացիայից (անցում հաշվարկման տասնորդական համակարգի) հետո 1 ֆունտը բաշխվում է 100 «նոր պենսի»: Նոր բառը մետաղադրամների վրա պահպանվեց մինչեւ 1981թ.-ը: Ստեռլինգի սկզբնական նշանը «₤» էր, հետագայում մեկ գիծը վերացավ, եւ այժմ նշանը «£» է:

«£» նշանը «LSD» հապավման առաջին տառն է, որը կազմված է լատիներեն «librae, solidi, denarii» բառերի սկզբնատառերից, ինչպես սկզբնական արժութային համակարգում համապատասխանաբար անվանվում էին ֆունտը, շիլինգը եւ պենսը: Առաջին թղթադրամային ստեռլինգներն Անգլիայի բանկի կողմից տպվել են 1694 թ.-ին:

Ստեռլինգը 3-րդ արժույթն է ԱՄՆ դոլարից եւ եվրոյից հետո, որով պահվում են համաշխարհային արժութային ռեզերվները:

ՄԹ-ի բյուջեն ամեն տարի բավականաչափ համալրվում է աճուրդներից ստացված գումարներով: ՄԹ-ի աճուրդները ամենահայտնիներից են աշխարհում, որտեղ կարելի է գնել շատ հին ու թանկարժեք նմուշներ:

### *Անգլիա*

Անգլիան ՄԹ-ի չորս տնտեսություններից ամենամեծն է: Այն թագավորության առավել արդյունաբերականացված երկիրն է: Անգլիան տեքստիլի եւ քիմիական ապրանքների շատ կարեւոր արտադրող է աշխարհում:

1990 թ.-ից ֆինանսական ոլորտը հետզհետե աճող դեր է ստանձնում Անգլիայի տնտեսությունում, արդյունքում Լոնդոնն աշխարհի ամենամեծ ֆինանսական կենտրոնն է այսօր: Բանկերը, ապահովագրական ընկերությունները եւ շատ այլ կարեւոր ֆինանսական հաստատություններ կենտրոնացած են հենց Լոնդոնում:

Բրիտանական ֆունտ ստեռլինգն Անգլիայի պաշտոնական արժույթն է: Լոնդոնում է գտնվում Անգլիայի բանկը:

Միջնադարում Անգլիան փայտի ամենամեծ արտահանողն էր Եվրոպայում: 18-րդ դարի վերջում տեղի ունեցած արդյունաբերական հեղափոխությունից հետո Անգլիան դարձավ աշխարհի ամենաարդյունաբերական երկիրը: Դա նաեւ Բրիտանիայի անդրծովյան ընդարձակման ժամանակաշրջանն էր, երբ Անգլիան հույսը դրել էր գաղութների վրա՝ բամբակ եւ ծխախոտ ներմուծելու համար:

Ծանր արդյունաբերությունը՝ ածխի, երկաթի արդյունահանումը եւ նավաշինությունը, նվազեցին 20-րդ դարի երկրորդ կեսին եւ փոխարինվեցին սպասարկման եւ hi-tech արդյունաբերություններով, ինչպիսիք են համակարգիչները եւ դեղագործական արտադրանքը:

Այսօր Անգլիան Եվրոպայի, նաեւ աշխարհի ամենահարուստ երկրներից մեկն է, ամենահարուստն է ՄԹ-ում:

Լոնդոնն աշխարհի ամենամեծ ֆինանսական կենտրոնն է: Այստեղ են գտնվում «London Stock Exchange»-ը (Լոնդոնի ֆոնդային բորսան՝ հիմնադրված 1773թ.-ին), «Lloyds of London»-ը (ապահովագրական ընկերություն) եւ «Bank of England»-ը (Անգլիայի բանկը): Այսօր Լոնդոնում գրասենյակներ ունեն 500 խոշորագույն բանկեր: «Alternative Investments Market»-ի (Այլընտրանքային ներդրումների շուկա) գործունեությունը վերջին տասնամյակի ընթացքում թույլ է տվել Լոնդոնին ընդարձակվել՝ որպես փոքր կազմակերպությունների համար միջազգային կենտրոն:

Բրիտանական տնտեսությունը վերջին տարիների ընթացքում ունեցել է տեւական տնտեսական աճի ամենաերկար շրջանը նախորդ 150 տարիների համեմատությամբ: Այն ԵՄ-ի ամենակայուն տնտեսություններից մեկն է, որտեղ գնաճը, անաշխատունակությունը եւ տոկոսադրույքները մնում են հարաբերականորեն ցածր մակարդակի վրա:

Մարդկային զարգացման ցուցանիշով այսօր Մեծ Բրիտանիան 16-րդ տեղում է:

Մեծ Բրիտանիայում բավականին զարգացած են գյուղատնտեսությունը, որսորդությունը, ձկնորսությունը եւ անտառային տնտեսությունը: Գյուղատնտեսությունը ինտենսիվ է եւ մեքենայացված: Այն արտադրում է անհրաժեշտ պարենի 60 տոկոսը՝ ընդհանուր աշխատուժի երկու տոկոսի օգտագործմամբ:

Արտադրության երկու երրորդը նվիրված է անասուններին, մեկ երրորդը՝ վարելի հատիկավորներին: Հիմնականում աճեցնում են ցորեն, գարի, վարսակ, կարտոֆիլ, շաքարի ճակնդեղ, միրգ եւ բանջարեղեն: Հիմնականում բուծում են խոշոր եղջերավոր անասուններ, հավ (Ֆրանսիայից հետո Միացյալ Թագավորությունը տնային թռչունների ամենամեծ մատակարարն է Եվրոպայում) եւ ոչխար: Գյուղատնտեսությունը ֆինանսավորվում է ԵՄ-ի Ընդհանուր գյուղատնտեսության քաղաքականության շրջանակում:

Անգլիան ունի նշանակալի, չնայած ծայրահեղ կրճատված ձկնորսություն: Բրիտանիայում կան ամենատարբեր տեսակի ձկներ՝ սոլից մինչեւ ծովատառեխ:

Արտադրության մեջ մեծ տեղ ունեն տրանսպորտային սարքավորումները, որոնք ներկայացված են 8 խոշորագույն մեքենա արտադրողներով՝ BMW, Ford, General Motors, Honda, Nissan, Toyota, Volkswagen: Մի քանի ընկերություններ արտադրում են երկաթուղային լոկոմոտիվներ եւ դրա հետ կապված այլ բաղադրիչներ: Այս ոլորտի հետ կապված են նաեւ օդատիեզերական եւ պաշտպանական սարքավորումները: Կարեւոր տեղ ունեն նաեւ էլեկտրոնիկան, ձայնային եւ օպտիկական սարքավորումնե-

րը, այդ թվում՝ հեռուսփացույցները, համակարգիչները, գիփական, օպփիկական սարքավորումները եւ այլն:

Քիմիկափները եւ դրանց վրա հիմնված ապրանքները նույնպես կարեւոր փեղ ունեն Անգլիայի արփադրության մեջ: Բավական հաջող է դեղագործական արփադրությունը՝ աշխարհում 2-րդ եւ 3-րդ ամենամեծ դեղագործական ընկերություններով՝ «Glaxo Smith Kline» եւ «Astra Zeneka»:

Կարեւոր ոլորփներ են պարենը, խմիչքը, ծխախոփը, փպագրությունը, հրափարակչությունը եւ փեքսփիլը:

Անգլիայի խոշորագույն արփադրողների ցանկում են այնպիսի աշխարհահռչակ ընկերություններ, ինչպիսիք են Unilever, Cadbury Schweppes, Tate & Lyle, British American Tobacco, Imperial Tobacco, EMAP, HarperCollins, Reed Elsevier, Ben Sherman, Burberry, French Connection, Reebok, Pentland Group, Umbro եւ այլ ընկերությունները:

### *Շոփլանդիա*

Շոփլանդիայի փնփեսությունը շափ է կապված ՄԹ-ի մնացյալ փնփեսության եւ եվրոպական փնփեսական փարածքի հեփ: Իրականում այն խառը փնփեսություն է: Արդյունաբերական հեղափոխությունից հեփո Շոփլանդիան ղեկավար դիրք էր զբաղեցնում նավաշինության, մանուֆակփուրայի ոլորփներում: Այսօր այն արփադրում է փեքսփիլ, վիսկի, ավփոբուսներ, ավիասարքեր, համակարգչային ծրագրեր, նավեր, միկրոպրոցեսորներ, ծառայություններ է մափուցում բանկային, ապահովագրության եւ հիմնադրամների ղեկավարման ոլորփներում:

Շոփլանդիայի պաշփոնական դրամը բրիփանական ֆունփ սփեռլինգն է:

Արդյունաբերական հեղափոխությունից հեփո Շոփլանդիան կենփրոնացավ ծանր՝ նավաշինություն, ածխի եւ երկաթի արդյունաբերության վրա: Բրիփանական կայսրության մեջ ընդգրկվելը թույլ փվեց Շոփլանդիային արփահանել իր ապրանքները ողջ աշխարհով մեկ: 20-րդ դարի երկրորդ կեսին ծանր արդյունաբերությունը սկսեց անկում ապրել, եւ Շոփլանդիայի փնփեսությունն անցում կափարեց դեպի փեխնոլոգիաների եւ ծառայությունների մափուցման վրա հիմնված փնփեսության:

Արփադրության կարեւոր ճյուղերից են բանկային եւ ֆինանսական ծառայությունները, կրթությունը, ժամանցը, կենսափեխնոլոգիաները, փրանսպորփային սարքավորումները, նավթն ու գազը, վիսկին եւ փուրիզմը:

Էդինբուրգը Շոփլանդիայի 1-ին եւ Եվրոպայի 6-րդ ամենախոշոր ֆինանսական ծառայությունների կենփրոնն է, որփեղ գփնվում են բազմաթիվ խոշոր ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ Շոփլանդիայի արքայական բանկը, որը Եվրոպայի երկրորդ ամենամեծ բանկն է:

Այստեղ հիմնականում աճեցնում են ցորեն, գարի, կարտոֆիլ: Շոտլանդիայի տարածքի մոտ 15 տոկոսն անտառային գոտի է, որի մեծ մասը հասարակական սեփականություն է: Անտառների առկայությունը թույլ է տալիս զբաղվել փայտի, թղթի արտադրությամբ:

Շոտլանդիայի ափերը ողողող ջրերն ամենահարուստներից են Եվրոպայում: Ձկնորսությունը տնտեսության բավական կարեւոր ճյուղերից մեկն է:

Այս երկիրն ունի էներգիայի ամենալավ պաշարներից մեկը Եվրոպայում եւ էներգիայի խոշորագույն արտահանողներից է:

Շոտլանդական վիսկին հավանաբար արտահանվող արտադրանքից ամենաճանաչվածն է: Վիսկիի արտադրությունը կառավարությանն ամեն տարի բերում է մոտ £ 1.6 մլրդ-ի եկամուտ: Վիսկի արտադրող տարածքներն ընդգրկում են Սփայսայդը եւ Այլեյ կղզին, որտեղ կա վիսկի արտադրող 8 գործարան: Դրանք կղզու համար աշխատատեղեր են ապահովում: Շատ տեղերում վիսկիի արտադրությունը սերտորեն կապված է զբոսաշրջության հետ, քանի որ գինու գործարանները ծառայում են նաեւ որպես տեսարժան վայրեր զբոսաշրջիկների համար:

Շոտլանդիան հիմնականում արտահանում է վիսկի, էլեկտրոնիկա եւ ֆինանսական ծառայություններ:

Այստեղ են գտնվում միջազգային 3 օդանավակայաններ՝ Գլազգոուի, Էդինբուրգի եւ Աբերդինի:

Ապրանքները հիմնականում արտահանվում են ԱՄՆ եւ ԵՄ, իսկ վերջերս՝ նաեւ Չինաստան, Թաիլանդ եւ Սինգապուր:

### *Ուելս*

Վերջին տարիներին Ուելսի ծառայությունների մատուցման ոլորտը ողջ ՄԹ-ի մակարդակով միջին զարգացածության վրա է: Կարդիֆը, Սվանեսան եւ Նյուփորթը համարվում են մանրածախ առեւտրի, հյուրանոցների եւ ռեստորանների, ֆինանսական եւ բիզնես ծառայությունների կենտրոններ:

Իր լեռնային լանդշաֆտով, բազմաթիվ ավազոտ ծովափերով՝ Ուելսը բավական գրավիչ վայր է զբոսաշրջիկների համար:

Ծանր արդյունաբերությունը, որը Ուելսի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր, բավականին նվազել է անցյալ դարի ընթացքում, սակայն դեռեւս պահպանվում է:

Մեծ Բրիտանիայի գրեթե ողջ սպիտակ եւ շերտավոր երկաթյա, ալյումինե ապրանքներն արտադրվում են Ուելսում: Հանքանյութի մեծ մասն արտահանվում է:

1980-90-ականներին բավական աճել է էլեկտրոնիկայի արտադրությունը Ուելսում գործող ավելի քան 130 հյուսիսամերիկյան եւ 35 ճապոնական ընկերությունների հաշվին:

Ուելսի տարածքի մոտ 80 տոկոսն օգտագործվում է գյուղատնտեսական նպատակով: Կանաչով եւ բլուրներով պատված տարածքի շնորհիվ անասնաբուծությունն ավելի տարածված է, քան հացահատիկավորների մշակումը:

Ուելսը հայտնի է իր ոչխարներով, որոնց թիվը շուրջ 10 միլիոնի է հասնում: Տարածքի 13 տոկոսը ծածկված է անտառներով:

Ձկների արտադրությունը կենտրոնացած է հիմնականում Բրիստոլի ծովածոցի երկայնքով: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը եւ ձկնորսությունը կազմում են Ուելսի տնտեսության միայն 1.5 տոկոսը:

20-րդ դարում ծանր արդյունաբերության կրճատումը բերեց գործազրկության աճի: Չնայած վերջին տարիներին գործազրկությունը բավական նվազել է, այն շարունակում է մնալ երկրամասի հիմնական խնդիրներից մեկը:

Միլֆորդ Հեյվնը Ուելսի առաջին եւ ՄԹ-ի 5-րդ ամենամեծ նավահանգիստն է, որն ունի նաեւ նավթի եւ բնական գազի խոշոր տերմինալ:

### *Հյուսիսային Իռլանդիա*

ՄԹ-ի ազգային տնտեսություններից ամենափոքրը Հյուսիսային Իռլանդիայինն է: Այն ավանդաբար ունեցել է արդյունաբերական տնտեսություն, որտեղ կարեւոր դեր են ունեցել նավագործությունը, պարանների/թելերի եւ տեքստիլի արտադրությունը: Տնտեսությունը բավական փոքր է, քանի որ Հյուսիսային Իռլանդիայի (ՀԻ) բնակչությունն ամենափոքրաթիվն է ՄԹ-ում:

1990-ականներին ՀԻ-ի տնտեսությունն աճեց ավելի արագ, քան ՄԹ-ինն ամբողջությամբ: 2007 թ.-ի ապրիլին Հալիֆաքս բանկի ուսումնասիրությունները պարզեցին, որ ՀԻ-ի բնակարանների միջին գները ամենաբարձրերից են Լոնդոնից, Անգլիայի հարավարեւելյան եւ հարավարեւմտյան շրջաններից հետո:

Գործազրկությունը նվազել է հիմնականում վերջին տարիներին եւ այժմ կազմում է մոտ 4.5 տոկոս՝ 1986 թ.-ի 17.2 տոկոսից հետո:

Հյուսիսային Իռլանդիայում 1960-1990-ականներին Յունիոնիստների եւ Ազգայնականների պայքարի հետեւանքով զգալի նվազել էին օտարերկրյա ներդրումները: Շատ վերլուծաբանների հավաստմամբ, պատճառը միջազգային եւ բրիտանական լրատվամիջոցների քարոզչությունն էր, որոնք փորձում էին Հյուսիսային Իռլանդիան ներկայացնել որպես պատերազմական գոտի:

Անասնաբուծությունը ՀԻ-ի խոշորագույն արդյունաբերություններից է: Գյուղատնտեսությունը մեքենայացված է՝ շնորհիվ աշխատուժի բարձր արժեքի, սեփական ներդրողների եւ ԵՄ Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության շրջանակում արվող մեծ ներդրումների: Հիմնականում մշակվում են կարտոֆիլ, գարի եւ ցորեն:

Ծանր արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացված է Բելֆաստում եւ քաղաքի շուրջ: Գլխավոր արտադրություններն են մեքենաների եւ սարքավորումների արտադրությունը, սննդի արդյունաբերությունը, տեքստիլի եւ էլեկտրոնիկայի արտադրությունը: Շատ կարեւոր են նաեւ թղթի, կահույքի, ավիասարքերի եւ նավաշինության արտադրությունները: ՀԻ-ն հայտնի է իր բարակ սպիտակեղենով, որն ամենաճանաչվածն է Եվրոպայում:

Զբոսաշրջությունը ՀԻ-ի տնտեսության կարեւոր մասն է կազմում: Մոտ ապագայում, խաղաղության գործընթացին համընթաց, զբոսաշրջությունը խոստանում է դառնալ ՀԻ-ի տնտեսության ամենազարգացած ճյուղերից մեկը:

ՀԻ-ի պաշտոնական արժույթը ֆունտ ստեռլինգն է, սակայն ՀԻ-ն իրավունքն ունի տպել նաեւ սեփական ստեռլինգային թղթադրամները, որոնք հավասարապես օգտագործվում են Անգլիայի բանկի թղթադրամների հետ միասին, սակայն ՄԹ-ի այլ շրջաններում երբեմն հրաժարվում են ընդունել դրանք:

ՀԻ-ն ունի լավ զարգացած տրանսպորտային ենթակառուցվածք: Այստեղ կան ընդհանուր առմամբ 24.820 կմ երկարությամբ ճանապարհներ: ՀԻ-ի երկաթուղային ցանցը հատկանշական է նրանով, որ ՄԹ-ի միակ երկաթգիծն է, որը կառավարվում է պետական կազմակերպության՝ Հյուսիսային Իռլանդիայի Երկաթուղիների կողմից, եւ միակն է, որը բեռներ չի տեղափոխում:

ՀԻ-ում կա քաղաքացիական 3 օդանավակայան՝ Belfast City, Belfast International, եւ City of Derry: Գլխավոր նավահանգիստներն են Port of Belfast-ը եւ Port of Larne-ը: Բելֆաստի նավահանգիստը Բրիտանական կղզիների գլխավոր նավահանգիստներից մեկն է:

## Էթնիկ կազմը, կրոնը, ազգային տոները

### *Էթնիկ կազմը*

Բրիտանական կղզիները բազմիցս հարձակումների են ենթարկվել մայրցամաքային Եվրոպայի նվաճողների կողմից: Զավթիչները՝ Բրոնզե դարի նվաճողներից, հռոմեացիներից, անգլերից, սաքսերից մինչեւ դանիացիներ եւ նորմաններ, հաստատվել են հարավային եւ արեւելյան ափամերձ շրջաններում՝ զբաղեցնելով գյուղատնտեսության համար

առավել պիտանի հողերը, բնիկներին քշելով դեպի արեւմուտքի եւ հյուսիսի լեռնային գոտիներ:

Նորմանդական նվաճումների ժամանակ Բրիտանական կղզիներն արդեն բաժանված էին անգլո-սաքսոնական (հովտային) եւ կելտական (լեռնային) գոտիների: Մինչ օրս Կորնուոլլում եւ Ուելսում, Շոտլանդիայում եւ Իռլանդիայում խոսում են կելտական լեզվի տարբեր բարբառներով: Լեռնային Բրիտանիայի կելտական բնակչությունը շարունակում է հպարտանալ իր առանձնահատուկ ծագմամբ:

### *Կրոնը*

Անգլիայի պաշտոնական եկեղեցին Անգլիկանականն է, որը 26 մլն հետեւորդ ունի: Շոտլանդիայի եկեղեցին կազմակերպված է երիցականության (պրեսբիտերականության) սկզբունքով եւ միավորում է 1 մլն հավատացյալների: Բողոքական մյուս եկեղեցիների հետեւորդների թիվը հասնում է 1.6 միլիոնի: Մեծ Բրիտանիայում՝ հիմնականում Հյուսիսային Իռլանդիայում, կա Հռոմի կաթոլիկ եկեղեցու 5 մլն հետեւորդ, 830 հազ. մահմեդական եւ հրեականության 400 հազ. հետեւորդ:

### *Ազգային տոները*

Բացի ավանդական (Ամանոր, Հելոուեն, Գարնան տոներ) եւ կաթոլիկ տոներից (Սուրբ ծնունդ, Զատիկ, Սուրբ Վալենտինի, Հովհաննես Մկրտչի, Սուրբ Պատրիկի, Բոլոր սրբերի օրեր)՝ բրիտանացիներն ունեն բազմաթիվ ազգային տոներ:

Եղիսաբեթ II թագուհու ծննդյան օրը՝ ապրիլի 21-ին, մամուլը, ռադիոն եւ հեռուստաընկերությունները շնորհավորում են նրան, սակայն հիմնական տոնակատարություններն ընթանում են հունիսի երկրորդ շաբաթ օրը, որը միապետի պաշտոնական ծննդյան օրն է համարվում: Այդ օրը թագուհու՝ Ուայթհոլի նստավայրում շքերթ է կազմակերպվում: Ավանդույթը ծնունդ է առել դեռեւս 17-րդ դարում: Արարողության ընթացքում թագուհին զորքի տեսչություն է անցկացնում, ինչից հետո երկրի ազնվական վերնախավին հրավիրում է պարահանդեսի:

1605թ. նոյեմբերի 5-ին մի խումբ դավադիրներ փորձել են պայթեցնել խորհրդարանի շենքը, որտեղ ներկա պետք է լինեին նաեւ կառավարության անդամները՝ Ջեյմս I թագավորը, թագուհին եւ գահաժառանգը: Գայ Ֆոքսն ու նրա կողմնակիցները դժգոհ էին կաթոլիկների հանդեպ թագավորի վերաբերմունքից եւ հույս ունեին, որ կառավարության ու արքայական ընտանիքի անդամների սպանությունից հետո կկարողանան տանձնել երկրի իշխանությունը: Դավադիրները վարձակալում են խորհրդարանի շենքի նկուղը, որտեղ խորհրդարանի նստաշրջանի բացումից առաջ Գայ

Փոքսը վառոդի փակառներ է թաքցնում: Սակայն դավադրությունը չի հաջողվում: Փոքսի կողմնակիցներից մեկը կաթոլիկների ծրագրի մասին պեղեկացնում է իր ազգականներից մեկին՝ լորդ Մոնթիգլին, որպեսզի նա չներկայանա խորհրդարան այդ օրը: Վերջինս դավադրության մասին հայտնում է թագավորին: Շուտով Գայ Փոքսին ձերբակալում են:

Շուրջ չորս հարյուրամյակ նոյեմբերի 5-ին բրիտանացիները խարույկներ են վառում՝ հիշատակելու խորհրդարանը պայթեցնելու անհաջող փորձը: Տոնից մի քանի օր առաջ Լոնդոնի փողոցներում կարելի է հանդիպել երեխաների՝ Գայ Փոքսի նմանությամբ պատրաստված խրտվիլակներով, որոնք գիշերն այրվում են խարույկում:

Հունիսի 22-ին բրիտանացիները նշում են Սուրբ Թոմաս Մորի՝ քաղաքական գործիչների եւ պետական պաշտոնյաների հովանավորի օրը: Թոմաս Մորը (1478-1535թթ.) զբաղեցրել է Անգլիայի լորդ-կանցլերի պաշտոնը Հենրիխ III թագավորի օրոք: Հրաժարվելով վերջինիս ճանաչել որպես նորաստեղծ Անգլիկանական եկեղեցու առաջնորդ՝ լորդ-կանցլերը թագավորի զայրույթն է առաջացրել: Մորին մեղադրել են դավաճանության համար եւ գլխատել: 1935թ.-ին նա սրբացվել է որպես հավատքի մարտիրոս՝ դառնալով սրբերի շարքը դասված առաջին քաղաքական գործիչը:

## Մեծ Բրիտանիայի խորհրդանիշերը

«Անգլիացիները ճամփորդում են ոչ թե այլ երկրների ծանոթանալու, այլ արեւ փեսնելու համար»,- կատակում է Սեմյուել Բաթլերը:

Վատ եղանակն ու անգլիական նուրբ հումորը թերեւս առաջինն են, ինչի հետ ասոցացվում է Մեծ Բրիտանիան նույնիսկ այն մարդկանց համար, ովքեր երբեւէ չեն եղել այդ երկրում: Մշուշոտ Ալբիոնի այս առանձնահատկությունը տեղ է գտել նաեւ Միացյալ Թագավորության մշակույթի, սպորտի եւ ԶԼՄ-ների նախարարության կազմած երկրի խորհրդանիշերի ցուցակում:

«Ամենաանգլիական» երեւույթների այդ շարքում տեղ են գտել այնպիսի արտասովոր առարկաներ ու երեւույթներ, ինչպիսիք են «Օքսֆորդի անգլերեն բառարանը», անգլիական պինտան[1], Ուիլյամ Բլեյքի եւ Չարլզ Հուբերտի «Երուսաղեմ» երգը:

Այնուամենայնիվ, ցուցակը գլխավորում է Օքսֆորդի համալսարանի մաթեմատիկոս Լյուիս Քերոլի «Ալիսան հրաշքների աշխարհում» ման-

1 Անգլիական չափման համակարգում ծավալի չափի միավոր: Մեծ Բրիտանիայում 1 պինտան հավասար է 0,568 լիտրի, ԱՄՆ-ում՝ 0,473լ՝ հեղուկների համար, եւ 0,55լ՝ սորուն մարմինների համար

կական վեպը, որի միջոցով անգլիական մշակույթը նաեւ այսօր շարունակում է ճանաչելի դառնալ աշխարհի շատ փոքրիկների: Եվ, իհարկե, ի՞նչ մանկություն առանց Ռոբին Հուդի արկածների: Բոլորի կողմից սիրված այս ավազակը անգլիական միջնադարյան ասքերի ու առասպելների գլխավոր հերոսն է: Անպառային ավազակի մասին առասպելը ծնվել է գարնանային վերածննդի ոգին ներկայացնող հին ժամանակաշրջանի կերպարներից, մինչդեռ նրա սիրեցյալ Մերիենը խորհրդանշում է Թագուհու գահակալությանը նվիրված մայիսյան փոնակապարությունները:

Ռոբին Հուդի առասպելը ծնունդ է տվել զուտ անգլիական եւս մի երեւույթի, որ կոչվում է Morris dancing (Մորիսյան պար): Մայիսյան յուրաքանչյուր օր Անգլիայի գյուղական «փաբերի» (պանդոկների) առջեւ կարելի է տեսնել պարօրինակ հանդերձներով մարկանց, ովքեր ցատկոտում են, թափահարում թաշկինակներն ու ցուպերը, զանգակները... Գարնանամուտը տոնելու ժողովրդական այս ավանդույթը ձեւավորվել է 15-րդ դարում, ժամանակակից անգլիացիներին այն հայտնի է դարձել 19-րդ դարի ժողովրդական երաժշտագետ Սեսիլ Շարփի շնորհիվ:

Ի դեպ, բրիտանական «փաբերի» մասին. մշուշոտ Ալբիոնի բնակիչները հայտնի են ինչպես թեյախմության, այնպես էլ գարեջրի հանդեպ իրենց մեծ սիրով: Իսկ գարեջուր ըմպելու ամենասիրված վայրը բրիտանացիների համար «փաբն» է: Անգլիայի քաղաքներում, ավաններում, գյուղերում շուրջ 60 000 նման հաստատություն կա: «Փաբի» ամբողջական անվանումը՝ English public house (հասարակության անգլիական տուն), լավագույնս արտահայտում է այդ հաստատության էությունը, որտեղ անգլիացիները, հանգիստն անցկացնելուց զատ, հնարավորություն ունեն շփվել ընկերների, ծանոթների հետ, փոխանակել հետաքրքիր նորություններ, բինգո կամ պոկեր խաղալ:

Մեծ Բրիտանիայի ոչ պաշտոնական խորհրդանիշերից է նաեւ լոնդոնյան Clock Tower-ը՝ իր հայտնի Big Ben-ով, որով Թագավորությունը ճանաչելի է հատկապես օտարերկրացիներին: Big Ben-ի այս կարգավիճակը մեծ մասամբ լրատվամիջոցների աշխատանքի արդյունք է: Փորձելով ներկայացնել Միացյալ Թագավորությունը ոչ բրիտանաբնակ հանրությանը՝ հեռուստատեսության աշխատակիցները հաճախ ցուցադրում են Clock Tower-ը՝ առջեւի պլանում կարմիր երկհարկանի ավտոբուսով կամ ձիակառքով:

Ի դեպ, Լոնդոնում գրեթե 1 000 ավտոբուսային ճանապարհ կա, որոնցով հիմնականում կարելի է երթեւեկել Routemaster երկհարկանի ավտոբուսներով: Մայրաքաղաքի տեսարժան վայրերին կարելի է ծանոթանալ առանց տանիքի երկհարկանի ավտոբուսներով երթեւեկելիս:

Մայրաքաղաքը խորհրդանշող առարկաներից են նաեւ փոստարկղերն ու հեռախոսախցիկները, որոնց վրա պատկերված է միապետութ-

յան խորհրդանիշ թագը՝ երբեմն միապետի անվանապառերով: Լոնդոնի փողոցներում այսօր էլ կարելի է VR (Victoria Regina - թագուհի Վիկտորյա) and GR (Georgeus Rex - թագավոր Գեորգ) անվանապառերով փոսփարկղեր գտնել:

Հետաքրքիր է նաեւ Մեծ Բրիտանիայի պետական խորհրդանիշերի պատմությունը: Թագավորության դրոշը, որը հայտնի է Union Jack (Միավորված Ջեք) կամ Union Flag (Միավորված դրոշ) անվանումներով, սբ. Գեորգի, սբ. Էնդրյուի եւ սբ. Պատրիկի դրոշների համադրության արդյունք է: Սբ. Գեորգի դրոշը կարմիր խաչ է սպիտակ ֆոնի, սբ. Էնդրյուինը՝ սպիտակ անկյունագծային խաչ՝ կապույտ ֆոնի, եւ սբ. Պատրիկինը՝ կարմիր անկյունագծային խաչ՝ սպիտակ ֆոնի վրա:

Երբ 1603թ. Շոտլանդիայի Ջեյմս VI արքան Անգլիայում թագադրվեց Ջեյմս I անվամբ, երկու թագավորությունները միավորեց նոր խորհրդանիշի ներքո, որը սբ. Գեորգի եւ սբ. Էնդրյուի դրոշների համադրությունն էր: Նավատորմն այն շուտով անվանեց The Union Jack (բրիտանացիները jack են անվանում նավի հետնամասում ծածանվող փոքրիկ դրոշակը), որը պետական այս խորհրդանիշի ոչ-պաշտոնական անվանումը դարձավ: 1801թ.՝ թագավորությանը Իռլանդիայի միավորումից հետո, Գեորգ III արքան նորացնում է պետական դրոշը՝ այն հարստացնելով սբ. Պատրիկի Խաչով: Այսպիսով՝ Մեծ Բրիտանիայի պետական դրոշը խորհրդանշում է Անգլիայի, Շոտլանդիայի, Իռլանդիայի եւ Ուելսի միությունը (թեեւ վերջինի խորհրդանիշն այստեղ ներկայացված չէ, քանզի Ջեյմս I-ի կողմից այն գործածության մեջ մտցնելու պահին Ուելսն արդեն միավորված էր Անգլիային):

Որեւէ երկրի կամ տարածքային միավորի դրոշի անկյունում Union Jack-ը նկատելով՝ կարող եք համոզված լինել, որ տարածքային այդ միավորը Բրիտանական Համագործակցության անդամ է. այդպիսին են Նոր Զելանդիայի, Ավստրալիայի, Կանադայի Օնթարիո, Մանիթոբա եւ Բրիտանական Կոլումբիա նահանգների դրոշները:

Union Jack-ը բրիտանական խորհրդանիշերից կարեւորագույնն է համարվում: Դրոշի ճիշտ դիրքում սբ. Էնդրյուի խաչը կազմող սպիտակ անկյունագիծը սկսվում է դրոշափայտին կից վերին անկյունից: Հակառակ դիրքում, երբ սպիտակ լայն եզրագիծը ներքեւում է, այն սովորաբար աղետ է ազդարարում: Նման դիրքում բիտանական դրոշը սովորաբար հանդիպում էր բաց ծովում կամ պատերազմի ժամանակ, երբ զինված ուժերը շրջափակման մեջ էին հայտնվում:

Թագավորության միավորումը խորհրդանշում է նաեւ պետական զինանշանը, որի ձախ կողմում անգլիական Առյուծն է, աջում՝ շոտլանդական Միաեղջյուրը. վերջինը շղթայակապ է, քանի որ, ըստ միջնադարյան

հավապալիքների, ազապ Միաեղջյուրը չափազանց վտանգավոր կենդանի է, որին կարող է սանձել միայն կույսը: Նրանց ձեռքերում է Թագավորությունը պաշտպանող վահանը:

Զինանշանը եզրագծում են հետեւյալ նշանաբանները. Dieu et mon droit (Աստված եւ իմ իրավունքը) եւ Honi soit qui mal y pense (Չարիք նրան, ով չար է մտածում):

Մեծ Բրիտանիայի ազգային հիմնը՝ «Աստված պահպանի Թագավորին (Թագուհուն)» երգը, գրել է Թոմաս Ավգուստին Արնեն (1710-1778թթ.), այն առաջին անգամ հնչել է 1745թ.՝ Անգլիա Յակոբիտների ներխուժման ժամանակ: Փորձելով բրիտանական գահին վերականգնել Ստյուարտների շոտլանդական տոհմը՝ Յակոբիտների զորքը Չարլզ Էդուարդ Ստյուարտի գլխավորությամբ, որը հայտնի է նաեւ Արքայազն Չարլի կամ Երիտասարդ Հավակնորդ մականվամբ, 1745թ. ներխուժում է Անգլիա: Ապստամբներին հաջողվում է ջախջախել Գեորգ II-ի ուժերը Փրեստոնփենսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Արքայազն Չարլին թագավոր է հռչակվում Փրիստոնի հրապարակում եւ շուտով հասնում Դերբի:

Յակոբիտների ներխուժումը սպառնալիք էր բրիտանական միապետությանը, ահա թե ինչու օրհներգի տեքստը հիշեցնում է աղոթք՝ ի բարօրություն միապետի:

Ի վերջո, երկինքն արձագանքում է անգլիացիների աղոթքներին, եւ Յակոբիտները վերջնական պարտություն են կրում 1746թ. ապրիլի 17-ին Քելդենի ճակատամարտում:

# ԳԼՈՒԽ II

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



# ՄԱՍ I
# ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՄԻՋՆԱԴԱՐ

Մեծ Բրիտանիայի աշխարհագրական առանձնահատուկ դիրքը նրան միշտ առանձնացրել է եվրոպական մյուս երկրներից:

Բրիտանիան միշտ չէ, որ կղզի է եղել. նա դարձել է այդպիսին միայն Սառցե երկրորդ դարաշրջանի ավարտից հետո, երբ սառույցը հալչելով ջրասույզ է արել այժմյան Լա Մանշի եւ Հյուսիսային ծովի ցածրադիր տարածքները: Բրիտանական կղզիների բնակեցման առաջին ապացույցները՝ կայծքարային գործիքները, մոտավորապես մ.թ.ա. 250 000 թվականին են վերաբերում: Սակայն հերթական սառեցման հետեւանքով ընդհատվեց կյանքը կղզիներում եւ վերսկսվեց միայն մ.թ.ա. 50 000 թ.-ին, երբ կղզիներ ժամանեցին ժամանակակից բրիտանացիների նախնիները:

Մ.թ.ա. 5 000թ.-ին Բրիտանիան վերջնականապես վերածվեց կղզու՝ բնակեցված որսորդների եւ ձկնորսների փոքր ցեղերով:

Մ.թ.ա. 3 000թ.-ին կղզի ժամանեցին առաջին գաղթականները, որոնք զբաղվում էին գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ եւ խեցեգործությամբ: Հնարավոր է՝ նրանք Բրիտանիա են տեղափոխվել Իսպանիայից կամ նույնիսկ Հյուսիսային Աֆրիկայից:

Նրանցից հետո՝ մ.թ.ա. 2 400թ.-ին, կղզի տեղափոխվեցին նոր ցեղեր, որոնք հաղորդակցվում էին հնդեվրոպական լեզուներից մեկով եւ բրոնզե գործիքներ էին պատրաստում:

## Կելտեր

Մ.թ.ա. մոտ 700թ.-ին Բրիտանիա են ժամանել կելտերը՝ բարձրահասակ, կապույտ աչքերով, շիկահեր: Հնարավոր է՝ նրանք գաղթել են Կենտրոնական Եվրոպայից կամ նույնիսկ Ռուսաստանի հարավից: Կելտերը գիտեին երկաթ մշակելու եւ առավել կատարելագործված զենք պատրաստելու ձեւը, ինչը կղզու հին բնակիչներին ստիպեց տեղափոխվել արեւմուտք՝ Ուելս, Իռլանդիա, ինչպես եւ Շոտլանդիա: Հաջողություննն ամրապնդելու համար կելտերը շարունակում էին տեղաշարժվել կղզու տարածքով՝ բնակության մշտական վայր փնտրելով:

Կելտերը բնակվում էին առանձին ցեղերով, որոնք գլխավորում էր զորականների դասը: Դրանցից առավել հզոր էին հոգեւորականները՝ դրուիդները, որոնք չգիտեին կարդալ եւ գրել, ուստի անհրաժեշտ բոլոր գիտելիքները՝ պատմության, բժշկության եւ այլ ոլորտների մասին, ձեռք էին բերում բանավոր:

## Հռոմեացիներ

Թեեւ Հուլիոս Կեսարը բրիտանական կղզիներ է ժամանել մ.թ.ա. 55թ.-ին, հռոմեացիներին հաջողվել է Բրիտանիան զավթել մեկ դար անց՝ մ.թ. 43թ.-ին: Հռոմեացիների փիրապետության ընթացքում Բրիտանիան սկսում է մայրցամաք արտահանել բնամթերք, որսորդական շներ եւ ստրուկներ: Հռոմեացիները կղզի են բերում նաեւ գիր: Մինչ կելտ գյուղացիները շարունակում էին անգրագետ մնալ, քաղաքի բնակիչները հաղորդակցվում էին լատիներենով եւ հունարենով:

Հռոմեացիներին սակայն չի հաջողվում գրավել Շոտլանդիան, թեեւ փորձերը շարունակվել են շուրջ մեկ դար: Ի վերջո, նրանք ստիպված էին պատ կառուցել հյուսիսային սահմանում՝ պարանջատելով չնվաճված տարածքները: Պատը, որն անվանվում է Ադրիանոս կայսեր պատվին (կառուցվել է նրա գահակալության օրոք), հետագայում որոշում է Անգլիայի եւ Շոտլանդիայի սահմանը:

Հռոմեական կայսրության անկումը բրիտանացիներին ազատում է հռոմեացիների փիրապետությունից: 409թ.-ին կղզին լքում է հռոմեացի վերջին զինվորը՝ ռոմանականացված կելտերին թողնելով միայնակ շոտլանդացիների, իռլանդացիների եւ սաքսերի դեմ, վերջիններս ժամանակ առ ժամանակ արշավանքներ էին կազմակերպում Գերմանիայից:

## Անգլո-սաքսեր

Բրիտանիայի խաղաղ գոյության ընթացքում կուտակված հարստությունը հանգիստ չէր տալիս գերմանական ցեղերին, որոնք սկզբում հարձակումներ էին կազմակերպում կղզու դեմ, իսկ 430 թվականից հետո գրեթե չէին վերադառնում Գերմանիա՝ հետզհետե բնակեցնելով բրիտանական տարածքները: Անգրագետ եւ ռազմատենչ այդ մարդիկ գերմանական երեք ցեղերի՝ անգլերի, սաքսերի, յուտերի ներկայացուցիչներ էին: Անգլերը հաստատվել էին ժամանակակից Անգլիայի հյուսիսային եւ արեւելյան, սաքսերը՝ հարավային, յուտերը՝ Քենթի շրջակայքի տարածքները: Վերջինները, սակայն, ձուլվում են անգլերի ու սաքսերի հետ՝ դադարելով գոյություն ունենալ որպես առանձին ցեղ: Բրիտանացի կելտերն ամենեւին մտադիր չէին զիջել կղզու տարածքները, սակայն առավել լավ զինված անգլո-սաքսերի ճնշման ներքո նրանք ստիպված էին նահանջել արեւմտյան լեռնային շրջաններ, որոնք սաքսերն անվանում էին «Wales» (օտարների հողեր): Կելտերի մի մասը հեռանում է Շոտլանդիա, մյուսները դառնում են սաքսերի ստրուկները:

Անգլո-սաքսերը մի քանի թագավորություն են հիմնում, որոնց անվանումների մի մասը դեռեւս կրում են բրիտանական որոշ կոմսություններ եւ

մարզեր, օրինակ՝ Essex, Sussex, Wessex: Մեկ դար անց թագավորություններից մեկի փիրակալն իրեն Անգլիայի արքա է հռչակում: Օֆֆի արքան բավականին հարուստ եւ ազդեցիկ էր, սակայն չէր վերահսկում ամբողջ Անգլիայի փարածքները: Նրա մահվանից հետո տերությունը փլուզվում է:

Անգլո-սաքսերը, սակայն, կառավարման լավ համակարգ են մշակում, ուր թագավորին կից գործում էր ռազմիկներից եւ հոգեւորականներից կազմված խորհուրդ (Witan): Այն որոշումներ էր կայացնում բարդ խնդիրների շուրջ: Թագավորը կարող էր անտեսել խորհուրդը, ինչը սակայն վտանգավոր էր:

## Քրիստոնեություն

Հայտնի չէ՝ քրիստոնեությունն ինչպես է հասել Մեծ Բրիտանիա, սակայն կասկած կա, որ դա տեղի է ունեցել մինչեւ VII դ.-ի սկիզբը՝ 597թ.-ը, երբ Հռոմի Գրիգորիոս Մեծ պապը Ավգուստին վանականին ուղարկում է Մեծ Բրիտանիա՝ այնտեղ քրիստոնեությունը՝ որպես կրոն, պաշտոնապես տարածելու հանձնարարությամբ: Վերջինս մեկնում է Քենթըրբերի՝ 601թ.-ին դառնալով Քենթըրբերիի առաջին արքեպիսկոպոսը: Ի դեպ, նա քրիստոնյա է դարձնում ազնվական եւ հարուստ մի քանի ընտանիքներ միայն, մինչդեռ ժողովրդի շրջանում քրիստոնեություն են տարածում կելտ հոգեւորականները, որոնք, շրջելով գյուղից գյուղ, մարդկանց նոր կրոնն էին ուսուցանում:

Այդ երկու եկեղեցիները շատ տարբեր էին, եւ կելտական եկեղեցին ստիպված էր նահանջել, երբ Հռոմը սկսեց վերահսկել Բրիտանիայի տարածքները: Սաքսերի արքաները հռոմեական եկեղեցին նախընտրում էին նաեւ տնտեսական պատճառներով. մենաստանների շուրջ հայտնվում էին գյուղեր ու քաղաքներ, զարգանում էին առեւտուրն ու կապերը մայրցամաքային Եվրոպայի հետ: Շուտով անգլոսաքսոնական Անգլիան Եվրոպայում հայտնի է դառնում՝ որպես բուրդ, պանիր, որսի շներ, սպասք եւ մետաղյա իրեր արտահանող երկիր: Արտահանվում էին նաեւ գինի, ձուկ, պղպեղ եւ զարդեր:

## Վիկինգներ

VIII դ.-ի վերջին կղզիներ նոր վայրենի ցեղեր են ժամանում: Նրանց գրավում էր Բրիտանիայի հարստությունը: Դրանք վիկինգներն էին՝ գերմանական ցեղեր, ինչպես անգլերը, սաքսերը, յուտերը: Բայց այս ցեղերը ժամանում էին Դանիայից եւ Նորվեգիայից, հաղորդակցվում էին հյուսիսգերմանական լեզվով: Ինչպես եւ անգլո-սաքսերը, սկզբում նրանք ժամանակ առ ժամանակ դեպի կղզի արշավանքներ էին իրականացնում,

սակայն շուտով ծովային ճամփորդությունները վիկինգներին հոգնեցնում են, եւ նրանք որոշում են բնակություն հաստատել Բրիտանիայում՝ ոչնչացնելով գյուղեր, եկեղեցիներ, մենաստաններ:

865թ.-ին վիկինգները նվաճում են Բրիտանիայի հյուսիսն ու արեւելքը: Ընդունելով քրիստոնեություն՝ նրանք դադարում են անհանգստացնել տեղաբնակներին:

Ալֆրեդ արքան վիկինգների դեմ պայքարել է ավելի քան տասը տարի եւ միայն 878թ.-ի վճռական ճակատամարտում հաղթանակից եւ ութ տարի անց Լոնդոնը գրավելուց հետո է հաշտություն կնքում նրանց հետ: Վիկինգները վերահսկում էին Անգլիայի հյուսիսն ու արեւելքը, Ալֆրեդ արքան՝ մնացյալ տարածքները:

## Պայքար գահի համար

590թ.-ին Անգլիան վերագտել էր խաղաղությունը, որում շարունակում էր ապրել մինչեւ վիկինգների արշավանքները: Շուտով դանիացի վիկինգները վերահսկողություն են հաստատում Արեւմտյան Անգլիայում, իսկ սաքսերի հերթական թագավորի մահից հետո սկսում են վերահսկել Անգլիայի մեծ մասը: Վիկինգների արքայի եւ նրա որդի Էդուարդի մահից հետո գահ է բարձրանում սաքսերի թագավորի որդիներից մեկը: Էդուարդն առավել մեծ ժամանակ էր հատկացնում եկեղեցուն, քան երկրի կառավարմանը: Նրա մահից հետո յուրաքանչյուր գյուղ ուներ իր եկեղեցին, կառուցվել էին բազմաթիվ մենաստաններ: Էդուարդը մահացավ՝ չթողնելով ժառանգորդ: Գահի համար պայքար է սկսվում սաքսոնական ազդեցիկ ընտանիքի ներկայացուցիչ Հարոլդ Գոդվինսոնի եւ նորմանացի դուքս Վիլյամի միջեւ: Անգլիական գահին հավակնում էին նաեւ դանիացի վիկինգները: 1066թ.-ին Հարոլդը ստիպված էր պայքարել վիկինգների դեմ Յորքշիրի հյուսիսում: Երբ նա ջախջախում է դանիացիներին, լուր է հասնում, որ Վիլյամն իր բանակով ժամանել է Անգլիա: Հարոլդի հոգնած մարտիկներին չի հաջողվում հաղթել Վիլյամի թարմ ուժերին, բացի այդ՝ վերջինի մարտիկներն առավել լավ էին զինված եւ մարզված: Հարոլդը սպանվում է մարտում, իսկ Վիլյամը զորքով շարժվում է Լոնդոն, որտեղ եւ թագադրվում է 1066թ.-ին՝ Սուրբ ծննդյան օրը:

## Ուելս

Ութերորդ դարի սկզբում կելտերի մեծ մասը հետ էր մղվել Ուելս: Քանի որ Ուելսը լեռնային է, կելտերը ստիպված էին բնակություն հաստատել նեղ հարթավայրերում: Մյուս հողերը բերրի չէին. այնտեղ հնարավոր էր միայն անասնապահությամբ զբաղվել: Այդ իսկ պատճառով մինչեւ տասնութերորդ դարը ուելսցիների թիվը շատ փոքր էր:

Մարդիկ բնակվում էին փոհմերով՝ ձեւավորելով գյուղեր եւ փոքրիկ ագարակների միասնություններ: Նման փոհմերի առաջնորդներն իրենց արքաներ էին հռչակում՝ հետզհետե գրավելով հարեւան գյուղերն ու ընդլայնելով իրենց փերությունները: X-XI դդ.-ում Ուելսում նման վեց թագավորություն կար: Արքաները սովորաբար բնական մահով չէին մահանում, սովորական բնակիչների կյանքը եւս անվտանգ չէր. նրանք հաճախ հարեւան թագավորի հարձակումների զոհ էին դառնում: Սակայն 1039թ.-ին Ուելսը փաստացիորեն կորցրեց անկախությունը, երբ ուելսցի արքաները հավատարմության երդում տվեցին Էդուարդին՝ Անգլիայի թագավորին:

## Իռլանդիա

Իռլանդիան չի հաջողվել նվաճել ո՛չ հռոմեացիներին, ո՛չ անգլո-սաքսերին: Այստեղ ծաղկում էր ապրում կելտական մշակույթը: Ինչպես եւ Ուելսում, մարդիկ այստեղ ապրում էին փոհմերով: Արքաներն այս փոհմերում ընտրվում էին «պետք է ղեկավարի ուժեղագույնը» սկզբունքով: Իռլանդիայում կար չորս թագավորություն:

Քրիստոնեությունը Իռլանդիա մուտք է գործել 430թ.-ին բրիտանացի սպրուկ Պատրիկի շնորհիվ, որը հետագայում հռչակվում է կղզու հովանավոր սուրբ: Քրիստոնեության հետ միասին Իռլանդիայում տարածվում է գիրը, ինչը թույլ է տալիս գրի առնել պատմությունը՝ դրանով իսկ թուլացնելով դրուիդների ազդեցությունը: Սակայն վիկինգների արշավանքներով Իռլանդիայում համեմատաբար խաղաղ կյանքն ընդհատվում է: Վիկինգները թալանում-տանում են այն ամենը, ինչ հնարավոր էր՝ հատկապես կենտրոնանալով մենաստանների ունեցվածքի վրա: Այս հարձակումներն իռլանդացի արքաներին ստիպում են միավորվել: 859թ.-ին Իռլանդիան ընտրում է իր առաջին թագավորին, ինչը, սակայն, կղզու փաստացի միավորման չի հանգեցնում: Միայն Բրայան Բորուն, ով թագավորել է 1002-1014թթ.-ին, փորձում է միավորել երկիրը՝ խրախուսելով քրիստոնեության եւ գրաճանաչության տարածումը բնակչության շրջանում: Բորուն, ով զոհվել է վիկինգների դեմ պայքարում, մինչեւ այժմ համարվում է Իռլանդիայի մեծագույն փիրակալը: Արքաների միջեւ պայքարը հանգեցրեց նրան, որ նրանցից մեկը նորմաններին հրավիրեց գերագույն իշխանություն ձեւավորելու Իռլանդիայում, ինչից էլ օգտվեցին վերջինները՝ նվաճելով կղզին:

## Նորմանների արշավանքը

Նորմանական նոր թագավորությանը վիճակված չէր ապրել խաղաղության մեջ: Հինգ տարի շարունակ անգլոսաքսերը համառորեն պայ-

քարում էին զավթիչների դեմ: Նորմանական փոքրաթիվ բանակը, շարժվելով գյուղից գյուղ, հրկիզում էր դրանց մի մասը՝ ամրապնդելով հավատարիմ ուժերի բնակավայրերը: Հատկապես մեծաքանակ գյուղեր են ոչնչացվել Անգլիայի հյուսիսում:

Սաքսոնական լորդերից միայն նրանց է հաջողվում պահպանել ունեցվածքը, ովքեր անմիջապես հավատարմության ուխտ են տալիս Նորմանդիայի դուքս Վիլհելմին: Վերջինս ազատ հողերը, որոնց ծավալն աճում էր անգլո-սաքսոնական յուրաքանչյուր ապստամբությունից հետո, շնորհում է նորմանացի լորդերին: Հասկանալով, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է ապստամբել իր դեմ, Վիլհելմը հպատակներին միմյանցից հեռու գտնվող հողակտորներ էր բաշխում, որպեսզի լորդերից ոչ մեկին չհաջողվի կարճ ժամանակահատվածում հավաքագրել հպատակներին: Սաքսոնական հողերի կեսը Վիլհելմը շնորհում է լորդերին, քառորդ մասը եկեղեցուն, իսկ մնացած տարածքները դառնում են արքայական: 1066թ. Վիլհելմ Նվաճողը, դառնալով Անգլիայի թագավոր, այսպեղ սկիզբ է դնում նորմանական հարսպության գահակալությանը:

Արքան հողատիրությունը կազմակերպում է ավատատիրության կանոններին համաձայն, որն Անգլիայում արդեն սկսել էի զարգանալ նրանից առաջ: Ըստ այդ համակարգի՝ միապետը երկրի ողջ տարածքի սեփականատերն էր, ինչը, սակայն, տնօրինում էին նրա հպատակները, որոնք հողն օգտագործելու դիմաց խոստանում էին ծառայել թագավորական բանակում եւ հանձնել բերքի մի մասը: Արքայի հպատակներն իրենց հերթին հող էին տրամադրում ասպետներին, աղքատ լորդերին ու ազատ այլ անձանց եւ ունեին ճորտեր (serfs):

Ավատատիրոջ մահվան դեպքում նրա կալվածքները ժառանգում էր որդին, որը ժառանգության համար որոշակի տուրք էր վճարում թագավորին: Եթե մահանում էր ավատատիրոջ ողջ ընտանիքը, ապա նրա ունեցվածքը փոխանցվում էր միապետին, որը այն փոխանցում էր արժանապատիվ մեկ այլ լորդի:

1086թ. Վիլհելմ արքան ցանկանում է պարզել լորդերից յուրաքանչյուրի, եկեղեցու, ինչպես եւ իր կալվածքների ստույգ ծավալը՝ որոշելու պետական գանձարան փոխանցվող հարկերի չափը: Այսպես առաջ է գալիս մարդա- եւ գույքահամարի գաղափարը:

## Magna Carta

1087 թվականից Վիլհելմի մահվանը հաջորդող հարյուրամյակը նշանավորվեց բազմաթիվ պատերազմներով եւ թագավորական ընտանիքի անդամների միջեւ տարաձայնություններով: Գահի, ինչպես եւ Անգլիայի ու Ֆրանսիայի տարածքների համար պատերազմը զբաղեցնում էր թա-

գավորների, նրանց որդիների, դստրերի, կանանց մտքերը: Ուստի նրանք փոքր ուշադրության էին արժանացնում իրենց հպատակներին եւ հասարակ ժողովրդին, մինչեւ գահը կժառանգեր Ջոն թագավորը՝ Ռիչարդ Առյուծասրտի եղբայրը:

Աներեւակայելի ժլատության պատճառով Ջոնը չէր վայելում հպատակների համակրանքը: Նա բարձր հարկեր էր պահանջում ժառանգության իրավունքից օգտվելու համար, չէր շտապում բաժանվել ավատատերերի մահվան հետեւանքով իրեն փոխանցված հողերից: Ջոնն բարձրացրել էր մենաստանների, քաղաքների եւ առեւտրականների հարկերը:

1215թ. դժգոհ ավատերերն ու առեւտրականները ժամանում են Լոնդոն՝ թագավորին ստիպելով նոր համաձայնագիր ստորագրել, որ կոչվում է «Magna Carta» («Մեծ Խարտիա»): Փաստաթուղթը քաղաքական ազատության կարեւոր խորհրդանիշ է դառնում, այն թագավորին պարտավորեցնում էր իր պաշտոնյաներից պաշտպանել ազատ բոլոր քաղաքացիներին (ի տարբերություն ճորտերի), արդար եւ օրինական դատավարության իրավունք էր տալիս: Այդ ժամանակ ազատ քաղաքացիներն Անգլիայի բնակչության հազիվ քառորդ մասն էին կազմում, ուստի համաձայնագիրն ազատության խորհրդանիշ էր միայն: Դրանով հպատակները ցանկանում էին պարզապես սահմանափակել թագավորի՝ որպես ավատատեր լորդի իրավունքները, եւ չէին կարող պատկերացնել, թե ինչ նշանակություն այն ձեռք կբերի հետագայում: Շուտով սկսվեց ավատատիրական կարգերի քայքայումը, սակայն ամբողջովին դրանք վերացան XVI դարում միայն:

## Խորհրդարան

Ջոն թագավորը «Magna Carta»-ն ստորագրել էր իր կամքին հակառակ, եւ շուտով պարզ դարձավ, որ նա մտադիր չէ իրականացնել այն: Ավատառուները ապստամբում են՝ թագավորին հետ մղելով երկրի հարավ-արեւելք, սակայն քաղաքացիական պատերազմից հաջողվում է խուսափել, քանի որ 1216թ. թագավորը հանկարծամահ է լինում:

Ջոնի որդին՝ Հենրիխ III-ն ինը տարեկան էր: Նրա փիրակալության առաջին տասնվեց տարիների ընթացքում երկիրը կառավարում էին մի շարք ազդեցիկ պալատականներ՝ թագավորի ավատառուները: Երբ ի վերջո քսանհինգամյա Հենրիխն ինքնուրույն կառավարելու հնարավորություն է ստանում, փորձելով ազատվել պալատականների ազդեցությունից, որոնք երկար ժամանակ վերահսկում էին նրա բոլոր քայլերը՝ նա օտարերկրյա բարեկամների խորհրդով սկսում է հովանավորել Հռոմի պապի պատերազմները Սիցիլիայում եւ Ֆրանսիայում;

Մտահոգված թագավորի այս քայլերով՝ պալատականները 1258թ. զավթում են կառավարությունը՝ ընտրելով ազնվականների խորհուրդ,

որն անվանում են «պառլամենտ»: Այդ խորհրդարանը գրավում է գանձարանը՝ Հենրիխին ստիպելով ազատվել օտարերկրացի խորհրդականներից: Ազնվականներին աջակցում էին քաղաքները, որոնք ձգտում էին ազատվել ծանր հարկերից:

Սակայն ազնվականների մի մասը հավատարիմ է մնում թագավորին, եւ նրանց օգնությամբ Հենրիխին հաջողվում է ջախջախել ապստամբների բանակը՝ իր իշխանությունը դարձնելով անսահմանափակ: Հենրիխի մահից հետո գահ է բարձրանում նրա որդին՝ Էդուարդ I-ը:

Էդուարդն առաջին թագավորն էր, որը գործող խորհրդարան է հրավիրում: Հենրիխ III-ի խորհրդարանը կազմված էր ազնվականներից եւ կոչվում էր Լորդերի պալատ: Սակայն լորդերն ի վիճակի չէին թագավորական գանձարանն անհրաժեշտ միջոցներով լցնել, ուստի Էդուարդը հարկեր է սահմանում լորդերի, քաղաքների եւ առեւտրականների համար: Բոլորը չէ, որ համաձայնվում էին հարկեր վճարել, եւ թագավորը ստեղծում է Համայնքների պալատը, որտեղ հրավիրվում են ասպետներ, առեւտրականներ, ոչ հարուստ հողատերեր եւ այլն: 1275թ. Էդուարդը հրամայում է խորհրդարան ներկայանալ յուրաքանչյուր քաղաքից եւ կոմսությունից երկուական ներկայացուցչի: Էդուարդի մահվանը հաջորդող մեկուկես դարերի ընթացքում Համայնքների պալատը սկսում է որոշել լրացուցիչ հարկերին վերաբերող հարցեր, ակտիվ մասնակցել օրենսդիր գործունեությանը:

## Կելտական Հողեր

Ի տարբերություն նախորդների, Էդուարդ I-ին առավել հետաքրքրում էր Բրիտանական կղզու՝ իր տիրապետության տակ չգտնվող հողերի, այլ ոչ թե ֆրանսիական տարածքների նվաճումը:

Նորմանդական նվաճումներից հետո Վիլհելմ I-ն իր ավատառուներին թույլ էր տվել գրավել Ուելսը, ինչը նրանք հաջողությամբ իրականացրել էին: Անկախություն էին վայելում միայն երկրի հյուսիսային լեռնոտ շրջանները, որոնք, սակայն, նվաճվում են 1282թ: 1284թ. Էդուարդն Անգլիային է միավորում արեւմտյան Ուելսը՝ Անգլիայի օրինակով այն բաժանելով կոմսությունների: Անգլիացիների համար առավել կարեւոր էր տնտեսական միասնությունը Ուելսի հետ, եւ նրանք պատրաստ էին որոշակի ձեւական ինքնուրույնություն շնորհել երկրամասին: էդուարդ I-ը կազմակերպում է արարողություն, որի ընթացքում իր որդուն՝ Էդուարդ II-ին, հռչակում է Ուելսի արքայազն: Դրանից հետո Անգլիայի գահաժառանգին Ուելսի արքայազն հռչակելն ավանդույթ է դառնում:

Նորմաններն Իռլանդիան նվաճել են 1269թ.: Հենրիխ III-ը նորմանացի լորդերին եւ իռլանդացի արքաներին ստիպում է հավատարմության

ուխտ փալ իրեն եւ Իռլանդիայի մայրաքաղաք է հռչակում վիկինգների քաղաք Փեյլը (Դուբլին): Արեւմտյան Իռլանդիայի մեծ մասը նորմանների հսկողության ներքո էր, մինչդեռ իռլանդացի թագավորներն իշխում էին արեւելքում:

Էդուարդ I-ն այս գաղութից հնարավորինս շատ գումար եւ մարդ էր հավաքագրում Ուելսի եւ Շոտլանդիայի դեմ պայքարելու համար, ինչի հետեւանքով Իռլանդիան արագ աղքատանում է, իսկ իռլանդացի թագավորներն ու նորմանացի լորդերն աշխատում են խուսափել անգլիական իշխանության ներկայացուցիչներից: Արդյունքում անգլիացիները վերահսկում էին միայն Դուբլինն ու քաղաքի շրջակա մի փոքր տարածք, մինչդեռ բնիկ իռլանդացիները շարունակում էին ապրել, ինչպես ապրել են՝ քոչվոր կյանք վարելով կղզում, լորդերն ամրոցներ էին կառուցում՝ առավել անկախ դառնալով Լոնդոնից:

Շոտլանդիայում իրադրությունն այլ էր: Թեեւ շոտլանդացի թագավորները երբեմն ընդունում էին Անգլիայի թագավորի առավելությունն իրենց նկատմամբ, այնուամենայնիվ նրանք առավել ուժեղ էին Ուելսի եւ Իռլանդիայի փիրակալներից: Դեռեւս XIդ.-ից Շոտլանդիան ուներ մեկ թագավոր, որը վերահսկում էր տարածքի մեծ մասը, անկախ էին միայն արեւմտյան ափամերձ որոշ շրջաններ: Էդուարդ I-ը որոշում է նվաճել Շոտլանդիան:

Այս երկրամասի թագավորներն Անգլիայի միապետների հետ կապված էին ինչպես բարեկամական կապերով, այնպես էլ ավատատիրական ընդհանուր համակարգով, որ տարածված էր ողջ երկրում՝ բացի լեռնային շրջաններից, որտեղ դեռեւս գործում էր կլանային համակարգը:

1290թ. թագավորի մահից հետո շոտլանդացիներին չի հաջողվում ընտրել նոր միապետ երեսուն թեկնածուներից եւ խնդիրը կարգավորելու համար դիմում են Էդուարդ I-ին: Անգլիայի թագավորը հնարավորությունը բաց չի թողնում շոտլանդական գահին նշանակելու իրեն առավել հարմար թեկնածուի՝ սփիպելով իր թագավորությունն ապահովել զորքով եւ գումարով: Շոտլանդացի լորդերն ապստամբում են, սակայն Էդուարդին հաջողվում է ճնշել ընդվզումը՝ գրավելով երկրամասի բոլոր խոշոր ամրոցները: Շոտլանդացիները նման վերաբերմունք չէին կարող հանդուրժել. ձեւավորվում է դիմադրության համաժողովրդական շարժում: Շոտլանդացիների դեմ պատերազմը շարունակում է Էդուարդ I-ի որդին՝ Էդուարդ II-ը, սակայն անգլիացիները պարտություն են կրում, իսկ շոտլանդացիները 1320թ. հայտարարում են, թե երբեք չեն ընդունի Անգլիայի փիրապետությունը:

## Քաղաքների զարգացումը

Միջնադարում Անգլիան գյուղատնտեսական երկիր էր, հողագործությամբ էին զբաղվում նույնիսկ քաղաքաբնակ արհեստավորներն ու առեւտրականները: Այդ իմաստով Անգլիան ինքնաբավ էր, սակայն միաժամանակ զարգանում էին նաեւ առեւտրական կապերը շրջանների միջեւ, օրինակ՝ բրդի փոխանակումը պարենով եւ այլն:

Զարգանում էր նաեւ միջազգային առեւտուրը: Առեւտրական կապեր էին հաստատվել սկանդինավյան երկրների, Ֆրանսիայի եւ Գերմանիայի հետ. հիմնականում արտահանվում էր բուրդ, սակայն շուտով անգլիացիները սկսում են մատակարարել ոչ թե հումք, այլ բրդյա կտորեղեն, ինչն առավել մեծ շահույթ էր բերում ե՛ւ գանձարանին, ե՛ւ արհեստավորներին:

Քաղաքներում գործում էին շուկաներ, ուր մոտակա գյուղերի բնակիչները բուրդ եւ մթերք էին բերում, առեւտրականները դրանք վերավաճառում էին երկրի սահմաններից դուրս: Քաղաքները վերածվում էին փոքրիկ անկախ պետությունների, որոնք կարող էին հարկեր հավաքել, սեփական դատարաններ ունենալ, ավատատերերից անկախ կազմակերպություններ հիմնել, ինչպես, օրինակ, արհեստավորների եւ առեւտրականների գիլդիաները (միավորումները): XIII դ. Անգլիայի տարածքում ավելի քան հարյուր գիլդիա էր գործում, որոնց անդամներն օգնում էին միմյանց, պայմանավորվում գների մասին: Առավել արագ այդ միավորումները զարգանում էին Լոնդոնում՝ ստեղծելով հարուստ արհեստավորների դաս, որոնք վերահսկում էին քաղաքի առեւտրի եւ արտադրության մեծ մասը: Ժամանակի ընթացքում լոնդոնյան տասներկու գիլդիաներ վերաճում են ֆինանսական խոշոր կազմակերպությունների, որոնք այսօր եւս կարեւոր դեր ունեն մայրաքաղաքի կառավարման եւ քաղաքապետի ամենամյա ընտրության հարցում:

## Պատերազմ Շոտլանդիայի եւ Ֆրանսիայի դեմ

Նույնիսկ 1314թ. անգլիական բանակի ջախջախումից հետո Էդուարդ III-ը չի հրաժարվում Շոտլանդիայում վերահսկողություն հաստատելու մտքից, սակայն մի շարք անհաջողություններից հետո 1328թ. ստիպված է լինում նահանջել: Այնուամենայնիվ խաղաղությունը երկարատեւ չի լինում, այս անգամ Ֆրանսիայի հետ պատերազմի պատճառով:

Շոտլանդացիները, փորձելով ազատվել անգլիացիներից, դաշինք են կնքում Ֆրանսիայի հետ, որն առավել շահավետ էր վերջինի համար: Ինչեւէ, պայմանագրով կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է դաշնակցի դեմ Անգլիայի հարձակման դեպքում հեռացնել հարվածն իր ուղղությամբ:

Այդ ընթացքում Ֆրանսիայում աճում էր միապետի ազդեցությունը, որը ձգտում էր ազատվել մի շարք անհնազանդ ավատառուներից: Վերջինների թվում էր նաեւ Անգլիայի թագավորը, որը փիրապետում էր ֆրանսիական Ակվիտանիա գավառը: Ֆրանսիայի արքան սկսում է խոչընդոտել անգլիական բրդի արտահանմանը, ինչը կենսական նշանակություն ուներ անգլիացիների համար:

1337թ. Էդուարդ III-ը, հայտարարելով ֆրանսիական գահին տիրելու իր իրավունքի մասին, պատերազմ է հայտարարում, որը հետագայում անվանվում է հարյուրամյա, եւ որի հետեւանքով Անգլիան զրկվում է ֆրանսիական իր բոլոր տերություններից՝ բացի հյուսիսային Կալե նավահանգստից:

Սկզբում անգլիական զորքը հաջող առաջ էր շարժվում: Զինվորներն առավել լավ էին մարզված եւ զինված, օգտագործում էին ուելսյան աղեղը, որի նետերը խոցում էին գրեթե ցանկացած պաշտպանություն: 1356թ. անգլիական բանակը գերեվարել էր Ֆրանսիայի թագավորին, որը հետագայում ազատվում է 500 հազար ֆունտ փրկագնի գնմաց:

1360թ. համաձայնագրով Էդուարդ III-ը հրաժարվում է ֆրանսիական գահի հավակնությունից՝ հետ ստանալով Անգլիայի նախկին տերություններ Ակվիտանիան եւ Գասկոնը, որոնք համապատասխանաբար Նորմանդիայի եւ Բրետոնի մաս էին կազմում, ինչպես եւ Կալե նավահանգիստը: Ֆրանսիայի թագավորը դժկամությամբ էր բաժանվել այդ տարածքներից եւ հետագա տասնհինգ տարիների ընթացքում աշխատում էր հետ նվաճել դրանք: Նրան չի հաջողվում միայն հետ բերել Կալեին, Բրեստին եւ Բորդոյին կից արժեքավոր տարածքները:

Ֆրանսիայի հետ դաշինքին հավատարիմ՝ Շոտլանդիայի արքան 1346թ. հարձակվում է Անգլիայի վրա, սակայն պարտվում է եւ գերեվարվում: Անգլիական զորքը ներխուժում է նաեւ Իռլանդիա՝ հրկիզելով եւ թալանելով գյուղեր ու քաղաքներ: Սակայն Էդուարդ III-ը ֆրանսիացիներին թույլ է տալիս փրկագին վճարել Շոտլանդիայի թագավորի համար՝ հրաժարվելով վերջինի տերությունները գրավելու մտքից: Կարճատեւ խաղաղությունից հետ ֆրանսիացիների հետ պատերազմը շարունակվում է նաեւ XIV դարում:

## Ժանտախտ, գյուղացիական ապստամբություն

1348-49թթ. Անգլիայում մոլեգնում էր ժանտախտը, որը հայտնի էր «սեւ մահ» անվամբ, եւ որի զոհ դարձավ բնակչության գրեթե մեկ երրորդ մասը: Ոչնչանում էին տասնյակ գյուղեր, բազմաթիվ քաղաքներ դարձել էին անմարդաբնակ: Այս համաճարակից հետո տարածվում են մի շարք այլ հիվանդություններ եւս, որոնց զոհ էր դառնում երիտասարդ եւ առողջ բնակչությունը: XIVդ. սկզբում Անգլիայի բնակչությունը հազիվ չորս մի-

լիոնի էր հասնում, մինչդեռ դարավերջին այն կիսով չափ կրճատվել էր: Բնակչության թիվը սկսեց աճել XVդ. երկրորդ կեսին միայն:

Կտրուկ նվազել էր աշխատավորների թիվը, ուստի լորդերը ստիպված էին բարձրացնել նրանց աշխատավարձերը, ինչպես եւ մասամբ հողը վարձակալության տալ ազատներին: Գյուղացիներից շատերի կյանքը դառնում է նյութապես ապահովված, շատերը հնարավորություն են ստանում կառուցել քարե տներ փայտե եւ կավե խրճիթների փոխարեն:

Էդուարդ III-ի թոռը՝ Ռիչարդ II-ը, կրում է գյուղացիական ապստամբությունների հարվածը, որոնց մասնակիցներն ընդվզում էին թագավորի սահմանած բարձր հարկերի դեմ: Գահակալության հենց սկզբում Ռիչարդ II-ը հրամայում է հարկատու դարձնել տասնհինգ տարին լրացած բոլոր բնակիչներին: Երկու տարի անց ավելանում են հարկերը, 1381թ.՝ եռակի, ինչի հետեւանքով ընդվզում են Անգլիայի առավել հարուստ երկու կոմսությունները: Երկրի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան աղքատ շրջանները չեն միանում ապստամբությանը: Գյուղացիական ապստամբությունը շարունակվում է չորս շաբաթ միայն, որի ընթացքում խռովարարները գրավում են Լոնդոնի մեծ մասը: Ռիչարդ II-ը խոստանում է բավարարել գյուղացիների պահանջները, եւ վերջիններս ցրվում են: Գյուղացիների հեռանալուց հետո Ռիչարդը դրժում է խոստումը եւ հրամայում գտնել ու կախաղան բարձրացնել ապստամբության կազմակերպիչներին:

## Ապստամբություն Ուելսում

Ուելսը գրավել եւ գաղութացրել էր դեռեւս Էդուարդ I-ը 1280-ական թթ.: Երկրամասի քաղաքներում նա վերաբնակեցնում է անգլիացիների: Անգլիացի պաշտոնյաներն ուելսցի ազարակատերերին հետ են մղում հյուսիս՝ բերրի հողերը հայրենակիցներին տրամադրելու նպատակով: Շատ ուելսցիներ ստիպված են լինում անցնել անգլիական բանակի շարքերը եւ պայքարել ֆրանսիացիների ու շոտլանդացիների դեմ:

Մեկ դար անց գտնվում է անհատ, որն առաջնորդում է ուելսցիների ապստամբությունն անգլիական գահի դեմ: Հերոսը Օուեն Գլինդուրն էր՝ ուելսցի առաջին եւ միակ արքայազնը, որին սիրում եւ հարգում էին այդ երկրի ողջ տարածքում: Նա թագավորական երկու տոհմերի, որոնք Ուելսի տարբեր մասերում կառավարել էին մինչեւ նորմանների արշավանքները, ժառանգորդ էր:

Ընդվզումն ամբողջ երկրում միաժամանակ չի սկսվում: Օուեն Գլինդուրը սկզբում միանում է այն լորդերի ապստամբությանը, որոնց կալվածքները սահմանակից էին նորմանացի լորդերի կալվածքներին: Տասը տարի անց ապստամբությունը սահմանային պատերազմից վերածվում է համազգային շարժման: 1400թ.-ին Օուեն Գլինդուրը հռչակվում է Ուելսի

արքայազն: Սակայն նրա ուժերը բավարար չէին Անգլիայից անընդհատ ժամանող զորքի դեմ պայքարելու համար: Արքայազնը հաջողությամբ շարունակում է պարտիզանական պատերազմը, ինչը սնանկացնում էր անգլիական գանձարանը: 1410թ., սակայն, Գլինդուորը զրկվում է բնակչության աջակցությունից, երբ ուելսցիները գիտակցում են, որ երբեք չեն կարողանա ազատվել անգլիացիների իշխանությունից: Սակայն ապստամբության եւ պարտիզանական պատերազմի շնորհիվ ձեւավորվում է ուելսցիների՝ որպես ազգ, ինքնագիտակցությունը:

## «Ալ եւ Սպիտակ վարդերի պատերազմը»

Ողջ XIV դ. ընթացքում եւ մինչեւ միջնադարի ավարտը թագավորն ու ավատառուները պատերազմ էին մղում միմյանց դեմ: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս 1327թ.-ին, երբ գահընկեց է արվում Էդուարդ II-ը եւ դաժանաբար սպանվում: Նրա տասնմեկամյա որդին՝ Էդուարդ III-ը, զբաղեցնելով գահը, պատժում է մեղավորներին: Այնուամենայնիվ, արդեն խախտված էր թագավորների անձեռնմխելիության սկզբունքը:

Երկրորդ սպանված թագավորը Ռիչարդ II-ն էր, ով, ի տարբերություն Էդուարդ II-ի, ժառանգ չուներ: Գահին հավակնում էին Էդուարդ II-ի երկրորդ որդու յոթնամյա թոռը՝ Ռիչարդը, եւ Հենրիխը՝ Լանկասթերների տոհմից: Դժվար է ասել՝ նրանցից ով գահին տիրելու առավել մեծ իրավունք ուներ, սակայն Հենրիխն առավել ուժեղ էր եւ գրավեց թագը, ինչից հետո կարճ ժամանակ անց Ռիչարդը մահացավ: Հենրիխ IV-ը կառավարում է եւ խաղաղ պայմաններում գահը հանձնում որդուն՝ Հենրիխ V-ին, սակայն հենց վերջինիս կառավարման տարիներին ծնվում են քաղաքացիական պատերազմի նախադրյալները:

Նրա որդին շարունակում է Ֆրանսիայի դեմ պատերազմը, որը վերսկսվել էր 1415թ.-ին ֆրանսիական գահը զբաղեցնելու՝ Հենրիխ IV-ի հավակնությունների հետեւանքով: Ռազմական գործողությունների այս փուլի սկզբում եւս հաղթանակն անգլիացիների կողմն էր, բայց շուտով ֆրանսիացիներն ապստամբեցին անգլիական տիրապետության դեմ, եւ Անգլիան կորցրեց բոլոր տարածքները՝ բացի Կալեից:

Հենրիխ VI-ը, որը ժառանգել էր գահը Հենրիխ V-ի մահվանից հետո, առավել հակված էր դեպի գիտությունն ու գրքերը, ոչ թե պատերազմն ու բանսարկությունները, բացի այդ՝ հոգեկան հիվանդ էր:

Ազդեցիկ մի շարք ընտանիքներ սկսում են մտածել նրան գահից հեռացնելու մասին: Կարծիքները սակայն բաժանվում են: Պալատականների մի մասը հավատարիմ է մնում թագավորին եւ Լանկասթերների տոհմին, մյուս մասը պաշտպանում է Յորքի դքսին, որն Էդուարդ III-ի մահից հետո գահի երկրորդ հավակնորդի ժառանգն էր: 1461թ.-ին Յորքի դքսի որդին՝ Էդուարդը, զավթում է գահը:

Էդուարդ IV-ը Հենրիխ VI-ին բանտարկում է լոնդոնյան Թաուերում, սակայն ինը տարի անց Լանկասթերների բանակն ազատում է նրան, իսկ Էդուարդին՝ վտարում երկրից: 1471թ.-ին վերջինս, զորք հավաքելով, վերադառնում է եւ հետ նվաճում գահը: Առեղծվածային հանգամանքներում Հենրիխը շուտով մահանում է Թաուերում:

Սակայն Ռիչարդը՝ Էդուարդ IV-ի եղբայրը, սպանում է թագավորին՝ նրա երկու որդիներին բանտարկելով Թաուերում: Եղբայրասպանը թագավորում է Ռիչարդ III փիփղոսով: Շուտով սպանվում են արքայազնները, բայց թագավորի մեղքն այդպես էլ չի հաստատվում:

Ռիչարդը չէր սիրում ինչպես Լանկասթերներին, այնպես էլ Յորքերին: 1485թ.-ին գահի նկատմամբ իր իրավունքի մասին հայտարարում է Լանկեսթերների հեռավոր բարեկամներից մեկը, եւ մինչ այդ պառակտված ազնվականությունն աջակցում է նրան Ռիչարդի դեմ պատերազմում: Խոսքը Հենրիխ Թյուդորի՝ Ռիչմոնդի դքսի մասին է, ով կիսով չափ ուելսցի էր: Վճռական մարտում Ռիչարդի բանակը լքում է նրան, վերջինս պարտվում է եւ սպանվում: Հենրիխ Թյուդորը թագադրվում է հենց մարտի դաշտում: Վերջապես պատերազմն ավարտվում է: Մեկ դար անց Վալտեր Սքոթն այն անվանում է «Ալ եւ Սպիտակ վարդերի պատերազմ», որովհետեւ Յորքերը որպես խորհրդանիշ ընտրել էին սպիտակ, Լանկասթերները՝ կարմիր վարդը:

## Հասարակությունը

Միջնադարի երկրորդ կեսին հասարակությունը բաժանված էր ազնվականների եւ ռամիկների: Դքսերը, կոմսերը համարվում էին ազնվականության վերնախավը: Առավել ստորին աստիճան էին զբաղեցնում ասպետները, որոնք այլեւս զինվորական դաս չէին, քանի որ դարձել էին հողատեր եւ կոչվում էին «ազնիվ հողատերեր»: Հաջորդ դասը կազմում էին ազատ արհեստավորներն ու առեւտրականները, որոնք բնակվում էին քաղաքներում: Հողատերերն իրենց երեխաներին ուղարկում էին քաղաք՝ արհեստ սովորելու, մինչդեռ առեւտրականները հողեր էին ձեռք բերում գավառներում:

Գիլդիաները, որոնք սկզբում կոչված էին պաշտպանելու քաղաքի ողջ բնակչության իրավունքները, շուտով վերածվում են դրանցում ընդգրկված արհեստավորների ունեցվածքի պահապանների՝ անտարբեր մյուսների շահերի նկատմամբ: Անկախ արհեստավորները փորձում են միավորվել գիլդիաների դեմ, ինչը կարելի է արհմիությունների ստեղծման առաջին փորձ համարել: Սակայն գիլդիաների նշանակությունը նվազում է գործարանների ստեղծմամբ:

Գյուղացիների եւ արհեստավորների վաստակն աճում էր ավելի արագ, քան գները, սակայն այդ ընթացքում սկիզբ առած գործընթացնե-

րը XVI դարում տնտեսական ճգնաժամի պատճառ են դառնում: Հողի մեծ մասն օգտագործվում էր որպես արոտավայր, ոչ թե որպես ցանքատարածություն, իսկ հարուստ ագարակատերերն սկսում են ցանկապատել իրենց հողակտորները:

Քաղաքներում մինչ այդ նոր դաս է ձեւավորվում, որը կազմում էին առեւտրականները, փաստաբանները, գործարանատերերը, ազնվականները, որոնք շահեր ունեին ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Նոր դասի ձեւավորումը նոր մթնոլորտ է ստեղծում Անգլիայում, ինչի պատճառ է դառնում հիմնականում գրագետ մարդկանց թվի ավելացումը, որոնք սկսում են մտածել, թե արդյո՞ք ճիշտ են կազմակերպված եկեղեցին ու պետությունը, քննադատել ավատատիրական համակարգը, որը եկամուտ չէր բերում:

# ՄԱՍ II
# ԹՅՈՒԴՈՐՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Թեեւ Հենրիխ VII-ը պակաս հայտնի է, քան Հենրիխ VIII-ը կամ Եղիսաբեթ I-ը, սակայն նրա ավանդը միապետության նոր տեսակի ձեւավորման հարցում առավել մեծ է, քան նրանցից յուրաքանչյուրինը: Նա կիսում էր առեւտրականների եւ հողատերերի աճող դասի հայացքները, ուստի նրա իշխանությունը հիմնված էր գործարար հմտության վրա:

Հենրիխ VII-ը համոզված էր, որ պատերազմները խոչընդոտում են առեւտրի եւ արտադրության զարգացմանը, ինչը կարեւոր է պետության համար, ուստի նա խուսափում էր ինչպես Շոտլանդիայի, այնպես էլ Ֆրանսիայի դեմ պատերազմից:

«Վարդերի պատերազմի» ընթացքում Անգլիայի առեւտրային դիրքերը խաթարվել էին: Գերմանիան իր ձեռքն էր վերցրել Բալթիկայի եւ Հյուսիսային Եվրոպայի հետ առեւտուրը: Թեեւ Իտալիայի եւ Ֆրանսիայի հետ առեւտրական կապերը պահպանվել էին, սակայն դրանք բավականին թույլ էին նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ: Դեպի Եվրոպա ուղին այլեւս անցնում էր միայն Նիդեռլանդներով եւ Բելգիայով:

Հենրիխը հաջողակ էր. ազնվականության մեծ մասը զոհվել էր վերջին պատերազմների ընթացքում, իսկ նրանց հողերն անցել էին թագավորին: Հենրիխը բանակ ունենալու մենաշնորհը վերապահում է միայն իրեն:

Սակայն օրենքի ուժը սասանում է ազնվականության ու զինվորների անհնազանդությունը: Հենրիխը դատում էր մեղավորներին՝ որպես պատժամիջոց նախապատվությունը տալով տուգանքներին, քանի որ դրանք լցնում էին արքայական գանձարանը:

Թագավորի նպատակը ֆինանսապես անկախ միապետության ձեւավորումն էր: Այդ հարցում նրան օգնում էին զոհված ազնվականների կալվածքները եւ գոյություն չունեցող պատերազմների համար հավաքված հարկերը: Հենրիխը երբեք առանց անհրաժեշտության գումար չէր ծախսում, փոխարենը նա մեծ գումարներ էր հատկացնում առեւտրական նավատորմի կառուցմանը: Նրա մահից հետո արքայական գանձարանում 2 միլիոն ֆունտ ստեռլինգ կար, ինչը հավասար էր 15-ամյա պարեկան եկամտին:

Սակայն նրա որդին՝ Հենրիխ VIII-ը, նման չէր հորը: Նա դաժան էր ու շվայտ: Նա ձգտում էր ազդեցիկ դառնալ Եվրոպայում, ինչը, սակայն, չհաջողվեց. պատերազմի տարիներին Անգլիայում շատ բան էր փոխվել, Իսպանիան եւ Ֆրանսիան առավել հզոր էին դարձել, ընդ որում, Իսպանիան միավորվել էր Հռոմի Սրբազան կայսրության հետ, որն այդ ընթացքում տիրում էր Եվրոպայի մեծ մասին: Հենրիխ VIII-ի ցանկությունն էր,

որ Անգլիան հզորությամբ գերազանցի այդ երկու տերություններին: Նա փորձեց դաշինք կնքել Իսպանիայի հետ, սակայն ապարդյուն, այնուհետեւ հակվեց դեպի Ֆրանսիան, սակայն այստեղ եւս ոչինչ չստանալով՝ վերսկսեց բանակցությունները Իսպանիայի հետ:

Հենրիխի հիասթափությունն անսահման էր: Նա հոր կուտակած ամբողջ գումարը ծախսում է արքունիք ձեւավորելու եւ պահելու, ինչպես նաեւ անիմաստ պատերազմների վրա: Վերջերս հայտնաբերված Ամերիկայից հոսող ոսկին ու արծաթը միայն վատթարացնում են դրությունը: Հենրիխը նվազեցնում է մետաղադրամներում արծաթի պարունակությունը, ինչը փողի արագ արժեզրկման է հանգեցնում. տասնհինգ տարի անց ֆունտն արժեզրկվում է յոթ անգամ:

## Ռեֆորմացիա

Հենրիխ VIII-ն անընդհատ եկամուտի նոր աղբյուրներ էր փնտրում: Նրա հայրը հարստացել էր՝ իր կալվածքներին միավորելով ազնվականների հողերը, սակայն եկեղեցու եւ մենաստանների տարածքները մնացել էին անձեռնմխելի: Մինչդեռ եկեղեցին լայնարձակ հողեր ուներ, իսկ մենաստանները երկրի տնտեսության համար այլեւս այդքան կարեւոր չէին, որքան երկու դար առաջ: Բացի այդ՝ մենաստանները հեղինակություն չէին վայելում, քանի որ վանականների մեծ մասը հեռու էր ճգնավորական կյանք վարելուց:

Հենրիխին դուր չէին գալիս եկեղեցու գանձած հարկերն ու տուրքերը: Եկեղեցին միջազգային կառույց էր, որը թագավորն ի վիճակի չէր լիովին վերահսկել, գումարները հոսում էին Հռոմ, ինչը նվազեցնում էր արքայական գանձարանի եկամուտը: Հենրիխը եվրոպացի միակ տիրակալը չէր, ով ձգտում էր «կենտրոնացնել» պետական իշխանությունը եւ վերահսկել եկեղեցին, սակայն Անգլիայի թագավորը լրացուցիչ դրդապատճառներ ուներ:

1510թ.-ին Հենրիխ VIII-ը կնության է առնում ավագ եղբայր Արթուրի այրուն՝ Քաթերինին՝ Արագոնների տոհմից, սակայն մինչեւ 1526թ.-ը վերջինս գահաժառանգ չի պարգեւում արքային: Հենրիխը փորձում է համոզել Հռոմի պապին ապահարզան տալ իրեն, սակայն նա հրաժարվում է Իսպանիայի թագավոր եւ Քաթերինի ազգական Չարլզ V-ի դրդմամբ:

Հենրիխը այլ ուղի է գտնում. 1531թ.-ին նա եպիսկոպոսներին համոզում է իրեն ճանաչել անգլիական եկեղեցու ղեկավար, ինչն ամրագրվում է 1534թ.-ին ընդունված օրենքով: Հենրիխը հնարավորություն է ստանում բաժանվել Քաթերինից եւ ամուսնանալ Աննա Բոլեյնի հետ:

Բաժանումը Հռոմի կաթոլիկ եկեղեցուց քաղաքական քայլ էր եւ պայմանավորված չէր Հենրիխի կրոնական հայացքներով: Նա հավանութ-

յան չէր արժանացնում Ռեֆորմացիայի առաջնորդներ Մարթին Լյութերի (Գերմանիա) եւ Ժան Կալվինի (Ժնեւ) գաղափարները: Նա հավատարիմ էր կաթոլիկությանը:

Ինչպես եւ հայրը, Հենրիխ VIII-ը երկիրը կառավարում էր խորհրդականների միջոցով, սակայն խզումը Հռոմի հետ նա որոշում է ձեւակերպել խորհրդարանի միջոցով: 1532-36 թթ.-ին ընդունված մի շարք օրենքներով՝ Անգլիան բողոքական երկիր է դառնում, թեեւ բնակչության մեծ մասը կաթոլիկ էր:

Հենրիխ VIII-ի Ռեֆորմացիան այդքանով չի ավարտվում: Այն բանից հետո, երբ ժողովուրդն ընդունում է պառակտումը Հռոմից, թագավորն իր նոր գլխավոր նախարարի՝ Թոմաս Կրոմվելի հետ եկեղեցական սեփականության հաշվեգրում է իրականացնում: 1536-39թթ.-ին փակվում է շուրջ 560 մենաստան: Այս ձեւով ձեռք բերված հողերը Հենրիխը վաճառում է հողատերերի եւ առեւտրականների նոր խավին:

Հենրիխն ապացուցեց, որ բաժանումը Հռոմից դիվանագիտական կամ կրոնական աղետ չէ: Նա հավատարիմ էր կաթոլիկ հավատին եւ նույնիսկ մահապատժի էր ենթարկում բողոքականներին, որոնք հրաժարվում էին ընդունել այն: Հենրիխը մահանում է 1547թ.-ին՝ թողնելով երեք զավակ. Մարիան՝ ավագը, Քաթերինայի դուստրն էր Արագոնների տոհմից, Եղիսաբեթը՝ թագավորի երկրորդ կնոջ՝ Աննայի, իսկ ինամյա Էդուարդը Ջեյն Սեյմուրի (Հենրիխի միակ կնոջ, որին նա իսկապես սիրում էր) որդին էր:

## Կաթոլիկների եւ բողոքականների պայքարը

Էդուարդ VI-ը՝ Հենրիխ VIII-ի որդին, գահ բարձրանալիս դեռեւս անչափահաս էր, ուստի երկիրը կառավարում էր խորհուրդը, որի բոլոր անդամները Թյուդորների ձեւավորած բողոքական նոր ազնվականության ներկայացուցիչներ էին:

Այնուամենայնիվ, անգլիացիների մեծ մասը դեռեւս կաթոլիկներ էին, բողոքական էր բնակչության մի մասը միայն, որին, սակայն, հավատքի հարցերում ղեկավար դեր զբաղեցնելու հնարավորություն էր տրված: 1552թ.-ին նոր աղոթարան է հրապարակվում, որն ուղարկվում է ծխական բոլոր եկեղեցիներ: Անգլիացիների մեծ մասը դեմ էր հավատքի հարկադրական փոփոխմանը, սակայն ուրախ էր ազատվել կաթոլիկ եկեղեցուն հատուկ այնպիսի երեւույթներից, ինչպիսիք էին, օրինակ, «ինդուլգենցիաները», որոնց միջոցով Հռոմի պապը թողություն էր տալիս որոշ մեղքերի:

1553թ.-ին՝ Էդուարդի մահից հետո, գահը փոխանցվում է կաթոլիկ Մարիային՝ Հենրիխ VIII-ի դստերը (թագավորի առաջին ամուսնության պտուղը): Բողոքական պալատականների մի մասը փորձում էր գահ

բարձրացնել բողոքական լեդի Ջեյն Գրեյին, սակայն այդ փորձերը հաջողությամբ չեն պսակվում:

Իսկ Մարիան բավականաչափ խորաթափանց եւ ճկուն չէր իր սկզբունքները քաղաքականության հետ համադրելու հարցում: Նա չէր ցանկանում ամուսնանալ առավել ցածր ծագում ունեցող անգլիացու հետ, մինչդեռ օտարերկրացու հետ պսակադրության հետեւանքով Անգլիան կարող էր օտար փիրապետության ներքո հայտնվել: Այնուամենայնիվ, Մարիան ամուսին է ընտրում Իսպանիայի թագավոր Ֆիլիպին: Սա չէր կարելի լավագույն ընտրությունը համարել: Սակայն Անգլիայի թագուհին արտասովոր քայլի է դիմում՝ ամուսնությունից առաջ խնդրելով խորհրդարանի հավանությունը: Խորհրդարանը թեեւ դժկամությամբ, այնուամենայնիվ համաձայնություն է փալիս ամուսնությանը՝ Ֆիլիպին Անգլիայի թագավոր ճանաչելով մինչեւ Մարիայի մահը:

Անհեռատես Մարիան գահակալության հինգ տարիների ընթացքում մահապատժի է ենթարկում շուրջ հինգ հարյուր բողոքականի: Ժողովրդի շրջանում դժգոհությունն աճում էր, խռովությունն անխուսափելի էր թվում, սակայն շուտով թագուհին վախճանվում է:

Եղիսաբեթ I-ը գահ է բարձրանում 1558թ.-ին: Նա փորձում է անգլիական Ռեֆորմացիայի խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորել, Անգլիան միավորել մեկ կրոնով եւ այն բարգավաճ երկիր դարձնել: Բողոքականության այն ձեւը, որն Անգլիայում տարածված էր արդեն 1559թ.-ից, առավել մոտ էր կաթոլիկությանը, քան բողոքականության այլ ուղղությունների: Եկեղեցին, սակայն, դեռեւս պետության հովանու ներքո էր:

Անգլիայի վարչական միավոր է դառնում ծուխը՝ սովորաբար գյուղը, իսկ գյուղի քահանան դառնում է ծխի գրեթե ամենաազդեցիկ անձը:

Բողոքականների եւ կաթոլիկների հակամարտությունը շարունակում է սպառնալ Եղիսաբեթ I-ի դիրքերին գահակալության առաջին փասնամյակում: Հզոր Իսպանիան եւ Ֆրանսիան, ինչպես նաեւ կաթոլիկ այլ պետություններ ամեն պահի կարող էին հարձակում իրականացնել Անգլիայի դեմ: Անգլիայում Եղիսաբեթին սպառնում էին կաթոլիկ ազնվականները, որոնք ցանկանում էին իշխանությունից հեռացնել նրան եւ գահ բարձրացնել Շոտլանդիայի կաթոլիկ թագուհի Մարիա Ստյուարտին:

Շուրջ տասներկու տարի Եղիսաբեթը գերության մեջ է պահում Մարիային, իսկ երբ վերջինս Իսպանիայի թագավոր Ֆիլիպին հռչակում է իր ժառանգորդ, Եղիսաբեթը հրամայում է գլխատել Շոտլանդիայի թագուհուն: Անգլիայի բնակչությունը խրախուսում է միապետի որոշումը: 1585թ.-ին անգլիացիների մեծ մասը կաթոլիկներին թագավորության թշնամի էր համարում: Այդ հակակրանքը քաղաքական լուրջ ուժ էր թագուհու ձեռքում:

## Արտաքին քաղաքականությունը

Թյուդորների գահակալության փարիներին (1485-1603թթ.) Անգլիայի արտաքին քաղաքական ուղեգիծը բազմիցս փոփոխվել էր, սակայն տասնվեցերորդ դարի վերջում որոշ հիմնարար սկզբունքներ են ձեւավորվում: Ինչպես Հենրիխ VII-ը, Եղիսաբեթ I-ը եւս արտաքին քաղաքականության կարեւորագույն մաս էր համարում առեւտուրը: Միջազգային առեւտրում մրցակից յուրաքանչյուր երկիր նրանք դիտարկում էին որպես Անգլիայի հակառակորդ: Այս գաղափարն Անգլիայի արտաքին քաղաքականության հիմքում շարունակում է մնալ մինչեւ տասնիններորդ դարը:

Եղիսաբեթը շարունակում էր պապի՝ Հենրիխ VII-ի գործը: Թագուհին Անգլիայի գլխավոր հակառակորդ, ուստի եւ թշնամի էր համարում Իսպանիան, որն այդ տարիներին պատերազմում էր իսպանական տիրապետության դեմ ընդվզած Նիդեռլանդների հետ: Իսպանական զորքը Նիդեռլանդներ կարող էր հասնել միայն ծովով՝ հատելով Լա Մանշը: Եղիսաբեթը հոլանդացիներին թույլ է տալիս օգտվել անգլիական ծովախորշերից, որտեղից նրանք հարձակումներ էին իրականացնում իսպանական նավերի դեմ: Երբ հոլանդացիները սկսում են տանուլ տալ պատերազմը, Անգլիան նրանց օգնում է ֆինանսապես եւ զորքով:

Բացի այդ՝ անգլիական նավերը գրոհում էին իսպանական նավատորմը, երբ այն վերադառնում էր թագավորության ամերիկյան գաղութներից՝ բեռնված ոսկով եւ արծաթով, քանի որ Իսպանիան Անգլիային արգելել էր իր գաղութների հետ առեւտրական կապեր հաստատել: Թեեւ հարձակվող նավերի մեծ մասը պատկանում էր ծովահեններին, նրանց ավարի մեծ մասը փոխանցվում էր թագավորական գանձարան: Եղիսաբեթը ներողություն էր խնդրում Իսպանիայի թագավորից հարձակումների համար, սակայն չէր հրաժարվում գանձարան փոխանցվող գումարներից: Ֆիլիպը իհարկե տեղյակ էր, որ Եղիսաբեթը խրախուսում է ծովահենների գործողությունները, որոնցից առավել հայտնի էին Ֆրենսիս Դրեյկը, Ջոն Հոուկինսը եւ Մարթին Ֆորբիշերը:

1587թ. Ֆիլիպը որոշում է նվաճել Անգլիան, քանի որ առանց դրա, նրա կարծիքով, հնարավոր չէր ճնշել Նիդեռլանդների խռովությունը: Նա հսկա նավատորմ է կառուցում՝ «Արմադան», եւ ուղարկում այն Անգլիայի ափերի մոտ: Նավատորմի դեմ հարձակումն իրականացնում է Ֆրենսիս Դրեյկը՝ ջախջախելով «Արմադայի» մի մասը եւ իսպանացիներին ստիպելով հեռանալ:

Սակայն Իսպանիայի թագավորը նոր նավատորմ է կառուցում, որի նավերի մեծ մասը նախատեսված էր զինվորներ տեղափոխելու, ոչ թե ծովային մարտերի համար: 1588թ.-ին նավատորմը ջախջախվում է անգ-

լիական նավերի կողմից: Անգլիացիներին մեծապես օգնում է վատ եղանակը, ինչի պատճառով իսպանական նավատորմի մի մասը հայտնվել էր Շոտլանդիայի եւ Իռլանդիայի ժայռոտ ափերի մոտ: Սակայն Անգլիայի եւ Իսպանիայի միջեւ պատերազմն ավարտվում է Եղիսաբեթի մահվանից հետո միայն:

Միաժամանակ Թյուդորները փորձում էին կարգուկանոն հաստատել եւ վերահսկել Անգլիայի անմիջական հարեւանությամբ գտնվող տարածքները:

## Ուելս

Ի տարբերություն Հենրիխ VII-ի, որը կիսով չափ ուելսցի էր, նրա որդին՝ Հենրիխ VIII-ը, չէր կիսում հոր սերն այդ երկրի հանդեպ: Նա փորձում է լիակատար վերահսկողություն հաստատել Ուելսում՝ նրա բնակիչներին «անգլիացի» դարձնելով:

Նա ուելսցիների վերանվանման բարեփոխում է իրականացնում, որոնք, ի տարբերություն անգլիացիների, ազգանուններ չունեին: 1536-43թթ.-ին Ուելսը դառնում է Անգլիայի մի մաս՝ միավորված կենտրոնական իշխանությամբ: Ուելսում գործում էր անգլիական օրենքը, իսկ երկրամասն Անգլիայի օրինակով բաժանված էր կոմսությունների: Անգլիայի խորհրդարանում ընդգրկվում են ներկայացուցիչներ նաեւ Ուելսից, իսկ երկրամասում պաշտոնական լեզու է հռչակվում անգլերենը: Ուելսի լեզուն գոյատեւում էր միայն ուելսյան Աստվածաշնչի եւ բնակչության փոքրաթիվ մասի շնորհիվ, որոնք առօրյա կյանքում շարունակում էին գործածել մայրենին:

## Իռլանդիա

Իռլանդիայում իրադրությունն առավել վատ էր. այստեղ եւս Հենրիխ VIII-ը փորձում էր գրավել իշխանությունը: Նրան հաջողվում է Իռլանդիայի խորհրդարանին համոզել իրեն երկրի թագավոր հռչակել: Միապետը սխալ է գործում՝ փորձելով այստեղ եւս Ռեֆորմացիա տարածել, ի տարբերություն Անգլիայի՝ մենաստաններն ու եկեղեցին Իռլանդիայում դեռեւս սոցիալական եւ տնտեսական կարեւոր միավորներ էին, եւ իռլանդացի ազնվականները վախենում էին խլել եկեղեցու հողերը:

Մյուս կողմից՝ Իռլանդիան «համեղ պատառ» էր կաթոլիկ մյուս երկրների համար, ուստի Անգլիան չէր կարող հանգիստ թողնել իր հարեւանին: Թյուդորների գահակալության տարիներին Անգլիան Իռլանդիայի դեմ պատերազմում է չորս անգամ՝ ի վերջո հպատակեցնելով այն: Անգլիայի գերիշխանությունը հատկապես ուժեղ էր Իռլանդիայի հյուսի-

սում՝ Օլսթերում: Հաղթելով այստեղ՝ անգլիացիները գնում են հողը, իսկ իռլանդացիները ստիպված էին հեռանալ կամ աշխատել նոր հողատերերի համար: Այս իրադրությունը բողոքականների եւ կաթոլիկների միջեւ տեւական պայքարի պատճառ է դառնում:

## Շոտլանդիա

Շոտլանդիայի թագավորները փորձում էին կենտրոնացված այնպիսի միապետություն ստեղծել, ինչպիսին Անգլիայում էր, ինչը շատ դժվար էր, քանի որ Շոտլանդիան առավել աղքատ էր եւ չէր վերահսկում Անգլիայի հետ սահմանն ու երկրի լեռնային շրջանները:

Գիտակցելով իրենց թուլությունը՝ շոտլանդացիները ձգտում էին խուսափել Անգլիայի հետ պատերազմից, սակայն Շոտլանդիան գրավելու Հենրիխ VIII-ի ցանկությունը չափազանց մեծ էր: 1513թ.-ին անգլիական զորքը ջախջախում է շոտլանդական բանակը, սակայն Ջեյմս V թագավորը, ինչպես եւ շոտլանդացիների մեծ մասը ձգտում էին Եվրոպայի առավել հզոր՝ կաթոլիկ մասին սատարել:

Հենրիխ VIII-ը կրկին զորք է ուղարկում Շոտլանդիա: Թագավորությունը մեծ կորուստներ է կրում, մահանում է նաեւ Ջեյմս V-ը: Հենրիխը փորձում է իր որդի Էդուարդին ամուսնացնել Շոտլանդիայի թագուհի Մարիայի հետ, սակայն շոտլանդական խորհրդարանը հավանության չի արժանացնում այդ միությունը, եւ 1558թ.-ին Մարիան ամուսնանում է Ֆրանսիայի թագավորի հետ:

### *Շոտլանդական Ռեֆորմացիա*

Այրիացած Մարիան հայրենիք է վերադառնում 1561թ.-ին: Թեեւ նա կաթոլիկ էր, սակայն թագուհու՝ Ֆրանսիայում գտնվելու ընթացքում Շոտլանդիան պաշտոնապես բողոքական էր դարձել:

Ազնվականությունը, որը կողմ էր Անգլիայի հետ միավորմանը, բողոքականությունը խրախուսում էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նկատառումներով: Շոտլանդիայի միապետն այլեւս կարող էր վերցնել եկեղեցու ունեցվածքը, որը կրկնակի մեծ էր, քան իրենը, կարող էր եկեղեցական հողերի մի մասը հանձնել ազնվականներին: Սակայն, ի տարբերություն անգլիացիների, շոտլանդացիները Ռեֆորմացիայից հետո միապետին թույլ չեն տալիս ամբողջովին վերահսկել եկեղեցու ունեցվածքը: Մասնավորապես շոտլանդական ռեֆորմացիայի ընթացքում Մարիան գտնվում էր Ֆրանսիայում եւ չէր կարող վերահսկել այդ գործընթացը: Շոտլանդական նոր եկեղեցին առավել ժողովրդավարական էր, քան անգլիականը, քանի որ չուներ եպիսկոպոսներ: Եկեղեցին քարոզում էր անհատական հավատքի եւ Աստվածաշունչ ուսումնասիրելու անհրա-

ժեշտությունը, ինչը նպաստում է գրագիտության տարածմանը Շոտլանդիայում: Արդյունքում մինչեւ տասնիններորդ դարի ավարտը շոտլանդացիները Եվրոպայում ամենագրագետ ազգն էին համարվում:

Թեեւ Մարիան կաթոլիկ էր, այնուամենայնիվ չէր փորձում վերադարձնել հին հավատքը: Շուտով թագուհին ամուսնանում է կաթոլիկ լորդ Դարնլիի հետ, իսկ երբ վերջինս ձանձրացնում է նրան, հանձնարարում է սպանել՝ ամուսնանալով մարդասպանի՝ Բոթվելի հետ: Հասարակությունը չէր կարող ընդունել թագուհու այս արարքը, եւ Մարիա Ստյուարտը ստիպված է լինում փախչել Անգլիա, որտեղ Եղիսաբեթ I-ը նրան պահում է բանտարկության մեջ, այնուհետեւ գլխատում:

## Շոտլանդացի թագավորն անգլիական գահին

Մարիայի որդին՝ Ջեյմս VI-ը, գահ է բարձրանում 1578թ.-ին՝ տասներկու տարեկան հասակում: Դեռեւս մանուկ՝ նա աչքի էր ընկնում բարձր ինտելեկտով: Նա գիտեր, որ Եղիսաբեթ I-ի միակ ազգականն է եւ կարող է զբաղեցնել գահը նրա մահից հետո: Մյուս կողմից՝ Շոտլանդիայի թագավորը գիտակցում էր, որ կաթոլիկ Ֆրանսիայի եւ Իսպանիայի միջեւ դաշինքը կարող է Անգլիայի դեմ հարձակմամբ ավարտվել, ուստի անհրաժեշտ էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել ինչպես առաջին երկուսի, այնպես էլ երրորդի հետ: Նրան հաջողվում է խաղաղություն պահպանել երկու ճակատում էլ՝ պաշտոնապես մնալով բողոքական Անգլիայի դաշնակիցը:

Ջեյմս VI-ը հայտնի է որպես թույլ եւ անհեռատես փիրակալ, սակայն, պատմաբանների հավաստմամբ, նա այդպիսին չէր Շոտլանդիայում գահակալության ընթացքում: Նա կարողանում էր լավ հարաբերություններ պահպանել ինչպես բողոքականների, այնպես էլ կաթոլիկների հետ՝ զսպելով եկեղեցու իշխանությունը: Ինչպես եւ Թյուդորները, նա թագավորի միանձնյա կառավարման կողմնակից էր, ուստի որոշումներ էր կայացնում իր խորհրդականների, ոչ թե խորհրդարանի օգնությամբ: Սակայն նա չուներ Թյուդորների հարստությունն ու ռազմական հզորությունը:

Ջեյմս VI-ի գլխավոր հաղթանակը Եղիսաբեթ I-ի մահից հետո՝ 1603թ.-ին, Անգլիայի գահը զբաղեցնելն էր:

## Խորհրդարան

Թյուդորներին դուր չէր գալիս խորհրդարանի միջամտությունը երկրի կառավարմանը: Հենրիխ VII-ը խորհրդարանն օգտագործում էր նոր օրենքներ մշակելու համար: Հենրիխ VIII-ը խորհրդարանի օգնությանն էր դիմում իր պատերազմների համար գումար հավաքելու, այնուհետեւ

Հռոմի դեմ պայքարի նպատակով: Նա ցանկանում էր համոզված լինել, որ քաղաքների եւ գյուղերի ազդեցիկ ներկայացուցիչները խրախուսում են իր գործողությունները, որովհետեւ նրանք ձեւավորում էին հասարակական կարծիքը:

Հնարավոր է՝ Հենրիխը չէր գիտակցում, որ Ռեֆորմացիայի համար օրենքներ մշակելու նպատակով խորհրդարան գումարելով՝ նրան առավել մեծ իշխանություն է տալիս, քան միապետներից որեւէ մեկը: Թյուդորները, իհարկե, առավել ժողովրդավար չէին, քան վաղ շրջանի միապետները, սակայն խորհրդարանն օգտագործում էին իրենց որոշումները կարեւորելու նպատակով՝ դրանով իսկ քաղաքական ուժ տալով օրենքդրին:

Թյուդորները խորհրդարանի գործունեությունը հանդուրժում էին երկու պատճառով. նրանց անհրաժեշտ էր գումար եւ հողագործների ու առեւտրականների աջակցությունը:

Տասնվեցերորդ դարի սկզբին խորհրդարանը նիստ էր գումարում միայն միապետի հրամանով, երբեմն մեկ նստաշրջանից մինչեւ հաջորդը տարիներ էին անցնում:

Թյուդորների կառավարման հարյուրամյակի ընթացքում խորհրդարանի ներսում իշխանությունը Լորդերի պալատից փոխանցվում է Համայնքների պալատին. խորհրդարանի ստորին պալատը կազմված էր հասարակության առավել հարուստ եւ ազդեցիկ դասերի ներկայացուցիչներից: Երկու պալատներում էլ ի հայտ է գալիս խոսնակ, որը վերահսկում էր քննարկումը՝ անհրաժեշտ ուղղություն տալով դրան: Իրականում խորհրդարանը չէր ներկայացնում ժողովրդին: Խորհրդարանականների փոքր մասն էր միայն բնակվում շրջաններում, որը ներկայացնում էր, ուստի խորհրդարանի ներկայացուցիչները կենտրոնանում են հիմնականում Լոնդոնում:

Թյուդորների կառավարման ընթացքում խորհրդարանն իրավասու էր հաստատել նոր հարկեր, մշակել միապետի առաջարկած օրենքները, նրա ցանկության դեպքում խորհուրդներ տալ: Այս պարտավորություններն իրականացնելու համար խորհրդարանականներին տրված էր խոսքի ազատություն, անձեռնմխելիություն ձերբակալությունից, միապետի հետ հանդիպելու իրավունք:

Թյուդորները խուսափում էին խորհրդարանից գումար խնդրել եւ եկամտի նոր աղբյուրներ էին փնտրում, որոնք ոչ միշտ էին հեռատես: Եղիսաբեթ I-ը վաճառում էր «մենաշնորհներ», որոնք որոշակի երկրների հետ որոշակի ապրանքների առեւտրով զբաղվելու բացառիկ իրավունք էին տալիս, «վաճառվում էին» նաեւ պետական պաշտոններ: Այս միջոցառումները հանգեցրին պետական ապարատի եւ Անգլիայի առեւտրական դիրքերի թուլացման:

Հսպակ սահմանված չէին նաեւ խորհրդարանի ազդեցության սահմանները: Ե՛ւ Թյուդորները, ե՛ւ խորհրդականները կարծում էին, թե միապետը պետք է որոշի խորհրդարանում քննարկվելիք հարցերի ցանկը: Սակայն տասնվեցերորդ դարում միապետները օրենսդրի հետ խորհրդակցում էին գրեթե բոլոր հարցերի շուրջ, ինչի հետեւանքով խորհրդարանականների մոտ կարծիք է ձեւավորվում, թե իրենք կարող են պետական կառավարման հարցերի շուրջ որոշումներ կայացնել, ինչը խորհրդարանի եւ միապետի միջեւ անխուսափելի բախման է հանգեցնում:

# ՄԱՍ III
# ՍՏՅՈՒԱՐՏՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստյուարտների հարստությունը, որի կառավարումն Անգլիայում սկսվել էր Ջեյմս I-ի գահակալությամբ (Ջեյմս VI՝ Շոտլանդիայում), այնքան հաջող չէր, որքան Թյուդորներինը: Խորհրդարանի հետ Ստյուարտների տարաձայնությունները ի վերջո քաղաքացիական պատերազմի պատճառ դարձան: Անգլիայի միակ թագավորը, որին դատում եւ գլխատում են, Ստյուարտ էր: Դրան հաջորդած հանրապետությունն առավել թույլ էր, եւ ժողովրդի պահանջով կրկին գահ է բարձրանում մահապատժի ենթարկված միապետի որդին:

## Խորհրդարանն ընդդեմ միապետության

Միապետության եւ խորհրդարանի առաջին տարաձայնություններն ի հայտ են գալիս 1601-ին, երբ Համայնքների պալատը դժգոհություն է հայտնում մենաշնորհներ վաճառելու՝ Եղիսաբեթի քաղաքականության առթիվ: Սակայն խորհրդարանը որեւէ փոփոխություն չի պահանջում. նրանք չէին ցանկանում վշտացնել ծերացող թագուհուն, ումից վախենում եւ ում հարգում էին:

Ինչպես Եղիսաբեթ I-ը, Ջեյմս I-ը եւս փորձում էր երկիրը ղեկավարել առանց խորհրդարանի: Միապետը վախենում էր վերջինի միջամտությունից՝ խորհրդակցելով իր մերձավորների հետ միայն:

Ջեյմսը խելացի եւ կրթված թագավոր էր: Նա համոզված էր, որ միապետները ղեկավարում են համաձայն «սրբազան օրենքի», եւ նրանց քայլերը կարող է դատապարտել միայն Աստված: Թագավորը չէր թաքցնում իր այս համոզմունքը, ինչն էլ խորհրդարանի հետ առաջին վեճի պատճառ է դառնում:

Եղիսաբեթի մահվանից հետո Ջեյմսը հսկա պարտք է ժառանգում, որը հավասար էր թագավորի տարեկան եկամտին: Նա դիմում է խորհրդարանին հարկերը բարձրացնելու խնդրանքով, որպեսզի վճարի պարտքը: Խորհրդարանը համաձայնում է՝ փոխարենը պահանջելով թագավորի արտաքին եւ ներքին քաղաքականությունը քննարկելու իրավունք: Ջեյմսը հրաժարվում է, ինչը խորհրդարանի դիմադրությանն է հանդիպում: Գլխավոր դատավոր Սեր Էդվարդ Քոուկը խորհրդարանին հիշեցնում է «Magna Carta»-ի մասին՝ փաստաթուղթը մեկնաբանելով որպես Անգլիայի ժողովրդի ազատությունը երաշխավորող մեծ օրենք, թեեւ փաստաթուղթն իրականում խորհրդարանի լիազորությունների մասին էր:

Ջեյմսն առանց խորհրդարանի հաջող կառավարում էր երկիրը 1611-21թթ.-ին, երբ Անգլիան խաղաղության մեջ էր, սակայն թագավորն ի վի-

ճակի չէր բանակ պահել: 1618թ.-ին՝ Երեսնամյա պատերազմի սկզբին, խորհրդարանը ցանկություն է հայտնում, որպեսզի Անգլիան պատերազմի կաթոլիկ երկրների դեմ, սակայն թագավորը չի համաձայնում: Մինչեւ 1625թ.-ը՝ Ջեյմսի մահը, նա խորհրդարանի հետ վիճում էր գումար ձեռք բերելու եւ իր արտաքին քաղաքականության նկատմամբ վերահսկողություն հաստատելու՝ խորհրդարանի պահանջի պատճառով:

Չարլզ I-ի՝ Ջեյմսի որդու հարաբերությունները խորհրդարանի հետ առավել լարված էին. վեճերի պատճառը գրեթե միշտ ֆինանսներն էին: Ամեն անգամ, երբ թագավորին գումար էր հարկավոր, նա խորհրդարան էր գումարում, որի նստաշրջանները գրեթե միշտ բանավեճով էին ավարտվում: 1628-ին Չարլզը կրկին ստիպված է լինում խորհրդարան հրավիրել՝ գումար ձեռք բերելու նպատակով, եւ համաձայնում է նրա պահանջներին, ըստ որի՝ միապետը կարող էր գումար ստանալ միայն խորհրդարանի կողմից ընդունված օրենքով եւ զրկվում էր որեւէ մեկին առանց օրինական հիմքի բանտարկելու հնարավորությունից: Այս իրավունքները, որ ձեռք էր բերում խորհրդարանը, նշանակում էին, որ այն այլեւս կարող էր վերահսկել ինչպես թագավորության գանձարանը, այնպես էլ օրենքը: Չարլզը գիտակցում էր, որ այդպիսով իր «սրբազան իրավունքը» կարող է սպառվել, եւ ցրում է խորհրդարանը: Հետագա տարիներին նա հաջող կառավարում էր երկիրը. թվում էր՝ խորհրդարան այլեւս չի գումարվի:

1637թ.-ին, սակայն, Չարլզը լուրջ սխալ է թույլ տալիս: Նա որոշում է վերափոխել շոտլանդական եկեղեցին անգլիականի օրինակով. հրապարակում է նոր աղոթարաններ, փորձում է նշանակել եպիսկոպոսների, որոնք պետք է ընդունեին թագավորի իշխանությունը: Այս միջոցառումներն առաջացնում են շոտլանդացիների դժգոհությունը: Այդ փոփոխությունները նրանք ընկալում են որպես կաթոլիկությունը վերադարձնելու փորձ:

1638թ. գարնանը շոտլանդական բանակն ու այն զորքերը, որ Չարլզին հաջողվել էր հավաքել առանց խորհրդարանի օգնության, հանդիպում են անգլո-շոտլանդական սահմանի մոտ: Չարլզը շոտլանդացիներին հաղթելու համար բավարար ուժեր չուներ, ուստի ստիպված է լինում հավանության արժանացնել քաղաքական ու կրոնական ազատությունների նրանց պահանջը եւ մեծ գումար վճարել՝ տուն վերադառնալու հնարավորություն ստանալու դիմաց: Առանց խորհրդարանի օգնության հնարավոր չէր հայթայթել այդ գումարը, եւ Չարլզը ստիպված է լինում բավարարել նաեւ խորհրդարանականների պահանջը, ըստ որի՝ վերջինս պետք է գումարվեր առնվազն երեք տարին մեկ անգամ: Թեեւ թագավորը ստորագրում է այս օրենքը, որոշ ժամանակ անց պարզ է դառնում, որ նա մտադիր չէ ենթարկվել դրան:

## Քաղաքացիական պատերազմ

Եթե Շոտլանդիայի իրադարձությունները Չարլզին ստիպել էին կրկին դիմել խորհրդարանի օգնությանը, ապա Իռլանդիայի դեպքերը քաղաքացիական պատերազմի պատճառ են դառնում: Ջեյմս I-ը, շարունակելով Եղիսաբեթի գործը, գաղութացնում է Օլսթերը՝ Իռլանդիայի հյուսիսային հատվածը՝ այստեղ վերաբնակեցնելով շոտլանդացի հողագործների: Կաթոլիկ իռլանդացիներն արտաքսվում են Օլսթերից, նույնիսկ նրանք, ովքեր աշխատում էին բողոքական հողատերերի մոտ, փոխարինվում են անգլիացիներով կամ շոտլանդացիներով:

1641թ.-ին Իռլանդիան խռովություն է բարձրացնում, սպանվում է շուրջ երեք հազար բողոքական, այդ թվում՝ կանայք եւ երեխաներ: Մինչ այդ Լոնդոնում թագավորն ու խորհրդարանը վիճում էին, թե ով պետք է վերահսկի բանակը, որը պետք է ճնշեր խռովությունը: Խորհրդարանականների մի մասի կարծիքով, Չարլզը կարող էր օգտագործել բանակը՝ խորհրդարանը ցրելու նպատակով: Թագավորը բարյացակամ էր կաթոլիկ եկեղեցու նկատմամբ, իսկ իռլանդացի որոշ խռովարարներ հայտարարում էին, թե իրենց գործողություններն ուղղված են անգլիական բողոքական խորհրդարանի, ոչ թե թագավորի դեմ: 1642թ.-ին Չարլզը փորձում է ձերբակալել որոշ խորհրդարանականների, սակայն անհաջող:

Լոնդոնը փակում է դարպասները թագավորի դեմ, եւ Չարլզը ստիպված է լինում տեղափոխվել Նոթինգհեմ, որտեղ բանակ է հավաքում՝ խորհրդարանի խռովությունը ճնշելու նպատակով: Սկսվում է քաղաքացիական պատերազմ: Թագավորին պաշտպանում էին Լորդերի պալատի մեծ մասն ու Համայնքների պալատի որոշ անդամներ, իսկ նրա հակառակորդների կողմում էին ամբողջ նավատորմը, առեւտրականների մեծ մասն ու Լոնդոնի բնակչությունը: Դրամական միջոցներից զուրկ թագավորական բանակը հաղթելու հնարավորություն չուներ եւ 1645թ.-ին վերջնականապես ջախջախվում է:

## Հանրապետական Բրիտանիա

Միապետի հակառակորդների բանակը գլխավորող խորհրդարանականների թվում աչքի էր ընկնում կալվածատեր Օլիվեր Կրոմվելը: Նա կանոնավոր բանակի նոր տեսակ է ձեւավորում, որի հիման վրա հետագայում ստեղծվում են Մեծ Բրիտանիայի այժմյան զինված ուժերը: Կրոմվելն իր բանակի շարքերն է հրավիրում կրթված մարդկանց, ովքեր ցանկանում էին պայքարել՝ հանուն իրենց համոզմունքների:

Կրոմվելն ու նրա օգնականները 1645թ.-ին գերեվարում են թագավորին, սակայն չեն կողմնորոշվում՝ ինչպես վարվել նրա հետ: Չարլզը բանտից եւս կարողանում էր խրախուսել ու ուղղորդել ռոյալիստների ուժերը

եւ նույնիսկ խորհրդարանական բանակի դեմ է ուղղում շոտլանդացիների զորքը: Շոտլանդական բանակի ջախջախումից հետո մի շարք խորհրդարանականներ պահանջում են դատավարություն սկսել թագավորի դեմ՝ դավաճանության մեղադրանքով:

Խորհրդարանական շարժման առաջնորդները երկընտրանքի առջեւ էին. նրանք կարող էին Չարլզին կրկին գահ բարձրացնել՝ ցույց տալով, թե ոչինչ չի պատահել, կամ վերջնականապես փապալել միապետությունը եւ քաղաքական նոր համակարգ ձեւավորել: Խորհրդարանականների ու ժողովրդի մեծ մասը կողմնակից էր թագավորի իշխանության վերականգնմանը, սակայն զինվորական մի շարք առաջնորդներ այլ կարծիքի էին: Վերջիններս, որ կոչվում էին պուրիտաններ, հավատում էին Անգլիայի տարածքում սրբազան պետություն ստեղծելու հնարավորությանը:

Համայնքների պալատի անդամների երկու երրորդը դեմ էր թագավորի դեմ դատավարությանը: Սակայն բանակը հեռացնում է նրանց խորհրդարանից, մնացած հիսուներեքը դատում են Չարլզին եւ նրան մեղավոր ճանաչում՝ «թագավորության եւ խորհրդարանի դեմ» պատերազմ սանձելու համար: 1649թ. հունվարի 31-ին թագավոր Չարլզը գլխատվում է:

1649-1660թթ.-ին Բրիտանիան հանրապետություն էր, նոր կարգերը, սակայն, հեղինակություն չէին վայելում: Կրոմվելն ու նրա կողմնակիցներն առավել դաժան կառավարություն էին ձեւավորել, քան այն, որ գործում էր Չարլզ I-ի օրոք: Նոր կառավարությունը, ազատվելով միապետից, ցրել էր նաեւ լորդերի պալատը եւ ձգտում էր ազատվել անգլիական եկեղեցուց:

Շոտլանդացիներին ցնցել էր Չարլզի մահապատիժը: Հանգուցյալ արքայի որդուն՝ Չարլզ II-ին, նրանք ճանաչում են միապետ եւ հրավիրում միանալ անգլիական բանակի դեմ իրենց պայքարին: Սակայն ապստամբների զորքը պարտվում է, եւ երիտասարդ Չարլզը փախչում է Ֆրանսիա: Շոտլանդիայում հաստատվում է անգլիական հանրապետության իշխանությունը:

Նոր կարգերի պայմաններում եւս իրական ուժը բանակն էր, եւ 1653թ.-ին վերջինի եւ խորհրդարանի միջեւ տարաձայնությունների պատճառով օրենսդիրը լուծարվում է. Կրոմվելը միանձնյա կառավարում է երկիրը: Նա առավել մեծ լիազորություններ է իրեն վերապահում, քան թագավոր Չարլզը: Կրոմվելը երկիրը ղեկավարում էր բանակի միջոցով, ինչը դժգոհություն է առաջացնում քաղաքացիների շրջանում: Նա արգելել էր նաեւ նշել Սուրբ ծննդյան եւ Զատկի տոները:

Կրոմվելի մահից հետո՝ 1658թ.-ին, «Պրոտեկտորատը», ինչպես կոչվում էր նրա ձեւավորած կառավարությունը, փլուզվում է: Օլիվեր Կրոմվելը հույս ուներ, որ իր մահից հետո երկիրը կղեկավարի իր որդին, սակայն Ռիչարդ Կրոմվելն աչքի չէր ընկնում առաջնորդի հատկություններով, եւ

շուտով նախաձեռնությունը ստանձնում է զորահրամանատարներից մեկը: Վերջինս 1660թ.-ին ժամանում է Լոնդոն եւ Չարլզ II-ին հրավիրում գլխավորել թագավորությունը: Հանրապետությունը դադարում է գոյություն ունենալ:

Երբ Չարլզ II-ը ժամանում է Անգլիա, հանրապետական կարգերի ընթացքում ընդունված օրենքները մեխանիկորեն դադարում են գործել: Վերադառնալով նա պատժում է միայն նրանց, ովքեր մեղավոր էին հոր մահվան համար՝ ջանալով չվիճել թշնամիների հետ: Սակայն խորհրդարանը դեռեւս շատ թույլ էր, քանի որ Չարլզը կիսում էր թագավորների՝ իշխելու սրբազան իրավունքի մասին հոր կարծիքը:

## Սահմանադրական միապետություն

Չարլզ II-ը ձգտում էր խաղաղություն հաստատել կրոնական խմբավորումների միջեւ՝ պուրիտաններին եւ կաթոլիկներին թույլ տալով ազատ արտահայտել իրենց համոզմունքները: Թագավորն ինքը կաթոլիկության կողմնակից էր, ինչն առաջացնում էր խորհրդարանի դժգոհությունը: 1673թ.-ին խորհրդարանն օրենք է ընդունում, ըստ որի՝ կաթոլիկներին արգելվում է պետական պաշտոններ զբաղեցնել: Մյուս կողմից՝ միապետի ազդեցության հնարավոր աճի նկատմամբ վախը քաղաքական առաջին կուսակցությունների ձեւավորման պատճառ է դառնում: Դրանցից մեկը «վիգերն» էին, որոնք հավատքի ազատության ջատագովներ էին եւ վախենում էին բացարձակ միապետության վերականգնումից: Մյուսները «տորիներն» էին, որոնք ռոյալիստների քաղաքական հայացքների ուղղակի ժառանգորդներն էին: Վիգերը դեմ չէին միապետությանը, սակայն կարծում էին, որ թագավորի իշխանությունը հիմնված պետք է լինի խորհրդարանի համաձայնության վրա:

Կաթոլիկության վերադարձից խուսափող խորհրդարանի հաջորդ քայլը նոր օրենքի ընդունումն էր, համաձայն որի՝ կաթոլիկները չէին կարող տեղեր զբաղեցնել Լորդերի կամ Համայնքների պալատում: Սակայն այս օրենքը չէր կարող խոչընդոտել կաթոլիկ Ջեյմսին՝ Չարլզ II-ի եղբորը, ժառանգել գահը:

Ջեյմս II-ը գահ է բարձրանում 1685թ.-ին՝ Չարլզի մահից հետո: Նա փորձում է չեղյալ հայտարարել օրենքները, որոնք կաթոլիկներին արգելում էին պետական պաշտոններ զբաղեցնել, նա փորձում է նաեւ կաթոլիկ եկեղեցին վերադարձնել Անգլիա:

Հուսահատված տորիներն ու վիգերը Ջեյմսի դուստր Մարիայի ամուսնուն՝ Վիլյամ Օրանացուն, կոչ են անում զավթել անգլիական գահը: Վիլյամը հասնում է Լոնդոն, սակայն գահն առաջարկվում է միայն Մարիային: Այդ ժամանակ Օրանացին սպառնում է հեռանալ Անգլիա-

յից, խորհրդարանը ստիպված է լինում նրան թագավոր ճանաչել: Վիլյամն առաջին թագավորն էր, որին ընտրում է խորհրդարանը: Մինչեւ այդ խորհրդարանը գրանցել էր եւս մեկ հաղթանակ. 1688թ.-ին ընդունված օրենքով պաշտոնապես որոշվում է, որ այն քաղաքական առավել մեծ իշխանություն ունի, քան միապետը:

Փառավոր Հեղափոխությունը, ինչպես հետագայում անվանվում են 1688թ.-ի դեպքերը, թեեւ հետեւողականորեն ծրագրված եւ նախապատրաստված չէր, այնուամենայնիվ Անգլիայի պատմության հեղաշրջումներից է համարվում: Խորհրդարանի լիազորություններն ամրագրվում են «Իրավունքների բիլլում» (1689թ.): Թագավորն այլեւս ի վիճակի չէր առանց խորհրդարանի համաձայնության զորք ունենալ կամ գործել խորհրդարանականներից մեկի դեմ:

## Շոտլանդիա եւ Իռլանդիա

Շոտլանդիայում եւ Իռլանդիայում Ջեյմսի գահընկեցության լուրը հուզումների պատճառ է դառնում: Շոտլանդիայում խռովություն են բարձրացնում Ստյուարտների կողմնակիցները, նրանց թեեւ հաջողվում է հաղթել կառավարական բանակին, սակայն ապստամբների առաջնորդը սպանվում է: Խռովարարների մեծ մասը լեռնային շրջանների բնակիչներ էին, որոնց մի մասը դեռեւս կաթոլիկներ էին:

Շոտլանդիան դեռեւս առանձին թագավորություն էր, թեեւ Անգլիայի հետ ընդհանուր թագավոր ուներ (Ջեյմս II-ը Շոտլանդիայում Ջեյմս VII-ն էր): Մինչդեռ անգլիացիները ձգտում էին միավորել երկու երկրները: Անկախ Շոտլանդիան կարող էր փորձել վերականգնել Ստյուարտների իշխանությունը կամ կրկին դաշինք կնքել Ֆրանսիայի հետ:

Շոտլանդիայի համար առեւտրային սահմանափակումները վերացնելու դիմաց անգլիացիները պահանջում էին երկու թագավորությունների միավորում: Շոտլանդիան այլընտրանք չուներ, քանի որ չհամաձայնելու դեպքում մեծ էր Անգլիայի հարձակման հավանականությունը: 1707թ.-ին երկու երկրները միավորվում են՝ ձեւավորելով Մեծ Բրիտանիան: Այժմ նրանք ընդհանուր խորհրդարան ունեին, թեեւ Շոտլանդիան պահպանել էր իր դատական ու օրենսդրական համակարգերը, սեփական եկեղեցին:

Իռլանդիայում կաթոլիկ Ջեյմս II-ի քաղաքականությունը հույս էր արթնացրել նրանց մոտ, ովքեր կորցրել էին իրենց հողերը բողոքական վերաբնակիչների պատճառով: Կորցնելով գահը՝ Ջեյմսը գիտակցում էր, որ Իռլանդիան հենարան կարող է ծառայել իշխանությունը վերադարձնելու հարցում, եւ տեղափոխվում է այնտեղ: Իռլանդիայի խորհրդարանն անմիջապես օրենք է ընդունում, ըստ որի՝ բողոքականների հողերը պետք է փոխանցվեին կաթոլիկներին: Օրենքը, սակայն, հեշտ չէր իրականացնել: Երեսուն հազար բողոքականներ փակվում են Լոնդոնդերրիում՝ Օլս-

թերի քաղաքներից մեկում, եւ հրաժարվում են հանձնվել՝ պաշարված մնալով իռլանդական բանակի կողմից: Տասնհինգ շաբաթ անց ժամանում են անգլիական նավերը, եւ գրոհն ավարտվում է: Վիլյամ թագավորն Իռլանդիա է ժամանում 1690թ.-ին եւ Բոյն գետի մոտ ջախջախում Ջեյմսի բանակը: Վերջինս փախչում է Ֆրանսիա եւ այլեւս չի վերադառնում իր թագավորություններից ոչ մեկը:

## Արտաքին քաղաքականությունը

Տասնյոթերորդ դարում Բրիտանիայի գլխավոր հակառակորդներն էին Իսպանիան, Հոլանդիան եւ Ֆրանսիան: Հոլանդիայի հետ պատերազմը սկսվել էր առեւտրային մրցակցության պատճառով: Դարի կեսերին երեք պատերազմից հետո Անգլիան հասնում է ցանկալի արդյունքի եւ հաշտություն կնքում Հոլանդիայի հետ, երկու երկրները սկսում են պատերազմել Ֆրանսիայի դեմ: Վիլյամ Օրանացին Անգլիան ներգրավում է Ֆրանսիայի դեմ ռազմական գործողություններում՝ սահմանափակելու վերջինի հզորացումն ու ընդլայնումը, որը շարունակում էր ուժեղանալ Լյուդովիկոս XIV-ի կառավարման օրոք: Բրիտանական բանակը հաղթում է մի շարք վճռական ճակատամարտերում, եւ 1713թ.-ին Ֆրանսիան համաձայնում է չշարունակել ընդլայնումը՝ Ջեյմս II-ի որդու փոխարեն Բրիտանիայի միակ ղեկավար ճանաչելով Աննային:

Նոր տարածքների նվաճումը պատմական այդ ժամանակահատվածում շատ կարեւոր էր Եվրոպայի տնտեսական զարգացման համար: Բրիտանիայի գաղութներն առավել քիչ էին, քան Հոլանդիայինը եւ Իսպանիայինը: Սակայն նրա տիրապետության ներքո գտնվող տարածքները տնտեսական կարեւոր նշանակություն ունեին. Բրիտանիան տասներկու գաղութ ուներ Ամերիկայի արեւելյան ափամերձ շրջաններում, ինչպես եւ Հնդկաստանում, որը հարուստ էր շաքարեղեգով:

Շաքարեղեգի պլանտացիաների ծավալումը մեծացնում է ստրուկների պահանջարկը: 1685թ.-ին հնդկական գաղութներում շուրջ 50 հազար ստրուկ էր աշխատում: «Շաքարի արքաներն» օգտագործում էին իրենց ամբողջ ազդեցությունը, որպեսզի պետությունը չարգելի ստրկատիրությունը:

# ՄԱՍ IV
# ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՐ

Մինչեւ տասնութերորդ դարի վերջը արդյունաբերության եւ առեւտրի աճի, գաղութային տարածքների ընդլայնման շնորհիվ Բրիտանիան հզորությամբ չէր զիջում Ֆրանսիային: Բրիտանական նավատորմն ամենահզորն էր աշխարհում, որը պաշտպանում էր երկրի առեւտրային ճանապարհները եւ սպառնում թշնամիների ծովային ուղիներին:

Մեծ Բրիտանիայի պատմության ընթացքում առաջին անգամ պետական որոշումներ սկսում են կայացնել նախարարները: Իշխանությունն այլեւս պատկանում էր այն կուսակցություններին, որոնք ներկայացնում էին նախարարները, եւ խորհրդարանում այդ կուսակցությունների դաշնակիցներին: Նախարարները կառավարում էին հարուստ մի երկիր, որի հարստությունն աճում էր գաղութների հետ առեւտրի շնորհիվ:

Սակայն մի խումբ ձեռնարկատերերի եւ ֆինանսիստների ձեռքում կապիտալի կենտրոնացման հետեւանքով բնակչության մեծ մասը զրկվում էր հողից, տներից եւ ստիպված էր կենտրոնանալ քաղաքներում՝ ձեւավորելով բանվորների դասը: Արդյունաբերության զարգացումը հանգեցնում է այնպիսի քաղաքների անսպասելի աճի, ինչպիսիք էին Բիրմինհեմը, Գլազգոն, Մանչեսթերը, Լիվերպուլը:

## Պետությունը

1714թ.-ին Ստյուարտների հարստության վերջին գահակալի՝ թագուհի Աննայի մահից հետո պարզ չէր, թե ով կժառանգի գահը: Տորիների մի մասը ցանկանում էր գահ բարձրացնել Ջեյմս II-ի որդուն, սակայն նա հրաժարվում է անգլիականություն ընդունել, եւ թագը փոխանցվում է Հաննովերների հարստության ներկայացուցիչ Գեորգին:

Սակայն Ջեյմս II-ի որդին չի հրաժարվում գահի նկատմամբ հավակնությունից եւ 1715թ.-ին փորձում է խռովություն բարձրացնել Գեորգի դեմ, որը մինչեւ այդ ժամանել էր Անգլիա: Վերջինի բանակը հեշտությամբ ջախջախում է «յակոբիտներին», ինչպես անվանում էին Ստյուարտների կողմնակիցներին:

Նախարարների լիազորությունները զգալիորեն ընդլայնվում են, քանի որ նոր թագավորը խոսում էր միայն գերմաներեն եւ քիչ էր հետաքրքրված իր նոր տերությամբ: Թագավորի նախարարների շարքում աչքի էր ընկնում Ռոբերտ Ուոլփոլը, որը Բրիտանիայի առաջին վարչապետն է համարվում:

Եվրոպական մյուս միապետություններում թագավորները բացարձակ իշխանություն ունեին, ուստի Ուոլփոլը ձգտում էր թագավորին խորհրդա-

րանի վերահսկողության փակ պահել: Միապետի իշխանությունը սահմանափակված էր հետեւյալ հարցերում՝ թագավորը չպետք է կաթոլիկ լիներ, նա չէր կարող փոխել կամ չեղյալ հայտարարել օրենքներ, նրա բանակն ու ֆինանսական միջոցները կախված էին խորհրդարանից:

1733թ.-ին Ֆրանսիան դաշինք է կնքում Իսպանիայի հետ: Դաշինքը կարող էր կտրուկ բարելավել Ֆրանսիայի առեւտրական դիրքերը, որի առջեւ բացվում էին Հարավային Ամերիկայի եւ Հեռավոր Արեւելքի իսպանական գաղութների շուկաները: Անգլիան փորձում էր այդ շուկաներում հաստատվել դեռեւս Ֆրենսիս Դրեյկի ժամանակներից:

1756թ.-ին պատերազմ է սկսվում Ֆրանսիայի դեմ: Մինչ այդ Բրիտանիան Ֆրանսիայի հետ պատերազմել էր 1743-48թթ.-ին, սակայն այս անգամ անգլիացիները Եվրոպայում ռազմի դաշտը հանձնում են դաշնակից Պրուսիային՝ հարձակվելով ֆրանսիական գաղութների վրա: Մեծ Բրիտանիայի նպատակը Ֆրանսիայի առեւտուրը ոչնչացնելն էր:

Կանադայում անգլիացիները 1759 եւ 1760թթ.-ին, համապատասխանաբար, գրավում են Քվեբեկն ու Մոնրեալը, ինչը Բրիտանիային հնարավորություն է տալիս վերահսկել մորթու, ձկան եւ փայտի առեւտուրը: Մինչ այդ Իսպանիայի ափերի մոտ ջախջախվում է ֆրանսիական ռազմական նավատորմը, Հնդկաստանում բրիտանացիները ֆրանսիացիներին ջախջախում են ինչպես Բենգալում, այնպես էլ հարավում՝ Մադրասայի մոտ, արդյունքում Բրիտանիան սկսում է վերահսկել Հնդկաստանի մեծ մասը: Մեծաթիվ անգլիացիներ մեկնում են՝ յուրացնելու նոր գաղութները:

1760թ.-ին գահ է բարձրանում Գեորգ III-ը, ով չէր ցանկանում շարունակել պատերազմը, եւ 1763թ.-ին հաշտություն է կնքում Ֆրանսիայի հետ՝ այդ մտադրության մասին չզգուշացնելով դաշնակից Պրուսիային:

Հարյուրամյակի վերջում Մեծ Բրիտանիայի առեւտուրն ակտիվ զարգանում էր: Առավել շահութաբեր էին համարվում հնդկական գաղութները: Ձեւավորվում է Բրիտանիայի այսպես կոչված շահավետ առեւտրի եռանկյունին. անգլիական ապրանքները՝ մասնավորապես կաշին եւ գործվածքները, Արեւմտյան Աֆրիկայում փոխանակվում էին ստրուկներով, ստրուկները տեղափոխվում էին Հնդկաստան՝ շաքարեղեգի պլանտացիաներ, որտեղից Մեծ Բրիտանիան շաքար էր ստանում: Մինչեւ քսաներորդ դարում կայսրության անկումը գաղութներն անգլիական ապրանքների սպառման կարեւոր շուկաներ էին:

## Ամերիկյան գաղութների կորուստը

1764թ.-ին հարկերի պատճառով վեճ է ծագում ամերիկյան գաղութների եւ բրիտանական կառավարության միջեւ: 1770թ.-ին Հյուսիսային Ամերիկայի բրիտանական գաղութներում 2,5 միլիոն մարդ էր բնակվում:

Նրանց մեծ մասը համոզված էր, որ իրենց համար սահմանված հարկերն ապօրինի են: Շուտով ամերիկյան գաղութները բոյկոտում են անգլիական ապրանքները: Կառավարությունը որոշում է ուժով ճնշել խռովությունը: Սկսվում է անկախության համար ամերիկյան պատերազմը (1775-83թթ.), որի ընթացքում բրիտանական զորքը լիովին ջախջախվում է: Արդյունքում Բրիտանիան կորցնում է ամերիկյան բոլոր գաղութները՝ բացի Կանադայից:

## Իռլանդիա եւ Շոտլանդիա

1690թ.-ին Վիլյամ Օրանացու հաղթանակը զգալի հետեւանքներ է ունենում իռլանդացիների համար: Հաջորդ մեկուկես դարերի ընթացքում Դուբլինի բողոքական խորհրդարանն օրենքներ է ընդունում, որոնք կաթոլիկներին արգելում էին խորհրդարանի անդամ դառնալ, քվեարկել, պետական պաշտոն զբաղեցնել, իրավաբան դառնալ, համալսարան կամ նավատորմ ընդունվել: Թեեւ կաթոլիկները թվով գերազանցում էին բողոքականներին, այնուամենայնիվ նրանք վերածվում են երկրորդ կարգի բնակիչների սեփական հողում: 1770-ական թվականներին, սակայն, կաթոլիկների իրավունքները սահմանափակող որոշ օրենքներ չեղյալ են հայտարարվում:

Մեծ Բրիտանիայի վերահսկողությունն այս տարածքում մեծացնելու նպատակով 1801թ.-ին Իռլանդիան միավորվում է Բրիտանիայի հետ, իսկ իռլանդական խորհրդարանը ցրվում է: Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը գոյատեւում է 120 տարի:

Շոտլանդիան փուժում է գահը վերանվաճելու՝ Ստյուարտների փորձերի պատճառով: Անհաջող փորձերից երեսուն տարի անց Ջեյմս II-ի թոռը՝ արքայազն Չարլզ Էդուարդ Ստյուարտը, հաստատվում է Շոտլանդիայի արեւմտյան ափերում եւ անգլիացիների դեմ բանակ հավաքում: Լեռնային որոշ կլաններ հետեւում են նրան, սակայն արքայազնի բանակը ջախջախվում է, խռովությունը՝ ճնշվում: Արքայազնի հետեւորդները խստորեն պատժվում են. նրանց մի մասը սպանվում է, մյուսներն արտաքսվում են Ամերիկա:

## Քաղաքները

1700թ.-ին Անգլիան դեռեւս գյուղատնտեսական երկիր էր, սակայն տասնութերորդ դարի կեսին արդեն գյուղերի տեղում ձեւավորվում են այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Մանչեսթերը, Լիվերպուլը, Բիրմինհեմը, Շեֆֆիլդը եւ Լիդսը:

Քաղաքների սանիտարական վիճակը ծանր էր: Բնակիչներն աղբը լցնում էին հենց փողոցներում, դրանք կեղտոտ էին եւ նեղ, երբեմն՝ մին-

չեւ երկու մետր լայնությամբ: Քաղաքները տարբեր հիվանդությունների օջախ էին, արդյունքում Լոնդոնում ծնված չորս երեխայից միայն մեկն էր ապրում մինչեւ 20 տարեկան:

Տասնութերորդ դարում քաղաքն «առողջացնելու» փորձեր են ձեռնարկվում: Առավել լայն փողոցներ են կառուցվում, որոնցով կարող էր միաժամանակ երկու շքախումբ երթեւեկել: 1734թ.-ին Լոնդոնում քաղաքի լուսավորման համակարգ է հայտնվում: 1760թ.-ին քաղաքներին թույլատրվում է հարկեր գանձել հողատերերից, որոնք պետք է ծառայեին քաղաքի կարիքներին: Շուտով Լոնդոնն ու մյուս քաղաքները մաքուր եւ առավել հավաք են դառնում:

Տասնութերորդ դարի քաղաքներում բնակչությունը բաժանվում էր չորս դասի՝ հարուստ վաճառականներ, մանր առեւտրով զբաղվողներ, արհեստավորներ եւ աշխատավորներ՝ առանց որոշակի մասնագիտացման:

## Գավառները

Գավառների բնակիչների կյանքը փոխվել էր արմատապես՝ ի տարբերություն քաղաքաբնակների: Դարասկզբին գյուղերի մեծ մասը հետեւում էր հողի մշակման կազմակերպման սահմանված խիստ կարգին, ըստ որի՝ գյուղը գտնվում էր երեք կամ չորս հասարակական մեծ դաշտերի կենտրոնում, բացի այդ՝ յուրաքանչյուր բնակիչ մշակում էր հողի իր սեփական հատվածը: Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ հողը «հանգստանում էր» (չէր մշակվում):

Սակայն տասնութերորդ դարում հասարակական հողի մեծ մասը սեփականացնում են հողատերերն ու հարուստ վաճառականները, որոնք փորձում էին իրենց կապիտալի ապահով ներդրում երաշխավորել: Արդյունքում շատ գյուղացիներ զրկվում են հողակտորներից, որն օգտագործում էին որպես արոտավայր, երբեմն տուն կառուցում:

Դարի կեսերին փոփոխություններ են կատարվում հողի մշակման համակարգում՝ կախված նոր մեքենաների եւ հումուսի գործածությունից: Այս նորարարությունները հնարավորություն են տալիս ցորեն աճեցնել ցանկացած հողի վրա, արդյունքում նույնիսկ աղքատները սպիտակ հացով սնվելու հնարավորություն են ստանում: Սակայն, չնայած գյուղատնտեսության զարգացմանը, գյուղմթերքների եւ անասունների գլխաքանակի ավելացմանը՝ Բրիտանիան ի վիճակի չէր կերակրել աճող բնակչությանը եւ ստիպված էր ներմուծել մթերքի մի մասը:

## Արդյունաբերական հեղափոխություն

Բրիտանիայում արդյունաբերական հեղափոխության պատճառ են դառնում մի շարք հանգամանքներ՝ աշխատուժի, ապրանքների պահանջարկի ավելացումը, էներգիայի նոր աղբյուրները, տրանսպորտի բարելավումը: Աճող քաղաքների բնակչության մեծ մասը հիմնականում գյուղացիներ էին, ովքեր զրկվել էին իրենց հողերից եւ ստիպված էին պարեն, հագուստ գնել, ինչի հետեւանքով մեծանում է այդ ապրանքների նկատմամբ պահանջարկը:

Տասնութերորդ դարասկզբին Բրիտանիայում արդեն կային պարզունակ մեքենաներ, որոնցով կարելի էր հեշտ պատրաստվող ապրանքներ արտադրել: Մեքենաներից յուրաքանչյուրը նախատեսված էր միայն մեկ գործողության համար, ինչը հանգեցնում է աշխատանքի բաժանման սկզբունքի զարգացման, այս երեւույթն էլ արդյունաբերական հեղափոխության անկյունաքարերից է դառնում:

Հարյուրամյակի ընթացքում կտրուկ աճում է ածխի արդյունահանումը եւ մետաղաձուլությունը: 1800թ.-ին Բրիտանիան չորս անգամ ավելի շատ ածուխ էր արդյունահանում եւ նույնքան շատ պողպատ էր ձուլում, քան 1700թ.-ին: Երկաթաձուլության աճը հնարավոր է դարձնում մեքենաների արտադրության զարգացումը: Արդյունաբերության որեւէ ճյուղի զարգացումը հանգեցնում էր արտադրության ծավալների աճի նաեւ մյուսներում: 1785թ.-ին հայտնագործվում է ջուլհակության հաստոցը: Երբ գործվածքի եւ հագուստի արտադրությունն առավել հեշտանում է, Բրիտանիան ավելի մեծ քանակությամբ բամբակ է ներմուծում գաղութներից եւ գործվածքներ ու հագուստներ արտահանում Եվրոպայի երկրներ ու սեփական գաղութներ:

Բացվում են տեղական կավից հախճապակյա սպասքի արտադրության ֆաբրիկաներ: Նոր սպասքը գործածությունից դուրս է մղում նախկինում օգտագործվող մետաղյա ափսեներն ու բաժակները: Շուտով հախճապակին սկսում են արտահանել մեծ քանակությամբ: Առավել հայտնի էր Ջոշուա Վեջվուդի ֆաբրիկան, որի բարձր որակի հախճապակյա սպասքը հայտնի է նաեւ այսօր:

Ապրանքների ինքնարժեքը կտրուկ նվազում է տրանսպորտային համակարգի բարելավման շնորհիվ: Քաղաքների միջեւ նեղուցներ են կառուցվում, որոնք հնարավորություն են տալիս նավերով տեղափոխել ապրանքները, ինչն առավել մատչելի էր: Բարենորոգվում են նաեւ ճանապարհները, որոնք մինչ այդ օգտագործվում էին մարդկանց, ոչ թե ապրանքի տեղափոխման համար: Ծովային եւ ցամաքային տրանսպորտի համակարգի բարելավման շնորհիվ էլ հնարավոր է դառնում արդյունաբերական հեղափոխությունը:

Սակայն արդյունաբերության զարգացումը նաեւ բացասական հետեւանքներ ուներ. մեքենաների շահագործման պատճառով շատերը կորցնում էին աշխատատեղերը: Պարբերաբար բանվորների խռովություններ էին կազմակերպվում, որոնց մասնակիցները կոչ էին անում ոչնչացնել մեքենաները: Խորհրդարանն օրենք է ընդունում, ըստ որի՝ մեքենաները վնասելու դիմաց մահապատիժ է սահմանվում: Բրիտանիան զգուշանում էր հեղափոխությունից:

## Պատերազմ Նապոլեոնի դեմ

Ֆրանսիայի հարեւաններն անմիջապես չեն գիտակցում, որ այնտեղ տեղի ունեցող հեղափոխությունը սպառնում է նաեւ իրենց: Միապետի իշխանությունն ու ռազմական հզորությունը բավարար չէին հեղափոխական գաղափարների տարածումը խոչընդոտելու համար:

Ֆրանսիայում հեղափոխությունն իրականացրել էր բուրժուազիան, այսինքն՝ միջին դասը, որն առաջնորդում էր գյուղացիներին եւ բանվորներին: Անգլիայում բուրժուազիան եւ հողատերերը դարերով խաղաղ գոյատեւում էին Համայնքների պալատում եւ վերածվել էին բրիտանական հասարակության ամենաազդեցիկ դասի: Նրանք չէին համակրում ֆրանսիացի հեղափոխականներին եւ վախենում էին աշխատավոր դասի հնարավոր «ակտիվացումից»: Բրիտանիայում հեղափոխություն կարող էր սկսվել համայնքային հողերի յուրացման, արդյունաբերության մեքենայացման, բնակչության արագ աճի պատճառով:

Որոշ արմատականներ համակրում էին Ֆրանսիայի հեղափոխականներին: Արմատականների մեծ մասը, սակայն, ձերբակալվում է. նրանց մեղադրում են բրիտանական կառավարության դեմ սպառնալիքի համար:

Ֆրանսիական հեղափոխությունն ահաբեկել էր ողջ Եվրոպան: Բրիտանական կառավարությունը հատկապես զգուշանում էր բանակի ընդվզումից, որի համար կառուցվում են հատուկ զորանոցներ՝ զինծառայողներին բնակչության մյուս մասի ազդեցությունից զերծ պահելու համար:

Սակայն որպես կղզի՝ Մեծ Բրիտանիան առավել զերծ էր հեղափոխության վտանգից, քան եվրոպական մյուս երկրները: Այնուամենայնիվ, նա եւս միանում է Ֆրանսիայի դեմ պատերազմին, երբ վերջինս գրավում է Բելգիան եւ Հոլանդիան: Մեկը մյուսի հետեւից եվրոպական երկրները հանձնվում էին Նապոլեոնին եւ բռնի միացվում Ֆրանսիային: Եվրոպայի մեծ մասը Նապոլեոնի վերահսկողության ներքո էր:

Բրիտանիան Ֆրանսիայի դեմ պատերազմ է սկսում ծովում, որովհետեւ մի կողմից՝ առավել հզոր նավատորմի էր տիրապետում, մյուս կողմից՝ Լոնդոնի համար առեւտրային ուղիների անձեռնմխելիությունը

կենսական նշանակություն ուներ: Բրիտանական նավատորմի հրամանատար ադմիրալ Նելսոնը մի շարք վճռական հաղթանակներ է տանում Եգիպտոսի, Դանիայի եւ, վերջապես, Իսպանիայի ափերի մոտ՝ Թրաֆալգարում, 1805թ.-ին, որտեղ ոչնչացնում է ֆրանս-իսպանական նավատորմը:

Ցամաքում անգլիական զորքն առաջնորդում էր գեներալ Վելլինգթոնը: Իսպանիայում ֆրանսիացիների նկատմամբ մի շարք հաղթանակներից հետո նա ներխուժում է Ֆրանսիա: 1814թ.-ին Նապոլեոնը, որն ուժասպառ էր եղել Ռուսաստանում ջախջախումից հետո, հանձնվում է: Սակայն մեկ տարի անց նա փախչում է գերությունից եւ բանակ հավաքում Ֆրանսիայում: Վելլինգթոնը պրուսական բանակի օգնությամբ վերջնականապես ջախջախում է Նապոլեոնին Վաթերլոյի ճակատամարտում 1815թ.-ին:

# ՄԱՍ V
# ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

Տասնիններորդ հարյուրամյակը Մեծ Բրիտանիայի ծաղկման դարաշրջանն էր: Այն կայսրություն էր, որը հսկայական տարածքներ էր վերահսկում ողջ աշխարհում: Մինչեւ դարավերջ այն առավել մեծ քանակությամբ ապրանք էր արտադրում, քան աշխարհի որեւէ այլ երկիր:

Միջին խավի արագ զարգացումը մասամբ պայմանավորված էր բնակչության աննախադեպ աճով: 1815թ.-ին Մեծ Բրիտանիայում 13 մլն մարդ էր բնակվում, 1871թ.-ից այդ թիվը կրկնապատկվում է՝ 1914թ.-ին հասնելով 40 միլիոնի: Բնակչության աճն ու գավառից քաղաք մարդկանց տեղափոխությունը խախտում են քաղաքական հավասարակշռությունը, եւ դարի վերջին փղամարդկանց մեծ մասը քվեարկելու իրավունք է ստանում: Քաղաքականությունն ու պետական գործերը միջին խավի սեփականությունն են դառնում: XIX դ. վերջին ազնվականության եւ միապետության ազդեցությունն աննշան էր: Սակայն աշխատավոր դասը դեռեւս չէր գտել իր տեղը հասարակությունում եւ պետական գործերում:

1815թ.-ին Մեծ Բրիտանիան ձգտում էր անհասանելի առեւտրային դիրք ապահովել իր համար: Թագավորությունը ձգտում էր ոչ միայն ընդլայնել իր առեւտուրը, այլեւ վերահսկել համաշխարհային բեռնափոխադրումներն ու համաշխարհային շուկաները: Սակայն Բրիտանիան չէր պատրաստվում գաղութացնել բոլոր տարածքները: Գոյություն ունեին միայն որոշ տարածքներ, որոնց Բրիտանիան ձգտում էր տիրապետել, այն էլ՝ ոչ թե հաջող առեւտրի, այլ քաղաքական ազդեցությունն ամրապնդելու համար:

Եվրոպայում հավասարակշռությունը պահպանելու եւ համաշխարհային առեւտուրը վերահսկելու հոգսերը XIX հարյուրամյակում բրիտանական արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն էին:

## Ներքին քաղաքականությունը

Մինչեւ դարի կեսերը Բրիտանիային սպառնում էր ներքին, ոչ թե արտաքին վտանգ: Նապոլեոնի դեմ պատերազմները, որոնք երկրորդ պլան էին մղել արդյունաբերական հեղափոխության բացասական հետեւանքները, ավարտվել էին: Պատերազմի ընթացքում անհրաժեշտ այնպիսի ապրանքների կարիքը, ինչպիսիք էին զենքը, հագուստը, այլեւս չկար: Մյուս կողմից՝ գործազրկությունն աճում էր 300 հազար զինծառայողների վերադարձի պատճառով, որոնք աշխատանք էին փնտրում: Արդյունքում արագ աճեցին գները, բարձրացավ հանցավորության մակարդակը: Չերբակալված հանցագործներն ուղարկվում էին նոր գաղութ՝ Ավստրալիա: Շատ գործազուրկներ կենտրոնանում էին քաղաքներում:

1815-35 թթ.-ին Մեծ Բրիտանիան գյուղական երկրից վերածվում է մի պարածքի, որի բնակչության մեծ մասն ապրում էր քաղաքներում: XIX դարի առաջին տասնամյակներում այնպիսի քաղաքների բնակչությունը, ինչպիսիք էին Լիդսը, Մանչեսթերը եւ Գլազգոն, կրկնապատկվում է: Լոնդոնը այնուամենայնիվ շարունակում է Մեծ Բրիտանիայի խոշորագույն քաղաքը համարվել:

Անհրաժեշտ էր հասարակական բարեփոխումներ իրականացնել: Տորիները ձգտում էին, որ խորհրդարանը ներկայացներ սեփականատերերի, իսկ արմատականները՝ հասարակ բնակիչների շահերը: Վիգերը կամ լիբերալները կենտրոնում էին եւ բավարար փոփոխություններ էին պահանջում՝ հեղափոխությունից խուսափելու համար:

1832թ.-ին վերջապես բարեփոխման մասին օրենք է ընդունվում, ըստ որի՝ ընտրազանգվածի թիվը Շոտլանդիայում 5 հազարից վերածվում է 65 հազարի: Խորհրդարանում առաջին անգամ ներկայացվում է անգլիական քառասունմեկ քաղաք, այդ թվում՝ Մանչեսթերն ու Լիդսը: Քվեարկողների ընդհանուր թիվն ավելանում է 50%-ով: Սակայն Անգլիան, որտեղ ապրում էր Մեծ Բրիտանիայի բնակչության 54%-ը միայն, զբաղեցնում էր խորհրդարանական մանդատների 70%-ը: Չնայած թերություններին՝ բարեփոխումների միջոցով Բրիտանիայի քաղաքաբնակ նոր հասարակությունը ճանաչում էր գտնում:

## Միջին դասի վերելքը

Միջին դասը Մեծ Բրիտանիայում ձեւավորվել էր դարեր առաջ: Այն առեւտրականների եւ փոքր ագարակատերերի դասն էր, որը կտրուկ աճում է XVIII դարի երկրորդ կեսին՝ արդյունաբերության եւ դրա հետեւանքով գործարանատերերի թվի ավելացման շնորհիվ: Տասնիններորդ դարում, սակայն, այն աննախադեպ աճ է ունենում՝ դառնալով առավել բազմազան, ներառելով նաեւ արհեստավարժների, ինչպիսիք էին հոգեւոր սպասավորները, իրավաբանները, բժիշկները, դիվանագետները, բանկային աշխատողները եւ զինծառայողները:

Միջին դասը ներառում էր նաեւ առեւտրականների տարբեր խավեր, որոնք ազգային հարստության իրական արարիչներն էին: Դրանք հիմնականում մարդիկ էին, ովքեր բարձրացել էին հասարակության ստորին շերտերից, հավատում էին ծանր աշխատանքի եւ ճիշտ ապրելակերպի անհրաժեշտությանը: Այդ դասը ներառում էր ինչպես հաջողակ եւ հարուստ արդյունաբերողների, այնպես էլ մանր առեւտրականների:

Չնայած «դասակարգային» համակարգին՝ Վիկտորյանական դարաշրջանը հասարակությունում մեծ փոփոխությունների ժամանակահատված էր: Արդյունաբերողների երեխաները նախընտրում էին ֆինան-

սական եւ առեւտրային հատվածը, նրանց մի մասը փորձում էր մասնագիտական որակավորում ստանալ: Նրանցից առավել աչքի ընկնողներն աստեղի կամ լորդի կոչում են ստանում՝ հասարակության վերին խավ մուտք գործելու հնարավորությամբ:

## Քաղաքների աճը եւ պետական համակարգի բարեփոխումները

Տասնիններորդ դարում քաղաքների բնակչությունը սկսում է ձգտել դեպի արվարձաններ, քանի որ քաղաքները գերբնակեցված եւ կեղտոտ էին: 1832թ.-ին կեղտոտ ջրի միջոցով տարածված հիվանդությունները, այդ թվում՝ խոլերան, 31 հազար կյանք են խլում:

Դարի կեսերին քաղաքներում հատուկ պաշտոնյաներ են նշանակվում, որոնք պատասխանատու էին սանիտարական վիճակի համար: Արագ կրճատվում է հիվանդությունների՝ մասնավորապես խոլերայի մակարդակը: Այդ պաշտոնյաները նաեւ աշխատում էին հսկել, որ նորակառույց շենքերը գերբնակեցված չլինեն. դեռեւս գոյություն ունեին աղքատ թաղամասեր, որտեղ խիտ բնակեցված էին բանվորների խրճիթները: Քաղաքային խորհուրդներից լավագույնները զբոսայգիներ, գրադարաններ, հասարակական բաղնիքներ եւ նույնիսկ համերգային դահլիճներ են կառուցում:

Մեծ Բրիտանիայի ժամանակակից պետական համակարգի հիմնական մասը ձեւավորվել է 1860-70-ական թթ.-ին: 1867-84թթ. քվեարկողների թիվը 20%-ից հասնում է 60%-ի՝ քաղաքներում, եւ 70%-ի՝ գավառներում: Արդյունքում աճում են քաղաքական կուսակցությունները, հատկապես դրանց տեղական մասնաճյուղերը: Այս հանգամանքը, թերթերի արդյունաբերության աճին զուգընթաց, լուրջ խթան է դառնում հասարակական կարծիքի կարեւորման համար: Այսպիսով՝ արագ զարգանում է ժողովրդավարությունը: Հստակեցվում է Մեծ Բրիտանիայի քաղաքական քարտեզը. Անգլիան՝ հատկապես հարավը, պահպանողական էր, մինչդեռ Շոտլանդիան, Իռլանդիան, Ուելսն ու Հյուսիսային Անգլիան արմատական հայացքների կողմնակից էին: Համայնքների պալատն ընդլայնվում է մինչեւ 650 ներկայացուցիչ, իսկ Լորդերի պալատը զգալիորեն կորցնում է ազդեցությունը:

## Թագուհին եւ նրա կայսրությունը

Վիկտորյա թագուհին գահ է բարձրանում երիտասարդ տարիքում՝ 1837թ.-ին՝ կառավարելով մինչեւ 1901թ.-ը: Նա ամուսնանում է գերմանացի Ալբերտ արքայազնի հետ, ով մահանում է 1861թ.-ին՝ 42 տարեկան

հասակում: Թագուհին տարիներ շարունակ սգում էր ամուսնու վախճանը եւ դուրս չէր գալիս հասարակություն: Երբ նրան վերջապես համոզում են առավել ակտիվ մասնակցություն ունենալ թագավորության գործերին, Վիկտորյան դառնում է Բրիտանական կղզիների ամենահեղինակավոր տիրուհին:

Մինչ այդ թագավորությունն ընդլայնում էր գաղութային տերություն-ները: Ամերիկյան գաղութների կորստից հետո նոր տարածքների ձեռքբե-րումն այդքան էլ տարածված գաղափար չէր, ուստի մինչեւ 1840թ.-ը Բրի-տանիան հիմնականում զբաղված էր իր շահերի եւ առեւտրային ուղիների պաշտպանությամբ: Կայսրության պատմության առավել ամոթալի էջե-րից են համարվում Չինաստանի դեմ «օփիումային պատերազմները»՝ այդ երկիր հնդկական օփիում տեղափոխելու եւ վաճառելու համար:

Եվրոպայում Մեծ Բրիտանիան փորձում էր պահպանել հավասա-րակշռությունը՝ աջակցելով թուլացող Օսմանյան կայսրությանը Ռու-սաստանի հարձակումների ժամանակ:

1890թ.-ի եվրոպական երկրների միջեւ համաձայնագրով՝ Աֆրիկան բաժանված էր շահերի գոտիների: Մեծ Բրիտանիային հաջողվել էր առավել մեծ տարածք գրավել: Կայսրության համար առավել կարեւոր էին Եգիպտոսն ու Սուեզի ջրանցքը: Բրիտանիան Եգիպտոսն օկուպաց-րել էր մինչեւ 1954թ.-ը:

Բրիտանացիներով բնակեցված գաղութներին՝ Կանադային, Ավստ-րալիային եւ Նոր Զելանդիային, շուտով թույլատրվում է սեփական կա-ռավարություն ձեւավորել, սակայն նրանք պարտավոր էին Մեծ Բրիտա-նիայի միապետին իրենց պետության ղեկավարը համարել:

Տասնիններորդ դարի վերջին Բրիտանիան վերահսկում էր Երկրագնդի օվկիանոսների եւ ցամաքի մեծ մասը: Սակայն նույնիսկ գաղութատիրա-կան համակարգի ծաղկման ժամանակաշրջանում գաղութները ծանր բեռ էին դարձել, որոնց վրա ավելի ու ավելի շատ ֆինանսական միջոցներ էին ծախսվում: Այդ բեռն անտանելի է դառնում արդեն քսաներորդ դարում, երբ նրանք անկախություն են պահանջում:

## Ուելսը, Իռլանդիան եւ Շոտլանդիան

Ուելսում առավել քիչ խնդիրներ կային, քան Շոտլանդիայում եւ Իռ-լանդիայում: Տասնիններորդ դարում Ուելսի բնակչությունը քառապատկ-վում է: Հարավում ածխաքարի հարուստ հանքավայրեր կային, որոնք ածխի արդյունահանման եւ մետաղաձուլական արդյունաբերության կենտրոններ են դառնում: Արդյունքում Ուելսի բնակչության երկու երրոր-դը տեղափոխվում է հարավ՝ աշխատանք փնտրելու: 1870թ.-ին Ուելսն արդեն հիմնականում արդյունաբերական էր, սակայն հյուսիսում մնա-

ցել էին փարածքներ, որտեղ բնակչության մեծ մասը հողագործներ կամ ագարակապերեր էին:

Խորհրդարանի բարեփոխումներն ուելսցիներին հնարավորություն են տալիս ազատվել հարուստ հողատերերի ընտանիքների ազդեցությունից, որոնց միջոցով շուրջ 300 տարի ներկայացված էին խորհրդարանում:

Շոտլանդիան եւս բաժանված էր արդյունաբերական գոտու՝ Գլազգոյի եւ Էդինբուրգի շրջանում, եւ գավառների: Արդյունաբերական հեղափոխությունը հատկապես մեծ հարված է հասցնում լեռնային շրջանների բնակիչներին:

Առավել դժվար էր Իռլանդիայի գործը: Անգլիացիների իշխանությունից ազատվելու՝ իռլանդացիների պայքարը վերածվում է պատերազմի կաթոլիկների եւ բողոքականների միջեւ: 1829թ.-ին կաթոլիկներին թույլատրվում է մասնակցել խորհրդարանական ընտրություններին, ինչն առավել ամրապնդում է իռլանդացիների ազգային ինքնագիտակցության զգացումը:

1845-47 թթ. քաղցի տարիներ էին Իռլանդիայում: Սովից մահանում է մեկուկես միլիոն իռլանդացի, այն դեպքում, երբ իռլանդական ցորենն արտահանվում էր Անգլիա: Կառավարությունը թերագնահատում էր իրավիճակի լրջությունը: Իռլանդացիներից շատերն ստիպված էին լքել հայրենիքը: Նրանք հիմնականում տեղափոխվում են ԱՄՆ:

## Սոցիալական եւ տնտեսական բարենորոգումներ

1875-1914թթ. Մեծ Բրիտանիայում աղքատների կյանքը զգալիորեն բարելավվում է, կրկնապատկվում են աշխատավարձերը, գները նվազում են 40%-ով: 1870 եւ 1871 թթ. ընդունվում են համընդհանուր կրթության մասին օրենքներ, որոնց համաձայն՝ մինչեւ տասներեք տարեկան երեխաները պարտավոր էին սովորել դպրոցում: Շոտլանդիայում կրթության պետական համակարգը գործում էր դեռեւս Ռեֆորմացիայի ժամանակաշրջանից: Շոտլանդիայում գործում էր չորս համալսարան, որոնցից երեքը հիմնադրվել էին միջնադարում:

XIX դ. սկզբին Ուելսում կտրուկ աճում է դպրոցների թիվը, բացվում է երկու համալսարան:

Ամբողջ Անգլիայում խոշոր համալսարաններ են հիմնադրվում, որտեղ, ի տարբերություն Օքսֆորդի եւ Քեմբրիջի, առավել մեծ թվով ճշգրիտ գիտություններ եւ տեխնոլոգիաներ էին ուսուցանվում՝ բրիտանական արդյունաբերության պահանջարկը բավարարելու նպատակով:

Իշխանությունը գավառից փոխադրվում է քաղաք: Գործի է դրվում տեղական ինքնակառավարման՝ մինչ այդ ձեւավորված համակարգը: Նվազում է եկեղեցու ազդեցությունը, 1900թ.-ին կիրակի օրերին եկեղեցի էր այցելում Լոնդոնի բնակիչների 14%-ը միայն: Երկաթգծի շահարկումը եւս նպաստում է հասարակական փոփոխություններին:

## Դարաշրջանի ավարտը

Քսաներորդ դարասկզբին բրիտանացիներից ոչ ոք չէր էլ գուշակում, որ հրաժեշտ է տալիս ողջ մի դարաշրջանի: Մարդիկ հավատում էին, որ ազգը կարող է առանց հեղափոխության սոցիալական եւ տնտեսական կայուն բարեփոխումներ իրականացնել, ժողովրդավարական հասարակություն ձեւավորել:

Արմատական բարեփոխումների նախադրյալները կառավարությանը ստիպում են սոցիալական պայմանների բարելավման պայմաններ նախաձեռնել: 1907թ.-ին բոլոր աշակերտներն անվճար ճաշով են ապահովվում: Հաջորդ տարվանից սկսում է գործել ծերության թոշակի ծրագիրը: 1909թ.-ին բացվում է Աշխատանքի բորսան, որտեղ գործազուրկները կարող էին աշխատանք գտնել: Երկու տարի անց բոլոր աշխատավորները ստիպված են լինում ազգային ապահովագրության համակարգի վճարումներ կատարել:

1911թ.-ին խորհրդարանական ճգնաժամ է ծագում, երբ Լորդերի պալատը հրաժարվում է հաստատել նոր բյուջեն, որը հարուստների ունեցվածքի համար առավել մեծ հարկեր էր նախատեսում: Գեորգ V թագավորին հաջողվում է հաղթահարել ճգնաժամը՝ հայտարարելով, թե բավարար է միայն ազատական լորդերի քվեն, որպեսզի բյուջեն ընդունվի: Իրադրությունից օգտվում է Համայնքների պալատը եւ օրենք է ընդունում, ըստ որի՝ Լորդերի պալատը կորցնում էր խորհրդարանի ստորին պալատում ընդունված ֆինանսական օրենքներն արգելափակելու իրավունքը: Մյուս ոլորտներում եւս խորհրդարանի վերին պալատի իրավունքները սահմանափակվում են. այն զրկվում էր օրենքները մերժելու իրավունքից եւ կարող էր միայն երկու տարով հետաձգել դրանց՝ ուժի մեջ մտնելը: 1911թ. ընդունվում է նաեւ օրենք, ըստ որի՝ Համայնքների պալատի ներկայացուցիչների համար սահմանվում է աշխատավարձ:

## Պատերազմի սպառնալիք

Տասնիններորդ դարի վերջում արդեն ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիան այլեւս այնքան էլ հզոր տերություն չէ: Գերմանիան եւ ԱՄՆ-ն առավել մեծ քանակությամբ պողպատ էին արդյունաբերում եւ առավել լավ

էին սպառազինված, քան Բրիտանիան:

Պատճառները հետեւյալն էին՝ մյուս երկրները օգտակար հանածոների առավել մեծ պաշարներ ունեին, քան Միացյալ Թագավորությունը, բրիտանացի ֆինանսիստների մեծ մասը կապիտալը ներդնում էր արտասահմանում եւ չէր նպաստում բրիտանական արդյունաբերության ընդլայնմանը: Բացի այդ՝ Մեծ Բրիտանիան մրցակիցներին արդեն զիջում էր գիտության եւ տեխնիկայի զարգացման հարցում: Մասնավոր դպրոցներն ու համալսարանները կրթված մարդկանց չէին խրախուսում զբաղվել գիտությամբ կամ բիզնեսով:

Գերմանիայի հզորացմանը զուգընթաց՝ Եվրոպայում սկսում է խախտվել ուժերի հավասարակշռությունը: Մեծ Բրիտանիան գիտակցում է, որ այլեւս համաշխարհային տերություն չէ, չի վերահսկում ծովերը, եւ որ մյուս տերություններն առավել հզոր նավատորմ ու բանակ ունեն: Բրիտանիան շտապում է դաշինքներ կնքել այլ երկրների հետ: Բանակցությունները հաջողությամբ են ավարտվում Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Ճապոնիայի դեպքում, սակայն Օսմանյան կայսրության եւ Գերմանիայի հետ, որից առավել շատ էր երկյուղում, համաձայնություն ձեռք բերել չի հաջողվում:

1914թ.-ին սկսվում է Առաջին աշխարհամարտը: Մեծ Բրիտանիան մինչեւ վերջին պահը հույս էր փայփայում, որ պատերազմը կշրջանցի իրեն, սակայն երբ գերմանական զորքը ներխուժում է Բելգիա, Բրիտանիան ստիպված է լինում պատերազմ հայտարարել Գերմանիային, քանի որ 1838թ.-ի պայմանագրով պարտավորվել էր պաշտպանել Բելգիան ռազմատենչ հարեւաններից:

# ՄԱՍ VI
# ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ

Տասնիններորդ դարը Մեծ Բրիտանիայի ծաղկման դարաշրջան էր: Քաղաքական այդ կայսրությունը վերահսկում էր հսկայական տարածքներ ողջ աշխարհում: Մինչեւ դարի վերջին քառորդն այն իր արտադրության ծավալով գերազանցում էր բոլորին:

Անսպասելի անկման հիմնական պատճառները երկու աշխարհամարտերում կրած կորուստներն ու գաղութների անկախացումն էին:

Քսանմեկերորդ դարի սկզբում արդեն Մեծ Բրիտանիայի ինքնավստահությունը զգալի խաթարվել է, սակայն պատճառները դժվար է նշել. ոմանք պնդում են, որ ծույլ է աշխատուժը, իսկ արհմիությունները չափազանց ազդեցիկ են, մյուսները մեղքը բարդում են ներգաղթյալների վրա:

## Առաջին աշխարհամարտ

Պատերազմի առաջին շաբաթներին Գերմանիան հաղթում էր Մեծ Բրիտանիային եւ Ֆրանսիային: Գերմանացիներն առավել լավ մարզված զինծառայողներ, կատարելագործված սպառազինություններ եւ հարձակման հստակ ծրագիր ունեին: Դաշնակիցների բանակը չորս տարի պայքարում էր Ֆրանսիայի տարածքն ազատագրելու համար:

Բացի Ղրիմի պատերազմից՝ վերջին հարյուրամյակում սա Մեծ Բրիտանիայի առաջին պատերազմն էր, այդ իսկ պատճառով նա պատրաստ չէր դիմակայել ժամանակակից զինատեսակների ավերիչ ուժին: Բրիտանացիները մեծ կորուստներ էին կրում, ուստի 1916թ.-ին համընդհանուր զորահավաք է հայտարարվում: Մերձավոր Արեւելքում՝ Իրաքում եւ Պաղեստինում, ինչպես եւ Գալիպոլիում եւ Դարդանելում բրիտանացիները պատերազմում էին թուրքերի դեմ: Այստեղ եւս մարդկային մեծ կորուստներ կային, սակայն պատճառը հիմնականում տապն ու հիվանդություններն էին:

Ինչպես միշտ, Մեծ Բրիտանիայի համար շատ կարեւոր էին ծովային մարտերը, քանի որ այդտեղ պարտությունը Միացյալ Թագավորության անհապաղ անձնատրության կարող էր հանգեցնել: Բրիտանացիներին հաջողվում է հաղթել մի շարք կարեւոր մարտերում, սակայն գերմանացիները խորտակում են Անգլիայի առեւտրային նավատորմի երկու երրորդը՝ վեց շաբաթ շարունակ բրիտանացիներին քաղցի մատնելով:

Երբ հեղափոխությունից հետո Ռուսաստանը հաշտություն է կնքում Գերմանիայի հետ, վերջինս Մեծ Բրիտանիային եւ Ֆրանսիային հաղթելու հույս էր փայփայում: Սակայն չեզոք ջրերում գերմանական սուզանավերի հարձակումները պատերազմի մեջ են ներքաշում Միացյալ Նա-

հանգներին: Ամերիկյան զորքի ժամանումը Ֆրանսիա վերջ դրեց պատերազմին: 1918թ. նոյեմբերին Գերմանիան հանձնվեց:

Այդ ընթացքում Բրիտանիան կորցրել էր 750 հազար զինծառայող, 2 միլիոնը վիրավոր էր: Հասարակությունը պահանջում էր հաշվեհարդար տեսնել Գերմանիայի հետ:

Այս պայմաններում Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարները 1919թ.-ին հանդիպում են Վերսալում՝ քննարկելու հաշտության պայմանները: Գերմանիան չի հրավիրվում խորհրդաժողովին, սակայն ստիպված է լինում ընդունել դրանում ընդունված պայմանները եւ կրել որոշված պատիժը, որը բավականին խիստ էր:

## Իռլանդիայի անկախացումը

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Մեծ Բրիտանիայի կառավարությունը համաձայնում է ինքնավարություն շնորհել Իռլանդիային: Իհարկե, մտավախություն կար, որ Օլսթերում բողոքականները քաղաքացիական պատերազմ կսկսեն, սակայն Առաջին աշխարհամարտի պայմաններում ռազմատենչ շատ իռլանդացիներ անցնում են բրիտանական բանակի շարքերը:

Իռլանդացիների մյուս մասը, սակայն, կարծում էր, թե իմաստ չունի արյուն թափել անգլիացիների համար: Վերջիններս չէին համակերպվում ինքնավարության մտքի հետ եւ լիակատար անկախություն էին պահանջում: 1916թ.-ին՝ Զատկի տոնին, հանրապետականները Դուբլինում խռովություն են բարձրացնում: Նրանք գիտակցում էին, որ խռովությունը չի օգնի նպատակին հասնել, սակայն հույս ունեին, թե այն կոգեշնչի մյուս իռլանդացիներին: Խռովությունն արագ ճնշվում է, սակայն Մեծ Բրիտանիայի կառավարությունը լուրջ սխալ է թույլ տալիս՝ մահապատժի ենթարկելով ապստամբության բոլոր առաջնորդներին:

1918թ.-ի ընտրություններում հանրապետականները հաղթում են գրեթե բոլոր ընտրատարածքներում՝ բացի Օլսթերից: Բրիտանական խորհրդարանին միանալու փոխարեն իռլանդացի պատգամավորները հավաքվում են Դուբլինի նոր խորհրդարանում եւ Իռլանդիան հանրապետություն հռչակում: Իռլանդացիները սեփական բանակն են կազմավորում եւ պարտիզանական պատերազմ սկսում անգլիացիների դեմ: Արդյունքում բրիտանական կառավարությունը որոշում է զիջումներ կատարել: 1921թ.-ին այն համաձայնում է անկախ ճանաչել Իռլանդիայի հարավային հատվածը՝ Միացյալ Թագավորության կազմում պահպանելով Օլսթերը կամ Հյուսիսային Իռլանդիան: Այդ պայմանագրով նոր ձեւավորված հանրապետությունը ճանաչում է Մեծ Բրիտանիայի կառավարության գերակայությունը՝ Թագավորությանը թույլ տալով օգտվել որոշակի նավահան-

գիտներից: Պայմանագիրը չեղյալ է հայտարարվում միայն 1937թ.-ին, երբ Իռլանդիան անկախ հանրապետություն է հռչակվում:

## Տնտեսության անկումը

Պատերազմից հետո անկում է ապրում ոչ միայն Բրիտանիայի տնտեսությունը, այլեւ հասարակությունը: Պատերազմի ընթացքում կառավարությունը ստիպված էր հարկերը 6-ից դարձնել 25%: Ընդլայնվում է պետական ապարատը, ինչն աշխատավորների եւ կառավարության միջեւ հակադրության պատճառ է դառնում: 1920-ական թթ.-ի սկզբում երկրում գործադուլների ալիք է բարձրանում, որոնք կառավարությունը ճնշում է ուժով: Բացի ներքին հակասություններից՝ Մեծ Բրիտանիայի տնտեսությունը զգալի կորուստներ է կրում նաեւ «Մեծ ճգնաժամի» պատճառով: 1930-33 թթ.-ին երկրում երեք միլիոն գործազուրկ կար:

Ճգնաժամի հասցրած վնասն առավել ակնառու էր Գերմանիայում, ինչի հետեւանքով Բրիտանիան զրկվեց իր համար կարեւորությամբ երկրորդ սպառման շուկայից: Գերմանիայի տնտեսական ճգնաժամը ճանապարհ հարթեց Ադոլֆ Հիտլերի համար:

1930-ականներին բրիտանական տնտեսությունը սկսում է վերելք ապրել, գլխավոր պատճառը նոր պատերազմի սպառնալիքն էր: Կառավարությունը զինվում էր եւ մեծ ներդրումներ էր կատարում ծանր արդյունաբերության ոլորտում: 1937թ.-ին Մեծ Բրիտանիան ԱՄՆ աջակցությամբ արդեն զենք, ինքնաթիռներ եւ զինվորական սարքավորումներ էր արտադրում:

## Երկրորդ աշխարհամարտ

Համաշխարհային առաջին պատերազմից հետո Գերմանիան վերականգնում է ռազմական հզորությունը եւ ֆաշիստական վարչակարգի մյուս պետությունների հետ (Իտալիա, Ավստրիա եւ Իսպանիա) հարձակվում է եվրոպական թույլ երկրների վրա:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Չեմբեռլենը 1938թ.-ին Գերմանիայի հետ խաղաղության համաձայնագիր էր ստորագրել՝ զավթված Չեխոսլովակիան գերմանական տարածք ճանաչելով: Սակայն երբ 1939թ.-ին Գերմանիան ներխուժում է Լեհաստան, Մեծ Բրիտանիան ստիպված է լինում պատերազմ հայտարարել նրան: Բրիտանացիները պատերազմում էին հանուն ժողովրդավարության եւ, ինչպես իրենք էին կարծում, թույլ երկրներին պաշտպանում էին ուժեղներից:

Բոլորն ակնկալում էին, թե Գերմանիան կհարձակվի Մեծ Բրիտանիայի վրա, սակայն վերջինիս հաջողվում է հաղթել օդային կարեւոր

մարտում: Հաղթանակը, սակայն, չէր կարող կանխել բրիտանական քաղաքների ռմբակոծումը գերմանացիների կողմից: Օդային առաջին հարձակումներից հետո միայն Լոնդոնում անօթեւան է մնում մեկուկես միլիոն մարդ:

Թեեւ պատերազմը սկսվել էր Եվրոպայում, այն շուտով տարածվում է ողջ աշխարհով մեկ: 1941թ.-ին Գերմանիայի դաշնակից Ճապոնիան հարձակվում է բրիտանական գաղութների վրա Մալայզիայում, Բիրմայում եւ Հնդկաստանում: Արդյունքում բրիտանացի զինծառայողները ողջ կայսրությունից պատերազմում էին Գերմանիայի, Իտալիայի եւ Ճապոնիայի դեմ:

1941թ.-ին, սակայն, Գերմանիան եւ Ճապոնիան մեծ սխալ են թույլ տալիս, ինչը կանխորոշում է նրանց պարտությունը պատերազմում. առաջինը հարձակվում է Խորհրդային Միության, երկրորդը՝ ԱՄՆ-ի վրա:

Առանց ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի մասնակցության Մեծ Բրիտանիան չէր կարող հաղթող չէր դուրս գալ այդ պատերազմում: 1943թ.-ին խորհրդային զորքը գերմանացիներին դուրս էր մղել ԽՍՀՄ տարածքից, իսկ Մեծ Բրիտանիան գերմանացիներից եւ իտալացիներից մաքրել էր Հյուսիսային Աֆրիկան: Իտալիան անձնատուր է լինում 1943թ. հուլիսին, իսկ 1944թ.-ին բրիտանացի եւ ամերիկացի զինծառայողները մուտք են գործում բռնազավթված Ֆրանսիայի տարածք: 1945թ. մայիսին Գերմանիան վերջապես անձնատուր է լինում, ավելի ուշ հանձնվում է նաեւ Ճապոնիան:

## Հետպատերազմյան ժամանակաշրջան

Պատերազմի ավարտին հաղթողները հիմնում են Միավորված ազգերի կազմակերպությունը, որը, սակայն, որպես չորս դաշնակիցների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի միություն, կարճատեւ կյանք է ունենում: Եվրոպան շուտով պառակտվում է ԱՄՆ եւ ԽՍՀՄ վերահսկողության տակ գտնվող գոտիների:

1948-49թթ.-ին Խորհրդային Միությունը փորձում է գրավել Արեւմտյան Բեռլինը՝ փակելով դեպի քաղաք տանող բոլոր ցամաքային ուղիները: ԽՍՀՄ ծրագիրը ձախողվում է Բեռլինին հասցված օդային օգնության շնորհիվ: Արեւմտյան Բեռլինի համար մարտերի հետեւանքով ձեւավորվում են ընդդիմադիր դաշինքներ. ՆԱՏՕ-ն՝ արեւմուտքում, եւ Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը՝ արեւելքում:

Բրիտանական արտաքին քաղաքականության խնդիրը միայն ԽՍՀՄ վտանգը կանխելը չէր: Լոնդոնը պետք է նաեւ նոր տեղ գտներ պատերազմի հետեւանքով փոփոխված աշխարհում եւ հարմարվեր Միացյալ Նահանգների, եվրոպական պետությունների եւ Համագործակցության

երկրների (Մեծ Բրիտանիայի նախկին գաղութների միավորում) հետ ձեւավորված նոր հարաբերություններին:

Բրիտանիան դեռեւս իրեն համարում էր աշխարհի հզորագույն երկրներից մեկը, եւ այդ վստահությունն ամրապնդվել էր գիտական երեք կարեւոր հայտնագործությունների շնորհիվ, որոնք մեծացրել էին նրա ռազմական ներուժը: Դրանք էին տիեզերքի ուսումնասիրությունը, միջուկային զենքի եւ միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների մշակումը:

Սակայն միջազգային ասպարեզում Մեծ Բրիտանիայի դիրքի թուլացումը Եգիպտոսում ճգնաժամի պատճառ է դառնում: Մինչեւ 1956թ. Մեծ Բրիտանիան վերահսկում էր Սուեզի ջրանցքը, սակայն Եգիպտոսը փորձում է զավթել այն: Բրիտանիան Ֆրանսիայի եւ Իսրայելի հետ գրոհում է Եգիպտոսը: Սակայն մյուս երկրները՝ մասնավորապես ԱՄՆ-ն, հավանության չեն արժանացնում այդ քայլը՝ Մեծ Բրիտանիային ստիպելով դուրս բերել զորքը Եգիպտոսից: Սակայն եթե մինչեւ այս միջադեպը Բրիտանիան չէր կարող ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի հետ խոսել հավասար դիրքերից, ապա այժմ Ասիայի եւ Աֆրիկայի մյուս երկրները նրան նոր լույսի ներքո են սկսում դիտարկել:

Կայսրության անկման հետեւանքով սպառման այդպիսի շուկայի կորուստը Մեծ Բրիտանիային ստիպում է նոր հայացք ուղղել Եվրոպական Ընկերակցությանը (այժմ՝ Եվրամիություն): Բրիտանիան կազմակերպությանն անդամակցում է 1973 թ.-ին եւ դանդաղ, սակայն հաստատուն քայլերով միավորվում է Եվրոպային:

## Կայսրության անկումը

Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո պարզ էր, որ Միացյալ Թագավորությունն ի վիճակի չէ ղեկավարել ընդլայնված Բրիտանական կայսրությունը, որն ընդգրկում էր երկրագնդի ցամաքի քառորդ մասը: 1919թ.-ի խորհրդաժողովում ԱՄՆ-ի ճնշման ներքո Բրիտանիան համաձայնում է իր գաղութներին ինքնավարություն շնորհել, չնայած մինչեւ 1945թ. անկախ էր միայն Իրաքը, Լոնդոնը շարունակում էր վերահսկել այդ երկրների արտաքին քաղաքականությունը:

Հնդկաստանում աճող դժգոհությունն ու անկախության ձգտումը վերաճում են ազգային շարժման, արդյունքում 1947թ.-ին Մեծ Բրիտանիան ի վերջո հրաժարվում է այդ գաղութից, որը բաժանվում է Հնդկաստանի եւ Պակիստանի: Շուտով անկախանում է նաեւ Պաղեստինը, իսկ Ցեյլոնը բրիտանական տիրապետությունից ազատվում է հաջորդ տարի:

1950-ականներին Բրիտանիան դեռեւս պահպանում էր գաղութների մեծ մասը, սակայն Եգիպտոսի դեպքերից հետո դրանք հերթով անկախանում են: 1945-65թթ.-ին բրիտանական գաղութների 500 միլիոն բնակիչներ անկախություն են ձեռք բերում:

Բոլոր նախկին գաղութները՝ որպես ազատ եւ հավասար գործընկերներ, հրավիրվում են միավորվելու նոր Համագործակցությունում. այս կազմավորման միջոցով Բրիտանիան ձգտում էր ինչ-որ կերպ պահպանել նախկին ազդեցության մի մասը: Այժմ Մեծ Բրիտանիայի տիրապետության տակ են Ֆոլկլենդյան կղզիները, որոնց համար 1982թ.-ին նա պատերազմել է Արգենտինայի դեմ, եւ Ջիբրալթարը:

## Միապետություն

Քսաներորդ դարում որոշակիորեն աճում է միապետության հեղինակությունը: 1932թ.-ի Սուրբ ծննդյան տոնին Գեորգ V-ը՝ Վիկտորյա թագուհու թոռը, ռադիոուղերձով դիմում է Համագործակցության եւ կայսրության բոլոր ժողովուրդներին: Նրա ելույթը մեծ հաջողություն է ունենում, ինչից հետո միապետի՝ սուրբծննդյան ուղերձներն ավանդույթ են դառնում: Գեորգ թագավորը սիրված էր բրիտանացիների կողմից:

Սակայն թագավորական ընտանիքը հայտնվում է ճգնաժամում, երբ Գեորգ V-ի որդին՝ Էդուարդ VI-ը, հրաժարվում է գահից՝ ամուսնալուծված մի ամերիկուհու հետ պսակադրվելու նպատակով: Այդ ժամանակ ապահարզանները ընդունված չէին հասարակության կողմից, եւ այդ դեպքը ցույց է տալիս, որ թագավորական ընտանիքի անդամների կյանքը սահմանափակված է հասարակական կարծիքով:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Գեորգ VI-ը՝ Էդուարդի եղբայրը, վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը Մեծ Բրիտանիայի՝ ռմբակոծությունից տուժած շրջաններ այցերի համար: Միապետով եւ նրա տիկնոջով հիանում էին. նրանք հրաժարվել էին լքել Բուկինհեմյան պալատը, նույնիսկ երբ այն ռմբակոծվում էր: 1952թ.-ին, երբ գահ է բարձրանում Եղիսաբեթ II-ը, միապետությունն սկսում է առավել մեծ հեղինակություն վայելել:

## Հյուսիսային Իռլանդիա

1921թ.-ի Իռլանդիայի բաժանումից հետո նոր հանրապետության բնակչության 5%-ն էր միայն բողոքական, այն դեպքում, երբ Օլսթերում նրանք 67% էին կազմում: Հյուսիսային Իռլանդիայի բնակիչների մեծ մասը կառավարման իրենց համակարգն անարդար էին համարում: Այն ինքնակառավարվող գավառ էր, սակայն կառավարությունը բողոքականների ձեռքում էր, որոնք վախենում էին կաթոլիկներից եւ նրանց թույլ չէին տալիս պատասխանատու պաշտոններ զբաղեցնել: Շատ կաթոլիկներ նույնիսկ ձայնի իրավունք չունեին:

1969թ.-ին Օլսթերի բնակիչները՝ կաթոլիկները եւ բողոքականները, փողոց են դուրս գալիս՝ կառավարման առավել արդարացի համակարգ պահանջելով: Ոստիկանությունն ի վիճակի չէր վերահսկել իրավիճակը, որը վերածվել էր բրիտանական կառավարության դեմ ազգային ապստամբության: Հյուսիսային Իռլանդիայի փարածքում զորք է տեղակայվում, ինչը հանրապետականների կողմից ահաբեկչական մի շարք գործողությունների պատճառ է դառնում: 1972թ.-ին Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունը լուծարվում է եւ փոխարինվում Լոնդոնի ուղղակի վերահսկողությամբ: Մինչ այժմ քաղաքական իրադրությունն այստեղ բավականին լարված է:

# ՄԱՍ VII
# ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ

1960-ական եւ 80-ական թթ.-ին Մեծ Բրիտանիան տնտեսապես անկում է ապրում, ինչն էապես փոխում է երկրի արտաքին եւ ներքին քաղաքականությունը: Բրիտանացիներին վիճակված էր ապրել Մարգարեթ Թետչերի՝ առաջին կին վարչապետի, եւ Ջոն Մեյջորի կառավարման պայմաններում:

Մեյջորը շարունակում է Թետչերի կառավարման տարիներին պահպանողականների որդեգրած քաղաքականությունը, որն ուղղված էր սոցիալական պաշտպանության պետական համակարգի մասնակի վերանայմանը: Պահպանելով կարեւորագույն տարրերից մեկը՝ առողջապահության ծառայությունը՝ պահպանողականներն ամբողջովին վերացնում կամ կրճատում են սոցիալական պաշտպանության համակարգի մյուս բաղկացուցիչները: Վերացվում են նաեւ նվազագույն աշխատավարձի սահմանումն ու 16-18 տարեկան պատանիների համար գործազրկության նպաստը: Խստացվում է տարիքային մյուս խմբերի գործազուրկներին նպաստների տրամադրման կարգը, ինչի նպատակն էր խթանել եկամտի սեփական աղբյուրների առավել ակտիվ որոնումը: Միաժամանակ աշխատանքային օրենսդրության փոփոխությունների հետեւանքով առավել անորոշ է դառնում մասնավոր ձեռնարկություններում աշխատանքի ընդունման եւ աշխատանքից ազատելու պայմանների կանոնակարգումը:

Գործազրկությունը, որի հիմնական մասը բաժին էր ընկնում արդյունաբերական ոլորտին, զգալի փոխում է երկրի տնտեսական կառուցվածքը: Նախկին հզոր կայսրությունը սկսում է ապրել ծառայությունների ոլորտի՝ զբոսաշրջության, ֆինանսական, խորհրդատվական եւ կրթական ծառայությունների շնորհիվ: Անորոշությունն ու ներքին անկայունությունն աճում են նաեւ Երկրորդ աշխարհամարտի հետեւանքով սեւամորթ ներգաղթյալների հոսքի պատճառով: Աճում է գործազրկությունը, Մեծ Բրիտանիան բախվում է ռասայականության խնդրին:

Վարչապետի պաշտոնում վերընտրվելուց հետո Ջ. Մեյջորը փոխում է կառավարության կազմը: Նախարարների նոր կաբինետում մեծամասնություն էին կազմում այսպես կոչված «եվրաէնտուզիաստները», եւ կառավարության արտաքին տնտեսական քաղաքականությունն արտացոլում էր ինտեգրման կողմնակիցների շահերը: Այնուամենայնիվ, բրիտանական ներդրումների մեծ մասը ոչ թե Հին աշխարհի երկրներում էր, այլ ԱՄՆ-ում եւ Համագործակցության պետություններում՝ մասնավորապես Կանադայում եւ Ավստրալիայում: Իսկ համաեվրոպական միությանը Մեծ Բրիտանիայի հետագա ինտեգրումը նշանակում էր եվրոպական սո-

ցիալական չափանիշների ընդօրինակում, ինչը բավականին լուրջ խնդիր էր Միացյալ Թագավորության համար:

Կուսակցական ճգնաժամերն ու թագավորական ընտանիքի շուրջ աղմկահարույց դեպքերը, արդյունաբերության եւ գիտության զարգացման նախկին տեմպերը վերականգնելու, կրթության որակը բարձրացնելու եւ իշխանությունը կենտրոնից գավառներ տեղափոխելու փորձերը, հավատարմությունն ավանդույթներին եւ բարոյական բարձր արժեքների քարոզչությունը XX դարի ավարտին Մեծ Բրիտանիայի բնութագրիչ գծերն էին:

## Քաղաքական եւ տնտեսական իրադարձությունները

Պահպանողականների երկարատեւ տնտեսական քաղաքականությունը, որը շուկայական լծակների ինքնակարգավորման մեխանիզմի ուժեղացումը (հիմնականում՝ սեփականաշնորհման միջոցով) եւ կորպորատիվ հարկերի նվազեցումը համակցում էր գիտատեխնիկական առաջընթացի պետական լայնածավալ ծրագրերի հետ, բարձրացրել էր Մեծ Բրիտանիայի տնտեսության արդյունավետությունը: Միաժամանակ պարզ էր, որ երկրի տնտեսական երկարաժամկետ հեռանկարը կախված է տնտեսության կառավարման առաջարկի գործող լծակների եւ պահանջարկի խթանման խելամիտ զուգակցումից ու սոցիալական խնդիրների հաղթահարումից:

Ժամանակակից Մեծ Բրիտանիայի տնտեսության եւ քաղաքականության հակասությունները զարգանում են գլոբալ փոփոխությունների վճռորոշ ազդեցությամբ: Այդ փոփոխությունները զարգացած արդյունաբերական երկրների համար ընդհանուր են, միաժամանակ ունեն յուրահատկություններ՝ պայմանավորված Մեծ Բրիտանիայի նոր եւ նորագույն պատմությամբ:

1997թ.-ի մայիսի խորհրդարանական ընտրություններում լեյբորիստների հաղթանակից հետո Թոնի Բլերը, ստանձնելով վարչապետի պաշտոնը, Լորդերի պալատի բարեփոխումներ է սկսում: Ժառանգական պերերի կազմը կրճատվում է մինչեւ 50 հոգի: Երկրի կառավարումից հեռացվում են հայտնի տոհմերի ներկայացուցիչներ, որ դարերով ծառայել են բրիտանական թագին: «Բլերամետ» «The Guardian» թերթն առաջ է քաշում միապետության հնարավոր լիկվիդացման հարցը:

## Հյուսիսային Իռլանդիա

1994թ. օգոստոսին Իռլանդիայի Հանրապետական Բանակը (ԻՀԲ) միակողմանի հրադադար է հայտարարում: Խաղաղ գործընթացը, որ

սկսվել էր 1990-ականների սկզբին Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի կառավարությունների միջեւ բանակցություններով, առավել արագանում է: Սակայն բանակցությունների ընթացքից դժգոհ ԻՀԲ զինյալները 1996թ. վերսկսում են հարձակումները: Լոնդոնն ու Դուբլինը պայմանավորվում են փարաձայնությունները հաղթահարել քաղաքական ճանապարհով:

1998թ. Հյուսիսային Իռլանդիայում քաղաքական փարբեր խմբավորումների բանակցություններն ավարտվում են «Կրակոտ ուրբաթ» համաձայնագրի ստորագրմամբ, ըստ որի՝ Հյուսիսային Իռլանդիայի կարգավիճակը չի փոխվում, օրենսդրական լիազորությունների մի մասը փոխանցվում է Հյուսիսային Իռլանդիայի Ազգային ժողովին, ստեղծվում է Նախարարների խորհուրդ, որը ներկայացնում է Բրիտանական կղզիների հյուսիսային եւ հարավային հատվածները, հիմնադրվում է նաեւ Բրիտանա-իռլանդական խորհուրդ, որի կազմում են ներկայացուցիչներ նաեւ թագավորության մյուս հատվածներից:

Իռլանդիայի սահմանադրությունից բացառվում է Հյուսիսային Իռլանդիայի նկատմամբ տարածքային հավակնությունների մասին կետը:

Համաձայնագրի ստորագրումից հետո ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը պետք է հետեւեր ԻՀԲ-ի զինանոցի գործածմանը: Տարիներ շարունակ յունիոնիստները հանձնաժողովից պահանջում էին ապացույցներ տրամադրել այն մասին, որ ԻՀԲ-ն զինված պայքար չի իրականացնում՝ հրաժարվելով բանակցություններ վարել հանրապետականների հետ: 1998 թվականից ի վեր Հյուսիսային Իռլանդիայի խաղաղության գործընթացը բազմիցս փակուղում է հայտնվել, ինչի հետեւանքով դադարեցվել է Հյուսիսիռլանդական Ասամբլեայի գործունեությունը:

Սակայն 2005թ. մայիսի 28-ին ԻՀԲ-ն պաշտոնապես հայտարարում է զինված գործողությունները դադարեցնելու եւ իր նպատակները բացառապես խաղաղ ճանապարհով հետապնդելու պատրաստակամության մասին: Այս որոշումը պայմանավորված էր «Շին Ֆեյն» կուսակցության (համարվում է ԻՀԲ-ի քաղաքական թեւը) առաջնորդ Ջերի Ադամսի նախաձեռնությամբ կազմակերպված երկխոսությամբ:

Հատուկ հանձնաժողովը շուտով հաստատում է ԻՀԲ-ի զինաթափման փաստը:

## Շոտլանդական խորհրդարանի պաշտոնական բացումը

1999թ. հուլիսի 1-ին պաշտոնապես բացվում է շոտլանդական խորհրդարանը: 1997թ. մայիսի խորհրդարանական ընտրություններում լեյբորիստների վճռական հաղթանակի հետեւանքով կրկին օրակարգում հայտնվում է իշխանության բաշխման խնդիրը: Նույն տարվա սեպտեմ-

բերի հանրաքվեում Շոտլանդիայի բնակիչների մեծ մասը (75%) քվեարկում է հօգուտ տեղի խորհրդարանի բացման, միաժամանակ 64%-ը հանդես է գալիս հօգուտ հարկահանության հարցերը տեղի խորհրդարանի իրավասությանը փոխանցելուն:

Շոտլանդիայի խորհրդարանի ստեղծմամբ Մեծ Բրիտանիայի սահմանադրական կարգավիճակը կրկին փոփոխվում է:

## Ուէլսի Ազգային ժողովի բացումը

Քսաներորդ դարն Ուելսի համար նշանավորվում է Ազգային ժողովի հիմնադրմամբ:

Գերմանական ապակենտրոնացված քաղաքական համակարգի հաջողությունները, ինչպես եւ Իռլանդիայի տնտեսական աճը ապացուցեցին, որ իշխանության կենտրոնացումը պետության կայունության եւ բարգավաճման գրավական չէ: Ուստի 1997թ.-ին հանրաքվեի է ներկայացվում Ուելսի Ազգային ժողովի բացման հարցը: Սակայն Ուելսի քաղաքական ուժերը՝ մասնավորապես Plaid Cymru-ն («Ուելսի կուսակցություն»), մերժում են նախագիծը:

Սակայն 1997թ. ընտրությունների արդյունքում ձեւավորված լեյբորիստական կառավարությունը (պահպանողականներն Ուելսում ոչ մի մանդատ չեն ստանում) կրկնակի հանրաքվե է անցկացնում, որտեղ Ազգային ժողով ստեղծելու նախագիծն արժանանում է 559 419 ընտրողների հավանությանը, դեմ է քվեարկում 552 698 մարդ:

Ի տարբերություն Շոտլանդիայի խորհրդարանի՝ Ուելսի Ազգային ժողովն օրենսդրական եւ հարկեր սահմանելու լիազորություններ չունի, սակայն կարող է վերահսկել Ուելսի հարցով բրիտանական նախարարության գործունեությունը, ուղղումներ կատարել օրինագծերում՝ ելնելով երկրամասի կարիքներից:

60 տեղից կազմված Ազգային ժողովի առաջին ընտրությունները տեղի են ունենում 1999թ.-ին, արդյունքում լեյբորիստները ստանում են 28, Plaid Cymru-ն՝ 17, պահպանողականները՝ 9, լիբերալները՝ 6 մանդատ: 2000թ. լեյբորիստները միավորվում են լիբերալների ներկայացուցիչների հետ, եւ կառավարությունը կարողանում է դիմակայել աջ ուժերին:

# ԳԼՈՒԽ III

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



# ՄԱՍ I
# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը սահմանադրական միապետություն է: Հազարամյա պատմության ընթացքում (բացառությամբ 1649-1660 թթ., երբ երկիրը հանրապետություն էր հռչակվել) միապետը հետզհետե կորցրել է իշխանությունը: Ինչպես եւ սահմանադրական միապետության պայմաններում ցանկացած միապետ, Եղիսաբեթ II-ն էլ թագավորում է, սակայն չի կառավարում: Մեծ Բրիտանիայում միապետն իրավունք ունի խորհուրդներ տալ, հավանության արժանացնել որոշումներ, նախազգուշացնել: Թագուհին Գաղտնի խորհրդի անդամ է. խորհրդատվական այդ մարմնի կազմում են նրա ամուսինը՝ Էդինբուրգի արքայազնը, գահաժառանգը՝ Ուելսի արքայազնը, կառավարության անդամները, ընդդիմության առաջնորդները եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Բարձրագույն օրենսդիր իշխանությունը պատկանում է երկպալատ խորհրդարանին: Թագուհին պահպանել է խորհրդարան հրավիրելու եւ ցրելու, վարչապետ նշանակելու, պայմանագրեր ստորագրելու եւ պատերազմ հայտարարելու ձեւական իրավունքը: Կառավարության առաջարկով թագուհին նշանակում է գլխավոր զորահրամանատարներին, դատավորներին, անգլիական եկեղեցու եպիսկոպոսներին: Արքունական տիտղոս շնորհելու իրավունք ունի միայն թագուհին:

Մեծ Բրիտանիային բնորոշ են միապետ-խորհրդարան յուրատեսակ հարաբերությունները: Յուրաքանչյուր օրինագիծ՝ բիլլ, օրենքի ուժ ստանալու համար օրենսդրի երկու պալատներում հաստատվելուց հետո պետք է թագուհու հավանությանն արժանանա, համապատասխան ձեւակերպումը կամ ստորագրությունը պահպանվել է նորմանական նվաճումների ժամանակներից, այն է՝ «La Reyne ainsi veult» («Այդպես է կամենում թագուհին»):

Խորհրդարանը կազմված է Լորդերի եւ Համայնքների պալատներից: Օրենսդրի գործունեության մեջ առաջատար է ստորին՝ Համայնքների պալատի դերը: Այն ընտրվում է 5 տարով, ունի 650 անդամ՝ մեկական ներկայացուցիչ երկրի յուրաքանչյուր 650 ընտրատարածքներից: Լորդերի պալատը կազմում են բարձրաստիճան հոգեւորականները՝ հոգեւոր 26 պերերը (Քենթրբերիի եւ Յորքի արքեպիսկոպոսները, 24 եպիսկոպոսներ), Բարձրագույն վճռաբեկ դատարանի 9 լորդեր, ազնվականության ներկայացուցիչներ՝ 818 ժառանգական պերեր (արքայազններ, մարկիզներ, կոմսեր, վիկոնտներ, բարոններ), ինչպես եւ 300 ցմահ պերեր, որոնք այդ կոչումը ստացել են հայրենիքի առջեւ վաստակի համար: 20-րդ դարում Լորդերի պալատի լիազորությունները զգալիորեն սահմանափակվել

են: Նրա հիմնական գործառույթը Համայնքների պալատի ներկայացրած օրինագծերի քննարկումը եւ դրանցում ուղղումներ կատարելն է: Լորդերի պալատն այժմ ունի վերապահված վետոյի՝ ստորին պալատում ընդունված օրինագծերի ընդունումը ժամանակավորապես հետաձգելու իրավունք, մինչդեռ մինչեւ 1949թ. այն իրավասու էր արգելափակել ցանկացած օրինագիծ:

Երկրի բարձրագույն գործադիր իշխանությունը պատկանում է նախարարների կաբինետին, որը մշակում է բոլոր ոլորտների ազգային քաղաքականությունը:

Քաղաքական բոլոր համակարգերում կաբինետը պետության ղեկավարի խորհրդականների կորպուս է, որոնք գլխավորում են տարբեր նախարարություններ: Այն երկրներում, որտեղ օրենսդիր իշխանությունը խորհրդարանի ձեռքում է, կաբինետը կառավարության հիմքն է, սակայն քաղաքական տարբեր համակարգերում դրանք տարբերվում են: Առավել վառ օրինակներ են ԱՄՆ-ն եւ Մեծ Բրիտանիան:

Կառավարության կազմում կաբինետի համակարգը ձեւավորվել է Մեծ Բրիտանիայում: Այն առաջացել է XVII դարի վերջին - XVIII դարի սկզբին Գաղտնի խորհրդի հիման վրա, երբ այդ կառույցն ընդլայնվելով կորցրել էր արդյունավետությունը: Անգլիայի Չարլզ II արքան (1660-1685թթ.) եւ Աննա թագուհին (1702-1714թթ.) մշտապես խորհրդակցությունների են հրավիրում Գաղտնի խորհրդի միայն վերնախավի ներկայացուցիչներին: Աննա թագուհու կառավարման տարիներին «Ընտրյալ կոմիտեի» առաջատար նախարարների ամենշաբաթյա, երբեմն նույնիսկ ամենօրյա հավաքները յուրօրինակ գործադիր իշխանության են վերածվում, իսկ Գաղտնի խորհրդի լիազորությունները զգալիորեն կրճատվում են: Գեորգ I-ի (1714-1727թթ.) կառավարումից հետո, որը չգիտեր անգլերեն եւ դադարել էր այցելել «Կոմիտեի» հավաքներին, «կաբինետում» որոշումների ընդունման գործընթացը դառնում է վարչապետի կամ գլխավոր նախարարի պարտականությունը:

1832թ.-ին Բարեփոխումների օրինագծի հաստատմամբ հստակեցվում են կառավարության կաբինետի ձեւավորման սկզբունքները. այն պետք է կազմվեր Համայնքների պալատում մեծամասնություն ունեցող կուսակցության կամ քաղաքական խմբակցության ներկայացուցիչներից, կաբինետի անդամները կառավարության կազմում գործունեության համար լիակատար պատասխանատվություն պետք է կրեին Համայնքների պալատի առջեւ: Այս սկզբունքները գործում են նաեւ այսօր:

Մեծ Բրիտանիայի ժամանակակից կաբինետը կազմված է վարչապետի նշանակած 15-25 անդամներից: Համայնքների պալատում մեծամասնություն կազմող կուսակցությանը միապետը հանձնարարում է կառավարություն ձեւավորել: Կաբինետի բոլոր անդամները, ինչպես եւ վարչապե-

փը, խորհրդարանականներ են: Կաբինետի անդամները գլխավորում են կառավարության տարբեր բաժիններ կամ նախարարություններ: Կառավարությունը հիմնական աշխատանքն իրականացնում է նախարարությունների վերահսկողության ներքո գտնվող հանձնաժողովների միջոցով:

Կաբինետը հավաքական պատասխանատվություն է կրում Համայնքների պալատի առջեւ: Խորհրդարանի ստորին պալատում վստահության քվե չստանալը կամ որեւէ օրինագծի տապալումը կարող է կառավարության հրաժարականի հանգեցնել: Գործընկերների հավանությանը չարժանացած քաղաքական որեւէ նախաձեռնության համար նախարարները հազվադեպ են անհատական պատասխանատվություն ստանձնում:

Մեծ Բրիտանիան չունի գրված սահմանադրություն: Ի տարբերություն մյուս երկրների հիմնական օրենքների՝ այն ձեւակերպված չէ մեկ փաստաթղթում, այլ հիմնված է բազմաթիվ օրենքների, ընդհանուր իրավունքի եւ սովորույթների վրա:

Տեղական ինքնակառավարման մարմինները կոմսությունների, օկրուգների եւ Մեծ Բրիտանիայի վարչական մյուս միավորների անբաժանելի մասն են:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է ընտրովի մարմինների միջոցով, որոնց լիազորությունները սահմանում է խորհրդարանը: Դրանք գերազանցելու դեպքում վարչական միավորի բնակիչներն իրավունք ունեն տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի դեմ հայց ներկայացնել դատարան:

Անգլիայում տեղական ինքնակառավարման 3 տեսակ կա՝ Մեծ Լոնդոն (Greater London), մունիցիպալ կոմսությունների 6 օկրուգներ (Metropolitan County Areas) եւ ոչ մունիցիպալ կոմսություններ:

Մեծ Լոնդոնը կազմված է մունիցիպալ 32 միավորից եւ Լոնդոն քաղաքից, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու է իր տարածքի համար: Տեղական կառավարման մարմինները կազմակերպում են իրենց տարածքներում կարգուկանոնի պահպանումը, կարգավորում բարեկեցության ապահովման համար անհրաժեշտ հարցերը: Լոնդոնի ոստիկանությունն ու հասարակական տրանսպորտը նրանց ենթակա չեն:

Մունիցիպալ կոմսությունների 6 օկրուգները բաժանված են մունիցիպալ 36 միավորի, որոնք կարգավորում են տեղական բոլոր հարցերը՝ բացառությամբ հրշեջ ծառայության, հասարակական տրանսպորտի, աղբահանության:

Ոչ մունիցիպալ կոմսությունները ինքնակառավարման երկմակարդակ համակարգեր են, որոնցից վերինը կոմսությունն է, ստորինը՝ օկրուգը: Կոմսությունները պատասխանատու են տրանսպորտի, շինարարության

ծրագրավորման, կրթության, սպառողների շահերի պաշտպանության, հրշեջ ծառայության, օկրուգները՝ շրջակա միջավայրի պահպանության եւ այլ հարցերի համար:

Շոտլանդիայում գործում է 32 մունիցիպալիտետների համակարգ:

Ուելսում տեղական հարցերը կարգավորում են 22, Հյուսիսային Իռլանդիայում՝ շրջանային 26 խորհուրդները:

Մունիցիպալիտետների եւ խորհուրդների անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով, դրանց նախագահները քաղաքներում զբաղեցնում են քաղաքապետի պաշտոնը:

Անգլիան, Շոտլանդիան, Ուելսը եւ Հյուսիսային Իռլանդիան ունեն դատական սեփական համակարգերը: Այնուամենայնիվ, ժամանակակից իրավունքի շատ սկզբունքներ գործում են Մեծ Բրիտանիայի ողջ տարածքում: Իրավունքը բաժանված է քրեական եւ քաղաքացիական ճյուղերի:

Անգլիայի եւ Ուելսի դատական համակարգերը հիմնված են նախադեպային իրավունքի վրա, որը ձեւավորվել է ընդհանուր իրավունքի, իրավահավասարության սկզբունքի, Եվրամիության խորհրդարանի ընդունած օրենքների հիման վրա: Սովորույթի վրա հիմնված ընդհանուր իրավունքը երբեւէ չի ձեւակերպվել կամ կոդիֆիկացվել:

Թեեւ իշխանության դատական եւ գործադիր թեւերը տարանջատված են, դատարանների որոշումներն ուղղորդվում կամ վերահսկվում են նախարարների կողմից: Դատական բարձրագույն պաշտոնյաների թեկնածությունները թագուհուն է ներկայացնում վարչապետը:

Լորդ կանցլերը, բացի Շոտլանդիայից, Մեծ Բրիտանիայի ողջ տարածքի դատական գերատեսչությունների ղեկավարն ու Գերագույն դատարանի նախագահն է:

# ՄԱՍ II
# ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Համայնքների պալատի ներկայացուցիչներն ընտրվում են միաման-դատ մեծամասնական ընտրակարգով, 5 տարի ժամկետով: Մեծ Բրի-տանիան բաժանված է բնակչությամբ գրեթե հավասար 650 ընտրատա-րածքների, որոնցից յուրաքանչյուրում ընտրվում է մեկական պատգամա-վոր:

Ընտրական այս համակարգը գործում է աշխարհի 43 երկրներում՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի նախկին գաղութներում:

Մեծամասնական համակարգում թեկնածուն հանդես է գալիս որպես անհատ, սակայն կարող է առաջադրվել որեւէ կուսակցության կողմից: Մեծամասնական համակարգում յուրաքանչյուր ընտրատարածքում հաղթող է ճանաչվում ձայների պարզ մեծամասնություն ստացած թեկ-նածուն, ուստի ընտրություններն անցկացվում են մեկ փուլով: Մեծ Բրի-տանիայում ընտրական այս համակարգը հաճախ անվանում են «First Past the Post electoral system» («Առաջինն է զբաղեցնում պաշտոնը»):

Մեծամասնական ընտրական համակարգի պայմաններում հնարա-վոր է քաղաքական կուսակցության կամ ընտրական այլ միավորումների ստացած մանդատների անհամապատասխանություն երկրի ողջ տա-րածքում ստացված ձայների քանակի նկատմամբ: Սակայն, մյուս կող-մից, ընտրողը հնարավորություն է ստանում գնահատել թեկնածուի անձ-նական արժանիքները, այլ ոչ թե քվեարկել հօգուտ կուսակցական անդեմ ցուցակի:

# ՄԱՍ III
# ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեծ Բրիտանիայի ՊԿ-ն երկրի խոշորագույն աջակողմյան կուսակցությունն է: Ձեւավորվել 1830-ական թթ. XVII դ. ստեղծված *թորիի* հիման վրա: Պաշտոնապես գրանցվել է 1867թ.-ին՝ որպես «Պահպանողական եւ սահմանադրական ընկերակցությունների ազգային միություն»:

Զանգվածային քաղաքական ուժ է դարձել 1870-80-ական թթ.: 1912թ.՝ Լիբերալ-յունիոնիստական կուսակցության (ձեւավորվել է 1886թ. Լիբերալիստական կուսակցության պառակտման հետեւանքով) հետ միավորումից հետո, պաշտոնապես անվանվել է Պահպանողական եւ յունիոնիստական կուսակցություն: XXդ. ողջ ընթացքում Մեծ Բրիտանիան հիմնականում կառավարել են պահպանողականները՝ լեյբորիստներին եւ լիբերալներին հնարավորություն չտալով մեկ ժամկետից ավելի պահել իշխանությունը: 1885 թվականից կուսակցությունը հաղթել է խորհրդարանական 31 ընտրություններից 21-ում: Մինչեւ Երկրորդ աշխարհամարտը Պահպանողական կուսակցությունը կառավարել է 1885-1892թթ., 1895-1905թթ., 1916-1922թթ. (լիբերալների եւ լեյբորիստների հետ կոալիցիայում), 1922-1923թթ., 1925-1928թթ., 1932-1945թթ. (լիբերալների եւ լեյբորիստների հետ կոալիցիայում), հետպատերազմյան շրջանում՝ 1951-1964թթ., 1970-1974թթ., 1979-1997թթ.: 1997, 2001 եւ 2005թթ. ընտրություններում պարտությունից հետո ընդդիմության կազմում է:

Կուսակցությունը հենվում է հողատերերի, խոշոր գյուղատնտեսների, ձեռնարկատերերի, միջին խավի ներկայացուցիչների վրա, պաշտպանում խոշոր ձեռներեցությունը: Մշտական պաշտոնական ծրագիր եւ կանոնադրություն չունի: Համընդհանուր քվեարկությունից առաջ նախընտրական հրովարտակ է հրապարակում, որտեղ նշված են ընտրություններում հաղթելու դեպքում պահպանողականների կառավարության ապագա քաղաքականության հիմնական ուղղությունները:

Պահպանողականները հանդես են գալիս պետականության ուժեղ ինստիտուտների պահպանման, ավանդական մշակույթի ու հոգեւոր արժեքների պաշտպանության օգտին: Որպես փորձերի ժառանգորդ՝ պահպանողականները հասարակական կարգի եւ սոցիալական ներդաշնակության ջատագովներ են:

Կուսակցության գաղափարախոսության վրա մեծ ազդեցություն է ունեցել Մարգարեթ Թետչերը: 1979-1997թթ. կառավարման տարիներին պահպանողականները սոցիալական ապահովման հարցում պետության դերը նվազեցնելու, հարկերը կրճատելու, ազատ առեւտուրը զարգացնելու ուղեգծով են առաջնորդվել: Այդ ընթացքում ընդունվել է արհմիությունների ազդեցությունը սահմանափակող օրենսդրություն, սեփականաշնորհ-

վել են արդյունաբերության՝ ավելի վաղ ազգայնականացված շատ ճյուղեր: 1997թ. ընտրություններում պարտությունից հետո կուսակցության առաջնորդը նոր՝ «բաց պահպանողականության» քաղաքականություն է առաջարկում: Ներքին քաղաքականության մեջ պահպանողականները նոր ազատական բարեփոխումների, սեփականաշնորհման, ազգային արժույթի պահպանման եւ ամրապնդման, հարկերի եւ պետական բյուրոկրատիայի դերի նվազեցման, քաղաքացիական հասարակության հիմքերի ամրապնդման կողմնակից են: Պայքարում են անջատողականության դեմ: Շատ հարցերում՝ մասնավորապես ներգաղթի մասին օրենսդրության խստացման, հանցավորության դեմ պայքարի եւ սեռական փոքրամասնությունների իրավունքների շուրջ կուսակցության շարքերում միասնական կարծիք չկա:

Պահպանողականների արտաքին քաղաքական հիմնական դրույթը Եվրամիության կազմում Մեծ Բրիտանիայի տեղը որոշակիացնելու հարցն է: Եվրաինտեգրման հարցում պահպանողականների շարքերում լուրջ տարաձայնություններ կան: Այժմ կուսակցության ներսում առավել ազդեցիկ են այսպես կոչված «եվրահոռետեսները», որոնք տարակուսում են Եվրոպայի լիակատար միավորման հարցում: Խրախուսելով Միացյալ Թագավորության անդամակցությունը ՆԱՏՕ-ին եւ Եվրամիությանը՝ նրանք դեմ են Միության հետ երկրի հետագա ինտեգրմանը:

2005 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքում պահպանողականները Համայնքների պալատում ստացել են 196 մանդատ: Ներկայացված են նաեւ Շոտլանդիայի խորհրդարանում, Ուելսի վեհաժողովում, Եվրախորհրդարանում: Որպես ընդդիմադիրներ՝ ձեւավորել են «ստվերային կաբինետ»:

Կուսակցությունը հիերարխիկ կառուցվածք ունի: Այն կազմված է ընտրատարածքների ընկերակցություններից, որոնք միավորված են «Պահպանողական եւ յունիոնիստական ընկերակցությունների ազգային միությունում», խորհրդարանական խմբակցությունից եւ Կենտրոնական խորհրդից: Անդամակցությունը կուսակցությանը պաշտոնապես չի ձեւակերպվում, անդամավճարներ չեն գանձվում: 2001թ. տվյալներով՝ կուսակցությունը 318 հազար անդամ ունի. պահպանողականների շարքերը նոսրանում են ներկայացուցիչների ծեր լինելու պատճառով, որոնց միջին տարիքը 65-ն է:

Պահպանողական կուսակցության գերագույն մարմինն ամենամյա Խորհրդաժողովն է, որում ընդունված բանաձեւերը խորհրդատվական բնույթ ունեն եւ պարտադիր չեն կուսակցության ղեկավարության համար: Իշխանությունը հիմնականում կենտրոնացած է խորհրդարանական խմբակցության եւ կուսակցության առաջնորդի ձեռքում, որին ընտրում են կուսակցության բոլոր անդամները՝ խմբակցության ներկայացրած երկու

թեկնածուներից: Առաջնորդը (2006 թվականից` Դեւիդ Քեմերոնը) ղեկավարում է կուսակցության Կենտրոնական խորհուրդը, որն ընտրում է կուսակցության նախագահին եւ կուսակցական «ֆունկցիոներներին»:

Պահպանողականները հրապարակում են «Conservative News» եւ «Politics Today» ամսագրերը:

Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցությունը Միջազգային ժողովրդավարական միության (պահպանողական եւ քրիստոնեադեմոկրատական կուսակցությունների միջազգային միավորում) եւ Եվրոպական ժողովրդական կուսակցության անդամ է:

# ՄԱՍ IV
# ԼԵՅԲՈՐԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցությունը ձեւավորվել է 1900թ.՝ արհմիությունների իրավունքները պաշտպանելու եւ աշխատավոր դասին ձայնի իրավունք տալու նպատակով:

Առաջին աշխարհամարտի տարիներին ազգային միասնության կառավարության ձեւավորումը լեյբորիստներին երկրի կառավարմանը մասնակցելու հնարավորություն տվեց:

Պատերազմից հետո, երբ Լիբերալ կուսակցությունը կորցրեց ազդեցությունը, լեյբորիստները հիմնական ընդդիմադիր ուժը դարձան: Մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը երկու անգամ կառավարություն են ձեւավորել (1924թ., 1929-1931թթ.), որոնք, սակայն, երկար կյանք չեն ունեցել: 1931թ.-ին Ջ. Ռ. Մաքդոնալդի գլխավորած աջ կողմնորոշման լեյբորիստները, որոնք առավել պահպանողական քաղաքականության կողմնակիցներ էին, անջատվում են կուսակցությունից՝ հիմնելով Ազգային-լեյբորիստական կուսակցությունը: Նույն թվականին, դաշնակցելով պահպանողականների եւ լեյբորիստների հետ, ընդգրկվում են «Ազգային կառավարության կազմում»: 1932թ.-ին լեյբորիստական կուսակցությունից անջատվում է ձախ կողմնորոշման Անկախ աշխատավորական կուսակցությունը: II աշխարհամարտի տարիներին՝ մինչեւ 1945թ., լեյբորիստները ներկայացված են եղել Ուինսթոն Չերչիլի կոալիցիոն կառավարությունում:

1945թ. ընտրություններում կուսակցությունը խորհրդարանական մեծամասնություն է նվաճում՝ զբաղեցնելով 393 մանդատ 659-ից: Նույն թվականի աշնանը կուսակցությունն ընդունում է «Դեմքով դեպի ապագան» քաղաքական ծրագիրը, որտեղ առաջին անգամ իր գլխավոր նպատակն է հռչակում «Մեծ Բրիտանիայում սոցիալիստական հասարակության ձեւավորումը»:

Կլեմենտ Էթլիի ձեւավորած լեյբորիստական կառավարությունն (1945-1951թթ.) առաջարկում է «համընդհանուր բարօրության պետություն», արդյունաբերական գլխավոր ձեռնարկությունների հասարակական սեփականացման ծրագրեր, համընդհանուր զբաղվածության քաղաքականություն: Նրա կառավարության կարեւոր ձեռքբերումը 1948թ. Առողջապահության ազգային համակարգի հիմնումն էր: 1951-1963թթ. լեյբորիստներն անցել էին ընդդիմության շարքը՝ պահպանելով, սակայն, ընտրողների զգալի աջակցությունը (1951թ. - 48,8%, 1955թ. - 46,4%, 1959թ. - 43,8%): Հետագայում լեյբորիստները կառավարություն են ձեւավորել 1964-1970թթ., 1974-1979թթ.:

Որպես կառավարող կուսակցություն՝ լեյբորիստները միշտ կառուցողական ռեֆորմիստական դիրքորոշում են զբաղեցրել: Սակայն ընդդիմության կազմում կուսակցությունը պառակտվել է աջ կողմնորոշման սոցիալ-դեմոկրատական եւ ձախակողմյան սոցիալիստական խմբակցությունների: 1980-ական թթ. կուսակցությունը ղեկավարել են ձախ թեւի ներկայացուցիչները, որոնք արդյունաբերության ազգայնականացման, Եվրոպական տնտեսական ընկերակցությունից դուրս գալու եւ միջուկային միակողմ զինաթափման ծրագիր են առաջ քաշել: Մինչդեռ աջ կողմնորոշման ազդեցիկ մի շարք լեյբորիստ-խորհրդարանականներ, լքելով կուսակցությունը, 1981թ.-ին հիմնում են Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ինչի հետեւանքով լեյբորիստներն առաջիկա քվեարկության ժամանակ զգալի թվով ձայներ են կորցնում: 1983թ. խորհրդարանական ընտրություններում պարտությունից հետո կուսակցության ղեկը փոխանցվում է առավել չափավոր թեւի կողմնակիցներին: Լեյբորիստների առաջնորդ Նիլ Քիննոքը կուսակցության շարքերից հեռացնում է տրոցկիստներին եւ մյուս ծայրահեղականներին՝ փորձելով կուսակցությունը վերածել քաղաքական կենտրոնամետ ուժի:

1994թ.՝ Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Ջոն Սմիթի մահից հետո, նրան փոխարինում է Թոնի Բլերը, որի օրոք կուսակցությունը կրկին «թեքվում է» դեպի աջ: 1997թ.-ին՝ 18-ամյա ընդդիմությունից հետո, Լեյբորիստական կուսակցությունը կրկին նվաճում է իշխանությունը՝ստանալով ձայների 44%-ը եւ զբաղեցնելով խորհրդարանական 659 տեղերից 418-ը: 2005թ. ընտրություններում լեյբորիստները վերանվաճում են իշխանությունը՝ խորհրդարանական 646 մանդատից ստանալով 352-ը (մինչեւ 2005թ. ընտրությունները Համայնքների պալատը կազմված էր 659 անդամից, սակայն Շոտլանդական խորհրդարանի մասին 2004 թվականի ակտով պալատում շոտլանդացի խորհրդարանականների թիվը կրճատվում է):

Պաշտոնապես Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցության գաղափարական հիմքը «ժողովրդավարական սոցիալիզմն» է: Սակայն այժմյան ղեկավարությունը սոցիալիզմի եւ կապիտալիզմի միջեւ, այսպես կոչված, «երրորդ ուղու» կողմնակից է, այսինքն՝ հրաժարվում է սոցիալ-ժողովրդավարության եւ ազատականության հին ուղեգծից, ծրագրում ներառել է դասակարգային պայքարից, սեփականաշնորհման գաղափարներից հրաժարվելու դրույթներ, տնտեսական ոլորտում շարունակում է պահպանողականների նոր ազատական ուղեգիծը:

Ներքաղաքական կյանքում կուսակցությունը հանդես է գալիս զբաղվածության, սոցիալական ապահովման խնդիրների լուծման, կրթական եւ առողջապահական համակարգերի բարելավման նախաձեռնություննե-

րով: Խրախուսում է իշխանության բաշխումը հօգուտ տարածաշրջանային եւ տեղական մարմինների: «Նոր լեյբորիստները» խառը տնտեսության կողմնակից են եւ շահութահարկի, սոցիալական կարիքների համար պետական ծախսերի նվազեցման, սեփականաշնորհման, բնակչության զբաղվածության խթանման, աշխատանքի «ճկուն» շուկայի զարգացման, գիտական ոլորտում ներդրումների խթանման քաղաքականություն են վարում:

Արտաքին քաղաքականության հարցում լեյբորիստները Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները սերտացնելու, Եվրամիությանն ինտեգրման, եվրոպական քաղաքացիության ինստիտուտի զարգացման եւ եվրոպական անվտանգության համակարգի ամրապնդման կողմնակից են: Կուսակցությունը հրաժարվել է միջուկային միակողմ զինաթափման ուղեգծից եւ խրախուսում է բազմակողմ զինաթափման գործընթացի շրջանակում ազգային միջուկային ուժերի ոչնչացման գաղափարը:

Միացյալ Նահանգների դեմ 2001թ. սեպտեմբերի 11-ի հարձակումներից հետո Մեծ Բրիտանիան, լեյբորիստների գլխավորությամբ, աջակցում է Վաշինգտոնին, այսպես կոչված, «ահաբեկչության դեմ պատերազմում»: Հասարակական շրջանակներում մեծ արձագանք է ունեցել Իրաքյան գործողություններին բրիտանական զինված ուժերի մասնակցության հարցը: 2003թ. մարտին Համայնքների պալատի 413 լեյբորիստ անդամներից 139-ը դեմ են հանդես եկել իրենց կառավարության իրաքյան քաղաքականությանը: Արտգործնախարար Ռոբին Քուքը ստիպված էր հրաժարական տալ, իսկ կուսակցությունը ենթարկվում է պառակտման վտանգին: Լեյբորիստների շարքերում բազմաթիվ ուղղություններ եւ ազդեցության խմբեր են ձեւավորվում:

Այնուամենայնիվ, լեյբորիստները՝ Թոնի Բլերի գլխավորությամբ, հաղթում են նաեւ 2005թ. խորհրդարանական ընտրություններում՝ նվաճելով պատգամավորական 646 մանդատից 352-ը: Կուսակցությունը ներկայացված է Շոտլանդիայի, Ուելսի օրենսդիր մարմիններում, Եվրախորհրդարանում:

ԼԿ-ն կազմված է հավաքական անդամներից, ընտրատեղամասերի կուսակցական կազմակերպություններից, խորհրդարանական խմբակցությունից: Հավաքական անդամության իրավունքով կուսակցության կազմում են երկրի արհմիությունների մեծ մասն ու կոոպերատիվ կազմակերպությունները (շուրջ 6 մլն մարդ), որոնց անդամավճարները կազմում են կուսակցության եկամտի գրեթե կեսը: Միացյալ Նահանգների՝ իրաքյան քաղաքականությանն աջակցելու պատճառով լեյբորիստների հեղինակությունը նվազել է: 2004թ. հուլիսին կուսակցության անդամների թիվը 214 952 էր, մինչդեռ 1998թ.-ին այն հասնում էր 405 238-ի:

Կուսակցության գերագույն մարմինն ամենամյա Խորհրդաժողովն է, որում հաստատվում են քաղաքական ուղեգիծն ու հենարանը: Խորհրդաժողովների միջեւ ընկած ժամանակահատվածում կուսակցության գործունեությունն ուղղորդում է Ազգային գործադիր կոմիտեն: Խորհրդաժողովում կուսակցության ղեկավարին ընտրում է ընտրիչների կոլեգիան, որի կազմում են խորհրդարանական խմբակցության, արհմիությունների, տեղական կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները: 2007 թվականից Լեյբորիստական կուսակցությունն առաջնորդում է Գորդոն Բրաունը:

ԼԿ-ն հրապարակում է «Labor Weekly» եւ «New Socialist» պարբերականները:

Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցությունը Սոցինտերնի կազմում է, որի քարտուղարությունը Լոնդոնում է, ընդգրկված է Եվրոպական սոցիալիստների կուսակցությունում (եվրախորհրդարանում՝ սոցիալ-դեմոկրատների դաշինքը):

# ՄԱՍ V
# ԼԻԲԵՐԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Լիբերալ-դեմոկրատների կուսակցությունը ձեւավորվել է 1988թ. մարտի 3-ին՝ Լիբերալ (հիմնադրվել էր 1859թ. հունիսի 6-ին) եւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների (հիմնադրվել էր 1981թ. մարտի 26-ին) անդամների մեծ մասի միավորման հետեւանքով: Լիբերալ-դեմոկրատները սկզբում իրենց անվանում էին «սոցիալական եւ լիբերալ դեմոկրատներ», ժամանակակից անվանումը կրում են 1989թ. հոկտեմբերից:

Կուսակցության սոցիալական հիմքը բնակչության միջին խավն է, այդ թվում՝ ձեռներեցների, մտավորականության, գյուղատնտեսների, աշխատավորների դասը: Քաղաքական մշտական ծրագիր չունի: Ընդհանուր առմամբ, պաշտպանելով շուկայական տնտեսությունն ու մրցակցության զարգացումը, կողմնակից են սեփականաշնորհման գործընթացը դադարեցնելուն, սոցիալական խնդիրների առաջնահերթ լուծմանը (գործազրկության դեմ պայքար, հարկերի ավելացում, ԲՈՒՀ-ական անվճար կրթություն, կենսաթոշակների բարձրացում), քաղաքացիական ազատությունների ընդլայնմանը, գործադրի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ավելացմանը: Լիբերալ-դեմոկրատների հիմնական պահանջներից մեկը ընտրական համակարգի բարեփոխումն ու իշխանության արմատական ապակենտրոնացումն է: Արտաքին քաղաքական բնագավառում խրախուսում են Եվրամիությանը Մեծ Բրիտանիայի արագ ինտեգրումը, պահանջում դուրս բերել բրիտանական զորակազմն Իրաքից:

2005թ.-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում նվաճել են 63 մանդատ Համայնքների պալատում: Ներկայացված են նաեւ Ուելսի եւ Շոտլանդիայի խորհրդարաններում:

Լիբերալ-դեմոկրատները Լիբերալիստական ինտերնացիոնալի ու Եվրոպական լիբերալների կուսակցության կազմում են: Եվրախորհրդարանում ձեւավորել են Հանուն Եվրոպայի լիբերալների եւ դեմոկրատների դաշինքը:

Լիբերալ-դեմոկրատների կուսակցությունը ձեւավորվել է դաշնային սկզբունքով եւ կազմված է Անգլիայի, Շոտլանդիայի, Ուելսի համապատասխան քաղաքական ուժերից: Գերագույն մարմինն ամենամյա Խորհրդաժողովն է: Ունի շուրջ 110 հազար անդամ: Առաջնորդը Չարլզ Քենեդին է:

Բացի Միացյալ Թագավորության երեք խոշոր կուսակցություններից՝ Համայնքների պալատում եւ Եվրախորհրդարանում ներկայացված են

նաեւ քաղաքական այլ ուժեր՝ հիմնականում կուսակցություններ Ուելսից, Շոտլանդիայից, Հյուսիսային Իռլանդիայից:

Խորհրդարանում չներկայացված քաղաքական ուժերից է *Անգլիայի եւ Ուելսի կանաչների կուսակցությունը,* որը ձեւավորվել է 1973թ.ին՝ որպես Բնապահպանական կուսակցություն:

*Բրիտանական ազգային կուսակցությունը* ծայրահեղ աջ կողմնորոշման խոշոր կուսակցություն է: Հիմնադրվել է 1982թ.-ին, առաջնորդը՝ Նիկ Գրիֆֆին:

*Անգլիայի եւ Ուելսի սոցիալիստական կուսակցությունը,* որը հիմնադրվել է 1964թ.-ին, տրոցկիստական կուսակցություն է, Աշխատավորական ինտերնացիոնալի կոմիտեի կազմում է: Տասնամյակներ շարունակ գործել է Լեյբորիստական կուսակցության կազմում՝ որպես «Ռազմամոլ շարժում»: Ժամանակակից անվանումը կրում է 1997 թվականից, առավել ազդեցիկ է դարձել 1980-ական թթ.: Ազգային քարտուղարն է Փիթեր Թաաֆը:

*Սոցիալիստական աշխատավորական կուսակցությունը* Միացյալ Թագավորության ձախ կողմնորոշման եւ տրոցկիստական առավել ազդեցիկ կուսակցությունն է: 1977թ. այն հիմնել են Ինտերնացիոնալ սոցիալիստները: Ազգային քարտուղարն է Քրիս Բամբերին:

Իրենց օրենսդիր եւ գործադիր իշխանություններն ու քաղաքական կուսակցություններն ունեն նաեւ Շոտլանդիան, Ուելսը եւ Հյուսիսային Իռլանդիան:

# ՄԱՍ VI
# ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ

1920 թվականից Հյուսիսային Իռլանդիան ղեկավարվում է «Իռլանդիայի կառավարության մասին» ակտով, որը հյուսիսիռլանդական խորհրդարանի համար զգալի ինքնիշխանություն է նախատեսում՝ բրիտանական խորհրդարանի իրավասությանը թողնելով պաշտպանության, արտաքին քաղաքականության, նավագնացության, տոստի, գերագույն դատավարության եւ որոշ հարկերի հետ կապված հարցերի կարգավորումը: Հյուսիսային Իռլանդիայի խորհրդարանը, որի նիստերը գումարվում են Ստորմոնթում, մինչեւ 1927թ.-ը կազմված էր Սենատից, Համայնքների պալատից եւ միապետին ներկայացնող նահանգապետից: Սակայն 1927 թվականին օրենսդրի գործունեությունը դադարեցվեց, լիազորություններն ամբողջովին փոխանցվեցին բրիտանական խորհրդարանին, գործադիր իշխանությունը՝ Հյուսիսային Իռլանդիայի հարցերով Միացյալ Թագավորության նախարարին:

1973 թվականի՝ «Հյուսիսային Իռլանդիայի սահմանադրության մասին» օրինագծով երկրի կառավարման համակարգը փոխվում է: Հիմնվում է 78 (այժմ 108) պատգամավորից կազմված Ասամբլեան, որն ընտրվում է 4 տարի ժամկետով: Համամասնական ներկայացուցչության համակարգը խորհրդարանում տեղ զբաղեցնելու հնարավորություն էր տալիս նաեւ կաթոլիկներին: Գործադիր իշխանությունն իրականացնում էր տեղի կառավարությունը: Սակայն 1974 թվականի բողոքական ծայրահեղականների համընդհանուր գործադուլից հետո չափավորների կոալիցիոն կառավարությունը հրաժարական է տալիս: Մինչեւ 1998թ.-ը Հյուսիսային Իռլանդիան ուղղակիորեն կառավարվել է Լոնդոնից: Ասամբլեայի եւ տեղի կառավարության գործունեությունը ընդհատվել է նաեւ 2002-2007 թվականներին՝ վերականգնվելով 2007 թվականի մարտին, երբ խորհրդարանական ընտրությունների արդյունքում բացարձակ մեծամասնություն չկազմելով՝ կոալիցիոն կառավարություն ձեւավորեցին վաղեմի հակառակորդներ *Դեմոկրատական յունիոնիստական կուսակցությունը* եւ հանրապետական *Շին Ֆեյնը*, ինչպես եւ *Օլսթերի յունիոնիստական*, *Սոցիալ-դեմոկրատական* եւ *Լեյբորիստական կուսակցությունները*:

Հյուսիսային Իռլանդիայում գործում է 4 կուսակցություն: Խոշորագույն քաղաքական ուժը *Օլսթերի յունիոնիստական կուսակցությունն* է: Նրան աջակցում են լոյալիստները, որոնք հանդես են գալիս Հյուսիսային

Իռլանդիան Մեծ Բրիտանիայի կազմում պահպանելու օգտին: Յունիոնիստների մեծ մասը բողոքականներ են:

Կուսակցությունը ձեւավորվել է 1905թ.-ին՝ Օլսթերի յունիոնիստների խորհրդի հիմնադրումով: Վերջինս մինչ այժմ կուսակցության ղեկավար մարմինն է:

1921թ.-ին՝ Իռլանդիայի բաժանումից հետո, յունիոնիստները նախարարների կաբինետ են ձեւավորել: Սակայն 1972 թվականին վերականգնվել է Լոնդոնի ուղղակի կառավարումը:

2005 թվականից կուսակցությունը գլխավորում է Ռեգ Էմփեյը:

*Սոցիալ-դեմոկրատական եւ լեյբորիստական կուսակցությունը* Հյուսիսային Իռլանդիայի ազգայնական խոշորագույն քաղաքական ուժն է, որը հանդես է գալիս «Կրակոտ ուրբաթի» համաձայնագրի պաշտպանությամբ (1998թ. ապրիլի 15-ին Բելֆաստում Մեծ Բրիտանիայի կառավարության եւ Հյուսիսային Իռլանդիայի քաղաքական հիմնական ուժերի ներկայացուցիչները ստորագրել են «Կրակոտ ուրբաթի» համաձայնագիրը, որով Հյուսիսային Իռլանդիայի կառավարումը փոխանցվում է կառավարման տեղական մարմիններին: Դրանով նախատեսվում է հանրաքվե՝ Հյուսիսային Իռլանդիայի կարգավիճակը վճռելու նպատակով):

ՍԴԼԿ-ին աջակցում են հանրապետական կաթոլիկները: Կուսակցությունը 1970թ.-ին հիմնել են Ազգայնականների, Նացիոնալ-դեմոկրատական եւ Հանրապետական լեյբորիստների կուսակցությունների ներկայացուցիչները: Քաղաքական այս ուժը պատմական ամուր կապեր ունի Մեծ Բրիտանիայի լեյբորիստների հետ:

ՍԴԼԿ-ն ֆինանսական առավել մեծ անկախություն է պահանջում հյուսիսիռլանդական Ասամբլեայի համար, հանդես է գալիս զբոսաշրջության, գյուղատնտեսության, արդյունաբերության զարգացման ծրագրերով:

*Դեմոկրատական յունիոնիստների կուսակցությունը* Հյուսիսային Իռլանդիայի յունիոնիստական երկրորդ խոշորագույն ուժն է, որին զորակցում են բողոքականները: Կուսակցությունը «Կրակոտ ուրբաթի » համաձայնագրի մոլի հակառակորդներից է: Նա համոզված է, որ համաձայնագիրը կարող է նպաստել Միացյալ Թագավորությունից երկրամասի մեկուսացմանը: Կուսակցությունը դեմ է բոլոր այն գործողություններին, որոնք Իռլանդիայի Հանրապետությանը Օլսթերում առավել մեծ ազդեցության հնարավորություն են տալիս: Դեմոկրատական յունիոնիստները տարիներ շարունակ բողոքել են Ասամբլեայում Շին Ֆեյնի ներկայության դեմ: Սակայն 2007թ. մարտի ընտրությունների

արդյունքում սպանալով խորհրդարանական 108 մանդատներից 36-ը՝ կուսակցությունը կոալիցիոն կառավարություն է ձեւավորել վերջինների հետ (Շին Ֆեյնը նոր Ասամբլեայում զբաղեցնում է 28 տեղ): Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունն այժմ գլխավորում է 81-ամյա Այեն Փեյսլին, իսկ նրա օգնական է նշանակվել Շին Ֆեյնի ներկայացուցիչ Մարթին ՄակԳիննեսը: Հյուսիսային Իռլանդիայի կոալիցիոն կառավարությունում ներկայացված են երկրամասի բոլոր 4 կուսակցությունները:

**Շին Ֆեյնը** երկրորդ ազգայնական ուժն է: Հիմնադրվել է 1905թ.-ին: «*Շին ֆեյն*» գալերենից թարգմանաբար նշանակում է «միայն մենք»: Կուսակցությունը հիմնել է Իռլանդիայում բրիտանական ներկայության դեմ պայքարող հանրապետական շարժումը:

Շին Ֆեյնը, որը փարիներ շարունակ Իռլանդիայի հանրապետական բանակի հենարանն է համարվել, խաղաղ գործընթացի կողմնակից եւ հայրենասիրական գաղափարների պաշտպան է:

Իռլանդիայի հանրապետական բանակի 30-ամյա պայքարից հետո 1998 թվականի համաձայնագրի ստորագրմամբ Շին Ֆեյնը նոր էջ է բացում հանրապետական շարժման պատմության մեջ:

2005թ.-ի ամռանը կուսակցության պահանջով Իռլանդիայի հանրապետական բանակը, լիովին զինաթափվելով, հրաժարվել է զինված պայքարից:

1970-ականներից կուսակցությունը գլխավորում է Ջերի Ադամսը:

2007 թվականի մարտի խորհրդարանական ընտրությունների արդյունքում Շին Ֆեյնը Հյուսիսային Իռլանդիայի Ասամբլեայում տնօրինում է 108 մանդատից 28-ին:

# ՄԱՍ VII
# ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Շոտլանդիայի խորհրդարանը օրենսդիր միապալատ մարմին է: Շոտլանդական թագավորության խորհրդարանը ստեղծվել է 13-րդ դարում: 1707թ.-ին Միացյալ Թագավորության կազմում Անգլիայի եւ Շոտլանդիայի միավորումից հետո խորհրդարանը դադարեցրել է գործունեությունը՝ վերականգնվելով միայն 1999 թվականի Շոտլանդական ակտով (1998 թ.):

Շոտլանդիայի խորհրդարանն իրավասու է կարգավորել կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, բնապահպանության, զբոսաշրջության, տրանսպորտի, իշխանության տեղական եւ ինքնակառավարման մարմինների կազմակերպման, արդարադատության ոլորտի հարցեր: Օրենսդիրը կարգավորում է նաեւ հարկային համակարգի որոշ կողմեր, վերահսկում երկրամասի գործադիր իշխանության գործունեությունը, ընտրում առաջին նախարարին: Խորհրդարանի իրավասության հարցերի շրջանակում ընդունված օրենքները պարտադիր են Շոտլանդիայի համար:

129 պատգամավորներից 73-ն ընտրվում է միամանդատ, 56-ը՝ բազմամանդատ ընտրատարածքներում՝ համամասնական ցուցակներով:

Երկրամասի հիմնական քաղաքական ուժերն են *Շոտլանդիայի ազգային, Լեյբորիստական կուսակցությունները, Մեծ Բրիտանիայի պահպանողական եւ լիբերալ-դեմոկրատական կուսակցությունների* ստորաբաժանումները, *«Կանաչների», Շոտլանդիայի սոցիալիստական, Շոտլանդիայի թոշակառուների միասնության* կուսակցությունները:

2007թ. մայիսի 3-ի ընտրությունների արդյունքում խորհրդարանում մեծամասնություն են կազմել ազգայնականները՝ ստանալով 47 մանդատ, լեյբորիստները զբաղեցնում են 46, պահպանողականները՝ 17, լիբերալ-դեմոկրատները՝ 16 տեղ: *Շոտլանդիայի ազգային կուսակցությունը* ձեւավորել է կառավարություն՝ առաջին նախարար նշանակելով կուսակցության առաջնորդ Ալեքս Սալմոնդին:

Ազգային կուսակցությունը դեռեւս նախընտրական արշավում խոստացել էր Շոտլանդիան դուրս բերել Միացյալ Թագավորության կազմից: Անկախության մասին հանրաքվեն նախանշված է 2010թ.-ին:

Չափավոր ձախ-կենտրոնամետ կողմնորոշման քաղաքական այս ուժը ձեւավորվել է 1934թ.-ին սոցիալ-դեմոկրատական սկզբունքներով:

Մեծ Բրիտանիայի խորհրդարանում Շոտլանդիայի ազգային կուսակցությունն առաջին անգամ ներկայացվել է 1945թ.-ին: Այժմ Համայնքների պալատում ունի 6 ներկայացուցիչ:

*Շոտլանդիայի սոցիալիստական կուսակցությունը* ձախ արմատական քաղաքական ուժ է: Ձեւավորվել է 1996թ.-ին՝ միավորելով հանրապետական եւ տրոցկիստական խմբերի, այդ թվում՝ Շոտլանդիայի սոցիալիստական դաշինքն ու Շոտլանդիայի հանրապետական սոցիալիստական կուսակցությունը: Ներկա անվանումը կրում է 1998 թվականից:

ՇՍԿ-ի գլխավոր նպատակը Շոտլանդիայի անկախացումն է, ինչի հետեւանքով հաստատված ժողովրդավարությունը հնարավորություն կտա պայքարել հանուն սոցիալիզմի: «Շոտլանդիայի Սոցիալիստական Հանրապետության» հիմնումը կուսակցության հեռահար նպատակն է: Խրախուսում է խառը տնտեսությունն ու պետական վերահսկողությունը:

Կուսակցության ներքին կառուցվածքը խմբակցություններ ձեւավորելու հնարավորություն է տալիս: Հիմնական խմբակցություններն են *Ինտերնացիոնալ ազգային շարժումը, Ինտերնացիոնալ սոցիալիստների խումբը, Հանրապետական կոմունիստական ցանցը:*

1979թ.-ին ձեւավորվել է Շոտլանդիայի *«Կանաչների»* կուսակցությունը: 1990թ.-ին այն անջատվել է Անգլիայի եւ Ուելսի «Կանաչների» կուսակցություններից: Անդամակցում է «Կանաչների» եվրոպական խմբակցությանը:

# ՄԱՍ VIII
# ՈՒԵԼՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ուելսի Ազգային ասամբլեան ստեղծվել է 1990թ.-ին: Այն իրավասու էր ուղղումներ կատարել Միացյալ Թագավորության խորհրդարանի ընդունած օրենքներում, սակայն «Ուելսի կառավարման մասին» 2006թ.-ի երկրորդ օրենքով լիազորություններն ընդլայնվել են:

Ուելսի Ազգային ասամբլեան փաստացիորեն սկսել է գործել 1998 թվականից, «Ուելսի կառավարման մասին» օրենքի ընդունմամբ: Ասամբլեան ինքնիշխան մարմին չէ, տեսականորեն բրիտանական խորհրդարանը կարող է չեղյալ հայտարարել ասամբլեայի ցանկացած որոշում կամ ցրել այն:

Ուելսի խորհրդարանն ունի 60 տեղ: Պատգամավորներից 40-ն ընտրվում են պարզ մեծամասնությամբ, 20-ը՝ տարածաշրջանային սկզբունքով (յուրաքանչյուր 5 շրջանից՝ չորսական պատգամավոր):

Խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցությունն ընտրում է առաջին նախարարին, որն էլ գլխավորում է Ուելսի կառավարությունը: Ասամբլեայի լիազորությունների մի մասը փոխանցվել է գործադիր այս մարմնին:

Ուելսի առաջին նախարարն է Լեյբորիստական կուսակցության ուելսյան ստորաբաժանման առաջնորդ Ռոդրի Մորգանը:

Ասամբլեայի խոշորագույն ընդդիմադիր կուսակցությունը *«Plaid Cymru»-ն* («Ուելսի կուսակցություն») է, որը պայքարում է Եվրամիության շրջանակում Ուելսի անկախացման համար: Կուսակցությունը ձևավորվել է 1925թ.-ին, սոցիալիստական սկզբունքների հիման վրա, թեև վերջերս դեպի կենտրոն միտում է նկատվում: Բրիտանական խորհրդարանում կուսակցությունն առաջին անգամ ներկայացվել է 1966թ.-ին: 1974 թվականից մշտապես իր պատգամավորներն ունի Համայնքների պալատում, որոնց թիվն այժմ երեքն է:

Շոտլանդիայի Ազգային կուսակցության հետ անդամակցում է Եվրոպայի ազգերի դեմոկրատական կուսակցությանն ու Եվրոպական ազատ դաշինքին:

Փլեյդ Քիմրուն ունի ավելի քան 10 հազար անդամ: Նախագահը Դեյվիդ Այվնն է, գլխավոր քարտուղարը՝ Կառլ Դեյվիսը:

*«Առա՛ջ, Ուելս»* սոցիալիստական ձախ կողմնորոշման կուսակցությունը հիմնադրվել է 2003թ.-ին: Հանդես է գալիս կառավարման տեղի մարմինների լիազորությունների ընդլայնման, տնտեսության պետական

հափվածը պահպանելու պահանջներով, դեմ է սեփականաշնորհմանը: Կապեր է պահպանում Շոտլանդիայի սոցիալիստական կուսակցության հետ:

*Կարմիր Ուելս, Ուելսի սոցիալիստներ* կազմակերպությունը արմատական ձախ ազգայնականների կազմավորում է: Հիմնադրվել է 1987թ.-ին:

*Ուելսի անկախության կուսակցությունը* հանրապետական կուսակցություն է: Ձեւավորվել է 2000թ.-ին՝ «Plaid Cymru»-ի պառակտման հետեւանքով:

*Ուելսի սոցիալիստական դաշինքը* արմատական ձախ կողմնորոշման կոալիցիա է, որը 2001թ.-ին ձեւավորել են փրոցկիստական մի շարք խմբեր եւ *Կարմիր Ուելս, Ուելսի սոցիալիստներ* կազմակերպությունը:

## ՄԱՍ IX

### *Հարցազրույց Պահպանողական կուսակցությունից Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ ԺՈՒՄԹԻՆ ԳՐԻՆԻՆԳԻ հետ*

***- Ինչպես գիտենք, Մեծ Բրիտանիայի մեծամասնական ընտրական համակարգն աշխարհում լավագույններից է համարվում: Այդուհանդերձ, ի՞նչ թերություններ ունի այն, եւ ինչպե՞ս կարելի է հաղթահարել դրանք:***

- Նախ՝ փոքր կուսակցությունների համար շատ դժվար է խորհրդարանական մանդատ ստանալ, մյուս կողմից՝ Մեծ Բրիտանիայում խորհրդարանի ձեւավորման կարգը յուրահատուկ է. դժվար է միանշանակ ասել, թե քաղաքական որ ուժն է ձայների մեծամասնություն ստացել, քանի որ մարդիկ քվեարկում են ոչ թե կուսակցության, այլ անձանց օգտին: Թեեւ ի վերջո կառավարություն է ձեւավորում խորհրդարանական մանդատների մեծ մասն ստացած կուսակցությունը, այնուամենայնիվ այն ստիպված է փոխզիջումների գնալ՝ հաշվի առնելով ընդհանուրի շահը: Ուստի քաղաքական որ ուժն էլ հաղթի, մարդիկ գիտեն, թե ով է պատասխանատվություն կրելու: Թեեւ կատարյալ ժողովրդավարություն սա չի կարելի համարել, այնուամենայնիվ հստակ ուղեգիծ կա:

***- Մեծ Բրիտանիան այսօր առաջատար երկու կուսակցություն ունի: Արդյո՞ք քաղաքական երրորդ ուժի ձեւավորման հետ կապված խնդիրներ կան:***

- Մեծ Բրիտանիայում ցանկացած ուժ հեշտությամբ կարող է ձեւավորվել, սակայն առավել դժվար է գոյություն պահպանելն ու զարգանալը: Երկրի երկու հիմնական քաղաքական ուժերը՝ Լեյբորիստական եւ Պահպանողական կուսակցությունները, ձեւավորվել են պատմականորեն, սակայն մեկ դար առաջ իշխող էին ոչ թե լեյբորիստներն ու պահպանողականները, այլ լիբերալներն ու պահպանողականները: Այսինքն՝ թեեւ դանդաղ, բայց իրադրությունը փոխվում է: Ձեր նշած առաջատար կուսակցությունների հաջողության գրավականն այն է, որ նրանց ծրագրերը փոխվում են հասարակության պահանջներին համապատասխան: Այսինքն՝ Լեյբորիստական եւ Պահպանողական կուսակցությունները ճկուն են: Երբ Թոնի Բլերը ստանձնեց լեյբորիստների առաջնորդի պաշտոնը, նա բարեփոխեց կուսակցությունը: Այժմ նոր ղեկավար ունեն նաեւ պահպանողականները. Դեւիդ Քեմերոնը եւս փորձում է փոխել իր գլխավորած քաղաքական ուժը: Չնայած Լեյբորիստական ու Պահպանողական կուսակցությունները բավականին հին են, այնուամենայնիվ հարմարվում են ժամանակի պահանջներին:

***- Իսկ ի՞նչ դժվարությունների են հանդիպում նորաստեղծ կուսակցությունները:***

- Նրանց հիմնական մարտահրավերը մեր մեծամասնական ընտրական համակարգն է: Մեծ Բրիտանիայում յուրաքանչյուր պատգամավոր մի ընտրատեղամաս է ներկայացնում, իսկ կառավարություն ձեւավորվում է խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցությունը: Նոր կուսակցության համար շատ դժվար է որեւէ ընտրատեղամասում ձայների մեծամասնություն ստանալ: Եթե մենք համամասնական ներկայացուցչություն ունենայինք, ինչպես շատ երկրներ, փոքր կուսակցությունները խորհրդարանական մանդատ ստանալու հնարավորություն կստանային, սակայն Մեծ Բրիտանիայում այդպես չէ, եւ՝ որպես պահպանողական կուսակցության պատգամավոր, ներկայացնում եմ իմ ողջ ընտրատեղամասի բնակչությանը: Դրանք տարբեր երեւույթներ են, այսինքն՝ վճռորոշ է ոչ թե կուսակցական պատկանելությունը, այլ տեղամասը, մինչդեռ համամասնական համակարգում հակառակն է: Կարծում եմ՝ այսպես ավելի ճիշտ է, քանի որ համամասնական համակարգով ընտրվելու դեպքում, երբ հանդես ես գալիս որպես կուսակցության ներկայացուցիչ, կորցնում ես անմիջական շփումն ընտրողի հետ: Իմ կարծիքով, առավել նպատակահարմար է, ապրելով որեւէ տարածքում, իմանալ, թե ով է քեզ ներկայացնում խորհրդարանում:

***- Չնայած կառավարող կուսակցության փոփոխմանը՝ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքական ուղեգիծը հազվադեպ է փոխվում: Որո՞նք են ձեր եւ ձեր հակառակորդների ծրագրերի արտաքին քաղաքական դրույթների հիմնական տարբերությունները:***

- Շատ հարցերում, ինչպիսին է, օրինակ, Իրաքի հարցը, մոտեցումները համընկնում են: Կարծում եմ՝ պետք է պրագմատիկ լինել ու զորակազմն Իրաքից դուրս բերել՝ հաշվի առնելով մեր ստանձնած պարտավորություններն այդ երկրում: Արտաքին քաղաքական ուղեգծերը հիմնականում տարբերվում են Եվրամիության կազմում Մեծ Բրիտանիայի դերակատարման հարցում: Կառավարող կուսակցությունը ձգտում է լինել Եվրոպայի կենտրոնում, թեեւ աշխարհագրական դիրքով հեռու է կենտրոնից: Մինչդեռ պահպանողականները կնախընտրեին առաջնորդի դեր ստանձնել կառույցում, այսինքն՝ Միության կազմում պաշտպանել ազգային շահերը: Պահպանողականներին եւ լեյբորիստներին հաճախ, համապատասխանաբար, անվանում են «եվրահոռետեսներ» եւ «եվրալավատեսներ», սակայն դրանք ճիշտ բնորոշումներ չեն, քանի որ առաջիններն ամենեւին էլ չեն ձգտում Բրիտանիան դուրս բերել Եվրամիության կազմից: Միությունը բազում երկրներից է կազմված, մենք ձգտում ենք նվազեցնել մեր մասնակցությունը՝ առավել արդյունավետ դարձնելով

այն: Նրանք կարծում են, թե Եվրամիության խնդիրը բոլոր երկրների շահերը համապատասխանեցնելն է՝ արտահայտված մեծամասնության ձգտումներով՝ անկախ ազգությունից: Միության առաջնորդները ձգտում են հավասարեցնել բոլորին՝ հաշվի չառնելով ազգային տարբերությունները, մինչդեռ մենք արժեւորում ենք բազմազանությունը, որն էլ հենց Եվրոպայի ուժն է: Սրանք են արտաքին քաղաքական ուղղությունների հիմնական տարբերությունները: Կարծում եմ նաեւ, որ պետք է ձգտենք վերացնել առեւտրական խոչընդոտները եւ համագործակցել զարգացող երկրների հետ, աջակցել նրանց տնտեսական բարգավաճմանը, այդ նպատակով հիմնադրամներ ու դաշինքներ ստեղծել, որտեղ հավասարապես ներկայացված կլինեն հարուստ ու զարգացող երկրները: Իհարկե, հարուստ երկրների ձայնն առավել լսելի է, քանի որ բոլոր միջոցները նրանց ձեռքում են, սակայն մենք ձգտում ենք հնարավորինս մեղմել այդ սահմանները:

# ԳԼՈՒԽ IV

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ



# ՄԱՍ I
# ՌԱԴԻՈ - ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծ Բրիտանիան ռադիոյի եւ հեռուստատեսության հարուստ ավանդույթներ ունի: Դրանք համաշխարհային հեղինակություն են վայելում, քանի որ յուրաքանչյուր հաղորդման հանդեպ ստեղծագործական մոտեցում է ցուցաբերվում:

Փորձնական ռադիոհաղորդումներն առաջին անգամ եթեր են հեռարձակվել 19-րդ դարի վերջին, իսկ 20-րդ դարասկզբին, երբ համակարգը կատարելագործվեց, այն հանրության համար ավելի մատչելի դարձավ:

1922 թվականին հիմնվեց Բրիտանական հեռարձակող ընկերությունը՝ հայտնի BBC-ին: Ընկերության հիմնադիր եւ տնօրեն Ջոն Ռեյթը կանխորոշեց BBC-ի զարգացման սկզբունքներն ու ոճը՝ այն դարձնելով անկախ ե՛ւ կառավարությունից, ե՛ւ կոմերցիոն կառույցներից:

Բրիտանական խոշորագույն ռադիոհեռուստատեսային ընկերության կենտրոնակայանը Լոնդոնում է, այնուամենայնիվ այն մասնաճյուղեր ունի ողջ երկրում: BBC TV ռադիոհեռուստատեսային ընկերության կազմում են BBC 1 եւ BBC 2 ռադիոկայանները, վեց թվային հեռուստակայան, այդ թվում՝ BBC News 24-ը: BBC World-ը լուրերի միջազգային հեռուստակայան է, որը ֆինանսավորվում է կոմերցիոն աղբյուրներով:

BBC-ն ղեկավարում է տնօրենների խորհուրդը, որը պատասխանատու է եթեր հեռարձակվող հաղորդումների համար: Խորհրդի անդամներին վարչապետի խորհրդով նշանակում է թագուհին: Ընկերության ամենօրյա աշխատանքը վերահսկում է գլխավոր տնօրենը:

BBC-ն ֆինանսավորվում է խորհրդարանական նպաստներով, որոնք ստացվում են հեռուստատեսային արտոնագրերի եկամտից: Արտոնագրի համար վճարում են հեռուստացույց ունեցող բոլոր քաղաքացիները: BBC-ն պետական ընկերություն չէ, քանի որ չի վերահսկվում կառավարության կողմից: Սակայն BBC-ի կանոնադրությունը Միացյալ Թագավորության ներքին գործերի նախարարին հնարավորություն է տալիս արգելափակել այն հաղորդումների հեռարձակումը, որոնք կառավարությունը վիճահարույց կամ հակահասարակական է համարում:

Մինչեւ նախորդ դարի 50-ական թվականները BBC-ն մենաշնորհ էր վայելում Մեծ Բրիտանիայի ռադիոհեռուստատեսային դաշտում: Սակայն քաղաքական եւ կոմերցիոն կառույցների ճնշման ներքո հիմնադրվում է Անկախ հեռարձակող ընկերակցությունը՝ IBA-ը:

1972 թվականին խորհրդարանն օրենքով արգելում է ռադիոեթերի՝ BBC -ի մենաշնորհը: Հիմնադրվում են գովազդային միջոցներով ֆինանսավորվող ռադիոընկերություններ:

Արբանյակային կապի ներմուծումն առավել բազմազան է դարձրել բրիտանական հեռուստատեսային դաշտը: Արբանյակային հեռուստաընկերություններից ամենախոշորը՝ «British Sky Broadcasting»-ը, մասնավոր «Աստրա» արբանյակի միջոցով առաջարկում է 15 ալիք, այդ թվում՝ լրատվական, սպորտային, ժամանցային:

Բրիտանական խոշոր հեռուստաընկերություններ են նաեւ ITV-ն, Channel 4-ը՝ Չորրորդ ալիք, Five-ը՝ Հինգերորդ ալիք, եւ ITN-ը, որը լուրեր է մատակարարում Channel 4-ին եւ ITV-ին:

# ՄԱՍ II
# ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼ, ԳՐՔԵՐ

Մեծ Բրիտանիայում տպագրվում է ավելի քան 200 օրաթերթ ու շաբաթաթերթ, շուրջ 2 000 տեղական թերթ: Թեեւ «ազգային 14 թերթերը» հրապարակվում են Լոնդոնում, դրանք ընթերցում են ողջ Բրիտանիայում: Մի շարք թերթեր շատ մեծ տպաքանակ ունեն, օրինակ՝ Daily Mirror-ը, Daily Express-ը, The Sun-ը եւ Daily Mail-ը: Առավել քիչ տպաքանակով, սակայն համաշխարհային ազդեցությամբ պարբերականներ են համարվում The Times, The Guardian, Financial Times, The Daily Telegraph օրաթերթերը եւ Observer, Sunday Times շաբաթաթերթերը:

Հիմնական լրատվական գործակալություններն են Reuters-ը, Press Asosiation Limited-ը եւ Asosiated Press-ի բրիտանական մասնաճյուղը: Լրատվական կազմակերպությունների թվին են պատկանում Տպագիր հրապարակությունների ընկերակցությունը, Ժուռնալիստների ինստիտուտը:

Մեծ Բրիտանիայում տպագրվում են նաեւ մի քանի հազար պարբերականներ, այդ թվում՝ առեւտրային եւ տեխնիկական, առանձին ընկերությունների եւ կազմակերպությունների պաշտոնական հրապարակություններ: Ամենամեծ թվով բաժանորդներ ունեն կանանց ամսագրերը:

Պարբերաբար քաղաքական ամփոփումներ տպագրող հեղինակավոր ամսագրերից են The Economist-ը, New Statesman and Society-ն, Tribune-ը:

Միացյալ Թագավորությունում լույս տեսնող գրքերի բազմազանությունն աներեւակայելիորեն աճել է այն բանից հետո, երբ 15-րդ դարում Ուիլյամ Կեքսթոնն այստեղ է բերել առաջին տպագրական մեքենան: Յուրաքանչյուր տարի ավելի քան 70 հազար անուն տպագիր արտադրանք է լույս տեսնում: Հրատարակչությունների մեծ մասը Լոնդոնում է: Աշխարհում գրքերի ամենախոշոր արտահանողը Մեծ Բրիտանիան է:

Բնակչության շրջանում հեղինակություն է վայելում ոչ թե գեղարվեստական (տարեկան տպագրվում է շուրջ 2 200 վեպ) գրականությունը, այլ գիտական հետազոտությունները, կենսագրավեպերը, կրոնագիտական եւ քաղաքագիտական աշխատությունները:

## ՄԱՍ III

### *Հարցազրույց Բրիտանական «Channel 4» հեռուստաընկերության լրատվական ծրագրի խմբագիր ԲԵՆ ՄՈՆՐՈ-ԴԵՎԻՍԻ հետ*

***- Պատմեցե՛ք, խնդրում եմ, Ձեր հեռուստաընկերության, Ձեր աշխատանքի մասին: Ի՞նչ վարկանիշ ունեք:***

- Ես Բրիտանական «Channel 4» հեռուստաընկերության լրատվական ծրագրի խմբագիրն եմ, պատասխանատու եմ այն ամենի համար, ինչ եթեր է հեռարձակվում: Եվ եթե հաղորդումը ստացվել է կամ չի ստացվել, իմ «մեղքն» է: Մեր լրատվական թողարկումները «Channel 4»-ի եթերում են շաբաթը յոթ օր՝ ամեն երեկո: Մյուս հեռուստաընկերությունների լրատվական ծրագրերի համեմատ դրանք առավել մանրակրկիտ վերլուծական տեղեկատվություն են ապահովում ընթացիկ իրադարձությունների մասին: «Channel 4-News»-ը («Չորրորդ ալիք-Լուրեր») մասնագիտացված լրատվական ծրագիր է, ինչպիսին է, ասենք, «ABC-News»-ը Միացյալ Նահանգներում: Կարծում եմ՝ Մեծ Բրիտանիայի լրատվական ողջ դաշտում մենք առաջատար ենք:

***- Որո՞նք են Ձեր գերակայությունները: Ի՞նչ ուղղվածություն ունի ձեր լրատվական ծրագիրը, առավել կարեւորվում են միջազգային իրադարձությունները, թե՞ հավասարապես անդրադարձ է լինում նաեւ տեղական լուրերին:***

- Առաջին հերթին, ուշադրության կենտրոնում է օրվա կարեւորագույն իրադարձությունը: Փորձում ենք նաեւ պահպանել համամասնությունը: Այժմ, օրինակ, Իրաքում տիրող իրավիճակի եւ ահաբեկչությունների պատճառով միջազգային լուրերը մեր եթերում գերակայում են: Այսինքն՝ այդ հավասարակշռությունը հեշտությամբ փոխվում է, պայմանավորված է առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող իրադարձությամբ, որը կարող է լինել ինչպես միջազգային, այնպես էլ ներքին:

***- Հեռուստաընկերությունները սովորաբար երկու հիմնական գործելաոճ ունեն, մի մասը պարզապես լուսաբանում է, մյուս մասը՝ վերլուծում: Ո՞ր ձեւն է Ձեզ առավել հարազատ:***

- Երկուսն էլ: Մենք լուսաբանում ենք ընթացիկ իրադարձությունները, միաժամանակ փորձում ենք պարզաբանել դրանց դրդապատճառները: Մեր լրատվական թողարկումը մեկուկես ժամ տեւողություն ունի, ուստի մենք բավարար ժամանակ ունենք երկուսն էլ անելու, որպեսզի մեր լուրերը տարբերվեն մյուսներից:

***- Թողարկման ընթացքում քանի՞ պեւսանյութ է ներկայացվում եւ ի՞նչ պեւողությամբ:***

- Գլխավոր իրադարձություններին շատ ժամանակ է հատկացվում, մյուս լուրերն առավել կարճ տեւողություն ունեն: Կարեւոր իրադարձություններն առավել խորն են լուսաբանվում, ուստի առաջին տեսանյութը սովորաբար պատրաստվում է 10, մյուսները՝ 2 րոպե տեւողությամբ, եւ շատ արագ անդրադառնում ենք օրվա բոլոր լուրերին: Այսինքն՝ կենտրոնանում ենք հետաքրքիր իրադարձությունների վրա՝ առավել թռուցիկ ներկայացնելով մյուսները:

***- Իսկ ի՞նչ պեղ են զբաղեցնում Եվրամիությանն առնչվող խնդիրները:***

- Հետաքրքիր հարց է: Եվրոպական խնդիրներին Բրիտանիայում մեծ ուշադրություն է հատկացվում, երբ հարցի շուրջ տարակարծություն կա: Այժմ քաղաքական գործիչները, կարծես թե, առավել միասնական են Եվրամիությանն առնչվող հարցերում: Ուստի բուն Միության խնդիրներն առավել քիչ են լուսաբանվում, առավել մեծ ուշադրություն ենք հատկացնում Եվրամիության նոր անդամներին՝ Լեհաստանին, Ռումինիային, Բուլղարիային՝ պայմանավորված Մեծ Բրիտանիայի հետ նրանց հարաբերություններով: Բրիտանիայում ներկայում շուրջ կես միլիոն լեհ է բնակվում, ինչը էական թիվ է, ուստի առավել միտված ենք լուսաբանելու հարցին առնչվող բրիտանական հեռանկարները, քան եվրոպականները:

***- Կարելի՞ է ասել, որ դուք որոշակի ազդեցություն ունեք երկրում որոշումների կայացման գործընթացներում:***

- Կարեւոր հարց է: Մեծ Բրիտանիայում լրատվամիջոցները մեծ ուժ ունեն, սակայն չի կարելի ասել, թե մենք կարող ենք վերահսկել իրադարձությունների ընթացքը: Մենք կարող ենք կարծիք հայտնել, եթե որեւէ իրավիճակ չի համապատասխանում մեր տեսակետին, կարող ենք քննարկել եւ փորձել կանխել որեւէ երեւույթ: Բայց չեմ կարծում, թե կարող ենք ակտիվ վերահսկել գործընթացները: Դրա համար առավել մեծ ազդեցություն է անհրաժեշտ: Մենք հետեւում ենք իրադարձություններին եւ դրանից հետո համապատասխան կարծիք հայտնում: Սակայն չեմ կարծում, թե լրատվամիջոցները բավականաչափ հզոր են՝ որոշելու՝ ինչ պետք է տեղի ունենա Մեծ Բրիտանիայում կամ աշխարհում: Թեեւ իրաքյան պատերազմը շատ էր քննադատվում լրատվամիջոցների կողմից, այնուամենայնիվ Թոնի Բլերը որոշեց մասնակցել դրան:

***- Դուք նշեցիք, որ ոչ միայն լուսաբանում, այլեւ վերլուծում եք իրադարձությունները: Կնշե՞ք որեւէ դեպք, երբ ձեր վերլուծությունը որոշակի ազդեցություն է ունեցել դեպքերի ընթացքի վրա:***

- Ազդեցությունն այլ բան է: Ինչ վերաբերում է վերլուծություններին, կարող եմ նշել Իրաքում մեր աշխատանքը: Մի կողմից կարեւոր է լուսա-

բանել, թե ինչ է այնտեղ կատարվում՝ կրակոցներ, սպանություններ, իրական բախումներ: Մյուս կողմից փորձում ենք պարզել՝ ինչու է Իրաքն այդ վիճակում, արդյո՞ք ամերիկյան առավել մեծաթիվ զորակազմը կարող է խաղաղություն հաստատել, թե՞ լավագույն տարբերակն այնտեղից հեռանալը կլինի: Ահա սա էլ վերլուծական աշխատանքն է: Ինչ վերաբերում է մարդկանց վրա մեր ազդեցությանը, հաստատ չեմ կարող ասել, թե մեր աշխատանքն ինչպես է ազդում: Իհարկե, երբ լուսաբանում ես մարդկանց հուզող որեւէ հարց, փորձում ես օրենքից բխող խորհուրդներ տալ: Երբ կառավարությունը իրաքյան պատերազմին մասնակցելու որոշում պետք է կայացներ, քննարկվում էր այդ պատերազմի օրինականության հարցը: Մենք ներկայացրեցինք իրավաբանի տեսակետ, որն առաջարկում էր հրաժարվել մասնակցությունից, քանի որ բացասական հետեւանքներ կարող էր ունենալ կառավարության համար, սական նրանք այլ ուղի ընտրեցին: Ուստի, կարծում եմ, մեր ազդեցությունն այնքան էլ մեծ չէ:

***- Քանի՞ աշխատակից ունեք այժմ ձեր լրատվական բաժնում:***

- Հաշվելով նաեւ օպերատորներին եւ նրանց, ովքեր աշխատում են ստուդիայում՝ շուրջ 100: Հեռուստադիտողն էկրանին տեսնում է մեկին, որի հետեւում, սակայն, տասնյակ մարդիկ են աշխատում:

***- Պարկերացում ունե՞ք ձեր օբյեկտիվ վարկանիշի մասին, ի՞նչ թվերով է այն արտահայտվում:***

- Մեզ շուրջ մեկ միլիոն մարդ է դիտում՝ ավելի քիչ, քան մյուս հեռուստաալիքները՝ BBC-1-ը, ITV-ին, սակայն հակված ենք մտածելու, որ մեր աշխատանքն առավել կարեւոր է, քան այդ թվերը: Էական չէ՝ քանի մարդ է մեզ դիտում, կարեւոր է՝ ինչ ազդեցություն ունենք: Թեեւ այլ հեռուստաընկերություններ առավել մեծաթիվ դիտողներ ունեն, հաճախ հասարակական կարծիք է ձեւավորում եւ մարդկանց ստիպում որեւէ քայլի դիմել մամուլը: Ուստի կարեւոր են ոչ թե թվերը, այլ իրական ազդեցությունը. քանի մարդ է նկատում քո աշխատանքը, քանի կազմակերպություններ են արձագանքում քո գործունեությունը: Օրինակ՝ Իրաքի վերաբերյալ մեր տեսանյութերը ստիպեցին Պենտագոնին պատասխանել, ստիպել են նաեւ փոխել կառավարության որոշումներ: Մեզ համար կարեւոր է, որ մարդիկ դիտեն մեր գիշերային լուրերը, քանի որ այն, ինչ մենք լուսաբանում ենք այդ գիշեր, մյուս հեռուստաընկերությունները լուսաբանում են հաջորդ օրը միայն:

***- Ո՞ր երկրներում թղթակիցներ եւ թղթակցային կետեր ունեք:***

- Թղթակիցներ ունենք թեժ կետերում՝ Հորդանանում, որտեղ իրաքցի շատ փախստականներ կան, Զիմբաբվեում, որտեղ ուշադրության կենտրոնում է ընդդիմության առաջնորդը, Հարավաֆրիկյան Հանրապետութ-

յունում, եղել ենք նաեւ Բրազիլիայում: Մեր աշխատակիցները շրջում են աշխարհով, սակայն ունենք նաեւ հիմնական կենտրոններ Միացյալ Նահանգներում, Չինաստանում եւ ասիական մի շարք երկրներում:

***- Ի՞նչ գործընկերներ ունեք:***

- Միացյալ Նահանգներում համագործակցում ենք NBC հեռուստաընկերության հետ, գործարքային պայմանագրեր ունենք նաեւ Եվրոպայում, գործակալություններից համագործակցում ենք «Reauters»-ի հետ, որը եւս մեզ տեսանյութեր է մատակարարում:

***- Դուք վճարովի՞ հեռուստաընկերություն եք:***

- Ունենք հայտարարությունների համար հատկացված եթերաժամեր, որոնք վճարովի են, սակայն մեր եթերն ազատ է:

# ՄԱՍ IV

## *Հարցազրույց «BBC World Service»-ի ռուսական բաժնի պրոդյուսեր ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հետ*

***- Ներկայացրե՛ք, խնդրեմ, BBC-ն՝ որպես հանրային ծառայություն մատուցող լրատվամիջոց:***

- BBC-ում հանրային եւ պետական ծառայության հիմնական տարբերությունն այն է, որ մենք պետությունից ֆինանսավորում չենք ստանում, այսինքն՝ չկա բյուջետային տող, որով գումար հատկացվի BBC-ի աշխատանքի համար: Դա արվում է այսպես. հեռուստացույց ունեցող մարդիկ հարկ են վճարում, այդ հարկի գումարները կուտակվում են եւ փոխանցվում BBC-ին, ինչի շնորհիվ էլ աշխատում է հեռուստաընկերությունը: Դա BBC-ին թույլ է տալիս անկախ լինել ե՛ւ կառավարող կուսակցությունից, ե՛ւ կառավարման այլ օղակներից: Առաջիկա հինգ տարվա ընթացքում հեռուստացույց ունեցող բոլոր ընտանիքները հարկեր են վճարում, այդ թվում նաեւ ես, քանի որ նույնպես հեռուստացույց ունեմ...

***- Ձեզ համար զեղչեր չկա՞ն:***

- Ոչ մի զեղչ: Հավաքված այդ գումարներով էլ գոյատեւում է BBC-ին: Սակայն BBC-ի համաշխարհային ծառայությունը՝ «World service»-ը, աշխատում է ոչ թե այդ գումարով, այլ ամենամյա գրանտներով, որ ստանում է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունից: Իսկ թե ինչպես եւ ինչ աշխատանքների համար կծախսվի այդ գրանտը, BBC-ի ներքին խնդիրն է:

***- Իսկ գովազդներ կա՞ն:***

- Գովազդ չկա: Չնայած «World service» հեռուստատեսությունում ընդունված է միայն մի տեսակի գովազդ, այն է՝ տարբեր երկրների գովազդներ՝ այդ երկրների վարկանիշը, դրանց մասին իմացությունը բարձրացնելու համար:

***- Կա՞ն հստակ ընդգծված առաջնահերթություններ, որոնցով ընտրվում են լուսաբանման ենթակա նորությունները:***

- Հիմնականում աշխատում են հետեւյալ գործոնները. քանի մարդու եւ երկրի համար է այդ իրադարձությունը հետաքրքիր, որտեղ եւ երբ է տեղի ունեցել այդ իրադարձությունը: Բացի այդ՝ մենք պետք է լինենք առաջիններից մեկը, այսինքն՝ այն, ինչ կատարվել է մեկ օր առաջ, կարող է հնացած լինել, եւ մենք պետք է կարողանանք անմիջապես տալ նյութը, առանց ուշացնելու, պետք է առաջինն անենք դա: Այս երեք սկզբունքներն են, որոնցով մենք ղեկավարվում ենք եւ աշխատում:

***- Իսկ կա՞ն երկրներ կամ թեմաներ, որոնց վերաբերող իրադարձությունները պարտադիր լուսաբանվում են:***

- Մեծ երկրները, իհարկե, ավելի հեպաքրքիր են, քան փոքրերը, մեծ երկրների ղեկավարների քայլերն առավել պեսանելի են, քան փոքր երկրների ղեկավարության քայլերը: Օրինակ՝ եթե Ռուսասպանի նախագահը պաշպոնական այցով մեկնում է որեւէ երկիր, մենք դա անպայման լուսաբանում ենք, ներգրավում ենք մեր սեփական թղթակիցներին կամ հապուկ թղթակիցներ ենք ուղարկում՝ թեման լուսաբանելու: Չէ՞ որ կարող են բավականին լուրջ քաղաքական խնդիրներ քննարկվել, իսկ դա ոչ միայն Եվրոպայի, այլեւ ողջ աշխարհի համար կարեւորագույն իրադարձություն է:

***- Քանի՞ երկրում թղթակիցներ եւ թղթակցային կենպրոններ ունեք:***

- Ես դժվարանում եմ ասել՝ քանի երկրում, որովհեպեւ թղթակիցներ կան գրեթե ողջ աշխարհում: Այն երկրներում, որպեղ իրադարձություններն ավելի շապ են, մենք մի քանի թղթակից ունենք: Օրինակ՝ Հայասպանը լուսաբանող թղթակիցը՝ Մեթյու Քոլինզը, Թբիլիսիում է, բայց շապ հաճախ այցելում է Երեւան եւ Հայասպանի այլ վայրեր: Առանձին թղթակից ունենք նաեւ Վրասպանում, Ադրբեջանում ադրբեջանական ծառայություն կա, հեպեւաբար մի քանի թղթակից ունենք: Մոսկվայում, Կիեւում, նաեւ Ալմա Աթայում, Բիշքեկում մեծ թղթակցական կենպրոններ ունենք, որպեղ աշխապում են ե՛ւ անգլերենով, ե՛ւ պարսկերենով ե՛ւ ռուսերենով: Թղթակցական կեպ ունեինք նաեւ Տաշքենդում, բայց այն փակվեց, քանի որ քաղաքական իրավիճակն այդ երկրում բարդացավ եւ շապ անկանխապեսելի դարձավ:

***- Իսկ այդ կենպրոններից եւ թղթակիցներից բացի՝ ունե՞ք հապակ ֆիքսված գործընկեր կառույցներ:***

- Ո՛չ, որպես կանոն՝ չունենք: Գործընկեր են այն լրապվամիջոցները, որոնք օգնում են հեռարձակել BBC-ն, եթեր կամ հաճախականություն են պրամադրում:

***- Նկապի ունեմ լուրեր սպանալու առումով բազմազանություն ապահովող գործընկերներ:***

- Բազմազանությունն ապահովելու համար մենք հապուկ համակարգ ունենք. սպանում ենք ե՛ւ համաշխարհային, ե՛ւ պեղական գործակալություններից գրեթե ամեն ինչ:

***- Եվ ո՞վ է կապարում ընպրությունը:***

- Կա BBC-ի մոնիթորինգի ծառայություն, որն աշխապում է գրեթե ամբողջ աշխարհում: Այն մեզ համար լրաքաղ է անում ե՛ւ թերթերից, ե՛ւ գործակալություններից, ե՛ւ հեռուսպապեսային ծրագրերից: Օրինակ՝ ես այսպեղ ամեն շաբաթ կարող եմ կարդալ, թե ինչի մասին է հաղորդել «Զինուժ» ծրագիրը:

***- Կխոսե՞ք Ձեր բաժնի աշխատանքի մասին, եւ թե Հայաստանը առհասարակ ինչպես է ներկայացված:***

- Թերեւս միակ հայաստանցի հայը BBC-ում ես եմ: Մեր հաղորդումը ռուսական ծառայության հաղորդումներից մեկն է: Մենք զբաղված ենք ԱՊՀ երկրների իրադարձությունները լուսաբանելով: Իհարկե, ամենամեծ շեշտը դնում ենք Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի վրա: Բայց եթե հետաքրքիր իրադարձություններ են լինում Ուկրաինայում, Բելառուսում, Մոլդովայում՝ հատկապես Մերձդնեստրյան իրադարձությունների հետ կապված, մենք, անշուշտ, դրանք լուսաբանում ենք: Այդ դեպքում կա՛մ տեղի մեր թղթակիցներն են նյութերի պատվեր ստանում, կա՛մ մենք ենք այստեղ նյութեր պատրաստում հեռախոսազրույցների, հարցազրույցների օգնությամբ: Օրինակ՝ Կոդորի կիրճում իրադարձությունների նոր սրացում տեղի ունեցավ, ինչը լուսաբանելու համար զանգահարել եմ Թբիլիսի, խոսել ներքին գործերի փոխնախարարի հետ, այնուհետեւ զանգահարել եմ Մոսկվա, խոսել պաշտպանության նախարարության ներկայացուցչի հետ, Լոնդոնում զրուցել եմ բրիտանացի վերլուծաբանի հետ, ով փորձում էր այդ իրադարձությունները կապել Արեւմուտքի հետ:

***- Ձեր նյութերում որքա՞ն հաճախ եք անդրադառնում հայաստանյան իրադարձություններին:***

- Կախված այն հանգամանքից, թե ինչ իրադարձություններ են տեղի ունենում Հայաստանում եւ հայերի հետ: Ամեն ինչ կախված է իրադարձություններից, քանի որ մենք նորությունների ծրագիր ենք: Բացի այդ՝ ունենք խմբագրական չափանիշներ, որոնք պարտավոր ենք պահպանել, եւ որոնք թույլ են տալիս անդրադառնալ ամենացավոտ, ամենակրիտիկական իրադարձություններին, միաժամանակ լինել չեզոք: Այդ չափանիշները պարտադիր են ամբողջ BBC-ի համար: Ե՛վ խմբագիրները, ե՛ւ մենք հետեւում ենք, որ դրանք անշեղորեն կատարվեն: Չափանիշներից մեկն այն է, որ, երբ քննադատում ենք որեւէ մեկին, հաղորդումը պատրաստելուց առաջ պետք է անպայման հարցնենք այդ մարդու կարծիքը, եթե չունենք մեր քննադատությանը տրված այդ մարդու պատասխանը, որը պետք է ներկայացված լինի նույն տեսանյութում, այն եթեր չի հեռարձակվի: Այս չափանիշն օգնում է BBC-ի ծառայության կազմում ունենալ տարբեր ազգերի ներկայացուցիչ աշխատակիցներ:

# ԳԼՈՒԽ V

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ



# ՄԱՍ I
# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մեծ Բրիտանիայում կրթության համար պատասխանատու է կառավարությունը, որն իր գործունեությունն Անգլիայում իրականացնում է Կրթության եւ աշխատանքի դեպարտամենտի, Ուելսում՝ Ազգային ժողովի, Հյուսիսային Իռլանդիայում՝ Կրթության, Բարձրագույն եւ հետբուհական կրթության, Զբաղվածության դեպարտամենտների աջակցությամբ: Օրենքը դպրոցական կրթությունը համարում է պարտադիր: Անգլիայում, Շոտլանդիայում եւ Ուելսում 11-ամյա ուսուցումը սկսվում է 5-տարեկանից, Հյուսիսային Իռլանդիայում՝ չորսից՝ շարունակվելով 12 տարի: 1990-ական թթ.-ի սկզբից ակտիվորեն զարգանում է նախադպրոցական կրթությունը: Պատճառը նոր հայեցակարգն է, համաձայն որի՝ 5-ամյա երեխաները կրթությունը պետք է սկսեն որոշակի տարրական գիտելիքներով:

Սակայն բրիտանացի երեխաների համար պարտադիր կրթությունն սկսվում է տարրական դպրոցում: 7 տարեկանից աշակերտները փոխադրվում են յունիոր-դեպարտամենտներ կամ առանձին յունիոր-դպրոցներ: Տարրական դպրոցում կրթության որակի կարեւորագույն չափանիշը դասարանում աշակերտների թիվն է: Անգլիայի եւ Ուելսի տեղական կրթական մարմինները պարտավոր են երեխաներին տարրական դպրոցներում բաշխել այնպես, որ յուրաքանչյուր դասարանում 30-ից ավելի աշակերտ չլինի: 11 տարեկանում երեխաները տեղափոխվում են ընդհանուր կրթության միջնակարգ դպրոց, որտեղ մինչեւ 16 տարեկանն ավարտում են պարտադիր կրթությունը: Երեխաները միջնակարգ դպրոց են ընդունվում առանց քննության եւ բնութագրի: Մեծ Բրիտանիայի բոլոր պետական միջնակարգ դպրոցներում գործում է կրթական նույն ծրագիրը:

Հյուսիսային Իռլանդիայում, սակայն, միջնակարգ դպրոց ընդունվելու կարգն այլ է: Այստեղ աշակերտներն ընտրվում են ըստ պատրաստվածության մակարդակի եւ ընդունակությունների: Անգլերեն լեզվի, մաթեմատիկայի, քիմիայի եւ կենսաբանության քննությունները հաջող հանձնած աշակերտները կարող են շնորհալի երեխաների համար նախատեսված մասնագիտացված միջնակարգ դպրոցներ ընդունվել: Մյուսները հաճախում են սովորական միջնակարգ դպրոց:

Մեծ Բրիտանիայի պարտադիր կրթական ծրագիրը կազմված է չորս փուլից՝ 5-7, 7-11, 11-14 եւ 14-16 տարեկան աշակերտների համար: Յուրաքանչյուրում դասավանդվում են պարտադիր համարվող անգլերեն լեզու, գրականություն, մաթեմատիկա առարկաները: Պարտադիր են նաեւ պատմությունը, աշխարհագրությունը, կերպարվեստն ու երաժըշ-

փությունը: Օտար լեզվի ուսուցումն սկսվում է 11 տարեկանից: Կան նաեւ ընտրովի դասընթացներ. 10-11-րդ դասարաններում պատմությունը, աշխարհագրությունը, կերպարվեստն ու երաժշտությունն ազատ առարկաներ են դառնում, որոնց շրջանակում աշակերտները կարող են որոշակի, այսպես կոչված, մասնագիտացում ընտրել, օրինակ՝ հրաժարվելով ուսումնասիրել դրամատիկական արվեստ՝ կարող են պարի պարապմունքների հաճախել:

Պետական բոլոր դպրոցները պարտավոր են ապահովել կրոնի ուսուցումը: Կրոնական կրթական ծրագրում պետք է ներառվի քրիստոնեության եւ այն հիմնական կրոնների ուսումնասիրությունը, որոնք դավանում են Միացյալ Թագավորության քաղաքացիները: Դասընթացները աշակերտների համար պարտադիր չեն:

## Բարձրագույն կրթություն

Մեծ Բրիտանիայի ԲՈՒՀ-ական համակարգի պատմությունը սկիզբ է առնում 12-րդ դարում՝ Օքսֆորդի եւ Քեմբրիջի համալսարանների հիմնադրմամբ: Դրանցից յուրաքանչյուրն այժմ բաղկացած է մի քանի քոլեջներից: Մինչեւ 19-րդ դարը դրանք թագավորության միակ համալսարաններն էին, որտեղ կանայք ուսանելու հնարավորություն չունեին: 15-16-րդ դարերում Շոտլանդիայում բացվեցին Սենթ-Էնդրյուսի (1411 թ.), Գլազգոյի (1451 թ.), Աբերդինի (1494 թ.) եւ Էդինբուրգի (1583 թ.) համալսարանները:

19-րդ դարում Բրիտանիայում սկսված արդյունաբերական հեղափոխության հետեւանքով որակյալ կառավարիչների եւ վարչական աշխատողների կարիք առաջացավ: Արդյունաբերական շատ քաղաքներում նոր համալսարաններ հայտնվեցին: 1836թ.-ին հիմնադրվեցին Լոնդոնի, 1851թ.-ին՝ Մանչեսթերի, 1893թ.-ին՝ Ուելսի, 1900թ.-ին՝ Բիրմինհեմի, 1903թ.-ին՝ Լիվերպուլի, 1909թ.-ին՝ Բրիսթոլի, 1926թ.-ին՝ Ռեդինգի համալսարանները:

Երկրորդ աշխարհամարտից հետո եւս մի շարք համալսարաններ բացվեցին՝ Նոթինհեմի (1948թ.), Քիլի (1949թ.), Էկզետերի (1955թ.), Սասեկսի, Քենթի, Արեւելաանգլիական եւ Էսեքսի (վերջիններս 1960-ականներին են հիմնադրվել):

Բարձրագույն կրթություն բացի համալսարաններից կարելի է ստանալ նաեւ բարձրագույն ուսումնական քոլեջներում: Ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրն իրավունք ունի գիտական աստիճաններ շնորհել եւ դիպլոմներ տալ կա՛մ իր անունից, կա՛մ ճանաչված ազգային այն կազմակերպության, որի անդամ է:

Համալսարանները շնորհում են իրենց կոչումները, օրինակ՝ Շեֆֆիլդի համալսարանի փիլիսոփայության դոկտոր, Լոնդոնի համալսարանի բժշկության բակալավր: Ուսուցումն իրականացվում է ինչպես ուսումնական ծրագրերով, այնպես էլ հետազոտությունների միջոցով, գիտական աստիճանների շնորհմամբ: Բակալավրի աստիճան ստանալուց հետո կրթությունը կարելի շարունակել մագիստրոսական կամ դոկտորական ծրագրերով: Խոշոր համալսարանները, օրինակ՝ Լոնդոնի, բաժանված են մասնագիտական կրթություն ապահովող քոլեջների:

Բարձրագույն ուսումնական քոլեջների կրթական ծրագիրը յուրացնելով՝ ուսանողները բարձրագույն ազգային դիպլոմ (HND) կամ բակալավրի կոչում են ստանում: Քոլեջում կարելի է մեկ կամ մի քանի մասնագիտական կուրսերի հաճախել: Քոլեջները հազվադեպ են մագիստրատուրայի բաժին ունենում, դոկտորանտուրա այստեղ առհասարակ չկա: Քոլեջներից շատերը հատուկ նախապատրաստական կուրսեր ունեն: Դրանք հաջող ավարտելու դեպքում շրջանավարտներն առանց քննության համալսարան ընդունվելու հնարավորություն են ստանում:

Բակալավրի կոչումը (Bachelor Degree) բարձրագույն կրթության առաջին աստիճանն է, որի իրավունք ստանալու համար անհրաժեշտ է խորացված ծրագրով միջնակարգ կրթության սերտիֆիկատ ունենալ՝ GCE/A Level կամ IB (International Baccalaureate):

Անգլիայում եւ Ուելսում բակալավրի կոչում ստանալու համար անհրաժեշտ է սովորել 3, Շոտլանդիայում՝ 4 տարի: Արտադրական պրակտիկայի անհրաժեշտության դեպքում ուսուցման ժամկետը երկարում է:

Ասպիրանտական կրթությունը սկսվում է բակալավրի կոչումը ստանալուց հետո՝ մագիստրոսի կամ դոկտորի աստիճան ստանալու հնարավորությամբ:

Մագիստրոսի կոչում (Master Degree) ստանալու հնարավորություն տալիս են երկու խումբ ծրագրեր. առաջինն ուղղորդված է հետազոտական գործունեությանը, երկրորդը՝ մասնագիտական որակավորման բարձրացմանը:

8-9-ամսյա դասախոսություններից եւ սեմինարներից հետո ուսանողները 3-4 ամիս դիպլոմային աշխատանք են պատրաստում, որի պաշտպանության եւ քննությունների արդյունքների հիման վրա մագիստրոսի կոչում են ստանում:

Տեսաբան մագիստրոսին անվանում են փիլիսոփայության մագիստրոս: Կոչումը ստանալու համար անհրաժեշտ է 1-2 տարի պրոֆեսորադասախոսական ավագ կազմի ղեկավարությամբ գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարել: Որպես կանոն՝ ուսանողներն այսքանով չեն ավարտում կրթությունը՝ շարունակելով ուսումնասիրութ-

յունը՝ դոկտորի կոչում ստանալու համար: Գիտահետազոտական այս կուրսի համար սովորաբար 2-3 տարի է անհրաժեշտ, աշխատանքի արդյունքներն ուսանողները հրապարակում են պաշտոնական հաշվետվություններում, գիտական կամ մասնագիտական ամսագրերում: Հրապարակումների հիման վրա գրվում են դիսերտացիաներ, որոնց պաշտպանությունն էլ փիլիսոփայության դոկտորի կոչում ստանալու հնարավորություն է տալիս:

# ՄԱՍ II
# ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

## «Չիվնինգ» կրթաթոշակ

«Չիվնինգ» կրթաթոշակային ծրագիրը մեկնարկել է 1983թ-ին: Այն հիմնադրվել է Միացյալ Թագավորության Արտաքին գործերի եւ Համագործակցության երկրների նախարարության կողմից (Անգլիական Քենթ քաղաքի Չիվնինգի շրջանում է գտնվում Միացյալ Թագավորության արտգործնախարարի պաշտոնական նստավայրը): Ծրագիրը ֆինանսավորում է Մեծ Բրիտանիայի կրթական հաստատություններում մեկ տարվա ուսումնառությունը: Այս ծրագրի միջոցով երիտասարդ մասնագետները հնարավորություն են ստանում զարգացնել իրենց մասնագիտական կրթությունը եւ մագիստրոսի կոչում ստանալ: «Չիվնինգ» կրթաթոշակը համակարգվում է Բրիտանական Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր տարի «Չիվնինգ» կրթաթոշակի արժանացած 3-5 երիտասարդ Միացյալ Թագավորության հեղինակավոր կրթական հաստատություններից որեւէ մեկում (ըստ դիմորդի ընտրության) մագիստրոսի կոչում ստանալու հնարավորություն է ձեռք բերում: «Չիվնինգ» կրթաթոշակը հովանավորում է Բրիտանիայում 12 ամիս ուսանելու ծախսը՝ ներառյալ ապրելու եւ միջազգային թռիչքի ծախսերը: Կրթաթոշակը հատկացվում է բաց մրցութային կարգով իրավագիտության, հանրային ոլորտի բարեփոխումների, մարդու իրավունքների, կլիմայական փոփոխությունների վերահսկման եւ կանխարգելման, հակամարտությունների կանխման եւ կարգավորման, տնտեսական կառավարման, քաղաքացիական հասարակության կայացման բնագավառներում:

## «Ջոն Սմիթ» կրթաթոշակ

«Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհուրդը» («John Smith Memorial Trust») հիմնադրվել է 1996թ-ին՝ բրիտանացի ամենասիրված քաղաքական գործիչներից մեկի՝ Ջոն Սմիթի հիշատակն անմահացնելու նպատակով: Լեյբորիստական կուսակցության այս առաջնորդը անկեղծ նվիրված էր ժողովրդավարության, սոցիալական արդարության եւ արդյունավետ կառավարման գաղափարների խթանմանը: Խորհրդի նպատակը Ջոն Սմիթի գաղափարները տարածելն է: «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհուրդը» բարեգործական ընկերություն է, որը Մեծ Բրիտանիայում վայելում է քաղաքական կուսակցությունների, ինչպես նաեւ ժողովրդի աջակցությունը:

Խորհուրդը 1996 թ.-ին հիմնել է Ջոն Սմիթի անվան կրթաթոշակը՝ միտված նախկին Խորհրդային Միության երկրներում թափանցիկ եւ բաց կառավարությունների կայացմանն ու հզորացմանը: Կրթաթոշակի նպատակն է բարձրացնել կրթության մակարդակը քաղաքագիտության ոլորտում՝ դրամաշնորհներ տրամադրելով քաղաքական, դատական, սահմանադրական եւ այլ բնագավառներին:

Ծրագիրը երիտասարդներին հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել Մեծ Բրիտանիայի ժողովրդավարական համակարգը եւ ինստիտուտները: Խրախուսում է նրանց միջեւ ցանցի ձեւավորումը:

# ՄԱՍ III

## *Հարցազրույց Սասեքսի համալսարանի Եվրոպական ինստիտուտի համատնօրեն, Եվրոպական տնտեսական ինտեգրման պրոֆեսոր ՋԻՄ ՌՈԼԼՈՅԻ հետ*

***- Բրիտանական կառավարության համար ո՞րն է «Չիվնինգ» կրթաթոշակի գլխավոր նպատակը, եւ ի՞նչ դեր է խաղում Սասեքսի համալսարանն այդ ծրագրում:***

- Մեծ Բրիտանիայի կառավարության գլխավոր նպատակը Կենտրոնական, Արեւելյան եւ Հարավային Եվրոպայի երկրների միջին պաշտոնյաների եւ կարիերայի հեռանկարներ ունեցող գործիչների, լրագրողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջեւ ցանց ստեղծելն է, որպեսզի նրանք պատկերացում կազմեն արեւմտաեվրոպական տնտեսական քաղաքականության մասին, ծանոթանան բրիտանական մոտեցմանը:

***- Առանձին մասնակիցների համար նախատեսված հատուկ ծրագրեր ունե՞ք:***

- Ծրագիրը երաշխավորում է մասնակիցների ազատությունը. նրանք ինքնուրույն պետք է գտնեն այն, ինչ իրենց անհրաժեշտ է: Մասնակիցներին մենք բազմազան հնարավորություններ ենք տալիս, եվրոպական քաղաքականության առանձնահատկությունների շուրջ թրեյնինգներ ենք կազմակերպում նրանց համար: Մենք նրանց ապահովում ենք անհրաժեշտ ժամանակով, բնակության պայմաններով, որպեսզի հնարավորություն ունենան ուսումնասիրել իրենց հետաքրքրող խնդիրները:

***- Ի՞նչ կասեք տարբեր երկրների՝ մասնավորապես հայաստանցի մասնակիցների մասին:***

- Այս տարի մենք մասնակիցներ ունեինք Հայաստանից, Թուրքիայից, Բուլղարիայից, Չեխիայից, Լեհաստանից, Լատվիայից, Էստոնիայից եւ Սլովենիայից: Նախորդ տարի գրեթե նույն կազմն էր, պարզապես Բուլղարիայից երկու մասնակից կար, այսինքն՝ նույնաթիվ մարդիկ էին ընդգրկված:

***- Գո՞հ եք արդյոք ծրագրի արդյունքներից:***

- Ես հաճույքով եմ իրականացնում ծրագիրը, մասնակիցներն իրենք են խթանում մեր աշխատանքը: Խնդիրը ոչ թե իմ, այլ մասնակիցների գոհ մնալն է: Նախորդ տարի, կարծում եմ, նրանք գոհ էին: Այս տարվա արդյունքների մասին դեռ արձագանքներ չկան:

***- Կապեր պահպանու՞մ եք մասնակիցների հետ:***

- Երկու կարեւոր հանգամանք կա. առաջինն այն է, որ մասնակիցներն իրենք կապ պահպանեն միմյանց հետ՝ յուրատեսակ շարունակական ցանց ստեղծելով: Իհարկե, մենք նույնպես չենք խզում մեր կապերը նախկին տարիների մասնակիցների հետ, նույն կերպ պատրաստվում ենք վարվել այս տարի: Եւ հույս ունենք, որ հաջորդ տարի կկարողանանք նախորդ բոլոր ծրագրերին մասնակցած մեր կրթաթոշակակիրների խորհրդաժողով հրավիրել:

***- Իսկ Սասեքսի համալսարանը պատրաստվո՞ւմ է մասնակցել այդ նախագծին:***

- Իհարկե, եւ կարծում եմ՝ դա ամբողջովին մեր ձեռքին է: Արտգործնախարարությունը դեռ պետք է հաստատի ծրագրի հաջորդ փուլը: Սակայն պետք է նշեմ, որ մենք բավականություն ենք ստացել ծրագրից, այն բավականին ուսուցողական էր: Կարելի է ասել՝ համալսարանները երկկողմանի ուսուցման հաստատություններ են: Ինքներս սովորում ենք մեր մասնակիցներից. նրանք տեղեկացված են, շատ խելացի, նրանք իրադարձությունների էպիկենտրոնում են, որոշ հարցերում ավելի կենսունակ են, քան մենք:

***- Ի՞նչ եք կարծում, նման ծրագրերը վտանգ չե՞ն ներկայացնում, թե մասնակիցները կարող են գալ եւ այլեւս չվերադառնալ իրենց երկիր Ձեր բարեհամբույր վերաբերմունքից հետո, օրինակ:***

- Այն մասնակիցների համար, ովքեր Եվրամիությանը վերջերս անդամակցած երկրներից են, դա խնդիր չէ: Նաեւ ասեմ, որ որպես մասնակից ընտրվում են մարդիկ, ովքեր կայուն դիրք ունեն իրենց երկրներում: Նրանք չեն լքի իրենց հայրենիքը միայն այն պատճառով, որ Սասեքսն առավել գեղեցիկ վայր է: Իրենց երկրներում նրանք ակտիվ աշխատում են Եվրամիության հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, Նոր հարեւանության քաղաքականության շրջանակում բարեհաջող բանակցում են ԵՄ-ի հետ, շատ հաջողակ են իրենց երկրներում: Չեմ կարծում, որ այս համատեքստում որեւէ վտանգ կա, ծրագիրը բավականին հաջող է եւ փոխշահավետ:

## ՄԱՍ IV

### *Հարցազրույց Սասեքսի համալսարանի պրոֆեսոր ԴԵՎԻԴ ԴԱՅՔԵՐԻ հետ*

***- Ո՞րն է «Չիվնինգ» կրթաթոշակի հիմնական նպատակը Մեծ Բրիտանիայի կառավարության համար, եւ ինչո՞ւ է Սասեքսի համալսարանը մասնակցում դրան:***

- Մեծ Բրիտանիայի կառավարության համար «Չիվնինգ» ծրագրի հիմնական նպատակը Եվրամիության նոր անդամների ու Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակում ընդգրկված երկրների գործիչների, ժողովուրդների, հասարակությունների միջեւ ինչպես անձնական, այնպես էլ ինստիտուցիոնալ կապեր հաստատելն է:

***- Ի՞նչ կասեք ծրագրին Սասեքսի համալսարանի մասնակցության մասին:***

- Ծրագրից մեր որոշակի շահերն ունենք. մենք բարձր մակարդակի փորձաքննություն ենք իրականացնում Եվրամիության եւ ողջ Եվրոպայի տնտեսական հաստատությունների, տնտեսական քաղաքականության ոլորտներում, փորձաքննություն ենք իրականացնում նաեւ տնտեսական առանձնահատուկ խնդիրների շուրջ, ինչպիսիք են, օրինակ, փարանցիկ փոխադրումները, այդ թվում՝ Հայաստանի փարածքով:

- ***Որքա՞ն ժամանակ է, ինչ մասնակցում եք այս ծրագրին, եւ ի՞նչ եք մտածում դրա ապագայի մասին:***

- Երկրորդ տարին է, ինչ Սասեքսի համալսարանում գործում է Եվրոպայի տնտեսական քաղաքականության ծրագիրը «Չիվնինգ» կրթաթոշակի շրջանակում: Նախորդ տարի, իմ կարծիքով, երիտասարդների շատ լավ խմբի հետ սկսեցինք ծրագիրը: Նշեմ, որ բոլոր կրթաթոշակակիրներն ընտրվել են ներգրավված երկրներում բրիտանական դեսպանատների կողմից: Նախորդ տարի մի շարք գործնական խնդիրներ ունեինք մասնակիցների միջեւ մրցակցային դաշտի ապահովման առումով, սակայն, կարծում եմ, ծրագիրն, ընդհանուր առմամբ, ստացվեց, եւ մեր կրթաթոշակակիրները գոհ հեռացան: Այս տարի հավասար հնարավորություններով երիտասարդների շատ լավ խումբ ունենք՝ ընտրված երկրների լայն շրջանակից՝ Էստոնիայից մինչեւ Հայաստան: Հույս ունեմ, որ նրանք նույնպես, ինչպես եւ նախորդ խումբը, գոհ կմնան ծրագրից: Հուսամ՝ ծրագիրը շարունակություն կունենա նաեւ առաջիկա երկու տարիներին:

***- Կապ պահպանո՞ւմ եք ձեր կրթաթոշակակիրների հետ:***

- Այո՛, պահպանում ենք եւ ուզում ենք հաջորդ տարի մեծ հանդիպում կազմակերպել՝ առաջին երկու տարիների եւ այս տարվա ծրագրերի կրթաթոշակակիրների մասնակցությամբ:

***- Որոշակի հարցեր, խնդիրներ կա՞ն, որ կցանկանայիք ներգրավել հաջորդ փարվա ծրագրում:***

- Մենք աշխատում ենք ճկուն, փոփոխվող օրակարգով. այն հարցերը, որոնք կարեւորել ենք այս փարվա ծրագրում, կարող են այլեւս օրակարգային չլինել հաջորդ փարի: Այս փարի հայտնի պատճառներով կենտրոնացել ենք Եվրամիության բյուջեի վրա: Առաջիկա փարիներին, կարծում եմ, կկարեւորվի հարեւան երկրների հետ Եվրամիության հարաբերությունների վերանայումը, իսկ այդ երկրների անդամակցությունը Միությանը ապագայի հարց է: Ուսփի մեծ եւ հետաքրքիր աշխատանք է սպասվում:

## ՄԱՍ V

### *Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» հոգաբարձու ԼՈՐԴ ՄԱԿՔԼԱՍՔԻԻ հետ*

***- Կպատմե՞ք «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» մասին. ի՞նչ նպատակներ, առաքելություն եւ ծրագրեր ունի:***

- Առաջին հերթին, կարծում եմ, պետք է հիշել՝ ինչպես է այն ստեղծվել: Ջոն Սմիթն իմ ընկերներից էր: Նա Լեյբորիստական կուսակցության առաջնորդն էր: 1994 թվականին նա հանկարծամահ եղավ: Ազնիվ, ճշմարտախոս եւ վստահելի մարդ էր: Նա չկարողացավ վարչապետ դառնալ. ինչպես գիտեք, Ջոն Սմիթի մահվանից հետո կուսակցության առաջնորդի դերը ստանձնեց Թոնի Բլերը, որն էլ 1997 թվականին գլխավորեց նախարարների կաբինետը: Կարծում եմ՝ Ջոն Սմիթի կառավարման դեպքում համաշխարհային իրադրությունն այլ կլիներ: Սմիթին այսօր հիշում են ազնվության, սոցիալական արդարության ու ժողովրդավարության նկատմամբ հավատի համար, ինչի միջոցով էլ, նրա համոզմամբ, պետք է սոցիալական արդարություն ձեռք բերվեր: Նրա մահվանից հետո մարդիկ գումար հանգանակեցին նրա ընտանիքին, Լեյբորիստական կուսակցությանը, արհմիություններին՝ խնդրելով հուշարձան կառուցել: Մենք խորհրդակցեցինք նրա այրու հետ եւ որոշեցինք արձան կառուցելու փոխարեն կենդանի «հուշարձան» ստեղծել, որը կյանքի կկոչի նրա գաղափարները՝ մասնավորապես սոցիալական արդարությունն ու որպես դրան հասնելու միջոց՝ ժողովրդավարությունը, որ արդարության հիմքն է: Ուզում եմ նշել նաեւ, որ Ջոնին ու նրա այրուն՝ բարոնուհի Սմիթին, շատ հետաքրքրում էր Խորհրդային Միությունը: Նրանք այնտեղ եղել են շուրջ 50-60 անգամ:

Երբ արդեն բավականաչափ միջոցներ ունեինք (մեզ մեծապես օգնել է Միջազգային զարգացման գերատեսչությունը), կենտրոնացանք հատկապես նորանկախ պետություններին օգնություն ցուցաբերելու խնդրի վրա: Դրանց թվում էին նաեւ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան, Ռուսաստանը, Մոլդովան եւ Ղրղզստանը: Վերջինն իհարկե դուրս է տարածաշրջանից, Կենտրոնական Ասիայում է, բայց նույնպես շատ հետաքրքիր երկիր է, որտեղ եւս մի շարք հաճելի գործընկերներ ունենք:

***- Արդյո՞ք կարճաժամկետ որոշակի առաքելություններ ունեք այժմ:***

- Պետք է ասեմ, որ մեր առաջնություններն ու նպատակները ժամանակի ընթացքում փոխվում են: Սկզբում բավականին դյուրահավատ էինք, կարծում էինք, թե մեր գեղեցիկ օրինակը պարզապես պետք է ներկայացնել աշխարհին, կարծում էինք՝ կհավաքենք մարդկանց եւ կպատմենք

բրիտանական ժողովրդավարության մասին եւ այլն: Սակայն շուտով հասկացանք, որ հայերը, ուկրաինացիները եւ մյուսները չափազանց խեղճ են եւ քաջատեղյակ բրիտանական համակարգին, ավելին՝ սեփական պատկերացումներն ունեն այդ համակարգի, ժողովրդավարության ապագայի մասին, նաեւ այն մասին, թե որքան ժամանակ կպահանջվի՝ որեւէ իրավիճակից մյուսին անցնելու համար: Այժմ կրթաթոշակակիրների փոխանակման ծրագրեր ենք իրականացնում, հրավիրում ենք այնպիսի անհատականությունների, որոնք, հույս ունենք, տարբեր ոլորտների առաջնորդներ պետք է դառնան: Փոխանակում ենք գաղափարներ, բացահայտում ենք մեր համակարգի թուլություններն ու թերությունները, որոնք, եթե տասը տարի առաջ հայտնաբերված լինեին, արդեն շտկված կլինեին: Այսպիսով՝ սա երկկողմանի ծրագիր է, գաղափարների եւ փորձի փոխանակում: Պետք է նշեմ, որ նորանկախ պետությունները հանդիպում են նույն դժվարություններին, որոնց մենք առնչվել ենք նախկինում: Հնարավոր է՝ դրանք հաղթահարելու մեր փորձը որոշակի հետաքրքրություն ներկայացնի մյուսների համար, սակայն մենք չենք պարտադրում մեր ոճը, եթե մենք որեւէ կերպ ենք վարվել մեր թագավորությունում, դա չի նշանակում, որ նույնը պետք է անեն Հայաստանում կամ Ուկրաինայում, ո՛չ: Դուք պետք է գտնեք ձեր ուղին: Եթե մեր փորձը որեւէ կերպ օգտակար լինի, հրաշալի է, եթե մենք կարողանանք սովորել մեր գործընկերներից, նույնպես հրաշալի է:

***- Այսինքն՝ համագործակցությունը շարունակվո՞ւմ է:***

- Իհա՛րկե: Կարծում եմ՝ մեր իրական ձեռքբերումներից մեկն այն է, որ ի տարբերություն համատեղ ուսումնական շատ ծրագրերի՝ մենք խմբեր ենք հավաքում կարճ՝ 6-շաբաթյա ժամկետով (այժմ՝ 5): Այդ ընթացքում նրանք հասցնում են մտերմանալ, սակայն մենք միշտ կապ ենք պահպանում նրանց հետ էլեկտրոնային դարաշրջանի հրաշքների՝ էլեկտրոնային փոստի, ինտերնետային էջերի շնորհիվ: 1998-2000 թվականներից նրանց շուրջ 90 տոկոսի հետ մշտապես հեռախոսազրույցներ, հանդիպումներ ենք ունեցել: Ամեն տարի, երբեմն նույնիսկ տարին երկու անգամ այցելում ենք նրանց երկրներ: Ծրագրի մասին խոսելիս պետք է պատկերացնել մարդկանց մի խումբ, որոնք մշտապես հանդիպում ու մտքեր են փոխանակում: Միմյանց հետ քննարկվող հարցերի շուրջ նրանք շարունակում են խոսել իրենց երկրներում:

***- Կազմակերպության նպատակը Ջոն Սմիթի, ինչպես նաեւ Ձեր գաղափարները կյանքի կոչելն է: Բավարարվա՞ծ եք աշխատանքի արդյունքներով:***

- Չեմ կարող ասել, թե բավարարված ենք արդյունքներով, բայց նաեւ չի կարելի ասել, թե հիասթափված ենք: Սակայն տեսնում ենք ու հավա-

տում, որ ժողովրդավարությունն աշխատանք է առաջընթացի պայմաններում: Այլ խոսքով՝ պատմությունը վերջ չունի, չկա մի կետ, որին հասնելով՝ կարող ես հավաստել, թե ամեն ինչ կատարյալ է. անկատարություններ միշտ էլ կան: Ամեն օր հայտնաբերում ենք մեր համակարգի նորանոր թույլ կամ ուժեղ կողմեր: Քննադատում ենք, սակայն խոսքն առողջ քննադատության մասին է: Անընդհատ փորձում ենք կատարելագործվել: Մենք օգնության կարիք ունենք, եւ մեր գործընկերները մեր խնդիրները հաղթահարելու նոր հեռանկարներ են բացում: Մենք սովորում ենք:

***- Կարո՞ղ եք հայ կրթաթոշակակիրների որեւէ յուրահատկություն նշել:***

- Առաջին հերթին՝ մեծ հարգանք եմ տածում մեր հայ գործընկերների նկատմամբ: Նրանց աշխատանքը մեզ հետ միանշանակ հաջող էր: Դժվարանում են ասել, թե հատկապես որն է պատճառը: Բայց պետք է նշեմ, որ նրանք չափազանց լավ անգլերեն գիտեն, բաց են, վառ անհատականություններ են, միաժամանակ շատ կազմակերպված մարդիկ են: Սակայն ուզում եմ՝ նկատի ունենաք, որ մենք Հայաստան ենք այցելում կամ հայ գործընկերների ենք հրավիրում ոչ թե ձեզ մոտ ժողովրդավարության որոշակի մոդել հաստատելու նպատակով, պարզապես ցանկանում ենք, որ նրանք տեսնեն, թե ինչի ենք հասել: Կարծում եմ՝ այդ առումով մեր աշխատանքը կարելի է հաջողված համարել: Հավատում եմ, որ հայ գործընկերներից ոմանք կարողացել են այստեղի ձեռքբերումներն իրենց երկրի իրադրությանը հարմարեցնելու մեխանիզմներ մշակել: Գոհ ենք, երբ տեսնում ենք, որ հայ երիտասարդները ծրագրի սկզբից ի վեր կարողացել են սովորել մեզանից, ինչպես եւ ուկրաինացիներից, ռուսներից: Նրանց ստացած նոր գիտելիքները Հայաստանին կօգնեն ազատվել շատ խնդիրներից, իսկ դրանք բավականին շատ են, օրինակ՝ դատական համակարգի խնդիրները, կոռուպցիայի խնդիրը: Կոռուպցիա կա նաեւ Մեծ Բրիտանիայում, այդ երեւույթը համապարած է, սակայն պայմանավորված երկրի առանձնահատկություններով՝ այն տարբեր է: Հուսամ՝ կներեք ինձ, եթե ասեմ, որ Հայաստանն այդ առումով բավականին վատ վիճակում է: Ծանոթանալով «Transparency International» իրավապաշտպան կազմակերպության զեկույցներին՝ պարզեցի, որ Հայաստանը բավականին հեռու է Ֆինլանդիայի կամ Շվեդիայի մակարդակին հասնելուց: Երբ գալիս են մեր հայ հայ գործընկերները եւ ներկայացնում ձեր երկրի խնդիրները, տեսնում ենք, որ դրանք նույնն են, ինչ մեզ մոտ ոչ վաղ անցյալում: Ուստի կարծում եմ՝ նրանք կարող են սովորել մեզանից: Մենք չենք պարտադրում մեր լուծումները: Սակայն, կարծում եմ, մեզ հաջողվել է առաջընթացի հասնել ժողովրդավարության, սոցիալական արդարության, թափանցիկության, արդարադատության անկախության, մամուլի ազատության եւ այլ հարցերում: Եթե, օրինակ, նույն ձեռքբերումներն

ունենանք Հայաստանում եւ Ղրղզստանում, դա չի նշանակի, որ երկու երկրում էլ այդ մոդելները կգործեն նույն կերպ: Մարդիկ սոցիալական արդարության իրենց ուղին են կերտում՝ ելնելով իրենց սովորույթներից:

- ***Հայաստանն այժմ Եվրոպական նոր հարեւանության քաղաքականության անդամ է, արդյո՞ք դա ձեզ հետ համագործակցության իմաստով որեւէ նշանակություն ունի:***

- Չեմ կարծում, որ մեր կրթաթոշակը դրա հետ խորը կապ ունի: Երբ ժամանում են մեր կրթաթոշակակիրները, նրանց միշտ հնարավորություն ենք տալիս խոսել Եվրամիության եւ իրենց երկրների արտաքին կապերի մասին: Ի վերջո, Հայաստանը սահմանակից է Թուրքիային, իսկ վերջինս հավակնում է անդամակցել Եվրամիությանը: Անդամակցության հարցում շահագրգիռ է նաեւ Ուկրաինան, սակայն մեր խնդիրը եվրոպական օրակարգն իրականացնելը չէ: Մյուս կողմից, մենք հետաքրքրված ենք Եվրոպայի հարցերով: Ուստի մեր այս տարվա ծրագրերում ձգտում ենք զարգացնել եվրոպական հեռանկարը:

***- Ի՞նչ կմաղթեք այն երիտասարդներին, ովքեր հնարավոր է՝ առնչություն ունենան «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» հետ:***

- Անկեղծորեն պետք է նշեմ, որ մենք շատ հպարտ ենք մեր հայ գործընկերներով, շատ ականավոր մարդիկ կան ձեր երկրում: Վերջերս կազմել ենք մի տեղեկատվական թերթիկ՝ մեր կրթաթոշակակիրների կենսագրությամբ: Իսկապես մեծ մարդիկ են, նրանց մաղթում ենք Հայաստանում ստեղծել այնպիսի հասարակություն, որին արժանի են հայերը: Այնքան գրավիչ հասարակություն, որ կարողանաք ներգրավել Սփյուռքը: Եթե կարողանաք անել դա, մեծ հաջողություն կլինի, եւ եթե կարողանանք աջակցել այդ հարցում, երջանիկ կլինենք:

# ՄԱՍ VI

## *Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» տնօրէն ԷՄՄԱ ՄԱՔԼԵՆՆԱՆԻ հետ*

***- Կպատմե՞ք «Ջոն Սմիթի» կրթաթոշակ հիմնական փուլերի եւ ընդհանուր ձեւաչափի մասին:***

- «Ջոն Սմիթի» կրթաթոշակը Միացյալ Թագավորությունում իրականացվող 5-շաբաթյա ծրագիր է: Այն ոչ թե համատեղ ուսուցման ծրագիր է, այլ երիտասարդական ցանց նախկին Խորհրդային Միության մի շարք երկրների միջեւ: Ծրագիրը ներառում է անձնական շփումներ. երիտասարդները կապ են պահպանում միմյանց հետ, մտերմանում, սովորում միմյանց»»ից, մեզանից, մենք սովորում ենք նրանցից: Միացյալ Թագավորությունում իրականացվող 5-շաբաթյա ծրագրը սկսվում է Շոտլանդիայից, որտեղ երիտասարդները ծանոթանում են Շոտլանդիայի խորհրդարանի զարգացմանը, գործունեությանը, շոտլանդացիների կյանքին, քանի որ Ջոն Սմիթն ինքը շոտլանդացի էր: Քննարկվում են հարցեր, որ վերաբերում են բոլոր երկրներին, օրինակ՝ մամուլի բարեփոխումները, ժողովրդավարական զարգացումը քաղաքացիական հասարակությունում: Այնուհետեւ յուրաքանչյուր մասնակից ներգրավվում է երկշաբաթյա անհատական ծրագրում: Օրինակ՝ հայաստանցի մեր գործընկերներից մեկը՝ Դավիթ Ավետիսյանը (նրանով շատ ենք հպարտանում), հրաշալի երիտասարդ է, մեծ ներդրում է ունեցել Հայաստանում ֆինանսական ծառայությունների, ֆինանսական հատվածի բարեփոխման հարցում: Մեր ծրագրին մասնակցելիս նա շատ ժամանակ է անցկացրել Անգլիայի բանկերում, զրույցներ է ունեցել Թագավորության գանձարանի փորձագետների հետ, հանդիպել է Գորդոն Բրաունին եւ նրա խորհրդականին, քննարկումներ է ունեցել հարկերի եւ ներդրումների ոլորտի փորձագետների հետ, այցելել է Ֆինանսական ծառայությունների գործակալություն: Ինչպես ինձ խոստովանեց, այդ 10 օրը բավականին հագեցված էին տարբեր ծրագրերի մասին հարուստ տեղեկատվությամբ: Նա դա կարող է ներմուծել Հայաստանում, իհարկե ոչ այնպես, ինչպես դրանք գործում են Մեծ Բրիտանիայում, սակայն ծրագիրը նրան գաղափարներ եւ նոր մտքեր տվեց:

Այնուհետեւ Լոնդոնում մեկշաբաթյա սեմինարների ընթացքում մասնակիցներն այցելում են բրիտանական խորհրդարան, հանդիպում հասարակական գործիչների: Ժամանակ է հատկացվում՝ Միացյալ Թագավորությունում շրջելու համար: Ծրագրի վերջին օրն անցնում է Դաունինգ Սթրիթում: Արդեն երկար տարիներ մեր գործընկերները ծրագրի ավարտին հանդիպում են վարչապետ Թոնի Բլերին, Գորդոն Բրաունին:

Բավականին արդյունավետ 5 շաբաթներ են, սակայն այդքանով չի սահմանափակվում, քանի որ մենք շարունակում ենք հայրենիք վերադարձած մեր գործընկերների հետ կապերը: Այժմ համագործակցում ենք նրանց 96 տոկոսի հետ:

***- Արդյո՞ք բավարարված եք ծրագրի արդյունքներով: Հետաքրքրվո՞ւմ եք, թե նրանք ինչ գործունեություն են ծավալում հայրենիքում:***

- Շատ գոհ ենք արդյունքներից եւ շատ հպարտ այդ երիտասարդներով: Ոչ միայն Հայաստանում, այլեւ մի շարք այլ երկրներում շատ ակտիվ գործընկերներ ունենք: Շատ հպարտ ենք նաեւ, որ մեր գործընկերները, այցելելով Մեծ Բրիտանիա, վերադառնում են իրենց երկրներ եւ չեն մնում Լոնդոնում՝ կարիերա կառուցելու նպատակով: Դրանք մարդիկ են, ովքեր կոչված են կերտելու իրենց հայրենիքի ապագան, ինչն էլ անում են:

***- Ծրագրի շրջանակներում որեւէ երկրի կամ կրթաթոշակակիրների նկատմամբ անհատական մոտեցում ունե՞ք:***

- Բոլոր մասնակիցներին առաջարկում ենք նույն ծրագիրը: Սակայն նրանք մի շարք տարբեր թեմաներով են աշխատում: Օրինակ՝ մի մասը զբաղվում է մամուլի ազատության խնդիրներով, կարեւոր հարց է նաեւ ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության զարգացման խնդիրը, մեկ այլ հարց է խորհրդարանի կազմավորումը, դրա աշխատանքը. հարցեր, որ զբաղեցնում են բոլոր մասնակիցներին: Այս ամենը քննարկվում է ընդհանուր խմբերում:

Եվ մի հետաքրքիր երեւույթ ենք նկատել. մեր թոշակակիրները շատ հարցերում ավելի շատ սովորում են միմյանցից, քան մեզանից: Նրանք գաղափարներ են փոխանակում, եւ հետաքրքիր է, որ հետագայում նաեւ կապ են պահպանում միմյանց հետ: Այսինքն՝ դա շարունակվող ծրագիր է:

# ՄԱՍ VII

## *Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» փոխտնօրեն ՔԵՆԵԹ ՄՈՒՆՐՈՅԻ հետ*

***-Ի՞նչ նպատակ է հետապնդում «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհուրդը», եւ ի՞նչ սկզբունքով են ընտրվում այն երկրները, որոնց հետ համագործակցում եք:***

- Հիմնադրամի նպատակը երիտասարդ սերնդի առաջնորդների համախմբումն է, նրանց համար ինտենսիվ դասընթացների կազմակերպումը, ժողովրդավարության, ժողովրդավարական ինստիտուտների գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության եւ այլ թեմաներով թրեյնինգների կազմակերպումը: Չնայած ծրագրի 5-շաբաթյա տեւողությանը՝ այն ոչ թե կարճաժամկետ կրթաթոշակ է, այլ կարեւոր փորձառություն, ինչի արդյունքում մասնակիցների առջեւ նոր հեռանկարներ են բացվում, նրանք ձեռք են բերում նոր ընկերներ, սպանձնում են արդյունավետ կառավարման պարտավորություն: Երկրները, որոնց հետ համագործակցում ենք, հետխորհրդային հանրապետություններ են, քանի որ Ջոն Սմիթը շատ հետաքրքրված էր այդ տարածաշրջանով: Ժամանակի ընթացքում, ինչպես նաեւ միջոցների առկայության դեպքում մենք նպատակ ունենք ընդլայնվելու:

***- Ի՞նչ կարծիք ունեք ծրագրի հայ մասնակիցների մասին:***

- Նրանք մշտապես աչքի են ընկել իրենց շատ բարձր մակարդակով՝ ինչպես բազային կրթությամբ, այնպես էլ լեզվի իմացությամբ: Նրանք կենսուրախ են եւ մեծ ներուժ ունեն:

- ***Իրականացնու՞մ եք հետծրագրային մոնիթորինգ: Այսինքն՝ ունե՞ք տվյալներ այն մասին, թե ծրագրից հետո մասնակիցների ո՞ր մասն է վերադառնում հայրենիք՝ իրենց փորձն ու գիտելիքները ներդնելու այնտեղ:***

- Այո՛, յուրաքանչյուր երկրից մասնակիցները ժամանակ առ ժամանակ հավաքվում են, իսկ երեք տարի առաջ տեղի ունեցավ բոլոր մասնակիցների հանդիպում, որի ընթացքում շատ բացահայտումներ եղան՝ կապված մասնակիցների առաջխաղացման եւ պրոֆեսիոնալ նվաճումների հետ: Արդյունքները շատ խոստումնալից էին: Մեր ծրագրերի մասնակիցները հիմնականում զբաղված են քաղաքականությամբ, ներգրավված են իրավական ոլորտում, իրավապաշտպան կազմակերպություններում: Նրանք կիրառում են մեր ծրագրի ընթացքում ձեռք բերված փորձը:

# ՄԱՍ VIII
# ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիայի ավանդը համաշխարհային գիտության գանձարանում հսկայական է. խոսքն, առաջին հերթին, բնական եւ տեխնիկական գիտությունների զարգացման մասին է: Աշխարհահռչակ ֆիզիկոսների, քիմիկոսների եւ կենսաբանների թվում են Ի. Նյուտոնը, Ռ. Բոյլը, Ռ. Գուկը, Ջ. Ջոուլը, Մ. Ֆարադեյը, Ջ. Մաքսվելլը, Չ. Դարվինը, Է. Ռեզերֆորդը: Համաշխարհային ճանաչում են ստացել բրիտանացի փիլիսոփաներ, սոցիոլոգներ, պատմաբաններ, տնտեսագետներ Ռ. Բեկոնի, Թ. Մորի, Ֆր. Բեկոնի, Թ. Հոբսի, Ի. Բենթամի, Ու. Փետտի, Ա. Սմիթի, Ջ. Միլլի, Ռ. Օուենի, Թ. Ռ. Մալթուսի, Ա. Մարշալլի, Ջ. Մ. Քեյնսի, Բ. Ռասսելի աշխատությունները: Ավելի քան 70 բրիտանացի գիտնական Նոբելյան մրցանակի դափնեկիր է: Գիտության համար համաշխարհային ծախսերի 4,5 %-ը եւ գիտական բոլոր հրապարակումների 8 %-ը բաժին են ընկնում Մեծ Բրիտանիային:

Միացյալ Թագավորությունում գիտության կարեւորության մասին կարելի է դատել կրթական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների օրինակով: Տեխնիկական դպրոցներն ու քոլեջները, ինչպես եւ մյուս հաստատություններում որակավորման բարձրացման ծրագրերը ձգտում են ընդլայնել արհեստավարժ գիտական կադրերի թիվը: Դպրոցները սերտ համագործակցում են արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչների հետ: Գիտական հետազոտությունների Մանչեսթերի խորհուրդը միավորում է համալսարանի գիտնականներին եւ առեւտրային պալատի ներկայացուցիչներին: Շեֆֆիլդի համալսարանում արդյունաբերական նշանակություն ունեցող հետազոտություններ են իրականացվում ապակու տեխնոլոգիայի բնագավառում, Չեշիրում՝ ռադիոաստղադիտակների օգտագործման ոլորտում:

Մեծ Բրիտանիայի պետական գիտահետազոտական առաջատար ինստիտուտը Հետազոտությունների եւ մշակումների ազգային կորպորացիան է, որը հիմնադրվել է 1949թ.՝ կառավարական եւ պետական այլ ինստիտուտներում արված հայտնագործությունների մասին տեղեկատվություն հավաքելու նպատակով: Ազգային կորպորացիան ֆինանսավորել է համակարգիչների, միկրոէլեկտրոնիկայի եւ այլ մշակումների հետ կապված նախագծեր: 1965թ. հիմնված Գիտահետազոտական խորհուրդը հետազոտողներին աջակցում է այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են միջուկային ֆիզիկան, աստղագիտությունը, աստղաֆիզիկան (համալսարաններում, ինչպես եւ սեփական գիտական կենտրոններում, այդ թվում՝ Գրինվիչի թագավորական աստղադիտարանում):

Միջուկային էներգիայի բնագավառում հետազոտությունների մեծ մասի համար պատասխանատու է Քոլդեր-Հոլլի ատոմային էներգիայի կառավարման վարչությունը: Աշխարհում առաջին արդյունաբերական ատոմակայանի աշխատանքը մեկնարկել է 1956թ. բրիտանական Վարչության վերահսկողությամբ: Պետական կազմակերպություններն ակտիվ մասնակցում են բժշկության, առողջապահության, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի եւ բնապահպանության ոլորտի ուսումնասիրություններին: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաեւ քաղցկեղի եւ կարեւոր այլ խնդիրների ուսումնասիրությանը:

Մեծ Բրիտանիայում ավելի քան 200 գիտական հաստատություններ եւ կազմակերպություններ շուրջ 400 անուն պարբերական են հրատարակում: Նշված կազմակերպությունների թվում են գիտության բոլոր ճյուղերի մասնագետների եւ հետազոտողների ասոցիացիաները:

1660թ. հիմնադրված Լոնդոնի թագավորական ընկերությունը գիտական բոլոր խոշոր ընկերություններից ամենաավագն է: Թագավորական ընկերությունը հրատարակում է «Գրառումներ» եւ «Փիլիսոփայական աշխատություններ» պարբերականները, գիտական ականավոր ձեռքբերումների համար յուրաքանչյուր տարի շնորհում է Քոփլի շքանշանը:

Արհեստների, արտադրողների եւ առեւտրի խրախուսման թագավորական ընկերությունը, որ ստեղծվել է 1754թ. եւ հետաքրքրված է գիտական ձեռքբերումների մասին տեղեկատվության տարածմամբ, հրատարակում է «Journal» ամսագիրը:

Թագավորական ասոցիացիան հովանավորում է հետազոտական մի շարք լաբորատորիաներ, զբաղվում է կենցաղում գիտական ձեռքբերումների կիրառմամբ:

Իր հերթին, Գիտական դոկտրինների տարածմամբ զբաղվող բրիտանական ասոցիացիան կապ է պահպանում 150 գիտական կազմակերպությունների հետ, միջազգային ճանաչում ունեցող ամենամյա հավաքներ է կազմակերպում:

Մյուս ընկերությունների շարքում են Բրիտանական ակադեմիան եւ Գրականության թագավորական ընկերությունը, որոնք հիմնականում գործում են հումանիտար ոլորտում, Անգլերեն լեզվի ասոցիացիան հանդես է գալիս ի պաշտպանություն գրավոր եւ բանավոր խոսքի բարձր չափանիշների պահպանման:

Ինչ վերաբերում է գրադարաններին, ապա առավել հայտնի են Բրիտանական թանգարանի գրադարանը Լոնդոնում (ավելի քան 10 մլն գիրք), Քեմբրիջի համալսարանի գրադարանը (ավելի քան 3,5 մլն գիրք), Բոդլենի գրադարանն Օքսֆորդում (ավելի քան 4,5 մլն), Շոտլանդական ազգային գրադարանն Էդինբուրգում (4 մլն), Ուելսի ազգային գրադարանն Աբերիստուիտ քաղաքում (ավելի քան 2մլն): Ըստ օրենքի՝ Միաց-

յալ Թագավորությունում լույս տեսած բոլոր գրքերի կրկնօրինակներն ուղարկվում են Բրիտանական թանգարան՝ հեղինակային իրավունքը պարզելու նպատակով: Խոշորագույն գրադարանները գտնվում են Լոնդոնի, Էդինբուրգի, Գլազգոյի, Սենթ-Էնդրյուսի, Ջոն Ռեյլենդի, Թագավորական համալսարանների, Վիկտորյայի եւ Ալբերտի, Բնագիտության թանգարանների մոտ:

Հատուկ հրապարակումների կարեւորագույն ժողովածուները գտնվում են Վկայագրերի բյուրոյում, Ինդիա-Հաուսում, Պետական արխիվում, Թագավորական աշխարհագրական ընկերությունում, Թագավորական երաժշտական քոլեջում, Երաժշտության թագավորական ակադեմիայում, Արվեստների հարցով խորհրդում, Արխիվների ազգային պահոցում, Թագավորական բուսաբանական այգում, Ժամանակակից պատմության ինստիտուտում, Կույրերի համար ազգային գրադարանում:

Մեծ Բրիտանիայում շուրջ 500 գրադարանային խորհուրդ կա, որոնք 40 000 բաժիններ ունեն եւ տարեկան 400 մլն գիրք են հրապարակում:

# ԳԼՈՒԽ VI

## ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ



# ՄԱՍ I
# ՄՇԱԿՈՒՅԹ

## Գրականություն

Անգլիական էպոսը, գրականությունն ու դրաման զարգացել են միջնադարում՝ ժողովրդական պոետիկ արվեստի հիման վրա: Առավել տարածված ժանրը պատմական եւ լիրիկական բովանդակությամբ բալլադներն են, որոնք կատարվում են ջնարի կամ երաժշտական որեւէ այլ գործիքի նվագակցությամբ: Այսօր ողջ աշխարհում հայտնի է աղքատների պաշտպան, անարդարության դեմ մարտիկ, ազատ որսորդ Ռոբին Հուդի եւ նրա «կանաչ եղբայրների» արկածների մասին բալլադների շարքը, որոնք մշակվել են XIII դարում: Ինքնատիպ են լիրիկական բովանդակությամբ անգլիական եւ շոտլանդական բալլադները:

Անգլիական գրականության հիմնադիր է համարվում Ջեֆրի Չոսերը, որն առավել հայտնի է իր՝ «Քենթրբերյան պատմվածքներ»-ով, որտեղ ներկայացված է XIV դ. Անգլիայի կյանքը:

XVI դ. Անգլիայում հեղաշրջում է կատարվում  և՛ տնտեսական, և՛ սոցիալական ոլորտներում, ինչի արդյունքում ավատատիրական կարգերը փոխարինվում են դասականով: Այս ժամանակաշրջանում էլ մտքի եւ արվեստի բուռն ծաղկում է արձանագրվում: Վերածննդի այս ժամանակաշրջանի բնութագրիչ գիծը հումանիզմի զարգացումն էր՝ արվեստում իրական աշխարհի եւ այդ աշխարհում ապրող մարդու պատկերումը: Անգլիայում հումանիզմի առաջին ներկայացուցիչը ուտոպիական սոցիալիզմի հիմնադիր Թոմաս Մորն էր:

«Ուտոպիա» եզրույթը, որն առաջին անգամ օգտագործել է Մորը, հունական արմատներ ունի եւ նշանակում է «գոյություն չունեցող վայր»: Իր գրքում Մորը պատմում է, թե իբր Անտվերպենում հանդիպել է պորտուգալացի ճամփորդ Հիտլոդեյին՝ ֆլորենտացի նավագնաց Վեսպուչիի ուղեկցորդներից մեկին, որը եղել է Նոր Աշխարհում եւ պատմել այդ մասին (1507թ.): Հեռանալով Վեսպուչիից՝ Հիտլոդեյը եղել է մինչեւ այդ անհայտ բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ հեռավոր Արեւմուտքում գտնվող Ուտոպիա կղզում:

Մորի գիրքը կազմված է Հիտլոդեյի հետ զրույցներից, ընդ որում, զգուշության պատճառով, իր մտքերից շատերը հեղինակը հնչեցնում է զրուցակցի շուրթերից՝ սուր քննադատելով ժամանակակից սոցիալական կարգերը: «Ուտոպիան» բացառիկ տեղ է զբաղեցնում համաշխարհային գրականությունում հեղինակի համարձակ մտքի եւ սահմանված խնդիր-

ների հսպակ լուծումների նկարագրության շնորհիվ. այն է՝ որոշակի օրինակով ցույց տալ, թե ինչպես համընդհանուր հավասարության սկզբունքի վրա կարող է կազմակերպվել հասարակությունն առանց մասնավոր սեփականության:

Այդ ժամանակաշրջանի անգլիական գրականության զարգացման հարցում մեծ է աշխարհահռչակ դրամատուրգ եւ պոետ Ուիլյամ Շեքսպիրի ավանդը, որը հոգեւոր աշխարհի ու զգացմունքների ողջ նրբությունը պատկերելու հարցում դեռեւս չգերազանցված վարպետ է: Շեքսպիրի ստեղծագործություններն աչքի են ընկնում հետաքրքրությունների անսպառ բազմազանությամբ: Նրա ստեղծագործություններում տեղ է գտել խառնվածքների, իրադրությունների, դարաշրջանների, ժողովուրդների, հասարակական միջավայրերի իսկայական բազմազանություն:

Շեքսպիրի ստեղծագործություններում կարելի է հանդիպել կերպարների եւ իրադարձությունների վառ համակցություն, գործողությունների արտասովոր արագություն, մեկ վայրից մյուսը նպատակասլաց տեղափոխվելու իմպուլս: Ոճի այս ճկունությունը, գունեղությունն ու թեթեւությունը հատուկ է նաեւ ժողովրդական դրամային:

Շեքսպիրի արվեստի առանձնահատկությունը ռեալիզմն է: Ընդ որում, դրամատուրգը ոչ միայն ճշմարտացի նկարագրում է իրականությունը, այլեւ խորությամբ զգում է այն, բացահայտում գլխավորը:

Ռեալիստական են նաեւ Շեքսպիրի կերպարները, ընդգծելով ընդհանուր եւ սկզբունքային նշանակության գծերը՝ նա անհատականացնում է հերոսներին՝ նրանց օժտելով բազմազան հավելյալ բնութագրիչ գծերով: Շեքսպիրի ռեալիզմն արտահայտվում է նաեւ լեզվի միջոցով. կերպարների խոսքը տարբերվում է՝ պայմանավորված սոցիալական դիրքից: Տեսարանները լիրիկական են, զգայական, կատակերգական, ողբերգական եւ այլն:

Շեքսպիրը մեծ ազդեցություն է ունեցել եվրոպական գրականության վրա: Նրա գրական ժառանգությունը մեծապես արտացոլվել է մի շարք դրամատուրգների ստեղծագործություններում, որոնք փորձել են այս կամ այն կերպ ազգային դրամա ստեղծել (Լեսսինգ, Գյոթե, Շիլլեր, Հյուգո): Շեքսպիրի մեծ երկրպագու է եղել Հայնեն, որը եւ հեղինակել է «Շեքսպիրի կանայք եւ աղջիկները» գիրքը:

Բուրժուական հեղափոխության հաղթանակից հետո նովելի նոր տիպ է ծնվում, որի հիմնադիրներից է Դանիել Դեֆոն: Հանրահայտ «Ռոբինզոն Կրուզո» գրքում նա գովերգում է նոր դասի ներկայացուցիչների ստեղծագործ ուժը, նրանց գործունեությունը: Այդ ժամանակաշրջանում է հայտնվում նաեւ անգլիացի երգիծաբան Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը», որում առաջին անգամ քննադատվում են հա-

սարական նոր կարգերը:

XVIII դարի վերջին եւ XIX դարի սկզբին Մեծ Բրիտանիայում, ինչպես եւ եվրոպական մյուս երկրներում, զարգանում է ռոմանտիկ ոճը: Այս ոճի ստեղծագործողներին գրավում էին ֆանտաստիկան, պատմական նախորդ դարաշրջանները, կրքերը, ժողովրդական ստեղծագործությունը: Այս ժամանակահատվածի առավել ռոմանտիկ գործերից է «Օսիանի պոեմները», որտեղ շոտլանդացի պոետ Ջեյմս Մակֆերսոնը ազատ թարգմանությամբ ներկայացրել է կելտական ժողովրդական ասքերը: Շոտլանդացի մեկ այլ հայտնի գրող Վալտեր Սքոթը հիմնադրում է պատմական վեպերի գրական նոր ոճ: Համաշխարհային փառքի է արժանացել նաեւ շոտլանդացի ազգային գրող Ռոբերտ Բերնսի պոեզիան:

XIX 30-50-ական թթ. պոեզիայի վրա մեծ ազդեցություն է ունեցել չարտիզմը՝ աշխատավոր դասի առաջին զանգվածային շարժումը: Ժողովրդավարական այդ շարժումը քննադատական ռեալիզմի զարգացման համար հող է նախապատրաստում, որի գլխավոր ներկայացուցիչներ են համարվում Չարլզ Դիկկենսը, Ուիլյամ Թեքքերեյը՝ ժամանակակից բուրժուական հասարակության կենսակերպի անկրկնելի պատկերներով: Քննադատական ռեալիզմը զարգանում է նաեւ առավել ուշ շրջանի գրողների ստեղծագործություններում, որոնցից է Թոմաս Հարդին, որը ներկայացրել է գյուղական Անգլիայի կյանքը:

Անգլիական գրականության մեջ լայն տարածում է գտել նաեւ արկածային ժանրը: Թերեւս բոլորին հայտնի են Ռոբերտ Սթիվենսոնի արկածային («Գանձերի կղզին»), Հենրի Ռայդեր Հագգարդի կեղծ պատմական («Սողոմոն արքայի հանքերը»), դետեկտիվ ոճի հիմնադիր Արթուր Կոնան-Դոյլի վեպերն ու պատմվածքները:

XX դարում անգլիացի գրողների մեծ մասը շարունակել են անգլիական դասական գրականության ռեալիստական ավանդույթները: Վերջինների թվում են Ջոն Գոլսուորդին՝ բուրժուական կենցաղի կենդանի վառ պատկերներով («Ֆորսայթների առասպելը»), Սոմերսեթ Մոեմը, Ռիչարդ Օլդինգթոնը, Արչիբալդ Քրոնին եւ այլք: Ստեղծագործություններում սոցիալական թեմաներ է շոշոփում անգլիացի հայտնի գրող եւ դրամատուրգ Ջոն Փրիսթլին: Մեծ հեղինակություն են վայելում նաեւ բարոյական-կենցաղային թեմաներով վեպերը, օրինակ՝ Գրեհեմ Գրինի ստեղծագործությունները («Լուռ ամերիկացին», «Մեր մարդը Հավանայում»): Մեծ Բրիտանիայի ժամանակակից սոցիալական եւ ինտելեկտուալ կյանքը «Օտարներ եւ եղբայրներ» իր վիպաշարում ներկայացրել է Չարլզ Սնոուն:

Վերջին տասնամյակի անգլիական գրականությունում ռեալիստ-գրողների նոր սերունդ է հայտնվել, որոնք ստացել են «բարկացած գրողներ» անվանումը: Վերջինների առավել վառ ներկայացուցիչ է դրամատուրգ Ջոն Օսբորնը՝ «Շուրջդ նայի՛ր զայրույթի պահին» հայտնի պիեսի

հեղինակը:

## Գեղարվեստ

Մեծ Բրիտանիան բազմաթիվ փաղանդավոր գեղանկարիչներ է պարգեւել աշխարհին: Համաեվրոպական հռչակ ունեն XVIII դ. դիմանկարիչներ Ջոշուա Ռեյնոլդսի, Հենրի Ռեբերնի եւ այլոց կտավները: Համաշխարհային մշակույթում հատուկ տեղ են զբաղեցնում XVIII դ. վերջի XIX դ. սկզբի բնանկարիչներ Ջոզեֆ Ուիլյամ Թյորները եւ Ջոն Կոնստեբլը: Արվեստի այս ռեալիստական ավանդույթները շարունակում են նաեւ XX դ. առաջատար նկարիչները, որոնց շարքում առավել աչքի են ընկնում 50-ական թթ. այսպես կոչված «սոցիալական ռեալիստները»: Պ. Հոգարտը, Է. Արդիզոնը, գեղանկարիչներ Լ. Լաուրին, Դ. Գրիվեն, քանդակագործներ Լ. Բրեդշոուն, Բ. Ռին եւ մյուսները մի շարք ռեալիստական ստեղծագործությունների հեղինակներ են, որոնց մեծ մասը նվիրված է խաղաղության համար պայքարին: Լայն ճանաչում ունեն Հ. Մուրի աբստրակտ ոճի քանդակները:

## Երաժշտություն

Թեեւ Մեծ Բրիտանիայում երաժշտական կյանքը միշտ զարգացած է եղել, բրիտանացի աշխարհահռչակ կոմպոզիտորների թիվը քիչ է: Անգլիական երաժշտական մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունի գերմանացի հայտնի կոմպոզիտոր Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը (1685-1759թթ.), որը հինգ տասնամյակ ապրել է Լոնդոնում: Անտիկ եւ աստվածաշնչյան թեմաներով նրա օպերաները մեծ մասամբ կառուցված են անգլիական ժողովրդական երաժշտության եւ հին երգչախմբային մշակույթի հիման վրա: XVIIIդ. Անգլիայի կոմպոզիտորների մեծ մասը ստեղծագործում էր օպերային կամ երգչախմբային ոճում: Ժամանակակից Անգլիայի ավագ սերնդի առավել հայտնի կոմպոզիտորներից են Ու. Ուոլթոնը, Լ. Բարքլին: Մեծ Բրիտանիայի երաժշտական արվեստում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում եւ միջազգային ճանաչում ունեն կոմպոզիտոր Բ. Բրիթենի ստեղծագործությունները: Նրա օպերաները՝ «Ալբերտ Գյորինգ», «Փոքրիկ ծխնելույզ մաքրողը», Եվրոպայի օպերային բազմաթիվ թատրոնների երգացանկերում են:

Բացի այդ՝ Անգլիայում զարգացում է գտել երգչախմբային արվեստը որն առավել հատկանշական է ուելսցիների համար: Տարածում է գտել նաեւ հոգեւոր երաժշտությունը:

Հատկապես տարածված է էստրադային երաժշտությունը: Բոլորին է հայտնի 1960-ական թթ. «The Beatles» վոկալ-գործիքային փոփ-համույթը: Ռոք եւ փոփ երաժշտության պարբերաբար կազմակերպվող փառա-

փոնները բազմաթիվ երիտասարդների են գրավում:

## Թատրոն

Անգլիական դրամատիկական թատրոնը սկզբնապես եկեղեցական է եղել. ներկայացումները կրոնական ծիսակատարության մաս էին կազմում: Ավելի ուշ՝ Վերածննդի դարաշրջանում, այն առավել աշխարհիկ բնույթ է ստանում՝ դառնալով պրոֆեսիոնալ: XVI դ. «Գլոբուս» թատրոնում խաղում էր Շեքսպիրի թատերախումբը:

XXդ. անգլիական թատրոնը եւս զարգացել է ռեալիզմի հիմքի վրա: Անգլիացի հայտնի ռեժիսորներ Պ. Բրուկը, Պ. Հոլլը, Ջ. Բարթոնը, Բ. Մայլսը բեմադրում էին Բ. Շոուի, Ս. Մոեմի, Ջ. Փրիսթլիի, Պ.Ուստինովի, Դ. Մերսերի, Ա. Ուեսքերի եւ ժամանակակից այլ դրամատուրգների պիեսներ: Մեծ հեղինակություն են ձեռք բերում բեմի այնպիսի վարպետներ, ինչպիսիք էին Ս. Թերնդայքը, Ջ. Գիլգուդը, Լ. Օլիվյեն, Ա. Գիննեսը, Ֆ. Ռոբսոնը, Պ. Սքոֆֆիլդը, Ռ. Բերթոնը, Ա. Ֆիննին:

Այժմ առավել հայտնի են Քովենթ-Գարդեն Թագավորական թատրոնը կամ Թագավորական օպերայի տունը (*Royal Opera House*, կառուցվել է 1858թ., գլոբալ վերակառուցման է ենթարկվել 1990-ական թթ.) եւ Թագավորական շեքսպիրյան թատրոնը (*Royal Shakespeare Theatre*), որ բացվել է 1993թ. Ուիլյամ Շեքսպիրի պատվին:

# ՄԱՍ II
# ՍՊՈՐՏ

Չնայած «սպորտ» բառը ֆրանսիական ծագում ունի, այն միջազգային ճանաչում է ստացել Բրիտանիայի շնորհիվ: Սպորտի բնագավառում բրիտանական հայտնագործությունների հաջողությունները հիմնականում պայմանավորված էին բրիտանա-ֆրանսիական հարաբերություններով: Առաջին սպորտաձեւերի առաջացման հետ ֆրանսիացիները առաջին անգամ լսեցին «թենիս» բառը: Բրիտանացիների մոտ այն նշանակում էր խաղ գնդակով, ինչը հայտնի էր երկու երկրներում էլ՝ սկսած ուշ միջնադարից: Տեղափոխվելով գեղեցիկ, կանաչ սիզամարգ՝ այս խաղը որոշակի օրենքներ եւ, այսպես կոչված, բառարան սահմանեց՝ դառնալով հարյուրփտոկոսանոց բրիտանական խաղ, չնայած իր անվան համար պարտական է ֆրանսիական «*տենե*» բառին, որը հայերեն թարգմանաբար նշանակում է «*բռնեք*»: Այս բառն էին բացականչում խաղացողները՝ մրցակցի դաշտը գնդակն ուղարկելուց առաջ նրան զգուշացնելու համար: Անշնորհակալ գործ կլիներ չընդունել, որ սպորտի մարզիկները եւ երկրպագուները մեծապես պարտական են 19-րդ դարի Անգլիային:

## *Ինչպե՞ս Բրիտանիայում ծնվեց պրոֆեսիոնալ սպորտը*

Բրիտանացիները ստեղծել են բազմաթիվ սպորտաձեւեր՝ գոլֆից ու կրիկետից մինչեւ ֆուտբոլ ու ռեգբի: Իսկ Բրիտանական Կայսրության օրոք այդ սպորտաձեւերը տարածում գտան ու ամրապնդվեցին աշխարհի տարբեր ծայրերում: Ժամանակի ընթացքում գաղութային իշխանության հաճելի զբաղմունքը սկսեց հետաքրքրել նաեւ այդ իշխանության հպատակներին ու այնքան գերեց նրանց, որ մեր ժամանակներում բրիտանական որոշ նախկին գաղութներ տարբեր սպորտաձեւերում գերազանցում են բրիտանացիներին:

Բրիտանական սպորտի զարգացման վրա զգալի ազդեցություն ունեցավ Վիկտորյանական ժամանակաշրջանը: 1837 թ.-ին, երբ գահ բարձրացավ Վիկտորյա թագուհին, բազմաթիվ սպորտաձեւեր գրեթե չունեին հստակ կանոններ: Իսկ արդեն 1901 թ.-ին, երբ թագուհին մահացավ, միայն ֆուտբոլն ուներ երեք օրենք: Բացի այդ՝ կար նաեւ «գալական» տարբերակը, որը հատկապես հայտնի էր Իռլանդիայում: Վիկտորյա թագուհու գահակալման տարիներին առաջին անգամ կազմակերպվեց «Open» «բաց» մրցաշարը, որը մինչ օրս էլ համարվում է գոլֆի ամենահեղինակավոր մրցաշարը: Կազմակերպվեցին նաեւ կրիկետի միջիշխանական ու միջազգային մրցաշարեր: Ֆուտբոլը, ռեգբին եւ կրիկետն իրենց ծնունդով պարտական են արական մասնավոր դպրոցներին: Վիկտոր-

յանական ժամանակաշրջանում ուսուցիչները կարծում էին, թե հասունացող պատանու ուղեղը ավելի արդյունավետ կարող է կլանել գիտելիքներն այն դեպքում, երբ նրա օրգանիզմը ժամանակ առ ժամանակ ֆիզիկապես ծանրաբեռնվում է: Սպորտը պղաներին հնարավորություն էր տալիս ազատվել կուտակված էներգիայից, զգալ իրենց մեկ ընդհանուր միավոր, արմատավորում էր կոլեկտիվիզմի գաղափարը:

Կրիկետի առաջին խաղը տեղի ունեցավ Իթոնի եւ Հարրոուի դպրոցների միջեւ 1805 թ.-ին (Բայրոնը, ով այդ ժամանակ դեռ պատանի էր, գրել է, որ իր դպրոցի՝ Հարրոուի թիմը պարզապես ջախջախվեց): Կար եւս մեկ գործոն, որը խթանում էր սպորտի զարգացմանը Վիկտորյանական ժամանակաշրջանում: Այն բխում էր տվյալ ժամանակաշրջանում տիրող սոցիալական տեսության «մկանոտ քրիստոնեություն» դրույթից: Սպորտի մեծ ջատագովներ էին անգլիական եկեղեցականները: Բազմաթիվ տեղական ֆուտբոլային ակումբներ ձեւավորվեցին հենց եկեղեցիներին կից, օրինակ՝ Լիդսը եւ Սաութհեմփթոնը: Այնուամենայնիվ, մինչեւ 19-րդ դարի կեսերը սպորտը մնում էր արտոնյալ դասի զբաղմունք, բնակչության մեծ մասը կրիկետ կամ ռեկբի խաղալու ժամանակ չուներ: Իրավիճակը փոխվեց, երբ 1847 թ.-ին խորհրդարանը որոշում ընդունեց, համաձայն որի՝ աշխատանքային ժամերը կրճատվեցին մինչեւ տասը ժամ: Աստիճանաբար տարածվեց երկաթուղային տրանսպորտը, որը նպաստեց տարբեր քաղաքների սպորտային ակումբների կապերի սերտացմանը: Հեշտացավ նաեւ ամբողջ երկրի մասշտաբով կազմակերպվող սպորտային մրցաշարերի իրականացումը: 1850 թ.-ին ընդունվեց որոշում, ըստ որի՝ բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները շաբաթ օրերը փակվում էին ժամը երկուսին, որպեսզի աշխատողները ե՛ւ ժամանակ, ե՛ւ խաղալու տեղ ունենան, այսինքն՝ նրանք խաղում էին հենց գործարանների բակերում: 1899 թ.-ին գերմանացի մի հանքափոր, որն աշխատում էր Անգլիայում, նկատել է, որ սպորտը անգլիացիների համար ամեն ինչ է, եւ այն ներծծվում է մայրական կաթի հետ: Միաժամանակ աճում էր նաեւ մարդկանց բարեկեցությունը: 19-րդ դարի վերջին քառորդում իրական եկամուտները աճեցին երեք անգամ: Հենց այդ ժամանակ առաջացան առաջին բուքմեյքերները, որովհետեւ մարդիկ ավելորդ փող ունեին, որը կարելի էր դնել մրցող կողմերից մեկի կամ մյուսի օգտին: Իսկ երբ 1885 թ.-ին Յորքշիրյան գավաթի եզրափակիչը դիտում էր քսան հազար մարդ, սկսեց զարգանալ սպորտային լրագրությունը: Այսինքն՝ սպորտը սկսեց զարգանալ այն ժամանակ, երբ երկրպագուներն ունեցան ազատ ժամանակ ու ավելորդ փող:

1870-ական թվականներից մարզիկները աստիճանաբար սկսեցին իրենց ելույթների համար գումարներ ստանալ, ինչը երկու պատճառ ուներ. առաջին հերթին՝ հավակնոտ սպորտային ակումբները պատրաստ

էին վճարել՝ լավագույն մարզիկներին իրենց կազմում ընդգրկելու համար, իսկ այդ գումարները առաջանում էին սպորտային միջոցառումների հանդիսատեսների գնած տոմսերի հաշվին: Հենց դրանով էր պայմանավորված շոտլանդացի եւ ուելսցի մարզիկների հայտնվելը Անգլիայում: Բանվորները, որոնք ազատ ժամանակ սպորտով էին զբաղվում, հասկացան, որ լավագույնները կարող են ավելի մեծ գումար վաստակել՝ իրենց սպորտային կարողությունները հղկելով, ու ձերբազատվել գործարանային ծանր աշխատանքից: Հարկ է նշել, որ սպորտային կազմակերպությունները գրկաբաց չէին ընդունում փողերի ներհոսքը մարզադաշտեր: Ե՛ւ արհեստավարժների, ե՛ւ սիրողների միաժամանակյա ներկայությունը մարզադաշտում ընդունելի էր գոլֆի եւ կրիկետի ընթացքում: Իսկ թեթեւ ատլետիկայի ու թիավարության ֆեդերացիաները չցանկացան իրենց շարքերն արհեստավարժների ընդունել: Ֆուտբոլում մարզիկները սկսեցին վարձատրվել 1885 թ.-ից, ու մի քանի տարվա ընթացքում անգլիական ֆուտբոլում գերիշխող դիրք զբաղեցրին հյուսիսային ակումբները, որտեղ ֆուտբոլիստներին ավելի շատ էին վճարում:

Եւ եթե սպորտաձեւերի ճնշող մեծամասնությունը ինչ-որ կերպ հարթեց այդ տարաձայնությունը, ապա ռեկբին դա անել չկարողացավ: Արհեստավարժությունը ռեկբի խաղը կիսեց երկու մասի: Դրա արդյունքում այսօր մենք ունենք երկու տարբեր տեսակի սպորտաձեւեր՝ ռեկբի-յունիոն եւ ռեկբի-լիգ: Դրա համար հիմք հանդիսացավ 1886 թ.-ին ռեկբիի միության որոշումը՝ արհեստավարժությունը համարել անօրինական: Ի պատասխան՝ յորքշիրյան թիմի ներկայացուցիչը պնդեց, որ նման պայմաններում Հյուսիսային Անգլիայի բազմաթիվ ակումբներ կարող են դուրս մնալ մրցակցությունից: Ավելին՝ ռեկբիի միությունն իր ձեռքում պահեց օրինախախտներին պատժելու իրավունքը: Պատժի դեպքում օրինախախտ ակումբը կարող էր զրկվել նույնիսկ մրցաշարին մասնակցելու իրավունքից: Մի քանի տարի անց հյուսիսային ակումբները կանգնեցին գոյատեւման խնդրի առջեւ, եւ ստիպված հարց-բողոք բարձրացվեց միության նիստում: Միության ղեկավարությունը չփոխեց իր դիրքորոշումն ու որպես իր խիստ դիրքորոշման արտահայտություն՝ տասնչորս ամիս ժամկետով որակազրկեց չորս ակումբների: Եվս երկու տարի անց հյուսիսային ակումբները որոշեցին հրաժարվել խաղի երկու հիմնական օրենքներից, ու այդպես ստեղծվեց ռեկբի-լիգը՝ ամբողջությամբ նոր մի մարզաձեւ, որը դարձավ իրենց սպորտային հմտություններով ապրելու միջոց վաստակողների պայքարի խորհրդանիշը: Ռեկբի-յունիոնը նույնիսկ տասնամյակներ անց ռեկբի-լիգին չէր համարում առանձին սպորտաձեւ, այլ դիտում էր այն՝ որպես ապստամբ միավոր: Այժմ ռեկբի-յունիոնը նույնպես ապրում է պրոֆեսիոնալ օրենքներով՝ սկսած 1995 թ.-ից, իսկ հիմնական տարբերությունները հետեւյալն են՝ ռեկբի-լիգում խա-

դաշտն ավելի ագրեսիվ է, խաղացողների թիվը՝ ավելի քիչ, գնդակը՝ մի փոքր ավելի կլորավուն, քան ռեկբի-յունիոնում:

Իսկ ո՞վ շահեց այդ պառակտումից: Իհարկե, ֆուտբոլը: Մինչեւ 1895թ.-ը ֆուտբոլին չէր հաջողվում գերիշխող դիրք բռնել հյուսիսում. այն միշտ զիջում էր ռեկբիին: Եվ հանկարծ պառակտումից հետո երեք ակումբ միաժամանակ որոշեցին վերաորակավորվել ու ֆուտբոլ խաղալ: Նոր վերաորակավորվածներից մեկը դեռեւս մի քանի տարի առաջ բարձր դիրք էր գրավում անգլիական պրեմիեր լիգայում: Խոսքը «Հոլբեկի» մասին է, որը ներկայումս կրում է «Լիդս Յունայթեդ» անունը:

20-րդ դարի վերջում սիրողական սպորտը աստիճանաբար մղվեց երկրորդ պլան: Մի կողմից՝ նվազում էր չվարձատրվող սպորտով զբաղվելու ցանկությունը, մյուս կողմից՝ խստանում էին սպորտի պահանջները: Հետզհետե «սիրողական մարզիկ» պիտակը դարձավ նույնիսկ վիրավորական:

Կրիկետը հրաժարվեց արհեստավարժների ու սիրողների միջեւ բաժանումից 1963 թ.-ին, իսկ ֆուտբոլը՝ տասը տարի անց:

### *Ֆուտբոլի զարգացման պատմությունը*

Շատ տարիներ առաջ մարդիկ հավաքվում էին քաղաքային հրապարակներում եւ սկսում էին ոտքով խաղալ ինչ-որ գլորվող մարմնով: Խաղի նպատակն այդ գլորվող մարմինը հակառակորդ թիմի սահմանն անցկացնելն էր՝ թշնամու ճամբար ներխուժելը: Հաղթում էր այն թիմը, որն ավելի շատ կանցկացներ «գնդակը» հակառակորդի տարածք: Այդպիսի խաղերի երբեմն մասնակցում էր նույնիսկ մի քանի հարյուր մարդ: Պատմությունը հստակ չգիտի ո՛չ ֆուտբոլի ծննդավայրը, ո՛չ էլ ծննդյան տարեթիվը: Սակայն այդ փաստը խոսում է ոչ թե ի վնաս ֆուտբոլի, այլ հակառակը. դա վկայում է այն մասին, թե տարբեր ժողովուրդների մոտ տարբեր ժամանակներում ինչ մեծ տարածում ուներ «գնդակով-ոտքով» խաղը: Գնդակի նման մարմիններ եւ ոտքով գնդակին հարվածող մարդու պատկերներ հնէաբանների կողմից հայտնաբերվել են Եգիպտոսում, իսկ Հին Հռոմում եւ Հին Հունաստանում հայտնաբերվել են նաեւ գնդակատիպ կլոր մարմիններ, որոնք լցված են եղել տարբեր փափուկ իրերով: Գիտնականները պնդում են, որ ֆուտբոլի պես հաճելի զբաղմունք են ունեցել նաեւ չինացի զինվորականները: Հայտնի ֆրանսիացի ֆուտբոլային պատմաբան Մորիս Նեֆերկորնը պնդում է, որ ֆուտբոլի անմիջական նախահայրը «Լա սուլ» խաղն է: Այստեղ մարդիկ ոտքով խաղում էին գնդակի հետ, որը լցված էր լաթերով: Այս խաղը հայտնի էր Նեֆերկորնի հայրենիքում: Իսկ իտալացի սպորտային պատմաբանները պնդում են, որ ֆուտբոլը առաջացել է «կալչիո» խաղից, որը տարածված էր Ֆլորենցիայում 16-րդ դարում: Իրենց ասածը հիմնավորելու համար նրանք բերում են հետեւյալ փաստերը. կալչիո խաղում էին կաշվե գնդակով, 100

մետր երկարություն եւ 50 մետր լայնություն ունեցող «մարզադաշտում»: Չնայած բերված բոլոր փաստերին՝ ֆուտբոլի հայրենիքը համարվելու ամենամեծ իրավունքն ունի Անգլիան: Հենց այստեղ առաջին անգամ այդ խաղն անվանվեց ֆուտբոլ, եւ դա տեղի ունեցավ ոչ թե խաղին պաշտոնական ճանաչում տալու, այլ այն արգելելու նպատակով:

1349 թ.-ին Էդուարդ III թագավորն արգելեց ֆուտբոլ խաղալ, քանի որ այդ զբաղմունքը հետզհետե դուրս էր մղում նետ ու աղեղից կրակելու՝ երիտասարդների սռավել պիտանի զբաղմունքը: Այդպես ֆուտբոլն առաջին անգամ անվանվեց ֆուտբոլ եւ պաշտոնապես արգելվեց: Սակայն այդ արգելքները բավարար չէին արդեն տարածված խաղը մոռացության տալու համար, 40 տարի անց նման հրաման արձակեց նաեւ Ռիչարդ II-ը, 1401 թ.-ին՝ նաեւ Հենրիխ IV-ը, այնուհետեւ՝ Հենրիխ VIII-ը:

1863 թ.-ին Անգլիայում առաջին անգամ ստեղծվեց ֆուտբոլային ասոցիացիա, եւ մշակվեցին խաղի պաշտոնական օրենքները, որոնք մի քանի տասնամյակ անց համընդհանուր բնույթ ստացան: Այստեղ էլ ստեղծվեցին առաջին ֆուտբոլային ակումբները: Այդ կանոններով՝ ֆուտբոլիստներին արգելվեց գնդակը ձեռքով վերցնել, նույնիսկ դարպասապահը պիտի ենթարկվեր այդ կանոնին: Միայն 1871 թ.-ին դարպասապահները իրավունք ստացան ձեռքով խաղալ դարպասապահի հրապարակում, իսկ 31 տարի անց՝ ամբողջ տուգանային հրապարակում:

Թերթելով պատմության էջերը՝ պարզ է դառնում, որ ժամանակակից ֆուտբոլն իր ծնունդով պարտական է անգլիացիներին: Նրանց կողմից ներմուծվեց մրցավարի գաղափարը, եւ 1878 թ.-ից օգտագործման մեջ մտավ մրցավարի սուլիչը: Իսկ մինչեւ մրցավարի ի հայտ գալը բոլոր վիճելի հարցերը լուծվում էին թիմերի ավագների բանակցությունների արդյունքում:

1890 թ.-ին ձկնորսական պարագաներ արտադրող լիվերպուլյան մի գործարանատիրոջ՝ պարոն Բրոդիի առաջարկությամբ՝ անգլիացիներն առաջին անգամ ֆուտբոլային դարպասներին ձկնորսական ցանց անցկացրեցին:

Այսօր Բրիտանիայում հայտնի են բազմաթիվ մարզաձեւեր: Դրանցից մի քանիսը ներգրավում են բազմաթիվ մարզիկների եւ երկրպագուների, իսկ որոշները՝ ավելի փոքրաթիվ: Բրիտանացիների շուրջ մեկ երրորդը սպորտով զբաղվում է բաց երկնքի տակ, իսկ մեկ չորրորդը՝ սպորտային դահլիճներում: Սպորտային դահլիճներ հաճախելու, սպորտային պարագաներ եւ հագուստ գնելու համար ծախսվում է բրիտանական շարքային ընտանիքի բյուջեի շոշափելի մասը: Ամենազանգվածային սպորտաձեւը սպորտային քայլքն է ե՛ւ կանանց, ե՛ւ տղամարդկանց շրջանում: Տղամարդկանց շրջանում երկրորդ տեղում բիլիարդն է, այնուհետեւ՝ ֆուտբոլը, սնուկերը, դարթսը եւ լողը, կանանց շրջանում՝ լողը եւ աերոբիկան:

Երկրի ծայրամասերում ամենատարածված սպորտաձեւը ձկնորսությունն է: Ռեկբին համարվում է ձմեռային սպորտաձեւ: Խաղում են հիմնականում հյուսիսում՝ դպրոցականները, ուսանողները եւ բանվորները: Բրիտանիայում հայտնի են նաեւ գոլֆը, ձիասպորտը, որսը, թենիսը, լեռնագնացությունը, ծովագնացությունը եւ ավտոմոբիլային սպորտը:

### *Ռեկբի*

Խաղում են ռեկբիի ասոցիացիայի կանոններով: Ֆուտբոլից տարբերվում է նրանով, որ թիմերը կազմված են տասնհինգական մարզիկներից, իսկ գնդակը կարելի է նետել նաեւ ձեռքով: Բրիտանիայում ռեկբիի մրցումներ անցկացվում են դպրոցների, համալսարանների, զինվորական ակադեմիաների, քաղաքների միջեւ: Լինում են նաեւ միջազգային մրցաշարեր: Ամեն տարի Ուեմբլիում անցկացվում է ռեկբիի լիգայի գավաթի խաղարկությունը:

### *Կրիկետ*

18-րդ դարից այս խաղը Անգլիայում մեծ հեղինակություն է վայելում: Մայիսից մինչեւ սեպտեմբեր հազարավոր հրապարակներում խաղում են այս զուտ անգլիական խաղը: Տարբեր քաղաքների միջեւ կազմակերպված խաղերը տեւում են երեք օր: Մեկ խաղաշրջանի ընթացքում ամեն թիմ անցկացնում է մինչեւ 30 խաղ: Կան տարբեր քաղաքների «առաջին կարգի» 17 թիմեր: Կրիկետի առումով առավել քիչ զարգացած շրջաններում անցկացվում են ներքին առաջնություններ: Լոնդոնի Լորդս մարզադաշտում Մարիլեբոնյան կրիկետի ակումբը, որը համարվում է այս մարզաձեւի հիմնադիրը, անցկացնում է տարբեր կարգի մրցաշարեր: Այստեղ խաղում են մի կողմից 11 հարձակվողներ, մյուս կողմից՝ 11 պաշտպաններ: Պաշտպանվող կողմից ամեն պահի խաղում է երկու մարզիկ, այնուհետեւ դերերը փոխվում են:

### *Այլ սպորտաձեւեր*

Անգլիայում շատ հայտնի է նաեւ թենիսը: Ամեն տարի Ուիմբլդոնում անցկացվում է ազգային առաջնություն: Մյուս երկու մրցաշարերը՝ Դեւիսի գավաթը, որը միջազգային մրցաշար է եւ միայն տղամարդկանց համար է, եւ Ուայթմանի գավաթը՝ ԱՄՆ-ի եւ Բրիտանիայի կանանց համար, նույնպես հավաքում են մեծաթիվ հանդիսատես:

Գոլֆի միջազգային մրցաշարերը երկուսն են՝ Ուոքերի գավաթը, որը սիրողական է, եւ Ռայդերի գավաթը, որն արհեստավարժների մրցաշար է: Սրանք ԱՄՆ-ի եւ Միացյալ Թագավորության մարզիկների համար են: Ազգային առաջնությունները եւս երկուսն են՝ Բրիտանիայի բաց առաջնությունը եւ Բրիտանական սիրողական առաջնությունը:

# ԳԼՈՒԽ VII

## ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ





# ՄԱՍ I
# ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ Բրիտանիան Հայաստանի 3-րդ Հանրապետությունը ճանաչել է 1991թ. դեկտեմբերի 31-ին, ինչից հետո դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել: Միացյալ Թագավորության առաջին դեսպանը մեր երկիր է ժամանել 1995թ.-ին: Մեծ Բրիտանիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն է Վահե Գաբրիելյանը: Միացյալ Թագավորությունը մեր երկրում ներկայացնում է դեսպան Չարլզ Լոնսդեյլը:

2001 թվականից Հայաստանում սկսել է գործել նաեւ Բրիտանական խորհուրդը:

Բրիտանական դիվանագիտական ներկայացուցչությունը խթանում է Երեւան-Լոնդոն հարաբերությունների զարգացումը, աջակցում Հայաստանի եվրոպական ինտեգրմանը:

Մեծ Բրիտանիայում հայկական համայնքն ունի 12 հազ. ներկայացուցիչ: Հայ առաջին գաղթականներն այս երկիր են ժամանել դեռեւս 13-րդ դարում՝ փախչելով մոնղոլ նվաճողներից: 18-րդ դարում հայ վաճառականներն Անգլիա են գաղթում Հնդկաստանից, իսկ 19-րդ դարում հաստատվում են Մանչեսթերում: 1910-ական թթ.-ին ձեւավորվում է հայկական համայնքը Լոնդոնին հարող բնակավայրերում: Լոնդոնի Յունիվերսիթի Քոլեջի վերջին ուսումնասիրություններով՝ հայ գաղթականները եւ նրանց ժառանգները Մեծ Բրիտանիայի տնտեսապես եւ սոցիալապես առավել հաջողակ էթնիկ խմբերից են համարվում:

# ՄԱՍ II
# ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Մեծ Բրիտանիան Հայաստանի անկախությունը ճանաչել է 1991թ. դեկտեմբերի 31-ին, ինչից հետո շուտով դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել:

Լոնդոնում Հայաստանի դեսպանատունը բացվել է 1992թ. հոկտեմբերին: Դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը զուգընթաց՝ ձեւավորվել են նաեւ հայ-բրիտանական միջխորհրդարանական կապերը: 1992թ. հիմնվել է Բրիտանա-հայկական բազմակուսակցական խորհրդարանական խումբը (The British-Armenian All Party Parliamentary Group - BAAPPG), որի նպատակը միջխորհրդարանական կապերի զարգացումն է: Հիմնադրումից ի վեր Խումբը հայ-բրիտանական հարաբերությունների զարգացման առաջամարտիկն է, որը խթանում է փոխըմբռնումը Մեծ Բրիտանիայի ու Հայաստանի օրենսդիր մարմինների եւ ժողովուրդների միջեւ: Խումբը պարբերաբար հայկական խնդիրների շուրջ խորհրդաժողովներ եւ հանդիպումներ է հրավիրում բրիտանական խորհրդարանի զույգ պալատներում՝ բարձրացնելու Հայաստանի մասին տեղեկացվածության մակարդակը: Խմբի բազմաթիվ ներկայացուցիչներ բազմիցս այցելել են Հայաստան եւ ԼՂ: Խումբը գլխավորում է Քուինսբրիի բարոնուհի Քերոլայն Քոքսը, որը հայտնի է մարդասիրական համաշխարհային իր գործունեությամբ:

Միջխորհրդարանական միությունում[2] բրիտանական պատվիրակության ջանքերով 1994թ. ձեւավորվել է հայ-բրիտանական բարեկամության պատգամավորական խումբը:

Միջխորհրդարանական կապերի ամրապնդման հարցում կարեւոր նշանակություն ունեն խորհրդարանական պատվիրակությունների փոխադարձ այցերը: Այս առումով հատկապես ուշագրավ է 2002թ. բրիտանական խորհրդարանի Լորդերի Պալատի Կանցլեր Լորդ Ալեքսանդր Իրվինի եւ Համայնքների Պալատի խոսնակ Մայք Մարթինի հրավերով ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի վեցօրյա այցը (հունվարի 26-ից փետրվարի 3-ը) Միացյալ Թագավորություն: Այցի շրջանակում ԱԺ խոսնակը հանդիպում է ունեցել Լոնդոնում հայկական համայնքի խորհրդի անդամների հետ՝ ներկայացնելով հայրենիքի քաղաքական, տնտեսական, մշակութային իրավիճակը:

---

2 Միջխորհրդարանական միությունն ինքնիշխան պետությունների օրենսդիր մարմինների միջազգային կազմակերպություն է, որ հիմնադրվել է 1989թ.: Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի հետ՝ կիսելով նրա նպատակները եւ աջակցելով դրանց իրականացմանը:

Հայաստանի ներքաղաքական իրադրությունը Վեսմինսթերյան պալատում Արմեն Խաչատրյանի եւ Լորդ-կանցլեր Ալեքսանդր Իրվինի բանակցությունների հիմնական թեման է եղել: Այցի ընթացքում Հայաստանի խորհրդարանի խոսնակին հյուրընկալել է նաեւ Բրիտանական խորհրդի նախագահ Ռոբին Բեյքըրը (Հայաստանում Բրիտանական խորհրդի գրասենյակը բացվել է 2002թ. ապրիլին):

Բրիտանական Ազգային աուդիտի Գլխավոր վերահսկիչ, աուդիտոր սըր Ջոն Բորնիի հետ հանդիպման ընթացքում Արմեն Խաչատրյանը ծանոթացել է վերջինի գլխավորած գրասենյակի գործունեությանը: Վեսթմինսթերյան պալատում ԱԺ նախագահը ծանոթացել է Համայնքների պալատի գործունեությանը, ներկա գտնվել որոշ հանձնաժողովների նիստերի:

Միացյալ Թագավորության արտգործնախարարության արեւելյան դեպարտամենտի տնօրեն պրն Մակգրեգորիի հետ հանդիպման ընթացքում Արմեն Խաչատրյանը քննարկել է ղարաբաղյան խնդրի կարգավորումը, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատումը:

Ուելսում Արմեն Խաչատրյանի գլխավորած պատվիրակությանը հյուրընկալել է կոմսության Ազգային Ժողովի խոսնակ Դեւիդ Էլիս Թոմասը, ինչը կանխորոշել է երկկողմ համագործակցության սկիզբը:

Հայ-բրիտանական միջխորհրդարանական կապերի զարգացմանը մեծապես նպաստել է նաեւ Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի պատվիրակության 2004թ. այցը Հայաստան:

Բազմիցս մեր երկիր է ժամանել նաեւ բրիտանացի խորհրդարանական բարոնուհի Քերոլայն Քոքսը:

## ՄԱՍ III

### *Հարցազրույց Հայաստանում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան ԷՆԹՈՆԻ ՔԱՆԹՈՐԻ հետ*

***- Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը բավական հետաքրքիր ծրագրեր ու միջոցառումներ է իրականացնում մեր երկրում: Կներկայացնե՞ք Ձեր՝ այստեղ եղած 15 ամիսներին դեսպանատան հիմնական գործունեությունը:***

- Ես թերեւս սկսեմ պատմել մի շատ հետաքրքիր միջոցառման մասին, որն իրականացվում է այժմ: Այն կոչվում է «Բրիտանական ավտոբուս»: Մի ավտոբուս շրջում է Երեւանի դպրոցներով՝ այնտեղ տանելով դերասանների մի խումբ, որոնք 30 րոպե տեւողությամբ ուսուցողական բեմադրություններ են ներկայացնում: Դրանցից մեկը, օրինակ, վերաբերում էր հանրային ծառայություններին. ցույց էր տալիս, թե որքան կարեւոր է իմանալ որոշ հանրային ծառայությունների հեռախոսահամարները: «Բրիտանական ավտոբուսի» բեմադրությունների այլ թեմաները հանդուրժողականության, երթեւեկության կանոնների, հասարակական կարգի պահպանման կարեւորության մասին են: Ներկայացումները կարեւոր են նաեւ հասարակական պատասխանատվության առումով, քանի որ դրանք նախատեսված են ցածր ու միջին դասարանների երեխաների համար: Բրիտանական դեսպանատան աջակցությամբ, մեկ այլ՝ «Իրավունքի այբուբեն» ծրագրի շրջանակներում, պատրաստվել էր երեք սոցիալական գովազդ՝ եվրոպական կառույցների, հանդուրժողականության, բանակցելու կարողության եւ հարկեր վճարելու կարեւորության մասին: Մեր ծրագրերի շարքում տեղ է գտել նաեւ մի վավերագրական ֆիլմ Մեծ Բրիտանիայի մասին, որը կոչվում է «Բրիտանիան երիտասարդ հայերի աչքերով»: Կարեւորում եմ նաեւ անցյալ տարի կայացած «Wilton Park Conferance» կոչվող միջազգային խորհրդաժողովի անցկացումը Հայաստանում: Այն նվիրված էր Հարավային Կովկասին եւ այս տարածաշրջանի մարտահրավերներին: «Wilton Park»-ը Հարավային Անգլիայում հիմնադրված կազմակերպություն է եւ Հարավային Կովկասի վերաբերյալ բավականին շատ խորհրդաժողովներ է անցկացնում: Կարեւոր էր, որ այս անգամ միջոցառումն անցկացվեց հենց Երեւանում:

Դեսպանատունն իրականացնում է նաեւ միջազգային աջակցության ծրագիր, ինչը թեեւ ծավալով փոքր է, բայց բավականին արդյունավետ է: Այն ներառում է երեք ուղղություններ՝ հանրային ոլորտի բարեփոխումներ, տարածաշրջանային զարգացում եւ բյուջետային բարեփոխումներ: Նպատակը մեկն է՝ բարձրացնել հանրային գումարների ծախսման արդյունավետությունը: Կցանկանայի նշել, որ դեսպանատան ծրագրերը նե-

ռառում են թե՛ ավելի լուրջ, թե՛ ավելի թեթեւ բովանդակությամբ ծրագրեր, այդ թվում կազմակերպում ենք փարբեր ոլորփների մասնագեփների, երիփասարդ գիփնականների, ինչպես նաեւ կառավարության աշխափակիցների այցեր Մեծ Բրիփանիա:

***- Մանրամասն անդրադարձե՛ք, խնդրեմ, առավելապես կրթական եւ մշակութային ծրագրերին, քանի որ հայփնի է, որ այդ ուղղությամբ բրիփանական կողմը բավական ակփիվ է Հայասփանում:***

- Մենք երկու կրթական ծրագիր ունենք, որոնք սփեղծված են խրախուսելու երիփասարդ ուսանողներին ու մասնագեփներին ուսանել Մեծ Բրիփանիայում եւ վերադառնալ հարսփացած հմփություններով, նպասփել իրենց ոլորփի զարգացմանը: «Չիվնինգ» կրթաթոշակային ծրագրերից մեկը երիփասարդ մասնագեփներին հնարավորություն է փալիս ուսանել Մեծ Բրիփանիայի լավագույն համալսարաններում: Եվ այսօր այդ երիփասարդների բավականին մեծ համայնք կա, որոնք գնացել, սովորել են եւ հեփ են վերադարձել Հայասփան: «Չիվնինգի» մյուս ծրագիրը նախափեսված է միջին օղակում աշխափող մասնագեփների համար:

Ինչ վերաբերում է մշակութային ծրագրերին, Բրիփանական դեսպանափունը եւ Բրիփանական Խորհուրդը Հայասփանում բազմաթիվ ծրագրեր են իրականացնում այս ուղղությամբ: Նշեմ, օրինակ, Եվրոպական ֆիլմերի փառափոնը, Բրիփանական ֆիլմերի փառափոնը, որ արդեն վեց փարի կազմակերպվում է Հայասփանում: Սովորաբար այն փեղի է ունենում Երեւանում, սակայն արդեն երկու փարի անցկացվում է նաեւ Գյումրիում:

***- Պարո՛ն դեսպան, կխնդրեի անդրադառնալ երկկողմ հարաբերություններին եւ մասնավորապես Բրիփանական դեսպանափան աշխափանքներին Հայասփանի կառավարության հեփ:***

- Ե՛ւ Հայասփանում, ե՛ւ Մեծ Բրիփանիայում մեր երկրների դեսպանափները բավականին փոքր են: Ինչպես ես այսփեղ, այնպես էլ Հայասփանի դեսպանը Մեծ Բրիփանիայում աշխափում ենք հնարավորինս իրազեկել մեր հասարակություններին միմյանց մասին: Ոլորփները, որփեղ աշխափանքներ են իրականացվում, բազմազան են: Ցավոք, պեփք է նշեմ, որ ՀՀ-ում Բրիփանիայի դեսպանափան առեւփրի հարցերով բաժինը փակվել է, ինչն ինձ համար մի քիչ հիասթափեցնող է, քանի որ իմ գործունեության հիմնական մասը արփերկրում անցկացրել եմ հենց այս ոլորփում:

***- Փակվել է վերջնականապես, թե՞ դեռ բացվելու հույս ունի***:

- Ոչինչ հավերժ չէ: Ես հույս ունեմ, որ Հայասփանի փնփեսական զարգացման փեմպերը ավելի մեծ հնարավորություններ կընձեռեն արփահանման, ներդրումների համար: Որպես օրինակ՝ կարող եմ ասել, որ

բանկային եւ ֆինանսական համակարգը մի ոլորտ է, որտեղ մենք առաջարկելու բավականին բան ունենք, եւ երեւում է, որ Հայաստանի տնտեսությունը զարգանում է այդ ուղղությամբ եւ կարող է ընդունել ու ընդգրկել հնարավոր ներդրումները:

***- Ի՞նչ աշխատանքներ են կատարվում ԶԼՄ-ների հետ:***

- ԶԼՄ-ների հետ կապված մի շարք ծրագրեր ենք իրականացրել: Դրանցից մեկը տարածաշրջանային ծրագիր էր. մի շարք լրագրողներ Հայաստանից, Վրաստանից եւ Ադրբեջանից վերապատրաստման ծրագրով եղան Լոնդոնում: Նրանք այցելեցին բավականի հայտնի ԶԼՄ-ներ, լսեցին բազմաթիվ դասախոսություններ: Կարծում եմ՝ նման ծրագրերը շատ կարեւոր են, քանի որ դրանք խթանում են միջազգային փորձի փոխանակմանը:

## ՄԱՍ IV

### *Հարցազրույց Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան ՎԱՀԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ հետ*

***- Խնդրում եմ, ներկայացրե՛ք հայ-բրիտանական հարաբերությունների ներկա մակարդակը՝ քաղաքական, տնտեսական, մշակութային:***

- Պետք է ասեմ, որ Միացյալ Թագավորության հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունները վատ վիճակում չեն: Իհարկե, այդ հարաբերությունները չի կարելի համեմատել Հայաստանի ու մի շարք այլ երկրների կապերի հետ, որոնց հետ հարաբերություններն ավելի երկարատեւ պատմություն ունեն, որտեղ հայկական Սփյուռքն առավել մեծ է, կամ որոնց հետ առավել մեծ են տնտեսական համագործակցության եւ ապրանքաշրջանառության ծավալները: Ընդհանուր առմամբ, պետք է ասեմ, որ մեր հարաբերությունները դանդաղ, բայց հաստատուն զարգանում են նաեւ Միացյալ Թագավորության հետ: Համատեղ տարբեր միջոցառումներ են իրականացվում: Վերջերս Հայաստանում կազմակերպվել էր «Wilton Park Conferance»-ը, ինչը նշանակալի իրադարձություն էր մեր երկկողմ հարաբերությունների համատեքստում: Մինչ այդ նման մակարդակի միջոցառում չէր եղել ոչ միայն Հայաստանում, այլեւ մեր ողջ տարածաշրջանում առնվազն մեր անկախացումից ի վեր: Սա ցույց է տալիս, որ ակտիվ աշխատում ենք, համագործակցում ենք Մեծ Բրիտանիայի հետ:

***- Իսկ ինստիտուցիոնալ մակարդակով ինչ-որ քայլեր ձեռնարկվո՞ւմ են հասարակությունների միջեւ հարաբերություններն ակտիվացնելու համար:***

- Գիտե՞ք՝ մեր նպատակն է որպես դեսպանատուն այնպես անել, որ կապերը հնարավորինս աշխույժ լինեն, երկխոսությունն ավելի ակտիվ լինի, ժողովրդական լեզվով ասած՝ «գնալ-գալը» շատ լինի, միմյանց մասին լավ պատկերացում ունենանք: Պետք է ասեմ, որ բավականին շատ բրիտանացիներ են այցելում Հայաստան, Հայաստանից կան ե՛ւ զբոսաշրջիկներ, որոնք գալիս են Մեծ Բրիտանիա, եւ՛ ուսանողներ, որոնց թիվը հետզհետե աճում է: Սակայն պետք է նշեմ, որ այդ քանակը դեռեւս բավարար չէ, հատկապես մեր ուսանողների, գիտնականների, հետազոտողների թիվը պետք է ավելանա: Մեծ Բրիտանիան լայն հնարավորություններով երկիր է, եւ լավ կլիներ, որ մենք օգտվեինք այն դիրքից ու դերից, որ Մեծ Բրիտանիան ունի աշխարհում եւ՛ քաղաքական, եւ՛ տնտեսական, եւ՛ ֆինանսական, եւ՛ մշակութային ասպարեզներում: Բազմաթիվ ոլորտներում Միացյալ Թագավորությունն առաջատար է աշխարհում, եւ

այստեղ մենք սովորելու շատ բան ունենք: Որքան ակտիվ լինեն այս երկրի հետ մեր հարաբերությունները, այնքան լավ՝ մեզ համար:

***- Իսկ որոշակի քայլեր ձեռնարկվո՞ւմ են այդ մշակութային, կրթական կապերն ամրապնդելու ուղղությամբ:***

- Անշուշտ, համապատասխան հաստատությունների հետ՝ քաղաքական, բրիտանական կրթական առանձին հիմնարկների, Բրիտանական խորհրդի, և՛ Հայաստանում, և՛ Բրիտանիայում փորձում ենք ծրագրեր իրականացնել՝ ներգրավելով նաեւ հայ համայնքը: Վերջինիս միջնորդությամբ մշակութային տարբեր միջոցառումներ, ցուցահանդեսներ ենք կազմակերպում, որոնք եւս կարեւոր միջոց են՝ մարդկանց տեղեկատվություն հաղորդելու եւ երկկողմ կապերը զարգացնելու համար:

***- Արդյոք շա՞տ են հայերն այս երկրում, որեւէ հաստատություն, դպրոց ունե՞ն, համախմբվա՞ծ են արդյոք:***

- Շատ դժվար է ասել, թե որ երկրում որքան հայ կա: Մարդահամար երբեք չի արվել, եւ թվերը խիստ մոտավոր են: Ըստ տարբեր աղբյուրների՝ հայերի թիվն այստեղ հասնում է 10-15 հազարի: Շատերը նոր են եկել Մեծ Բրիտանիա եւ որեւէ տեղ գրանցված չեն, շատերն էլ մեկնում են երկրից առանց այդ մասին տեղեկացնելու: Համայնքում գործում են մի շարք կազմակերպություններ. կա Բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհուրդ, որ կոչված է համախմբելու բրիտանահայ ամբողջ համայնքը: 25-30 կազմակերպություն կա, որոնց մի մասն ակտիվորեն աշխատում է, մի մասն էլ գրանցված է միայն: Չէի ասի, թե համայնքը համեմատելի է այլ երկրների հայ համայնքների հետ. համեմատաբար սակավաթիվ է, եւ բրիտանական կենսակերպի ազդեցությունը համայնքի վրա ակնհայտ է: Դեսպանատունը իր հերթին համագործակցում է բոլոր կազմակերպությունների, անհատների հետ, որոնք փորձում են ինչ-որ գործ անել:

***- Հայ համայնքի կյանքն ակտիվացնելու ուղղությամբ դեսպանատունը որոշակի միջոցառումներ կազմակերպո՞ւմ է:***

- Դեսպանությունը բաց է համայնքի համար: Այդ մասին առաջին օրվանից իսկ հայտարարել ենք: Մեզ կարող են դիմել և՛ տեղի, և՛ այցելող հայերը: Միջոցառումներ կանոնավոր կերպով իրականացվում են: Պետք է ասեմ, շատ արդյունավետ համագործակցում ենք համայնքային կառույցների հետ: Համայնքային կառույցների հետ տարվա ընթացքում տարբեր միջոցառումներ ենք կազմակերպում: Կարեւոր է այն, որ նշված միջոցառումները շարունակական բնույթ ունենան, այսինքն, եթե Համայնքային խորհրդի հետ կազմակերպում ենք ընդունելություն, ապա այդ միջոցառումը պարբերաբար իրականացվում է ամեն տարի, եթե «Հայաստան» հիմնադրամի մասնաճյուղերից որեւէ մեկի հետ ենք միջոցառում կամ համերգ կազմակերպում, դա եւս պարբերական երեւույթ է դառնում: Ըստ իս՝ կարեւորն այն է, որ որեւէ կառույցի հետ համագործակցությունը

պեւական լինի: Դա խոսում է մեր հեպեւողականության մասին. մենք մեկ օրվա համար չենք այսպեղ, մեր հայրենիքի շահերը մշպապես պետք է ներկայացված լինեն եւ մշպապես պաշպպանվեն:

***- Մեծ Բրիտանիան ԵՄ-ում ունի՞ ուրույն դեր եւ նշանակություն:***

- Միացյալ Թագավորությունը Եվրոպական միության ամենաակտիվ եւ առաջապար անդամներից մեկն է: Համարվում է կառույցի «ծանրաքաշներից», ինչը չի նշանակում, որ բրիտանական հասարակության մեջ ընկալումները նույնն են. մարդիկ կան, որ դեմ են ընդհանրապես ԵՄ-ին, մյուսները դեմ են ինտեգրման այս աստիճանին, մի մասն առավել մեծ ինտեգրման է ձգտում, մյուսները՝ հակառակը, սրանք անընդհատ ընթացող քննարկումներ են: Օրինակ, երբ քննարկվում էր ԵՄ սահմանադրության հարցը, պարզ չէր՝ Մեծ Բրիտանիայում քվեարկության դրվելու դեպքում այն կընդունվի, թե ոչ: Շատերը կարծում են, որ եթե սահմանադրության նախագիծը չտապալվեր Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում ու հասներ Միացյալ Թագավորություն, շատ հավանական է, որ այստեղ մերժվեր: Մյուս կողմից, կառավարությունն անընդհատ նշում է, որ իրենք պետք է պահպանեն իրենց առաջապար դերը ԵՄ-ում, պետք է շարունակեն ինտեգրումը, որովհետեւ եվրոպական համագործակցությունը միայն նպաստ է բերում իրենց, համենայն դեպս, դա է այսօրվա կառավարության ուղեգիծը: Միաժամանակ չպետք է մոռանանք, որ Բրիտանիան չի մտնում եվրոյի գոտի. նրանք ունեն իրենց նկատառումները, պայմաններ են դրել, որոնց ընդունման դեպքում միայն իրենք կմտածեն այդ հարցի շուրջ: Միաժամանակ Բրիտանիայի տնտեսությունը շատ լավ վիճակում է, իրենց ֆունտ ստեռլինգն էլ բավականին ուժեղ դրամական միջոց է:

***- Միացյալ Թագավորությունը մեծ, բազմաշերտ երկիր է, առանձին աշխատանքներ տարվո՞ւմ են Ուելսի, Շոտլանդիայի հետ:***

- Միացյալ Թագավորությունն իսկապես շատ մեծ է հատկապես տնտեսության ծավալներով, թեեւ աշխարհագրորեն մեծ տարածք չի զբաղեցնում: Մենք պետք է հասկանանք, որ այսպես կոչված «քաշային կատեգորիաների» տարբերություն կա մեր միջեւ: Եվ սրանով է պայմանավորված մեր հարաբերությունների այժմյան մակարդակը: Թեեւ մենք փորձում ենք հարաբերություններ զարգացնել, ընդհանուր եզրեր գտնել նաեւ Լոնդոնի հետ, միաժամանակ գիտակցում ենք, որ ավելի իրատեսական է տարածաշրջանների հետ համագործակցությունը, ու դեսպանատունը համապատասխան աշխատանքներ է տանում Քարդիֆում, Էդինբուրգում, Հյուսիսային Իռլանդիայում:

***- Որպես երկկողմ հարաբերությունների հեռանկար՝ ի՞նչ կնշեք:***

- Ես հավատացած եմ, որ հարաբերությունների հիմքում ընկած է լինելու տնտեսական գործոնը: Մենք պետք է աշխատենք հնարավորինս շատ՝ փորձելով և՛ բրիտանական շահը Հայաստան բերել, և՛ հայաստանյան գործարարներին Բրիտանիա տանել: Դժվար է, բայց, իմ կարծիքով, սա մեր հարաբերությունների հետագա զարգացման ամենավստահելի ձեւն է, այսինքն՝ ամենաիրատեսականն է: Միաժամանակ չպետք է մոռանանք, որ կրթական եւ գիտական ոլորտները, տուրիզմը, մշակույթը շատ մեծ ներուժ ունեն: Այսօր մեր խնդիրը պետք է լինի հնարավորինս շատ ուսանողներ բերել այստեղ՝ պայմանով, որ նրանք պետք է վերադառնան եւ աշխատեն Հայաստանում: Սա կարեւոր է ոչ միայն գիտական առաջընթացի պտուղներից օգտվելու, այլեւ կապեր հաստատելու իմաստով, որովհետեւ ուսանողները, սովորելով բրիտանական բուհերում, ուր աշխարհի բոլոր երկրներից երիտասարդներ են սովորում, իրենց հետ տանելու են այդ կապերն ու գիտելիքները:

# ՄԱՍ V

## *Հարցազրույց Լոնդոնի հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրէն ՌՈՒԶԱՆ ԹԱԹՈՒԼՅԱՆԻ հետ*

***- Պատմեցէ՛ք, խնդրեմ, Լոնդոնի հայկական կիրակնօրյա դպրոցի մասին:***

- «Գեւորգ Թահթայան կիրակնօրյա վարժարանը» հիմնադրվել է 1978թ.-ին բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհրդի աջակցությամբ: Դպրոց հաճախում են անգամ մեկ տարեկան երեխաներ, նրանց համար ունենք մոր եւ մանկան դասարան: 3-5 տարեկան մանուկները հաճախում են մանկապարտեզ, մինչեւ 7 տարեկանները սովորում են առաջին եւ երկրորդ նախակրթարաններում, 7 տարեկանից սկսած՝ հաճախում են հիմնական դպրոց, որտեղ ունենք 1-9-րդ դասարաններ: Կրթությունն ավարտելուց հետո անցկացնում ենք քննություններ եւ համապատասխան վկայական տալիս:

Կրթությունն իրականացվում է արեւմտահայերենով եւ արեւելահայերենով: Դպրոցական ծրագրում ընդգրկված են հայոց լեզու, գրականություն, քերականություն, հայոց պատմություն առարկաները, ընթացքում էլ փորձում ենք ներկայացումներ բեմադրել: Տարեկան մի քանի միջոցառում ենք կազմակերպում՝ փորձելով մեր աշակերտներին ներկայացնել հայ մշակույթը: Օրինակ՝ Մշակույթի օրվան նվիրված միջոցառմանը ներկայացնում ենք հայ անվանի մշակութային գործիչների կյանքը, գործունեությունը, նաեւ նշում ենք տոները՝ Վարդանանց տոնը, Մայրերի օրը: Տարեվերջյան ավանդական հանդեսներ ունենք:

Մինչեւ 5-րդ դասարան երեխաները հաճախում են երգեցողության դասերի, սովորում հայկական երգ եւ երաժշտություն:

Այժմ մի նախաձեռնություն ունենք՝ նվիրված Հովհաննես Այվազովսկուն եւ Գեւորգ Բաշինջաղյանին: Այս տարի լրանում է այս երկու տաղանդավոր նկարիչների՝ Հովհաննես Այվազովսկու 190-ամյակը եւ Բաշինջաղյանի 150-ամյակը: Ձեռնարկի նպատակը մեր աշակերտներին այս նկարիչների արվեստին ծանոթացնելն է: Նկարչության ուսուցչուհին աշակերտներին ցուցադրել է նրանց նկարները, եւ աշակերտներից շատերը նկարելու ցանկություն են հայտնել: Շուտով կունենանք ցուցահանդես, որտեղ կներկայացվեն թ՛ե այս տաղանդավոր նկարիչների գործերը, թ՛ե մեր աշակերտների նկարները: Միջոցառման գեղարվեստական մասում կներկայացվի նկարիչների կյանքն ու գործունեությունը:

***- Քանի՞ աշակերտ ունեք այժմ:***

- Այժմ դպրոց է հաճախում 200 աշակերտ:

***- Աշակերտները հիմնականում Հայաստանի՞ց տեղափոխվածներ են, թե՞ այստեղ բնակվող հայեր:***

- Երկու դեպքն էլ հանդիպում է: Եթե կարդաք աշակերտների կենսագրությունները, կտեսնենք, որ ամբողջ Սփյուռքի պատմությունն է այնտեղ: Աշակերտներ ունենք Լիբանանից, Կիպրոսից, Իրանից, բոլոր այն երկրներից, որտեղ հայկական համայնք կա, ծնողներն ինչ-ինչ պատճառներով տեղափոխվել են Լոնդոն, եւ երեխաներն էլ բնականաբար ապրում են այստեղ եւ հաճախում մեր դպրոցը:

***- Շրջանավարտները կապ պահպանո՞ւմ են դպրոցի հետ:***

- Մեծ մասամբ պահպանում են, շրջանավարտներին հաճախ աշխատում ենք ներգրավել դպրոցի կյանքի մեջ: Նրանք էլ իսկապես ձգտում են պահպանել դպրոցի հետ կապը:

***- Կիրակնօրյա վարժարանը հայկական միա՞կ դպրոցն է այստեղ:***

- Ո՛չ, Լոնդոնում կա նաեւ հայկական շաբաթօրյա դպրոց:

***- Իսկ հայկական համայնքի կամ եկեղեցու հետ միասին միջոցառումներ կազմակերպո՞ւմ եք:***

- Մենք Բրիտանահայ համայնքային եւ եկեղեցական խորհրդի դպրոցն ենք: Եթե Խորհուրդը միջոցառում է կազմակերպում եւ ուզում է, որ դպրոցը մասնակցի, անպայման մասնակցում ենք: Դեսպանատան միջոցով կապ ենք պահպանում նաեւ Հայաստանի հետ: Անցյալ տարի օգոստոսին տեղի ունեցավ համահայկական կրթական կառույցների համաժողով, որին մասնակցում էին Սփյուռքի 150 կրթօջախների մասնագետներ, այդ թվում՝ ես: Մեծ համաժողով էր, որտեղ քննարկվեցին Սփյուռքի դպրոցների ապագային, դասավանդման մեթոդներին, դասագրքերին վերաբերող հարցեր: Ի դեպ, արեւմտահայ բաժնի համար դասագրքերն այժմ ստանում ենք Բեյրութից, արեւելահայ բաժնում օգտագործում ենք և՛ Հայաստանում լույս տեսած գրքերը, և՛ Իրանում դասական ուղղագրությամբ տպագրվածները:

***- Դասարաններից մեկում հանդիպեցինք նաեւ անգլիացիների: Կարելի՞ է ասել, որ դպրոցը նաեւ յուրատեսակ լեզվի կենտրոն է:***

- Այո՛, այստեղ մենք ունենք նաեւ չափահասների դասարան: Կան հայեր, որոնք, սակայն, հայերեն չեն սովորել, ունենք սաներ, ովքեր ամուսնացել են հայ երիտասարդների հետ եւ ցանկանում են հայերեն սովորել: Նախկինում եղել են նաեւ անգլիացի ուսանողներ, որոնք որեւէ կապ չեն ունեցել հայ ընտանիքների հետ:

***- Իսկ ովքե՞ր են դասավանդում վարժարանում:***

- Այստեղ դասավանդում են նաեւ անգլիական դպրոցներում աշխատող ուսուցիչներ: Հայաստանից այստեղ տեղափոխված մանկավարժներ եւս ունենք:

## ՄԱՍ VI

### *Հարցազրույց դերասանուհի, Լոնդոնի հայկական կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի ԺԵՆՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ հետ*

***- Հաճելի անակնկալ էր Ձեզ տեսնել կիրակնօրյա այս վարժարանում: Ի՞նչն է Ձեզ այստեղ բերել:***

- Երեխաների գեղարվեստի ուսուցչուհին եմ: Արդեն 11 տարի աշխատում եմ այս դպրոցում, հիմնականում բեմադրություններ եմ կազմակերպում, պատմում եմ հայ գրողների, հայ գրականության, մեր ազգի պատմության, անցյալի մասին, նույնիսկ արվեստի մարդկանց եմ ներկայացնում: Երեխաներին անհրաժեշտ են այդ գիտելիքները. նրանք մի քիչ հեռու են հայրենիքից, քանի որ այստեղ են ծնվել, անգլախոս են, իսկ հայոց լեզուն շատ կարեւոր է նրանց համար: Չի կարելի երեխաներին անհրաժեշտ այդ ոլորտն անտեսել, մենք եւս պետք է շահագրգռված լինենք:

Բազմաթիվ ներկայացումներ եմ բեմադրել այս դպրոցում՝ Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» վեպը, Հովհաննես Թումանյանի գրեթե բոլոր հեքիաթները, «Անուշ» պոեմը՝ երաժշտական լուծումներով, Ռուբեն Մարուխյանի «Իսկական ընկերը», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» գործից հատվածներ, Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանցը», Գեւորգ Էմինի «Հավերժի ճամփորդը»: Երբ Անահիտ Ղազարյանը՝ վարժարանի նախկին տնօրենը, ինձ հրավիրեց կիրակնօրյա վարժարան, շատ երջանիկ էի: Պարտավորվեցի երեխաներին հայ ոգով դաստիարակել, որ նրանք իմանան՝ ով է հայը, ինչ է հայրենը, որն է իրենց անցյալը:

Իհարկե, տարբեր բեմադրություններ եւս ներկայացրել եմ հայ գաղթօջախներում, ինքս համերգներով եմ հանդես եկել: Հիմա աշխատում եմ Ռուբեն Մարուխյանի «Չի Կարելի-ի արկածները» հեքիաթ-պիեսի վրա: Ներգրավված են տարբեր տարիքի 15-ից ավելի շնորհալի երեխաներ: Կան նաեւ այնպիսիները, ովքեր չեն սիրում թատրոնը, կան սիրողներ, ովքեր սակայն չեն կարողանում լավ խաղալ:

***- Նկատե՞լ եք արդյոք՝ ներկայացումներից հետո երեխաների հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ աճո՞ւմ կամ այնտեղ գնալու ձգտում արթնանո՞ւմ է:***

- Այո՛, հետաքրքրությունը շատ մեծ է, բազմաթիվ երեխաներ այս ներկայացմանը մասնակցելու ցանկություն են հայտնել:

***- Բացի Հայկական վարժարանում ելույթներից՝ խմբակի երեխաները բեմադրություններ ներկայացրե՞լ են այլ վայրերում:***

- Երեխաները ելույթ են ունեցել եկեղեցում, ներկայացել են երեք բեմադրությամբ՝ «Մկների ժողովը», «Շունն ու կատուն», «Մի կաթիլ մեղրը»:

***- Բացի կիրակնօրյա վարժարանում աշխատանքից՝ ի՞նչ գործունեություն եք ծավալում այստեղ, կապ ունե՞ք արդյոք Հայաստանի հետ, լինո՞ւմ եք հայրենիքում:***

- Այժմ ուրիշ ոչ մի գործ չեմ անում, միայն դպրոցում եմ աշխատում. այն ինձ շատ է ձգում: Բայց անհատական համերգներ եմ ունեցել, երգիծական երեկոներ, խաղացել եմ Անգլիական թատրոնում՝ ճանաչվելով լավագույն դերակատարը: Բայց դա, իհարկե, անցած փուլ է:

Հիմա Հայաստանի հետ իմ կապը բավականին սերտ է, հաճախ եմ լինում հայրենիքում, առնվազն 6-7 ամիս մնում եմ: Հիմա եմ զգում, որ առանց խաղալու չեմ կարող ինձ լիարժեք զգալ: Ուզում եմ նորից հայաստանյան բեմ բարձրանալ ու ներկայանալ հայ հանդիսատեսին: Նախորդ տարի հաջողեցի նման բան անել: Անցյալ ամռանը, երբ մոտ 7 ամիս Հայաստանում էի, Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում խաղացի Թեննեսի Ուիլյամսի պիեսներից մեկում:

Բեմ բարձրանալն իմ պարտքն եմ համարում, հատկապես, երբ Հայաստանում մոտենում եւ հարցնում են. «Տիկի՛ն Ժենյա, ե՞րբ եք խաղալու, ե՞րբ ենք Ձեզ տեսնելու»:

# ԳԼՈՒԽ VIII

## ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ



# ՄԱՍ I
# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

***«Զարգացող երկրների մեծ մասն անասելի պառապանքներ է կրում չքավորության եւ հիվանդությունների պատճառով, ինչն անհապաղ անվտանգության միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն է ստեղծում: Գրեթե 3 միլիարդ մարդ՝ աշխարհի բնակչության կեսը, գոյատեւում է օրական 2 եվրոյից պակաս գումարով: Յուրաքանչյուր տարի 45 միլիոն մարդ է մահանում քաղցից եւ թերսնումից: ...Հաճախ տնտեսության ակնումը պայմանավորված է քաղաքական խնդիրներով եւ զինված հակամարտություններով»:***

***Բրյուսել, 12.12.2003***

Վիճակագրական այս տվյալները մեջբերված են «Եվրոպական անվտանգության ռազմավարության» ծրագրում: Անկայունությունը՝ ծնված չքավորությունից, սպառնում է Եվրոպային: Թեեւ այժմ ԵՄ անդամ երկրների նկատմամբ լայնածավալ ագրեսիայի առկայությունն այնքան էլ հավանական չէ, փոխարենը Եվրոպան այսօր ստիպված է դիմակայել այլ որակի եւ սակավ կանխատեսելի վտանգների, այդ թվում՝ ահաբեկչությանը, զանգվածային բնաջնջման զենքի տարածմանը, նաեւ տարածաշրջանային հակամարտությունների հետեւանքներին: Տարածաշրջանային սառեցված խնդիրները, ինչպիսիք են Քաշմիրը, Կորեական թերակղզին կամ Եվրոպային առավել մոտ գտնվող երկրների միջեւ հակամարտությունները (Մերձավոր Արեւելք) ուղղակի կամ անուղղակի կերպով սպառնում են Եվրոպայի շահերին: Առկա կամ սառեցված հակամարտությունները, որոնք մոտ են երկրամասի սահմաններին, վտանգում են տարածաշրջանի կայունությունը, կործանում են կյանքեր, քայքայում հասարակական ենթակառուցվածքներ: Դրանք սպառնալիք են ազգային փոքրամասնություններին, մարդու հիմնարար ազատությունների եւ իրավունքների պաշտպանությանը: Հակամարտությունը ծնում է ծայրահեղականություն, ահաբեկչություն, հանգեցնում պետության փլուզման՝ լայն հնարավորություններ ստեղծելով կազմակերպված հանցավորության աճի համար: Մինչդեռ մոտ 495 միլիոն բնակչությամբ Եվրամիությունը, որի անդամ 27 երկրները արտադրում են ողջ աշխարհի Համախառն ազգային արդյունքի 1/4-ը, անշուշտ համաշխարհային ազդեցություն ունեցող կառույց է եւ պետք է պատրաստ լինի կիսելու համաշխարհային

անվտանգության առավել բարեկեցիկ աշխարհ կառուցելու պատասխանատվությունը:

«Գլոբալացման դարաշրջանում հեռավոր թվացող սպառնալիքները նույնքան մտահոգիչ են, որքան եւ մեզ անմիջականորեն վերաբերողները: Պաշտպանության առաջին գիծը հաճախ կարող է լինել արտերկրում: Նոր սպառնալիքները շարժուն են... Հակամարտության կամ աղաբեկչության կանխման միջոցառումները երբեք չի կարելի վաղաժամկետ համարել:

Այնուամենայնիվ, նույնիսկ գլոբալացման պայմաններում աշխարհագրությունը կարեւոր դեր ունի: Մեր սահմանների մոտ գտնվող երկրների արդյունավետ կառավարումը բխում է մեր շահերից:

Մեր անվտանգության լավագույն պաշտպանությունը արդյունավետ կառավարվող ժողովրդավարական պետությունների առկայությունն է: Միջազգային կարգն ուժեղացնելու միջոցներն են կառավարման արդյունավետ ձեւի տարածումը, հասարակական եւ քաղաքական բարեփոխումներին աջակցելը, օրենքի իշխանության հաստատումը եւ մարդու իրավունքների պաշտպանությունը»,- եզրակացնում են Եվրոպական անվտանգության ռազմավարության հեղինակները: Այս կերպ Միության անվտանգության ապահովման անհրաժեշտությունն էլ ծնել է Եվրոպայի նոր հարեւանության քաղաքականությունը: Վերջինի նպատակը ԵՄ անվտանգությունը, ուստի նաեւ բարօրությունը ժողովրդավարության տարածմանը եւ հարեւանների զարգացմանը նպաստելու միջոցով ապահովելն է:

Որպես 2005թ. ընդունված այդ փաստաթղթի իրականացման միջոց՝ ԵՄ Հանձնաժողովն գործընկեր պետություններին առաջարկել էր մշակել որոշակի առաջնայնություններ, որոնց իրագործումն այդ պետություններին պետք է առավել մերձեցներ Եվրոպական Միությանը: Առաջնայնությունները պետք է արտացոլվեին փոխադարձաբար համաձայնեցված գործողությունների ծրագրերում, որոնք որոշակի միջոցառումներ պետք է կանխատեսեին մի շարք կարեւոր ոլորտներում, ինչպիսիք են քաղաքական երկխոսությունը եւ բարեփոխումները, առեւտուրը եւ ԵՄ-ի ներքին շուկաներում աստիճանաբար մասնակցություն ձեռք բերելու հնարավորության ուղղությամբ քայլերը, արդարադատությունը եւ ներքին գործերը, էներգետիկան, տրանսպորտը, կապը, շրջակա միջավայրի պահպանությունը, սոցիալական քաղաքականությունը եւ շփումները մարդկանց միջեւ:

ԵՄ բոլոր հարեւանների հետ գործողությունների ծրագրերի հիմքում որոշակի հիմնական սկզբունքներ են: Միաժամանակ առանձին փաստաթղթերն արտացոլում են յուրաքանչյուրի հետ ԵՄ հարաբերությունների մակարդակը, տվյալ պետության կարիքներն ու կարողությունները եւ այդ պետության հետ ԵՄ-ի ընդհանուր շահերը:

Ծրագրում համաձայնեցված առաջնայնությունների իրագործումը ենթակա է մոնիթորինգի, որն իրականացնում են Գործընկերության եւ Համագործակցության համաձայնագրերով նախատեսված մարմինները: Միաժամանակ Եվրահանձնաժողովը Հայաստանի տրամադրած տեղեկատվության հիման վրա պարբերաբար զեկույցներ է ներկայացնում երկրի ձեռքբերումների մասին:

Ինչ վերաբերում է Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակում հարավկովկասյան տարածաշրջանի հետ Բրյուսելի համագործակցությանը, ապա, ինչպես նշված է փաստաթղթում, «ԵՄ-ն ձգտում է, որ վերահաստատվեն եւ անխափան լինեն նվիրվածությունը ժողովրդավարությանը, օրենքի գերիշխանությանը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին, շուկայական տնտեսության կայացման առաջընթացին: Նշված ընդհանուր արժեքներն ընկած են նաեւ Եվրոպայի Խորհրդին եւ ԵԱՀԿ-ին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի անդամակցության հիմքում: Անհրաժեշտ է ավելացնել տարածաշրջանում հակամարտությունների կարգավորմանը եւ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանն ուղղված ջանքերը»:

Այս հարցերի կարգավորման եւ առաջնայնությունների իրագործման շուրջ Հայաստանը 2006 թ. նոյեմբերին ԵՄ-ի հետ հնգամյա ժամկետով Գործողությունների ծրագիր է կնքել: Փաստաթղթով Հայաստանին առաջարկվում է քաղաքական, անվտանգության, տնտեսական եւ մշակութային ինտենսիվ հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ, ամրապնդել տարածաշրջանային եւ անդրսահմանային համագործակցությունը, ինչպես նաեւ հակամարտությունների կանխարգելման ու կարգավորման պատասխանատվություն ստանձնել:

Այս հարաբերությունների հավակնությունների մակարդակը պայմանավորված պետք է լինի ընդհանուր արժեքներին Հայաստանի նվիրվածության աստիճանով, ինչպես նաեւ փոխադարձաբար համաձայնեցված ու միջազգային եւ եվրոպական նորմերին ու սկզբունքներին համահունչ առաջնայնությունների իրականացման՝ մեր երկրի կարողությամբ: Հարաբերությունների առաջընթացը պետք է համապատասխանի Հայաստանի ներդրած ջանքերին ու նշված հանձնառությունների կատարման ուղղությամբ ձեռքբերումներին:

Իսկ փաստաթղթով Հայաստանը պարտավորվում է ամրապնդել ժողովրդավարական կառույցները, օրենքի գերիշխանությունը, դատաիրավական համակարգի բարեփոխումներ իրականացնել, պայքարել խաբեությունների, կոռուպցիայի դեմ: Բարեփոխումներին ուղղված գործողությունները ենթադրում են իշխանության թեւերի տարանջատում,

դատաիրավական համակարգի անկախացում, տեղական ինքնակառավարման ակտիվացում, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի զարգացում:

Փաստաթղթում նշված առաջնային հաջորդ ոլորտը Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համաձայն մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունները հարգելն է: Այդ ուղղությամբ Հայաստանը պարտավորվում է ապահովել մամուլի անկախությունը, հավաքներ կազմակերպելու ազատությունը, անձնական սեփականության իրավունքի պաշտպանությունը, պարտավորվում է նաեւ բանտային համակարգի հետագա բարեփոխումներ իրականացնել, համագործակցել ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի հետ՝ Ոստիկանության բարեփոխման գործում:

Տնտեսական ոլորտում Հայաստանը պարտավորվել է խթանել հետագա զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման ու սոցիալական ներդաշնակեցման հարցերում՝ ներդրում կատարելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը: Փաստաթղթում ընդգծված են նաեւ ներդրումային ոլորտի բարելավումը եւ մասնավոր հատվածի աճի ամրապնդումը, էներգետիկ ռազմավարության մշակումը՝ ներառյալ Մեծամորի ատոմակայանի հնարավորինս արագ փակումը:

Առաջնայնությունների յոթերորդ եւ ութերորդ ոլորտներում Հայաստանը պարտավորվում է նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը եւ ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում, մասնավորապես փորձել կարգավորել տարածաշրջանային եւ այլ խնդիրները՝ հարեւան երկրների հետ համագործակցության միջոցով խթանել հաշտեցման գործին:

Այս տարվա սեպտեմբերի 4-ից ուժի մեջ է մտել ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թ. իրականացվելիք առաջնայնությունների եւ միջոցառումների մասին ՀՀ կառավարության որոշումը, որտեղ նշված են համապատասխան ոլորտի բարեփոխումների համար անհրաժեշտ միջոցառումների անվանումները, նպատակները եւ դրանց իրականացման համար պատասխանատու մարմինները:

# ՄԱՍ II

## *Հարցազրույց Պահպանողական կուսակցությունից Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ ԺՈՒՄԹԻՆ ԳՐԻՆԻՆԳԻ հետ*

***- Հայաստանը Եվրամիության Նոր հարեւանության քաղաքականության ծրագրի անդամ է: Հնարավո՞ր եք համարում ծրագրի մասնակիցների հետ փոխհարաբերությունների առավել սերտացումը:***

- Մենք մի նոր խմբավորում ենք ձեւավորել Եվրախորհրդարանում: Այստեղ, մեզանից՝ Բրիտանիայի պահպանողականներից բացի, ընդգրկված են Չեխիայի հանրապետականները: Հուսով ենք՝ շուտով մեզ կմիանան նաեւ նրանք, ովքեր ցանկանում են Եվրոպան տեսնել առավել ազատ, ճկուն, որտեղ պետությունները, պահպանելով ինքնիշխանությունը, միաժամանակ մեկ ընտանիք կկազմեն: Կարծում ենք՝ սա է ԵՄ-ի ապագան: Հույս ունենք, որ Եվրախորհրդարանի նոր ընտրություններից հետո նոր խորհրդարանականներ կմիանան մեզ: Կարծում եմ՝ կարիք չկա ամեն ինչում արժեւորել մեծամասնության կարծիքը. փոքր երկրների ձայնը եւս պետք է լսելի լինի:

***- Երիտասարդների մասնակցությունը քաղաքական գործընթացներին ժողովրդավարության յուրօրինակ չափանիշ է: Ի՞նչ քայլեր եք ձեռնարկում քաղաքականության մշակմանը երիտասարդներին մասնակից դարձնելու ուղղությամբ:***

- Շատ երկրների նման, մենք էլ ընտրություններին երիտասարդների մասնակցության խնդիր ունենք: Տարեցտարի նրանց մասնակցությունը քվեարկություններին նվազում է: Քաղաքական գործիչները հաճախ խոսում են կենսաթոշակների, ընտանեկան նպաստների մասին, սակայն դեռահասների կամ դեռեւս ընտանիք չունեցող երիտասարդների կարիքների մասին հազվադեպ է խոսվում: Կարծում եմ՝ սա էլ նրանց պասիվության պատճառներից մեկն է: Եթե մենք երիտասարդներին հետաքրքրող հարցեր բարձրացնենք, նրանք կգիտակցեն ընտրություն կատարելու կարեւորությունը: Խորհրդարանական վերջին ընտրությունների ժամանակ մինչեւ 35 տարեկան երիտասարդների միայն 40 %-ն է քվեարկել: Նրանք թերահավատորեն են վերաբերվում քաղաքական գործիչներին եւ ցանկանում են, որ իրենց հետ առավել անկեղծ լինեն, ձգտում են հասկանալ՝ ինչ է կատարվում:

***- Գործո՞ւմ է որեւէ ձեւաչափ, որի շրջանակում դուք կամ ձեր մրցակիցները կարող եք հասարակական քննարկման հրավիրել երիտասարդներին:***

- Մենք երիտասարդական խորհրդարան ունենք, որը ձեւավորվում է նույն սկզբունքով, ինչպես եւ Միացյալ Թագավորության օրենսդիր մարմինը: Խորհրդարանին զուգահեռ՝ գործում է նաեւ երիտասարդական խորհուրդ: Ե՛ւ պահպանողականները, ե՛ւ լեյբորիստները, ե՛ւ լիբերալ-դեմոկրատները երիտասարդների հետ երկխոսության հնարավորություն ունեն: Սա երիտասարդներին իրական քաղաքական գործունեության նախապատրաստելու բավականին արդյունավետ ձեւ է: Նրանք շատ զգայուն են քաղաքական կլիմայի փոփոխությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, երբ մարդիկ համախմբված ինչ-որ հարց են բարձրացնում, նրանց ձայնը լսելի է: Դիմելով երիտասարդ ընտրողներին՝ պետք է կոչ անեմ օգտագործել իրենց ձայնը, որովհետեւ, եթե ոչինչ չես պահանջում, փոփոխությունն անհնար է:

***- Նկարագրե՛ք Ձեր անցած քաղաքական ուղին որպես կին քաղաքական գործիչ:***

- Ընդունված կարծիք կա, թե քաղաքական գործիչը՝ հատկապես խորհրդարանականը, պետք է հասակն առած տղամարդ լինի, բայց իրական պատկերն այլ է: Շատ երիտասարդ պատգամավորներ կան, սակայն, ցավոք, կանանց թիվը խորհրդարանում փոքր է: Ինչ վերաբերում է ինձ, երբեք չեմ մտածել պատգամավոր դառնալու մասին: Ինքս տեսնում էի շատ խորհրդարանականների, ովքեր չէին փորձում ինչ-որ բան փոխել իմ կամ ինձ ծանոթ շատերի կյանքում: Կարծում եմ՝ ճիշտ է փախուստի չդիմել ու լուծել խնդիրները: Բրիտանական համակարգը քաղաքական գործունեության հնարավորություն է տալիս նաեւ կանանց: Որպես կին քաղաքական գործիչ՝ ես խոչընդոտների չեմ հանդիպել: Ընտրություն կատարելիս կանայք առավել պրագմատիկ են: Նրանք մտածում են՝ եթե զբաղվում ես որեւէ գործով, այլեւս ոչինչ չպետք է անել: Գուցե այդ պատճառով էլ կին քաղաքական գործիչների թիվն ավելի փոքր է: Ինչ վերաբերում է ինձ, ես գնում եմ տուն, շփվում ընտանիքիս անդամների, ընկերներիս հետ, ինչպես յուրաքանչյուր մարդ: Իմ կարգախոսն է՝ «Եթե պատրաստ ես գործել, ոչինչ չի կարող խոչընդոտել քեզ»:

## ՄԱՍ III

### *Հարցազրույց Սասեքսի համալսարանի Եվրոպական ինստիտուտի համատնօրեն, Եվրոպական ընտրական ինտեգրման պրոֆեսոր ՋԻՄ ՌՈԼԼՈՅԻ հետ*

***- Ի՞նչ եք կարծում, Եվրամիությանը նոր անդամակցած երկրների ընտրական ոլորտի ինտեգրումը կառուցման ավարտվա՞ծ է:***

- Դեռ վաղ է խոսել այդ մասին: Արդեն երեք տարի է, ինչ Միությունը ճգնաժամ է ապրում Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում սահմանադրական հանրաքվեների տապալումից հետո: Շատերը հանիրավի այդ ճգնաժամի պատճառ են համարում ԵՄ ընդլայնումը, սակայն իրականում, ըստ իս, դա պայմանավորված է նշված երկրների ներքին հանգամանքներով: Օրինակ՝ Մեծ Բրիտանիան 600-700 հազար աշխատող է ընդունել Կենտրոնական Եվրոպայից, ինչը գործազրկության վտանգ է ներկայացնում: Չնայած մեր կառավարությունը խուճապի չի մատնվել, բայցեւայնպես այդ քաղաքականությունն առաջիկա ամիսների ընթացքում պետք է վերանայվի: Որպես անհատ՝ կարծում եմ, որ մի քանի տարվա ընթացքում կհաջողվի հաղթահարել ընդլայնման հետեւանքով առաջացած նման փոքրիկ խնդիրները, որոնցից Եվրամիությունը չէր կարող խուսափել: Այժմ մի շարք երկրներ սպասողական վիճակում են՝ Խորվաթիան, Թուրքիան, ինչպես եւ արեւմտաբալկանյան երկրները: Շուտով անդամակցության թեկնածու կարող է դառնալ Սերբիան: Բացի այդ՝ շատերը ցանկանում են, որ իրենց երկրներն անդամակցեն Միությանը, եւ նրանք թույլ չեն տա, որ ԵՄ-ն մոռանա իրենց:

***- Ինչ վերաբերում է Թուրքիայի անդամակցությանը, ի՞նչ եք կարծում, այդ երկրի տնտեսությունն այժմ պատրա՞ստ է Եվրամիության տնտեսության մաս կազմել:***

- Անդամակցություն այժմ տեղի չի ունենա, ուստի եւ անհանգստության առիթ չկա, լավատեսների կարծիքով՝ այդ գործընթացը շուրջ տասը տարի կպահանջի: Թուրքիան զարգանում է շատ արագ, արագ տեմպերով վերածվում է ազատական եւ ժողովրդավարական երկրի: Տասը տարի հետո, կարծում եմ, Թուրքիան այսքան շատ պրոբլեմներ չի ունենա: Այլ հարց են Միության համար առաջացող խնդիրները: Թուրքիան մեծ երկիր է, սակայն մենք գլոբալացման գործընթացքում ենք, եւ պետք է հաշվի առնել, որ աշխարհի մյուս մասը (առանց Թուրքիայի) առավել մեծ է, ու դրա հետ եւս պետք է հաշվի նստել: Ինչ վերաբերում է Միությանը, այն պետք է փորձի ճիշտ կազմակերպել իր տնտեսությունը: Այն խնդիրները, որոնց համար մարդիկ հիմնականում մեղադրում են թուրքե-

րին, իրականում ներքին են: Կարծում եմ՝ Թուրքիան ԵՄ անդամ կդառնա 10-15 տարի անց, մինչ այդ հնարավոր է, որ Հայաստանն արդեն անդամակցության թեկնածու լինի:

***- Տնտեսական առումով ի՞նչ նշանակություն ունի ԵՄ համար Եվրոպական հարեւանության քաղաքականությունը:***

- Պետք է անկեղծ լինեմ. ԵՄ-ն առավել կարեւոր է Եվրոպական հարեւանության քաղաքականության ծրագրի անդամ երկրների համար, քան այդ երկրները՝ ԵՄ-ի, քանի որ ԵՄ-ն մեծ է, իսկ այդ երկրները՝ փոքր: Քաղաքական առումով այդ պետությունները իհարկե կարեւոր են: Եվրոպան ձգտում է կայուն հարեւաններ ունենալ: Հարեւանության քաղաքականության նպատակը տնտեսական եւ քաղաքական համագործակցության միջոցով տարածաշրջանում կայունություն կառուցելը, հաստատելն ու պահպանելն է: Դա խելամիտ քաղաքականություն է: Նպատակը այս դեպքում առավելապես քաղաքական է, ոչ թե տնտեսական: Սակայն բացառություն կա. ԵՄ-ի համար կարեւոր է էներգետիկ անվտանգությունը: Կարծում եմ՝ Հարեւանության քաղաքականության կարեւորությունը ԵՄ-ի համար գնալով աճում է:

***- Ծրագրում ներգրավված երկրները երբեւէ կարո՞ղ են ԵՄ անդամ դառնալ:***

- Հարեւանության ծրագիրը բարդ է այն առումով, որ որոշ երկրներ Եվրոպայի տարածքում են, մյուսները՝ ոչ: Այս տեսակետից դժվար է, օրինակ, Մերձավոր Արեւելքի երկրներին դիտարկել որպես անդամակցության հնարավոր թեկնածու: Հեռավոր ապագայում՝ գուցե, բայց ասել, թե նրանք աշխատում են անդամակցության ուղղությամբ, ճիշտ չի լինի: Այդ մասին կարելի խոսել Ուկրաինայի, Մոլդովայի, Կովկասի պետությունների դեպքում: Սակայն այսօր տարբերություն չկա այդ եւ հարավային հարեւանների միջեւ, քանի որ անդամակցությունը բավականին երկարատեւ գործընթաց է:

***- Ի՞նչ կասեք Հայաստանի տարածաշրջանային եւ լոկալ զարգացման մասին:***

- Պետք է շատ զգույշ լինեմ, քանի որ Հայաստանի հարցով փորձագետ չեմ: Հայաստանն անցումային փուլում գտնվող երկիր է, որ էներգետիկ եւ այլ ոլորտների զարգացման առումով շատ կարեւոր վայր է: Կարծում եմ՝ Եվրոպական հարեւանության քաղաքականությունը Հայաստանին հնարավորություն է տալիս Եվրամիությանն առավել մոտենալու, Միության արտոնյալ գործընկեր դառնալու առումով: Հույս ունեմ, որ երկարաժամկետ հեռանկարում ջանքեր կգործադրվեն՝ անդամակցության թեկնածու դառնալու համար: Կարծում եմ՝ արտաքին քաղաքական առումով Հայաստանի հայացքը պետք է դեպի Եվրամիություն ուղղված լինի, իսկ Եվրոպական հարեւանության քաղաքականությունն առաջին քայլն է այդ ճանապարհին:

***- ԵՄ-ն առաջնորդվում է շահերո՞վ, թե՞ արժեքային համակարգով:***

- Չեմ կարծում, թե այդ հարցում երկընտրանք կա: Եվրոպայի արժեքային համակարգը նրա շահերի մասն է: Առաջին հերթին մենք շահագրգռված ենք խաղաղ գոյակցել մեկ տարածքում՝ ժողովրդավարության, խոսքի ազատության, օրենքի գերակայության պայմաններում: Սրանք լոկ գաղափարներ չեն, այլ կիրառվող դրույթներ, եւ մեր շահն այն է, որ մեր տնտեսությունը զարգանա, մարդիկ էլ իրենց առավել երջանիկ զգան: Ուստի չեմ կարծում, թե խիստ տարանջատում է պետք սահմանել այդ երկու հասկացություններում: Միությունը, իհարկե, երբեմն «մեղմություն» է ցուցաբերում: Սական դիտարկելով Հռոմի պայմանագրից հետո վերջին հիսնամյակը՝ պետք է ասել, որ ԵՄ-ն բավականին լավ աշխատանք է կատարել՝ պաշտպանելով համընդհանուր արժեքները եւ ելնելով կոնկրետ շահերից:

# ՄԱՍ IV

## *Հարցազրույց Սասեքսի համալսարանի պրոֆեսոր ԴԵՎԻԴ ԴԱՅՔԵՐԻ հետ*

***- Ի՞նչ կասեք Եվրամիության ընդլայնման մասին, կարելի՞ է ասել, որ ընդլայնման փնտեսական մասն ավարտվել է:***

- Կարելի է ասել՝ ժամանակավորապես դադարեցվել է, սակայն չի ավարտվել: Չեմ կարծում, թե ինչ-որ բան կարող է ավարտվել Եվրամիությունում. սա բոլորովին այլ կառույց է: Վերջին փարիներին Միությունը մեծ թվով երկրներ է «կուլ փվել», ինչը որոշակի բացասական զգացողություն է ծնել՝ կապված ընդլայնման հետ: Մեկ այլ խնդիր է Թուրքիայի հնարավոր անդամակցությունը: Թուրքիան այժմ անդամակցության կարեւոր թեկնածու է, սակայն այդ երկիրը չափազանց մեծ է եւ մեծապես փարբերվում է եվրոպական պեփություններից: Շափերը բարյացակամ են Թուրքիայի հնարավոր անդամակցության հարցում, միաժամանակ մեծ է նաեւ անհանգսփությունն այդ առիթով: Կարծում եմ՝ գործընթացը շափ կդանդաղի: Խորվաթիայի անդամակցությունն այժմ առավել հավանական է. այս երկիրն անհամեմափ ավելի փոքր է, եւ իր հետ կապված մեկ-երկու սպեցեֆիկ խնդիր կա: Ընդհանուր առմամբ, ԵՄ ընդլայնման գործընթացն առաջիկայում կդանդաղի:

Անդամակցության ձգփումներ ունի նաեւ Ուկրաինան: Այս դեպքում, կարծում եմ, խոսքը շափ երկար գործընթացի մասին է: Այժմ սկսել ենք խոսել նաեւ Հայասփանի, Վրասփանի, Մոլդովայի մասին: Այս երկրների անդամակցությունը Եվրամիությանը չի կարող բացառվել: Ի վերջո, Եվրամիության օրակարգում առաջ կգա այդ երկրների՝ առաջին հերթին Ուկրաինայի հետ ազափ առեւփրի պայմանագրի սփորագրման անհրաժեշփությունը: Նման գործընթաց կսկսվի նաեւ Հայասփանի ու Վրասփանի հետ: Կարծում եմ՝ խոսքն ավանդական ազափ առեւփրի պայմանագրերի մասին չի, փոխարենը կկնքվեն պայմանագրեր, որոնք առավել խորը փնփեսական համագործակցություն կապահովեն ե՛ւ Եվրամիության, ե՛ւ այդ երկրների համար:

***- Եվրոպական հարեւանության քաղաքականությունը փնփեսական ի՞նչ նշանակություն ունի Եվրամիության համար:***

- Կարծում եմ՝ ԵՄ-ի համար հարեւանության քաղաքականությունը հիմնականում կարեւոր է քաղաքական փեսանկյունից: Այն էական է Եվրոպայում (հափկապես Արեւելյան), կայունության հասփափման փեսանկյունից, ինչն այժմ բացակայում է: Տնփեսական առումով Եվրամիությունն էական փարբերություն չի դնում երկրների միջեւ՝ Հայասփանի, Վրասփանի, անդամ կամ ոչ անդամ երկրի: Նույնիսկ Ուկրաինան, որը շափ ավելի

մեծ է, քան Հայաստանը, ունի արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր, սակայն զուտ տնտեսական տեսանկյունից փոքր նշանակություն ունի: Նկատի ունեմ՝ օրակարգում առաջնայինը քաղաքականությունն է, եւ կարծում եմ, որ ազատ առեւտրի պայմանագրերի կիրառման գաղափարը՝ որպես կայունության քաղաքականության զարգացման միջոց, Եվրոպական հարեւանության քաղաքականությանը հաջորդող քայլը կլինի:

***- Գաղտնիք չէ, որ Եվրոպական հարեւանության քաղաքականությունում ընդգրկված երկրները ժողովրդավարական չեն: Հասկանալի է, որ նրանց նկատմամբ գործում են տնտեսական լծակներ, իսկ բացի դրանից՝ որեւէ գործիք ունե՞ք՝ նվազեցնելու օրինակ կոռուպցիայի ռիսկը:***

- Հենց այդտեղ է կարեւորվում ազատ առեւտրի առավել խորը պայմանագրերի նշանակությունը: Այդ պայմանագրերի իմաստը ազատ առեւտուրն օգտագործելն է, որոշ իմաստով՝ նույնիսկ ճնշում գործադրելը՝ հարեւան երկրներին ներքին բարեփոխումների դրդելու կամ դրանք արագացնելու նպատակով: Պայմանագրերը կվերաբերեն մրցակցային դաշտի ընդլայնմանը, մենաշնորհի, կոռուպցիայի բացառմանը: Կարծում եմ՝ այդ երկրները կարող են օգտագործել հնարավորությունը, իսկ դրա համար պետք չէ սպասել Եվրամիությանն անդամակցությանը, քանի որ դուք հասարակական վարքագծի՝ լավ մշակված կանոններ ունեք, ինչը շատ կարեւոր է:

***- Ի՞նչ կասեք Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարների մասին:***

- 1990-ականների ծանր ժամանակներից հետո Հայաստանի տնտեսությունը վերջին տարիներին լուրջ առաջընթաց է արձանագրում: Մեկ անձի համար, սակայն, համախառն ներքին արդյունքի մակարդակը դեռեւս շատ ցածր է: Մրցակցային դաշտում Հայաստանի առավելությունը, անխոս, նրա ժողովուրդն է՝ կրթվածության բարձր մակարդակ ունեցող բնակչությունը, որ պատրաստ է ներգրավվել շատ դինամիկ գլոբալիզացիայի եւ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության գործընթացներում (բոլոր այս երեւույթներն այժմ ընթանում են աշխարհում): Ահա թե Հայաստանի համար ինչու է այդքան կարեւոր առաջին հերթին առավելագույնս ինտեգրվել տարածաշրջանային տնտեսությանը: Հայաստանն արդեն Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ է, ինչը սկիզբն է միայն: Հայաստանը փոքր երկիր է, եւ այն կարող է բարգավաճել աշխատանքի համաշխարհային բաժանման համատեքստում. տնտեսական խոչընդոտներ չկան դրա համար, այնուամենայնիվ գործընթացը պետք է առաջնորդեն քաղաքական գործիչները:

***- Ի՞նչ եք կարծում, Եվրամիությունն այժմ առաջնորդվում է շահերո՞վ, թե՞ արժեքային համակարգով:***

- Կարծում եմ՝ Միությունն այժմ առաջ է շարժվում սեփական շահերով: Սակայն դրանք շահեր են, որ ծնվել են Երկրորդ աշխարհամարտի հետեւանքով (բոլորս էլ մասնակցել ենք այդ պատերազմին), բոլորն էլ համակարծիք են, որ այդ ողբերգությունն այլեւս չպետք է կրկնվի: Տնտեսությունն ու տնտեսական ինտեգրումն այն անիվներն էին, որոնցով առաջ է շարժվում մեծապես քաղաքական այդ օրակարգը՝ Եվրոպայում քաղաքական կայունության մշտական օրակարգը, ինչը մեր հիմնական խնդիրն է նաեւ այսօր: Ջանքերն այդ ուղղությամբ կզարգացնենք նաեւ առաջիկայում:

# ՄԱՍ V

## *Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» փոխփոխօրեն ՔԵՆԵԹ ՄՈՒՆՐՈՅԻ հետ*

***- ԵՀՔ անդամ երկրները շատ տարբեր են ինչպես ժողովրդավարության մակարդակով, այնպես էլ շատ այլ առումներով: Ինչպե՞ս եք տեսնում ԵՀՔ-ի՝ մասնավորապես Հայաստանի ապագան:***

- Այո՛, ճիշտ եք, այդպես է: Սակայն անհրաժեշտ է կտրուկ փոփոխություններ այդ երկրներում, որպեսզի դադարեն իրենց անցումային համարել: Դրանցից շատերն իրականում անցումային փուլում չեն: Եվ առկա ոչ ժողովրդավարական գործընթացներն անընդունելի են, քանի որ հենց իրենք են ընտրել ժողովրդավարություն տանող ուղիները: Անհրաժեշտ է ինքնավստահություն ունենալ՝ ժողովրդավար լինելու, մարդու իրավունքները հարգելու եւ կոռուպցիայից ազատագրվելու համար:

Հայաստանի հարաբերությունները հարեւանների հետ պետք է լինեն խաղաղ՝ հաշվի առնելով երկրի մասշտաբները: Յուրաքանչյուր երկիր պետք է լավ հարաբերություններ ունենա հարեւանների հետ, սակայն դա առավել քան էական է փոքր երկրների համար: Պետք է թողնեք ձեր դրոշմը աշխարհում՝ հաշվի առնելով ձեր երկրի պատմությունը, աշխարհագրական դիրքը եւ փորձը:

***- Սպասվո՞ւմ են առանցքային փոփոխություններ ԵՄ-ում՝ կապված Գերմանիայի նախագահության հետ:***

- Ես առավել վստահություն եմ տածում Եվրամիության նկատմամբ: Կարծում եմ, որ կառույցը պետք է շարունակի աշխատանքը սահմանադրական փոփոխության ուղղությամբ, նկատի չունեմ ներկայիս սահմանադրության նախագիծը: Անհրաժեշտ է նշել, որ շատ երկրներ վավերացրել են սահմանադրության նախագիծը եւ միայն երկու երկիր է մերժել այն՝ Ֆրանսիան ու Հոլանդիան: Պետք է առաջ շարժվել՝ հարգելով նրանց իրավունքները եւ վերափոխելով փաստաթղթի նախագիծը, ու ստանալ մի տարբերակ, որն ընդունելի կլինի բոլոր անդամ երկրների համար: Ինձ թվում է, որ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը կարող է իրականացնել դա: Եվ հուսով եմ, որ նա կունենա եվրոպական կառավարությունների եւ ժողովուրդների մեծ մասի աջակցությունը:

***-ԵՄ-ի ապագայի հետ կապված՝ կա երկու տեսակետ՝ «եվրալավատեսական» եւ «եվրահոռետեսական»: Դուք Ձեզ ո՞ր խմբին եք դասում:***

-Ես միանշանակ լավատես եմ: ԵՄ-ն պահպանել է իր նշանակությունը եւ մինչ այժմ կարողացել է 6 երկրից ընդլայնվել՝ հասնելով 27-ի եւ դա արել է շատ ճկուն, առանց շեղվելու իր առջեւ դրված նպատակներից, ինչը, իմ կարծիքով, լավատես լինելու բավարար հիմք է ստեղծում:

# ԳԼՈՒԽ IX

## ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

# ՄԱՍ I
# ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ («British Council»)

Բրիտանական խորհուրդը հիմնադրվել է 1934թ.-ին: Այսօր այն հայտնի միջազգային կազմակերպություն է, որը գործում է աշխարհի 110 երկրում՝ խթանելով համագործակցությունը Մեծ Բրիտանիայի համապատասխան հաստատությունների հետ: 2009թ. Խորհուրդը նշում է գործունեության 75-ամյակը:

Բրիտանական խորհրդի աշխատանքն ուղղված է տարբեր մշակույթների միջեւ փոխըմբռնման եւ վստահության ամրապնդմանը: Այն աջակցում է անձանց, ովքեր ձգտում են լավ տեղեկացված եւ հանդուրժող հասարակություն ձեւավորել: Մշակութային հարաբերությունները առաջնահերթություն են Բրիտանական խորհրդի համար եւ արտահայտվում են կրթության, անգլերեն լեզվի, մշակույթի, սպորտի, գիտության եւ կառավարման բնագավառների ծրագրերի իրականացմամբ:

Կազմակերպության հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 2002թ. եւ ակտիվորեն ներգրավված է մշակութային հարաբերությունների ոլորտում՝ նպաստելով փոխադարձ հարգանքի եւ փոխըմբռնման մթնոլորտի ստեղծմանը, անհատներին հնարավորությունների ընձեռմանը եւ կայուն աշխարհի կայացման նպատակով համագործակցության խթանմանը:

Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակը երկխոսություն է վարում ՀՀ կառավարության հետ բարեփոխումների առանցքային հարցերի շուրջ: Այն նպատակ է հետապնդում իր աշխատանքով Մեծ Բրիտանիայի գիտելիքներն ու փորձը, ինչպես նաեւ ստեղծագործ ու նորարար միտքը բերել Հայաստան:

Բրիտանական խորհուրդն աշխատում է ապագա երիտասարդ առաջնորդների հետ՝ զարգացնելով նրանց հմտությունները, նպաստելով նրանց լիակատար եւ արդյունավետ ներգրավմանը հասարակական կյանքին: Կազմակերպությունն աջակցում է հասարակության խոցելի խավերին, լսելի դարձնում նրանց ձայնը:

Բրիտանական խորհրդի ծրագրերը համահունչ են հայ երիտասարդների ակնկալիքներին: Այն երիտասարդներին կրթական եւ մշակութային ծրագրերին մասնակցելու հնարավորություն է ընձեռում:

Կազմակերպությունը համակարգում է Միացյալ Թագավորության Արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Չիվնինգ» կրթաթոշակը եւ «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» նախաձեռնությամբ իրականացվող «Ջոն Սմիթ» ծրագիրը:

Բրիտանական խորհրդի գործունեության հիմնական ուղղությունները ներդաշնակ են արդի համաշխարհային մարտահրավերների հետ:

***Միջմշակութային երկխոսության ձեւավորում եւ սոցիալական արդյունավետ փոփոխությունների խթանում***

Իր գործունեության ընթացքում Բրիտանական խորհուրդը տարբեր երկրների եւ մշակույթների ներկայացուցիչներին հանդիպելու, ընդհանրությունները բացահայտելու եւ միմյանց տարբերությունները գնահատելու հնարավորություն է ընձեռել:

Կառույցի ծրագրերը նպաստում են համագործակցության, փոխադարձ հարգանքի եւ փոխըմբռնման մթնոլորտի ձեւավորմանը, այլազանության խրախուսմանն ու անհատի ինքնության պաշտպանությանը, ինչպես նաեւ հնարավոր են դարձնում աշխարհի տարբեր երկրների մարդկանց շփումները: Այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Living Together» կամ «Network Effect» նախագծերը, ուղղված են տարբեր մշակույթների միջեւ եւ դրանց ներսում փոխըմբռնման ամրապնդմանը, հասարակության մեջ ակտիվ եւ կառուցողական մասնակցության խթանմանը, վստահության մակարդակի բարձրացմանը:

***Տնտեսության զարգացմանը մարդկանց մասնակցության խրախուսում***

Վերջին 15 տարիների ընթացքում Միացյալ Թագավորությանը հաջողվել է ստեղծել աշխարհի ամենադինամիկ տնտեսություններից մեկը, որն առաջնորդվում է նոր գաղափարներով եւ ստեղծագործ մտքով: Այս բնագավառում իրականացված ծրագրերի միջոցով Բրիտանական խորհուրդը փորձում է ներկայացնել Միացյալ Թագավորության կրթության եւ վերապատրաստման փորձը՝ խթանելով Մեծ Բրիտանիայի եւ Հայաստանի համար փոխշահավետ հարաբերություններ եւ կապեր, գաղափարների փոխանակման հնարավորություն ստեղծելով:

«Creative Collaboration» ծրագրի միջոցով Բրիտանական խորհուրդը Միացյալ Թագավորության եւ Հարավարեւելյան Եվրոպայի 18 երկրների ստեղծագործ ոլորտի անձանց հնարավորություն է ընձեռում համագործակցել, համատեղ ծրագրեր մշակել եւ իրականացնել:

***Կլիմայական փոփոխության հիմնախնդրին ուղղված գործողությունների շուրջ միջազգային փոխհամաձայնեցման ձեռքբերում եւ պահպանում***

Այս բնագավառի ծրագրերի նպատակը որոշումներ կայացնող, գործադիր մարմինների եւ ապագա առաջնորդների շրջանակում կլիմայական փոփոխությանն արձագանքելու անհրաժեշտության գաղափարի արմատավորումն է: Խորհորդը նաեւ աջակցում է կապերի եւ հարաբերությունների ստեղծմանը, որոնք ուղղված են աշխարհում գլոբալ ջեր-

մացման հետեւանքով առաջացած խնդիրների վերաբերյալ լուծումներ որոնելու ուղղությամբ հասարակության ջանքերը միավորելուն:

***Հավասար հնարավորություններ եւ բազմազանություն***

Բրիտանական խորհուրդը որդեգրել է հավասար հնարավորություն-ների քաղաքականություն, որն արգելում է անհիմն խտրականությունը սե-ռի, ընտանեկան կարգավիճակի, դավանանքի, քաղաքական կողմնորոշ-ման, աշխատանքի տեսակի, տարիքի, հաշմանդամության կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կարգավիճակի, սոցիալ-տնտեսական վիճակի, նախկին դատ-վածության, արհմիություններում գործունեության կամ մասնակցության, խնամառուների առկայության կամ բացակայության հիման վրա:

*Նշված ոլորտներում Բրիտանական խորհրդի գործունեությանը կարող եք ծանոթանալ www.britishcouncil.am ինտերնետային էջում:*

## ՄԱՍ II

### *Հարցազրույց Բրիտանական խորհրդի Հարավարեւելյան Եվրոպայի տարածաշրջանային ծրագրերի համակարգող ՔՈԼՄ ՄԱՔԳԻՎԵՐՆԻ հետ*

***- Բրիտանական խորհուրդը գործում է բազմաթիվ երկրներում: Ո՞րն է կառույցի հիմնական նպատակը:***

- Բրիտանական խորհուրդը Միացյալ Թագավորության միջազգային կարեւորագույն կազմակերպություններից մեկն է: Մեր նպատակն է Մեծ Բրիտանիայի եւ բոլոր այն երկրների միջեւ, որտեղ աշխատում ենք, փոխադարձ նպաստավոր հարաբերություններ կառուցելը: Մենք աշխատում ենք աշխարհի 109 երկրում, այդ թվում՝ Հայաստանում:

***- Ունե՞ք հատուկ ծրագիր մեր տարածաշրջանի համար:***

- Այո՛: Հայաստանը, Բրիտանական խորհրդում ընդունված պրոհմամբ, արեւելաեվրոպական տարածաշրջանում է: Այստեղ մի շարք առաջնային խնդիրներ ունենք, ինչպես տնտեսության զարգացումը (վերջինիս համար հատուկ կրթական ծրագրեր են իրականացվում), միջմշակութային շփումները, որոնք կնպաստեն նաեւ կլիմայական անվտանգության խնդիրների կարգավորմանը: Ուղիներ ենք փնտրում՝ նպաստելու Մեծ Բրիտանիայի եւ տարածաշրջանի երկրների միջեւ փոխըմբռնմանը, նաեւ այս երկրներում ժողովրդավարության զարգացմանը: Հայաստանն Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանում մեզ համար շատ կարեւոր գործընկեր է:

***- Մեր տարածաշրջանի երկրները շատ տարբեր են: Ունե՞ք որոշակի ծրագրեր յուրաքանչյուրի համար, եւ արդյո՞ք դրանք միմյանցից տարբերվում են***:

- Մեր խնդիրներից մեկը Հայաստանում աշխատանքն այնպես կազմակերպելն է, որ մեր հայ բարեկամները Բրիտանական խորհուրդն ընկալեն որպես սոցիալական բարեփոխումներում կենսական նշանակություն ունեցող գործընկերոջ: Նման մոտեցումը կօգնի առավել հստակ պատկերացնել Բրիտանական խորհրդի նպատակները, գնահատել ձեռքբերումները: Հայաստանում մեր աշխատանքն ուղղված է Հայաստան-Մեծ Բրիտանիա փոխհարաբերությունների խորացմանը:

***- Ներկայացրե՛ք, խնդրեմ, Հայաստանի հետ այժմ իրականացվող ծրագրերը:***

- Վերջերս ավարտվեց «Living Together» («Բոլորս ապրում ենք միասին») խորագրով ծրագիրը, որն իրականացվել է առավել գլոբալ՝ համաշխարհային մակարդակ ունեցող «Bridge to the Future» («Կամուրջ դեպի

ապագա») նախագծի շրջանակներում: Սրա նպատակը աշխարհում որոշումներ կայացնողների եւ իրականացնողների երիտասարդ սերունդ ունենալն է, որ պիտի դառնա ապագայի կերտման գործում կարեւոր դերակատար: Մենք փորձում ենք ապահովել հարեւան երկրներում բնակվող երիտասարդների շփումները, նրանց միջեւ ակտիվ երկխոսության ծավալումը: Նշված ծրագիրը քառակողմ զրույց էր Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Մեծ Բրիտանիայի մաս կազմող Հյուսիսային Իռլանդիայի երիտասարդների միջեւ: Երկրներից յուրաքանչյուրը, օգտվելով երիտասարդների փորձից, բարեփոխումների միջոցով պետք է կառուցի իր երազած ապագան: Բավականին հաջող փորձ էր: Հավատում ենք, որ ծրագրին մասնակցած երիտասարդներն այսուհետ խորությամբ կըմբռնեն միմյանց առաջնային խնդիրները, միմյանց աշխարհայացքների նկատմամբ ավելի հանդուրժող կլինեն: Վստահ եմ, որ այս ամենը շատ կարեւոր է Հայաստանի եւ հայ երիտասարդների համար ադրբեջանցի ու վրացի իրենց հասակակիցների մտածելակերպին, նպատակներին ծանոթանալու առումով: Բրիտանական խորհուրդը հույս ունի փոխանցել իր փորձը մյուսներին:

Ինչ վերաբերում է ապագային, կարծում եմ՝ հայ գործընկերների համար մեզ հետ աշխատելու իրապես հրաշալի հնարավորություններ են ստեղծվում: Մասնավորապես կցանկանայի ներկայացնել երկու նախագիծ, որոնք համատեղ կիրագործենք հաջորդ տարի: «Աշխատանքային հմտություններ» խորագրով ծրագիրն ուղղված է մասնագիտական կրթության զարգացմանը: Ծրագիրը նախատեսում է փորձի փոխանակում Հայաստանի եւ Մեծ Բրիտանիայի՝ մասնագիտական կրթությամբ աշխատողների միջեւ: Բացի այդ՝ նախատեսում ենք խթանել մասնագիտական հմտությունների զարգացմանը, որ Հայաստանի արդյունաբերությունն ու հատկապես երիտասարդ հայ մասնագետներն առավել մրցունակ լինեն: Առաջիկա 2-3 տարիների ընթացքում մեր հայ գործընկերների համար զարգացման հրաշալի հնարավորություն կստեղծվի:

Երկրորդը շատ հետաքրքիր եւ դինամիկ նախագիծ է, որ կոչվում է «Ստեղծագործ համագործակցություն»: Սա արեւելաեվրոպական տարածաշրջանի գործընկերների հետ միջմշակութային երկխոսությունը խթանելու Բրիտանական խորհրդի փորձն է: Այն ենթադրում է աշխատանք Երեւանում եւ Հայաստանի մարզերում՝ մշակութային եւ այլ ոլորտների բացերը լրացնելու համար: Նախագիծը կիրականացվի կրթական ծրագրերի, թատերական եւ երաժշտական միջոցառումների, արդի խնդիրների շուրջ քննարկումների միջոցով: Այս ամենը կազմակերպելու համար մենք մեր հայ գործընկերների աջակցության կարիքն ունենք: Կարծում եմ՝ շատ հետաքրքիր աշխատանք կլինի հայերի, ադրբեջանցիների եւ հյուսիսիռլանդացի մասնակիցների միջեւ, քանի որ շատ ընդհանրություններ կան

հայ-ադրբեջանական հակամարտության եւ Հյուսիսային Իռլանդիայի խնդրի միջեւ, թեեւ տարբերությունները եւս հսկայական են: Երիտասարդ սերունդն էլ է հասկանում, որ աշխարհի բոլոր հակամարտությունները տարբերվում են միմյանցից: Այնուամենայնիվ, միջմշակութային երկխոսությունը կողմերի միջեւ շփումները խթանելու կարեւոր ձեւ է:

***- Կարո՞ղ ենք Բրիտանական խորհրդի մասին խոսել՝ որպես միջմշակութային երկխոսություն նախաձեռնող ուժի:***

- Իհա՛րկե: Բրիտանական խորհրդի աշխատանքը մշակութային հարաբերություններ հաստատելն է: 109 երկրում եւ աշխարհի 210 քաղաքում փորձում ենք ընդգծել միջմշակութային երկխոսություն սկսելու անհրաժեշտությունը: Մեր ծրագրերն իրականացնում ենք գործընկերների միջոցով, հնարամիտ, շարժունակ, հետաքրքիր նախագծերի ու միջոցառումների օգնությամբ, առաջին հերթին ներգրավելով երիտասարդների, խթանելով նրանց միջեւ զանազան բարդ խնդիրների քննարկումները: Այս ամենը հնարավորություն կտա Բրիտանական խորհրդի ձեռք բերած փորձը կյանքի կոչել, նշված երկրներն էլ առավելագույն տեղեկատվություն կստանան Մեծ Բրիտանիայի եւ միմյանց մասին:

***- Ի՞նչ կարող եք ասել Հայաստանի հետ այժմ իրականացվող եւ ապագայում նախատեսված կրթական ծրագրերի մասին:***

- Շարունակելու ենք հայաստանցիների համար անգլերեն լեզվի քննությունների նախապատրաստական դասընթացները: Կգործի նաեւ Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից հովանավորվող «Չիվնինգ» կրթաթոշակային ծրագիրը: Նախորդ տարի Հայաստանից 6 ուսանող է մեկնել Մեծ Բրիտանիա՝ «Չիվնինգ» կրթաթոշակային ծրագրով ուսանելու: Սա եւս շարունակական է լինելու: Բրիտանական խորհուրդը բազմաթիվ կրթական միջոցառումներ է առաջարկում: Նրանք, ովքեր ձգտում են առավել մանրակրկիտ տեղակատվություն ստանալ, կարող են այցելել մեր ինտերնետային կայքը՝ www.britishcouncil.org, եւ հետեւելով Հայաստանին վերաբերող հղումներին՝ տեսնել, թե ինչ առաջարկներ կան իրենց համար: Կարեւոր է, որ արագ եւ դինամիկ զարգացող այս տարածաշրջանի մարդիկ տեղեկացված լինեն ընթացիկ ծրագրերի մասին:

***- Հայաստանում Ձեր գործունեության ծավալները բավարար համարո՞ւմ եք:***

- Կցանկանայի, որ Բրիտանական խորհուրդը կարողանար համագործակցել յուրաքանչյուր հայաստանցու հետ, քանի որ, ըստ իս, որպես կազմակերպություն՝ խորհրդի առաքելությունն ու աշխատանքն այնքան մեծ ու էական է, որ մեր երկրին կօգնեն առավել ամուր ու բարյացակամ հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Սակայն չենք կարող բոլոր բարձունքները նվաճել, ուրեմն պետք է համագործակցենք նաեւ այլ կառույցների հետ, ինչպիսին, օրինակ, լրատվամիջոցներն են: Լավ կլիներ, եթե մեր գործունեության ծավալներն առավել ընդգրկուն լինեին:

- ***Ի՞նչ կասեք Եվրամիության նոր հարեւանության քաղաքականության մասին: Այն որեւէ կերպ կնպաստի՞ մեր հարաբերությունների զարգացմանը:***

- Բրիտանական խորհուրդը Հայաստանում աշխատում է 2002 թվականից: Այդ ընթացքում մեր հարաբերությունները բավականին զարգացել են. ձեր երկրում մեր գործընկերներն աներեւակայելի արագությամբ են ծավալվում: Հայաստանում մեզ մեր տանն ենք զգում, շատ բարեկամներ ու գործընկերներ ունենք: Ակնհայտորեն Եվրամիության մաս կազմող երկրի համար Միության հետ Հայաստանի հարաբերությունների սերտացումը կնպաստի որոշակի սահմանների վերացմանը, կառույցի դրամաշնորհային ծրագրերին Հայաստանի մասնակցությունն ապահովելուն: Մենք Հայաաստանի հետ գործընկերական առավել ամուր հարաբերություններ զարգացնելու պարտավորություններ ունենք եւ, կարծում եմ, կշարունակենք դրանք իրականացնել:

- ***Լոնդոնի մետրոյում Բրիտանական խորհուրդը բանաստեղծություններ ներկայացնող յուրօրինակ ակցիա էր կազմակերպել: Հնարավո՞ր է նման ակցիաներ կազմակերպել նաեւ Հայաստանում՝ ընդգրկելով հայ եւ բրիտանացի պոետների, քանի որ իսկապես հետաքրքիր նախաձեռնություն է:***

- Համաձայն եմ՝ հետաքրքիր ծրագիր է: Արտասովոր է, երբ նստած ես մետրոյի գնացքում եւ ակնկալում ես առջեւի պատին քարտեզ տեսնել, սակայն փոխարենը բանաստեղծություն ես ընթերցում: Հույս ունենք, որ տան ճանապարհին դրանք ընթերցելիս մարդիկ մի քիչ այլ հայացքով կնայեն կյանքին: Իսկ Հայաստանում մեր նպատակը միջմշակութային երկխոսություն ապահովելն է: Դրան հասնելու շատ ծրագրեր ունենք, այդ թվում՝ զրույցի ընթացքում նշվածները: Առաջիկա 2-3 տարիների ընթացքում կներկայացնենք Բրիտանական խորհրդի «Ստեղծագործ համագործակցություն» խորագիրը կրող հսկայական ծրագիրը, որի նպատակը գրեթե նույնն է, ինչ Լոնդոնի մետրոպոլիտենում կազմակերպված ակցիայի դեպքում: Պարզապես այս անգամ նման միջոցառումներ կիրականացվեն Երեւանում եւ մյուս քաղաքներում: Սա մարդկանց հետ համագործակցելու նոր եւ չափազանց հետաքրքիր տարբերակ է: Ճիշտ չի լինի, եթե այդ ամենը միայնակ իրականացնենք: Պետք է նաեւ համոզված լինենք, որ մեր բոլոր ծրագրերը փոխշահավետ են: Արեւելաեվրոպական տարածաշրջանում Հայաստանը շատ կարեւոր դերակատար է, եւ այդ կարեւորությունն օրեցօր աճում է: Ուստի տարածաշրջանում մեր հեռանկարներն ու գործողությունները բազմազան են:

## ՄԱՍ III

### *Հարցազրույց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն ԱՐԵՎԻԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ հետ*

***- Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակն այս տարի նշում է իր 5-ամյակը: Ի՞նչ միջոցառումներ են արդեն կազմակերպվել այդ շրջանակներում, եւ ի՞նչ այլ ծրագրեր են նախատեսվում:***

- Անցյալ շաբաթ ավարտվեցին միջոցառումները: Երեք միջոցառում էր կազմակերպվել: Առաջինը «Կրթական փոնավաճառն» էր, որի ընթացքում ներկայացվեցին մեր երկու ծրագրերը՝ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Չիվնինգ» կրթաթոշակը եւ «Ջոն Սմիթի» կրթաթոշակը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանը եւ «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» հոգաբարձու Լորդ ՄակՔլասքին: Նրանք ողջունեցին ներկաներին՝ «Չիվնինգի» կրթաթոշակները հանձնելով այս տարվա ընտրյալ ուսանողներին: Այնուհետեւ ներկայացվեց ծրագիրը: Երկրորդ միջոցառումն ընդունելություն էր, որը կազմակերպել էինք ՀՀ արտաքին գործերի նախարարության եւ Մեծ Բրիտանիայի դեսպանատան հետ համատեղ: Եվ երրորդը ջազ համերգ էր, որին ներկա էին մեր հայկական երկու խմբերը՝ «Կապուներ»-ը եւ «Վաղվա մարդիկներ»-ը: Հյուրեր կային Վրաստանից, Թուրքիայից եւ Մեծ Բրիտանիայից:

***- Ձեր գործունեության ընթացքում ի՞նչ կարեւոր արդյունքներ եք արձանագրել:***

- Դժվարանում եմ առանձնացնել կոնկրետ կետեր: Մեր գործունեության ոլորտները բազմազան են: Կրթության ոլորտում, ինչպես արդեն նշեցի, իրականացնում ենք «Չիվնինգ» եւ «Ջոն Սմիթ» կրթաթոշակային ծրագրերը: Անցկացնում ենք անգլերենի իմացության IELTS քննությունը, որն անհրաժեշտ է Մեծ Բրիտանիայի եւ այլ եվրոպական երկրների բուհերում սովորելու համար: Անցկացնում ենք նաեւ այլ մասնագիտական քննություններ հաշվապահական, ֆինանսական ոլորտներում: Ունենք տեղեկատվական կենտրոն. գրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ բավականին հարուստ էլեկտրոնային ռեսուրսներ ունենք: Բրիտանական խորհուրդը դրանք տրամադրում է իր անդամներին:

Ունենք նաեւ անգլերենի ուսուցման ծրագիր: Նախ աշխատում ենք անգլերեն դասավանդող ուսուցիչների հետ՝ նրանց ծանոթացնելով դասավանդման նոր մեթոդիկային: Ստեղծվել է ասոցիացիա, որտեղ աշխատում է մեր մասնագետը: Բացի այդ՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ՝ բանակի անձնակազմի համար անգլերենի

ուսուցում է իրականացվում. դա Հայաստանին հնարավորություն կտա լիարժեքորեն մասնակցել խաղաղապահ եւ պաշտպանական միջազգային նախաձեռնություններին:

Բրիտանական խորհուրդը մշակույթի ոլորտում բավականին մեծ գործ է կատարել: Ամեն տարի նորարական մոտեցումներ ցուցաբերելով, մեր հասարակությանը ծանոթացրել ենք բրիտանական մշակույթին՝ բեմարվեստին, երաժշտությանը, մշակույթի տարբեր ասպարեզներին: Օրինակ՝ հաշմանդամների համար նախատեսված ծրագրեր ունեինք. նրանց մշակութային կյանքում ներգրավելու համար ծանոթացնում էինք բեմական արվեստին եւ սովորեցնում հանդես գալ բեմում:

Այս տարվանից մեր աշխատանքների ուղղությունը մի փոքր այլ է լինելու: Բրիտանական արվեստին ծանոթացնելուց բացի՝ հատուկ ծրագրեր ենք մշակելու, որի ընթացքում Հայաստանի, Մեծ Բրիտանիայի եւ այլ երկրների մշակութային գործիչները համատեղ կաշխատեն: Այսինքն՝ դա լինելու է փոխշահավետ համագործակցություն:

Կառավարության հետ աշխատանքի ոլորտը շատ հարուստ է: Լրագրողների համար վերապատրաստման դասընթացներ ենք իրականացնում՝ պարզաբանելով, թե ինչպես պետք է աշխատել կառավարության հետ, լուսաբանել կառավարության ծրագրերը: Մեր գործընկերների՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի եւ Միգրացիայի գործակալության հետ համատեղ անօրինական միգրացիայի թեմային վերաբերող ծրագիր ենք իրականացնում:

Արհեստակցական կրթության վերաբերյալ տարածաշրջանային ծրագիր ունենք: Կոչվում է «Skills and work» («Աշխատանք եւ հմտություններ»): Տարածաշրջանային ծրագիր ենք իրականացնում նաեւ հասարակության առավել խոցելի խմբերի հետ: Այն ուղղված է ներդաշնակ հասարակություն ստեղծելուն, որ մշակութային բազմազան ծրագրերի միջոցով տարբեր խավերի կարողանանք ներգրավել հասարակական կյանքում:

«Creativ colleboration»-ը («Ստեղծագործական համագործակցություն») տարածաշրջանային երրորդ մեծ ծրագիրն է, որը, ինչպես արդեն նշեցի, ուղղված է լինելու մշակութային գործիչների համատեղ աշխատանքին եւ համագործակցությանը:

***- Բրիտանական խորհուրդը Հայաստանում իրականացնում է բազմաթիվ կրթական ծրագրեր եւ հայ երիտասարդներին հնարավորություն է տալիս վերապատրաստվել Մեծ Բրիտանիայում: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են դրանք արդյունավետ Հայաստանի համար:***

- Այդ ծրագրերը Հայաստանի համար արդյունավետ են այնքանով, որ ուղղված են իրենց կարիերայում որոշակի բարձունքների հասած եւ ինչ-որ չափով կայացած երիտասարդների: Օրինակ՝ «Ջոն Սմիթ» ծրա-

գիրը հենց այդպիսին է: Երիտասարդները գնում են, ուսումնասիրում Մեծ Բրիտանիայի փորձը, շփվում այդ երկրի երիտասարդների հետ: Բոլորը, ովքեր մասնակցել են այդ եւ մեր մյուս ծրագրերին, բավականին բարձր պաշտոն զբաղեցնող երիտասարդներ ու անհատներ են թե՛ պետական կառույցներից, թե՛ քաղաքացիական հասարակությունից, թե՛ լրատվական ոլորտից եւ, բնականաբար, ստացած հմտություններն ու գիտելիքները կիրառում են իրենց բնագավառում:

***- Առաջին անգամ է, որ Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն է նշանակվում մեր երկրի քաղաքացին: Դժվա՞ր է արդյոք նման պատասխանատվություն ստանձնելը:***

- Դժվար է այնքանով, որ պետք է լինես հայ, հանդես գաս Հայաստանի շահերից եւ անես այնպես, որ բոլոր ծրագրերը համապատասխանեն առաջին հերթին Հայաստանին, Հայաստանի օրակարգերին: Մյուս կողմից, պատասխանատու լինելով բրիտանական կազմակերպության համար, պետք է մանրամասնորեն ծանոթ լինես բոլոր բրիտանական արժեքներին եւ փորձես դրանք համապտեղել: Ընդհանուր առմամբ, աշխատանքս ավելի շատ հետաքրքիր է, քան դժվար:

***-Բրիտանական խորհրդի գործունեությունն ինչքանո՞վ է նպաստում Հայաստանի եւ Մեծ Բրիտանիայի համագործակցությանը:***

- Բնականաբար, շատ է նպաստում, քանի որ Բրիտանական խորհրդի առաջնային նպատակն է փոխշահավետ կապեր ստեղծել Հայաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ: Մեր բոլոր ծրագրերն ուղղված են դրան: Այսինքն՝ բոլոր ծրագրերն ունեն այդ էլեմենտը:

***- Կարո՞ղ եք անդրադառնալ առաջիկա ծրագրերին, ձեր գործընկերներին:***

- Երկու նոր ծրագիր ենք մշակում: Մեկն առաջնորդության ծրագիր է երիտասարդների համար, երկրորդը կոչվելու է «Կանայք քաղաքական կյանքում»: Այն կանանց հետ աշխատանք է նախատեսում, նրանց հմտությունների բարձրացում, իրազեկում եւ այլն:

# ՄԱՍ IV
# «ԿԱՌՈՒՑԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»

«International Alert»-ը («Միջազգային ահազանգ») միջազգային անկախ կազմակերպություն է, որը գործում է աշխարհի ավելի քան 20 երկրում: Երկակի մոտեցման շնորհիվ կազմակերպությունն աշխատում է ինչպես հակամարտության հետեւանքով բռնություններից տուժած անձանց, այնպես էլ կառավարությունների, ԵՄ եւ ՄԱԿ-ի հետ՝ կայուն խաղաղության հաստատման քաղաքականություն մշակելու եւ իրագործելու նպատակով:

Կազմակերպությունը ներկայացված է Աֆրիկյան Մեծ Լճերի, Հարավային Ամերիկայի Անդյան տարածաշրջաններում, Արեւմտյան Աֆրիկայում, Կովկասում եւ Հարավային Ասիայում: Գործունեության ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային մակարդակում «International Alert»-ի գործունեությունը նպատակաուղղված է մարդասիրական օգնության, զարգացման եւ անվտանգության ապահովմանը, հետպատերազմյան վերակառուցմանը՝ խաղաղության կառուցման համատեքստում:

«International Alert»-ը խաղաղության կառուցմանը նպատակաուղղված առաջին ոչ-կառավարական կազմակերպություններից է: Այն ձեւավորվել է ավելի քան 20 տարի առաջ՝ պատմական յուրատեսակ ժամանակաշրջանում. 1980-ականներին բնորոշ էր պայքարը համաշխարհային ուժային երկու կենտրոնների՝ ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ: Սառը պատերազմի ավարտին, պետությունների միջեւ հակամարտությունների նվազմանը զուգահեռ, աճում էր ներքին բախումների թիվը: Նման պայմաններում տարբեր տարածաշրջաններում կայուն զարգացումը խթանելու փորձերը հաճախ ձախողվում էին բռնությունների պատճառով: Ակնհայտ էր հակամարտությունների, զարգացման ստագնացիայի եւ մարդու իրավունքների անտեսման կապը: Կառավարությունները գիտակցում էին, որ կատաղի հակամարտությունների եւ մարդու իրավունքների անտեսման պայմաններում զարգացման ծրագրերը չեն կարող արդյունավետ լինել: Միաժամանակ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներն արձանագրեցին, որ հակամարտության գոտիներում քաղաքական իրավունքների պաշտպանությունը լիարժեք չէ անհատական դեպքերի բացահայտման եւ ազդարարման միջոցով, անհրաժեշտ է նաեւ կանխարգելիչ ռազմավարություն եւ գործողություններ: Անհրաժեշտ էր նոր մոտեցում:

1984 եւ 1985 թթ. հրավիրված խորհրդաժողովների ընթացքում ուսումնասիրվում է ոչ-կառավարական կազմակերպությունների դերը ներքին

հակամարտությունների կանխման եւ հաղթահարման գործընթացում:

Ի տարբերություն կառավարությունների՝ այս կազմակերպություն-ներն ի վիճակի են խնդիրներ պարզաբանել, տեղեկատվություն տրա-մադրել եւ չմեղադրվել որեւէ պետության ներքին գործերին միջամտելու համար: Քննարկումներին մասնակցում են տարբեր բնագավառների անձինք՝ մարդու իրավունքների, կոնֆլիկտոլոգիայի եւ միջազգային իրավունքի հեղինակավոր փորձագետներ, ՀԿ-ների եւ զարգացման գործակալությունների, արտգործնախարարությունների ներկայացու-ցիչներ, քաղաքական գործիչներ: Մասնակիցներն արձանագրեցին, որ անհրաժեշտ է ստեղծել համաժողով, որը կզբաղվի ներքին հակա-մարտություններով՝ կառավարությունների եւ համաշխարհային հան-րության ուշադրությունը հրավիրելով ճգնաժամային իրավիճակների ուղղությամբ:

«International Alert»-ը ծնվել է հակամարտությունների խնդրին ու-շադրություն հրավիրելու անհրաժեշտությունից, որոնք ոտնահարում են մարդու իրավունքները, արգելակում զարգացումը, զանգվածային սպա-նությունների, ցեղասպանության պատճառ դառնում: Կազմակերպութ-յունը հիմնադրվել է 1985թ. ապրիլին եւ կոչվում էր Էթնիկ Հակամար-տության, Զարգացման եւ Մարդու իրավունքների հարցերով Միջազ-գային Հեղինակավոր Համաժողով - The Standing International Forum on Ethnic Conflict, Development, and Human Rights (SIFEC): Կազմակեր-պության ներկայացուցիչները գիտակցում էին, որ նպատակաուղղված գործողությունները պետք է հիմնված լինեին համակողմանի ուսումնա-սիրության վրա, քանի որ առանց արմատային պատճառները փոխելու ախտանիշների դեմ պայքարը չէր կարող արդյունավետ լինել: Ուստի նրանք նպատակադրվում են վերլուծել հակամարտության պատճառ-ներն ու հետեւանքները, ուշադրություն հրավիրել սպառնալիքների վրա, լուծումներ առաջարկել, քննարկումների եւ միջնորդության հնարավո-րություն ստեղծել:

SIFEC-ը շուտով միավորվում է «Ցեղասպանության եւ կոտորածների միջազգային ահազանգ» (International Alert on Genocide and Massacres) ամերիկյան կազմակերպության հետ, 1986թ. ապրիլին հիմնադրվում է «International Alert»-ի Հոգաբարձուների առաջին Խորհուրդը: Հասա-րակական երկու կազմակերպությունների միավորումը հանգեցնում է միջոցների, տեղեկատվության, հանրային աջակցության մակարդակի բարձրացման՝ հնարավոր դարձնելով զբաղվել խրթին խնդիրներով:

«International Alert»-ի գրասենյակն այժմ Լոնդոնում է, կազմակեր-պությունն ունի շուրջ 100 աշխատակից, ովքեր գործում են շուրջ 20 տա-րածաշրջանում: Կազմակերպությունը ղեկավարվում է Գլխավոր քար-տուղարի եւ Ղեկավար ավագ թիմի կողմից:

# ՄԱՍ V

## *Հարցազրույց «International Alert» ՀԿ գլխավոր քարտուղար ԴԵՆ ՍՄԻԹԻ հետ*

***- Ինչպե՞ս է ծնվել «International Alert» կազմակերպությունը ստեղծելու գաղափարը:***

- Գաղափարը ծնվել է մարդու իրավունքների պաշտպան մի խումբ առաջապար ակտիվիստների մոտ, ովքեր համախմբվել էին Մարտին Էննալզի՝ 1970-ական թվականներին Միջազգային համաներման գլխավոր քարտուղարի շուրջ: Դա ներքին պատերազմների պատճառով խիստ աճող անհանգստության ժամանակաշրջան էր, եւ հիմնադիր խումբը նրանց թվում էր, ովքեր գիտակցում էին նաեւ, որ աշխարհի հանրությունն այդ հակամարտություններին հակադրվելու այնքան էլ մեծ կարողություն չունի: «Alert»-ը պաշտոնապես հիմնադրվել է 1986 թվականին, իսկ դրան նախորդող կազմակերպությունն իր գործունեությունն սկսել էր նախնական ծրագրով դրանից մեկ տարի առաջ Շրի Լանկայում:

***- Որպես աշխարհի ավելի քան 20 երկրներում եւ տարածքներում աշխատող խաղաղարար կազմակերպություն՝ որեւէ օրինաչափություն նկատե՞լ եք այդ բոլոր դեպքերում: Արդյո՞ք այս երկրներում հակամարտություններն ունեն որեւէ ընդհանուր պատճառներ:***

- Բռնի հակամարտության արմատներն ամենից հաճախ տնտեսական հնարավորությունների պակասի կամ տնտեսության խիստ անկման, վատ կառավարման ու այն ինստիտուտների թերացման մեջ են, որոնք կարող են կարգավորել այդ հակամարտությունը եւ կանխել այն կապիտալի դառնալուց: Պատճառը նաեւ արտաքին ուժերի միջամտության մեջ է՝ անկախ այն հանգամանքից՝ դրանց մտադրություններ են չար, թե վատ ձեւավորված քաղաքականություն ունեն: Առաջիկա տարիներին կանխատեսում ենք, որ կլիմայական փոփոխությունները կմեծացնեն կապտաղի հակամարտությունների վտանգը շատ երկրներում: Եվ փխուր է, բայց՝ փաստ, որ փորձը ցույց է տալիս, որ զինված հակամարտության ամենամեծ վտանգն ընկած է այն վայրերում, որտեղ վերջերս արդեն եղել են նման իրադարձություններ:

«International Alert»-ի աշխատանքներն առաջնորդվում են մի շարք բարոյական ու ռազմավարական սկզբունքներով:

Մեր Վարքագծային Կանոնադրությունը տեղադրված է մեր կայքում (www.international-alert.org) եւ բացատրում է մարդկանց շահերի առաջնայնությունը, արժեքների եւ դերի կարեւորությունը՝ խաղաղություն ապահովելու հարցում նրանց համար, ում վրա հակամարտությունն ազ-

դել է ամենաուղղակի կերպով: Սա նաեւ մատնանշում է մեր մարդասիրական շահագրգռվածությունը, մեր հարգանքը մարդու իրավունքների եւ մարդասիրական իրավունքի նկատմամբ, ինչպես նաեւ մեր հարգանքը սեռական ու մշակութային բազմազանության նկատմամբ: Մեր աշխատանքը ձեւավորվում է անկողմնակալության, անկախության, պատասխանատվության, անհրաժեշտության դեպքում, նաեւ գաղտնիության կարեւորության տեսանկյունից եւ հակամարտությունից տուժած երկրների ժողովրդի ու նրանց կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով: Բացի այդ՝ մենք չենք կարծում, թե գիտենք ամեն ինչ, ամենեւին. անընդհատ սովորելը խիստ կարեւոր է, որպեսզի մենք կարողանանք բարելավել մեր աշխատանքն ու արդյունավետությունը:

Այս արժեքներին, ինչպես նաեւ մեր փորձին անդրադառնալով՝ մենք եկանք այն համոզման, որ արդյունավետ խաղաղարարությունն ունի բազում պահանջներ: Այն պետք է հարմարեցվի որոշակի ենթատեքստի, լինի ամբողջական մոտեցման մաս, ընդգրկի նրանց շահերը, ովքեր ամենից շատ են տուժել, հարգի բոլորին, ովքեր ընդգրկված են եղել այդ խաղաղության գործընթացի մեջ, որպեսզի կարողանա պահպանվել հնարավորինս երկար՝ հաճախ տասնամյակից ավելի, եւ հիմնված լինի հասարակության լավ իմացության վրա:

***- «International Alert»-ը գործում է ավելի քան քսան տարի: Որոշակի առաջընթաց նկատո՞ւմ եք՝ կապված լարվածության հաղթահարման եւ հակամարտությունների կարգավորման մեխանիզմների արդյունավետության հետ: Կարելի՞ է ասել, որ աշխարհն այսօր առավել խաղաղ է դարձել:***

- Շվեդիայի Ուփփսալա համալսարանի իրականացրած զինված հակամարտությունների անկախ մոնիթորինգը ցույց է տալիս, որ աշխարհում կան շատ ավելի քիչ զինված հակամարտություններ, քան քսան տարի առաջ, եւ դրանք զգալիորեն պակաս մահացու են քան նախկինում: 1990 թվականին՝ Սառը պատերազմի ավարտից մեկ տարի անց, կար 56 պատերազմ, մինչդեռ 2007 թվականին՝ 34 պատերազմ: Սա կարող է զարմացնել նրանց, ովքեր հետեւում են Աֆղանստանում, Իրաքում, Դարֆուրում եւ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին: Բայց ճշմարտությունն այն է, որ քսան տարի առաջ պատերազմների մեծ մասն անտեսվում էր: Այժմ դրանք առավել շատ են լուսաբանվում լրատվամիջոցների կողմից, եւ դրանք կանխելու համար առավել մեծ ջանքեր են գործադրվում՝ հակամարտությունները դադարեցնելու ու երկարատեւ խաղաղություն կառուցելու ուղղությամբ:

***- Տեսականորեն ի՞նչը կարող է մարդկանց սթիպել դադարեցնել պատերազմը միմյանց դեմ ու դառնալ առավել զիջող (այս հարցն ավելի շուտ փիլիսոփայական է):***

- «International Alert»-ն իր աշխատանքը կառուցում է խաղաղության հինգ գործոնների հիման վրա: Մենք վստահ ենք, որ խաղաղությունը երկարատեւ է, երբ ուշադրության կենտրոնում են երկրի կառավարման ձեւի, ժողովրդի տնտեսական հնարավորությունների, անվտանգության եւ ժողովրդի ապահովության, արդար հասարակության պայմաններում արդար իրավական համակարգ ունենալու, ինչպես նաեւ համայնքների ներսում ու դրանց միջեւ ճիշտ ծառայությունների ու լավ հարաբերություններ պահպանելու միջոցով մարդկանց բարօրությունն ապահովելու վրա: Գլխավոր խնդիրը հետեւյալն է. խաղաղությունը հնարավոր է, երբ քաղաքական առաջնորդները հետամուտ են ժողովրդի երկարատեւ շահերին եւ հաշվետու են իրենց որոշումների ու գործողությունների համար:

***- Բացի հետպատերազմյան խաղաղարարությունից՝ «International Alert»-ն աշխատում է նաեւ հակամարտությունների կանխման ուղղությամբ: Ո՞ր աշխարհագրական շրջաններում եւ տարածքներում (որտեղ դուք աշխատել եք) եք առավել մեծ հաջողության հասել հակամարտությունների կանխման ռազմավարության հարցում:***

- Իրականում այն աշխատանքը, որ կատարվում է զինված հակամարտություններից հետո խաղաղություն կառուցելու համար, ինքնին կարող է համարվել կանխող, քանի որ պատերազմի վերսկսման մեծ վտանգ գոյություն ունի: Այժմ աշխատում ենք Արեւմտյան Աֆրիկայի այն շրջաններում ապագա բռնությունները կանխելու ուղղությամբ, որտեղ վերջերս մեծ պատերազմներ չեն եղել: Այլ տարածաշրջաններում աշխատում ենք բռնությունների կրկնությունը կանխելու ուղղությամբ:

***- 2003 թվականից ի վեր «International Alert»-ն աշխատում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ: Առաջընթաց նկատե՞լ եք խաղաղության կառուցման նախաձեռնություններում:***

- Հաշտեցման ռեսուրսներ (Concilliation Resources) եւ LINKS հասարակական կազմակերպությունների հետ մեր համատեղ նախագիծը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը օժանդակելու ուղղությամբ սկսվել է 2003 թվականին: Այդ ժամանակից ի վեր, մեր համատեղ աշխատանքի շնորհիվ, ականատես ենք բազմաթիվ ձեռքբերումների: Խաղաղարար նախաձեռնությունները, որոնք նախկինում սահմանափակվում էին զուտ հասարակական շրջանակների միջեւ կապերով եւ խուսափում էին խրթին հիմնահարցեր քննարկել, այժմ հասունացել են ու կենտրոնացել են մի շարք իրական հիմնախնդիրների վրա, որոնք պետք է հաշվի առնել, եթե ցանկություն կա, գտնել խաղաղ լուծում՝ արդյունավետ կառավարում, անվտանգություն, տնտեսության զարգացումն ու տարածաշրջանային ինտեգրացիա կառուցելու նպատակով: Այս նա-

խաձեռնությունները նաեւ շատ ընդգրկուն են եւ ուղղակի երկխոսության մեջ են ներքաշում նրանց, ովքեր ամենից շատ են տուժել հակամարտությունից եւ ցանկանում են տեղյակ լինել իրենց հեռանկարների կարեւորությանը: Մենք նաեւ տեսնում ենք ավելի շատ նախաձեռնություններ ու երկարատեւ գործողություններ հատկապես հայերի ու ադրբեջանցիների շրջանում ԼՂ հակամարտության մասին խոսելիս:

***- Ձեր կարծիքով՝ մոտ ապագայում Լեռնային Ղարաբաղում իրական խաղաղություն հնարավո՞ր է:***

- Որքան շատ ժամանակ է անցնում, այնքան դժվար է դառնում խաղաղության շուրջ համաձայնության գալ: Ավելին՝ խաղաղության պայմանագրի հասնելը նույնը չէ, ինչ խաղաղության հասնելը: Մարդիկ հաճախ են այդ երկուսը շփոթում եւ անհանգստանում, թե արդյո՞ք քաղաքական գործիչները կարող են վճռական քայլի գնալ ու մի փաստաթուղթ ստորագրել, որն ամեն ինչ միանգամից կփոխի: Խաղաղության մասին այս հեռանկարը հանգեցնում է բազմապիսի վախերի ու համապարած անորոշության: Սակայն աշխարհում չկա խաղաղության գործընթաց, որն այդպես ծավալված լիներ: Իրական փոփոխությունները եւ իրական խաղաղությունը գալիս են երկար տարիների աշխատանքից հետո: Խաղաղության պայմանագրերը գործընթացի կարեւոր մասն են, սակայն աշխատանքը սկսվում է նախօրոք, որպեսզի եթե ու երբ գա պայմանագիրը կնքելու պահը, հասարակական կարծիքն այն չմերժի: Աշխատանքը շարունակվում է նաեւ պայմանագիրը կնքելուց հետո՝ ապահովելու դրա գործնական կիրառությունը: Ներկայում քաղաքական առաջնորդների՝ համաձայնության գալու հեռանկարներն ավելի լավն են, քան որոշ տարիներ առաջ, մասամբ, կարելի է կարծել, այն պատճառով, որ Վրաստանի պատերազմը ցույց տվեց այն ահավոր վտանգները, երբ հակամարտությունները մնում են պատերազմի ու խաղաղության միջեւ անորոշ գոտում: Եվ եթե նման քայլեր կարելի է ձեռնարկել մոտ ապագայում, ապա հնարավոր է շարունակել աշխատել իրական խաղաղության հասնելու ուղղությամբ: Եթե ընդունենք, որ սա լուրջ, բարդ եւ երկարատեւ գործ է, ապա զգուշավոր լավատեսությունն արդարացված է:

# ՄԱՍ VI
# ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման գերատեսչության (ՄԹ ՄԶԳ) գործունեությունը Հայաստանում մեկնարկել է 1997թ.: Այս ժամանակահատվածում ՄԹ երկկողմ աջակցությունը Հայաստանին նպատակաուղղված էր կառավարման եւ ինստիտուցիոնալ համակարգի բարելավմանը՝ աղքատության նվազեցման եւ այս սկզբունքի հիման վրա կայուն զարգացման ապահովման նպատակով:

2006 թ. սկզբին Հայաստանը դասվել է միջին եկամուտի ստորին շեմ ապահովող երկրների շարքին, ինչի պատճառով ՄԹ ՄԶԳ-ն մինչեւ 2008թ. վերջը երկկողմ ծրագրային փաթեթը եզրափակելու որոշում է կայացրել: Երկկողմ ծրագրերին ՄԶԳ-ի տրամադրած ֆինանսական աջակցությունը 2007-2008 թթ. կազմում է 6.5 միլիոն ֆունտ ստեռլինգ:

ՄԶԳ-ն Հայաստանում իր աշխատանքը ծավալել է ազգային մակարդակով Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում՝ ՀՀ կառավարությանն աջակցելով Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման գործում: 2003-2007 թթ. ռազմավարական ժամանակահատվածում հատկապես կարեւորվել են հանրային ոլորտի, հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումները եւ մարզային զարգացումը: Աղքատության նվազեցման համար կարեւոր այս երեք ոլորտներում ծավալված աշխատանքի հիմքում ընկած է արդյունավետ կառավարումը:

## Հանրային ոլորտի բարեփոխումներ

2003 - 2007թթ. մեր երկրում ՄԹ ՄԶԳ-ն իրականացրել է Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիրը (ՀՀՈԲԾ ), որի նպատակը հանրային կառավարման արդյունավետության, թափանցիկության եւ հանրային կարիքներին արձագանքման մակարդակի բարձրացումն է: Ծրագրի բյուջեն 3.5 միլիոն ֆունտ ստեռլինգ է կազմել: Ծրագրի հիմնական գործընկերն է եղել ՀՀ կառավարությունը՝ ի դեմս սոցիալական ուղղվածություն ունեցող չորս նախարարությունների (առողջապահության, կրթության եւ գիտության, աշխատանքի, սոցիալական հարցերի, մշակույթի ու երիտասարդության հարցերի ) եւ երկու մարզպետարանների (Տավուշի, Գեղարքունիքի): Առաջին փուլում (1998-2002 թթ.) դրվել են հանրային ծառայության հիմքերը՝ աջակցություն է տրամադրվել քաղա-

քացիական ծառայության համապատասխան օրենսդրության եւ կարողությունների հիման վրա ընտրության սկզբունքով կադրերի կառավարման ընթացակարգերի մշակման համար:

***Ձեռքբերումները***

ա) Պիլոտային նախարարություններում իրականացված խոշոր կառուցվածքային եւ կազմակերպչական բարեփոխումներն են՝

- աշխատանքի եւ կրթության պետական տեսչությունների ստեղծումը եւ զարգացումը, առողջապահության, կրթության եւ գիտության նախարարություններում հանրության հետ կապերի վարչությունների ստեղծումը, առողջապահության նախարարությունում իրավաբանական վարչության ստեղծումը,
- պիլոտային նախարարությունների կառուցվածքում նախարարին կից քաղաքականության խորհուրդների ստեղծումը, որոնք պատասխանատու են քաղաքականության մշակման եւ վերանայման համար,
- նախարարության կառուցվածքում աշխատակազմի ղեկավարի պաշտոնի դերի կարեւորումն ու ամրապնդումը:

բ) Քաղաքացիական ծառայության բաղադրիչն ունի երկու հիմնական ուղղություն՝ կադրերի կառավարում եւ կադրերի վերապատրաստում, որն իրականացվել է Պետական կառավարման ակադեմիայում քաղծառայողների համար կազմակերպվող ուսուցման բարելավված ծրագրերի միջոցով: Պիլոտային նախարարություններում եւ մարզպետարաններում ներմուծվել են կադրերի կառավարման նոր մոդելներ, գործում է կադրային ռեսուրսների կառավարման տեղեկատվության համակարգ: Քաղաքացիական ծառայության աշխատանքը կենտրոնացվել է հավաքագրման, կառավարման կարողությունների զարգացման եւ կառավարության ողջ համակարգում կադրերի կառավարման ստորաբաժանումների ամրապնդման հարցերի շուրջ:

գ) Քաղաքացիների մասնակցությունն առավել ամուր հիմքի վրա է դրվել կառավարության 3-րդ շենքում տեղակայված ութ նախարարություններում եւ երկու մարզպետարաններում տեղեկատվական կենտրոնների հիմնադրման, ծառայությունների կանոնակարգերի մշակման ու հրապարակման, մատուցվող ծառայությունների ու դրանց համապատասխան չափանիշների մասին քաղաքացիների իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված քարոզարշավների միջոցով: Մշակվել է «Մասնակցության ուղեցույց»-ի երկու համար, առողջապահության, կրթության եւ սոցիալական ապահովության ոլորտներում տրամադրվող ծառայությունների հասարակական գնահատականը պարզելու համար ծառայություններից օգտվողների կարծիքի հարցումներ են կազմակերպվել:

Ծրագրի ընդհանուր արդյունքը երեք նախարարությունների եւ երկու մարզպետարանների կողմից քաղաքացիների կարիքներին արձագանքելու առավել բարձր մակարդակի ապահովումն է:

***Հայացք դեպի ապագան***

ՀՀՈԲԾ-ի աշխատանքն ավարտվել է 2007թ. օգոստոսի վերջին: Քաղված դասերը կօգնեն Հայաստանում հանրային ոլորտի բարեփոխումների իրականացման հետագա քայլերի պլանավորման հարցում՝ ռազմավարական նշանակության այնպիսի առաջնահերթ ծրագրերի համատեքստում, ինչպիսիք են ԱՀՌԾ-ն, հակակոռուպցիոն ռազմավարությունը եւ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Հետագա քայլերն են՝

- նախարարություններում ռազմավարական քաղաքականության մշակման ու իրականացման գործառույթների եւ կարողությունների ամրապնդումը,
- հանրային կառավարման բարեփոխումների փորձի տարածումը կառավարման ողջ համակարգում,
- հանրային ոլորտի բարեփոխումների եւ ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդման հստակ ծրագրի մշակումը նվիրատու կազմակերպությունների աջակցությամբ հետագա իրականացման համար:

## Ապակենտրոնացում եւ տարածքային զարգացում

Հայաստանի մարզային զարգացման ծրագրի (ՀՄԶԾ ) նպատակը Հայաստանի երկու մարզերի՝ Գեղարքունիքի եւ Տավուշի մարզպետարանների կարողությունների զարգացումն է՝ աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման, Հայաստանի մարզային զարգացման քաղաքականությանն օժանդակելու ուղղությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2003թ. մարտին եւ ավարտվել է 2008թ. դեկտեմբերին: Ծրագրի բյուջեն 4.9 միլիոն ֆունտ ստեռլինգ է: Ծրագրի գործընկերն է ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության: ՀՄԶԾ-ն ունեցել է երկու փուլ, առաջինն ամփոփվել է 2005թ. մարտին՝ ՀՀ կառավարության կողմից մարզային զարգացման երկու ծրագրերի հաստատմամբ: Երկրորդ փուլում շեշտադրված է մարզային զարգացման ծրագրերի իրականացման, մոնիթորինգի եւ գնահատման, վերանայման եւ ազգային քաղաքականության մեջ ընդգրկման ենթակա անհրաժեշտ հմտությունների ու ռեսուրսների ապահովումը: Երկրորդ փուլի առաջնային նպատակներից է ինստիտուցիոնալ եւ իրավական դաշտի զարգացումը, ծրագրի ավարտից հետո մարզային զարգացման ծրագրերի գործընթացի կայուն շարունակականության ապահովումը եւ Հայաստանի այլ մարզերում մարզային զարգացման այս մոտեցման կիրառումը:

Մարզային զարգացման ծրագրերի իրականացման գործընթացն ընդգրկում է խորհրդատվական եւ ներդրման բաղադրիչներ: Վերջինով նախատեսված էր միասնական գանձապետական հաշվին 2 միլիոն ֆունտ ստեռլինգ դրամաշնորհային գումարի փոխանցում, ինչը կազմում է մարզային զարգացման ծրագրերում առաջարկված ներդրումային ծախսերի շուրջ 2%-ը: Սկզբնական այս գումարը նվիրատու այլ կազմակերպություններին կոչված էր խրախուսել գումարներ ներդնել նաեւ այլ մարզերում մարզային զարգացման ծրագրերի մշակման եւ իրականացման համար:

***Ձեռքբերումները***

ՀՄՋԾ-ի նպատակն է կառավարման այլընտրանքային մոտեցումների մշակումը՝ ուղղված ժողովրդավարացման աջակցմանն ու ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը: Նոր մոտեցման հիմքում ընկած են արդեն իրականացված հետեւյալ գաղափարները՝

- մշակվել է տարածքային պլանավորման վերընթաց գործընթաց, որին մասնակցել են քաղաքացիական հասարակությունը եւ համայնքային կազմակերպութունները, եւ որը մարզային կառավարման կառույցների միջնորդությամբ շաղկապված է կենտրոնական գործադիր մարմիններին,

- ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մարզային զարգացման ծրագրերը եւ ընդգրկվել պետական բյուջեի պլանավորման ծրագրում (միջնաժամկետ ծախսերի ծրագրում),

- մարզպետարանների համար մշակվել են տարեկան աշխատանքային ծրագրեր, որոնք մարզային զարգացման ծրագրերը շաղկապում են իրականացման համար տրամադրվող միջոցներին,

- մշակվել է մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի եւ գնահատման մեխանիզմ, որն ապահովում է այս գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը (նաեւ շաղկապված է տարեկան բյուջեին եւ աշխատանքային պլանին),

- ներդաշնակեցվել են ԱՀՌԾ-ի եւ մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի եւ գնահատման մեխանիզմները եւ չափորոշիչները,

- ստեղծվել է մի մեխանիզմ, որով մարզային զարգացման ծրագրերի իրականացման համար տրվող դրամական միջոցները (այդ թվում՝

նվիրատու կազմակերպությունների տրամադրած) ծրագրվում եւ վերահսկվում են պետական բյուջեի եւ կենտրոնական գանձապետական համակարգի միջոցով,

- ակտիվ մասնակցություն է ապահովվել ՀՌԾ վերանայման գործընթացին՝ մարզային առաջնահերթությունները ՀՌԾ-ում ավելի լավ արտացոլելու համար,

- ՄԶՆ-ի տրամադրած դրամական միջոցների բյուջետավորման իրավասությունը կենտրոնական գործադիր մարմինը պատվիրակել է մարզպետարաններին: Սա շոշափելի առաջընթաց է եւ մարզպետարաններին բյուջետավորման առավել լայն իրավասությունների պատվիրակման հեռանկարներ է բացում:

Մարզային զարգացման ծրագրերն արդեն դրական ազդեցություն են գործել աղքատության նվազեցման հարցում՝ նորաստեղծ ձեռնարկությունների համար պայմանները բարելավելու ու մի շարք համայնքների սոցիալական եւ մշակութային կապիտալը համալրելու միջոցով: Մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են նաեւ ենթակառուցվածքների ստեղծման կամ վերականգնման մեծ թվով ծրագրեր:
Միջազգային զարգացման նախարարության այս ծրագիրը աջակցել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների եւ մարզպետարանների ու տեղական իշխանությունների միջեւ երկխոսության ընդլայնմանը, ինչի արդյունքում հասարակական կազմակերպությունների վերահսկողական դերը դարձել է առավել ծանրակշիռ, կառավարման կառույցները՝ առավել թափանցիկ ու մատչելի՝ մարզային զարգացման ծրագրերի իրականացման համատեքստում:

### *Հայացք դեպի ապագան*

ՀՄԶԾ-ն աստիճանաբար կրճատում է մարզպետարաններին տրվող ուղղակի տեխնիկական աջակցությունը, եւ զուգընթացն առավելապես խորհրդատվական տեսք է ստանում: Այդ իսկ պատճառով մարզային զարգացման ծրագրերի կայունությունն ապահովելու նպատակով հարկավոր է առավել մեծ ուշադրություն դարձնել ինստիտուցիոնալ եւ իրավական կուռ դաշտի ապահովմանն ու Հայաստանի այլ մարզերում մարզային զարգացման ծրագրերի կիրառման համար անհրաժեշտ գործընթացների մշակմանը: ՄԶՆ-ն սերտորեն համագործակցում է Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության հետ տարածքային զարգացման լավագույն փորձը փոխանցելու հարցում, քանի որ Եվրահանձնաժողովը ծրագրում է այս հատվածում մեծ ներդրում կատարել Եվրո-

պական Միության Նոր հարեւանության քաղաքականության ծրագրի շրջանակներում: 2008 թվականի ընթացքում ՀՄԶԾ-ն աջակցում է ՀՀ կառավարությանը մշակել մարզային զարգացման մի երկմակարդակ ռազմավարություն, որի միջոցով մարզային պլանավորման ու իրականացման ՀՄԶԾ փորձը կփարածվի Հայաստանի բոլոր մարզերում՝ նպատակաուղղված ՀՄԶԾ-ի ինստիտուցիոնալ շրջանակում մարզային անհամաչափությունների վերացմանը: Այս գործընթացը զգալիորեն կհեշտանա նպաստավոր նորմատիվ հիմքի ձեւավորման միջոցով, օրինակ՝ հնարավոր է կառավարության մի որոշում «ՀՄԶԾ մոդելը» բոլոր մարզերում տարածելու գործողությունների պլանի մասին:

## Հանրային ֆինանսների կառավարում

Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը ծրագիրը (ԾԲԾ ) նպատակաուղղված է հանրային ծախսերի արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության (ՖԷՆ) աշխատանքային գործընթացի շեշտադրումների՝ ծախսված գումարի դիմաց առավելագույն արժեք ապահովելու, հիմնավորված քաղաքականություն վարելու, ծրագրային բյուջետավորում եւ միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ ) իրականացման գործում բյուջետավորման կառույցների կարողությունները ամրապնդելու միջոցով: Ծրագիրը մեկնարկել է 2005թ. նոյեմբերին եւ կավարտվի 2008թ. վերջին: Բյուջեն 3.5 միլիոն ֆունտ ստեռլինգ է: Ծրագրի գործընկերն է ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության (2008թ. ապրիլից՝ ֆինանսների նախարարություն):

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած են հանրային ֆինանսների կառավարման ոլորտում խոշոր բարեփոխումները՝ մասնավորապես ՄԺԾԾ գործընթացի ներմուծումը, որ իրականացվել է 2002-2006 թթ. ՄԶՆ-ի եւ այլ նվիրատու կազմակերպությունների աջակցությամբ: ՄԺԾԾ-ի եւ բյուջեի համակցումը ինստիտուցիոնալ հիմքի վրա է դրվել 2004-2006 թթ. ՄԺԾԾ պարբերաշրջանում: Ծրագիրն իրականացվում է երկու աշխատանքային ուղղություններով: Առաջինը Ֆինանսների նախարարության, իսկ երկրորդը բյուջետավորման գործընթացում ներգրավված պետական մարմինների (ՊՄ) հետ համագործակցությունն է, որտեղ ներդրվում են ծրագրային բյուջետավորման մոտեցումներն ու մեխանիզմները: ՊՄ աշխատանքային ուղղության մասով ծրագիրը սկզբնական փուլում իրականացվում էր չորս պիլոտային նախարարություններում՝ մշակույթի եւ երիտասարդության հարցեր, կրթություն եւ գիտություն, առողջապահություն, աշխատանքի եւ սոցիալական հարցերի: Առաջին փարին հաջողությամբ եզրափակելուց հետո վարչապետի

հրամանով ծրագրում ընդգրկվել են 10 լրացուցիչ պետական մարմիններ, որոնք կարեւոր են ԱՀՌԾ տեսակետից: 2008թ. հունվարից 64 այլ մարմիններ են ներառվել ծրագրի մեջ, որոնցից 18-ին ԾԲԾ-ն օժանդակում է անմիջականորեն, իսկ մյուսներին՝ Ֆինանսների նախարարության միջոցով:

***Ձեռքբերումները***

- Փոխհամաձայնեցվել է «խորացման» եւ «ընդլայնման» սկզբունքներով ծրագրային բյուջետավորման տարածման ռազմավարությունը: Ծրագրային բյուջետավորման հիմնական փարրերը նախապես փորձարկվել են չորս պետական մարմիններում: Հաջող փորձարկումից հետո նրանց քանակն ընդլայնվեց մինչեւ 14-ի, իսկ այժմ ներառում է բոլոր կենտրոնական եւ մարզային պետական մարմինները: Աշխատանքը 14 մարմիններում կենտրոնացած էր բյուջետային ծրագրերի վերաձեւավորմանը՝ համաձայն ծրագրային բյուջետավորման սկզբունքների եւ ոչ ֆինանսական չափանիշների մշակման:

- ԾԲԾ-ի գործողությունները հիմնականում ուղղված են բարեփոխումների «ընդլայնմանը»: «Խորացման» ուղղությունն իրականացվում է Առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունում (2008թ. ապրիլից՝ էկոնոմիկայի նախարարություն), որտեղ փորձարկվում է ֆինանսական կառավարման ամբողջական ցիկլը, եւ աջակցություն է տրամադրվում նախարարության ռազմավարական պլանի մշակմանը:

- Կիրառվում է պիլոտային նախարարությունների կողմից բյուջեի կատարման հաշվետվությունների պատրաստման եւ ՖԷՆ ներկայացման նոր համակարգ: Ծրագրի սկզբնական փուլում ընդգրկված բոլոր չորս պիլոտային նախարարություններն այժմ պատրաստում են բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություններ եւ ներկայացնում ՖԷՆ: Ի լրումն նշվածի՝ ապրանքների եւ ծառայությունների փաստացի տրամադրման շեշտադրմամբ եւ նոր ձեւաչափով տարեկան հաշվետվություններ են հրապարակվում եւ ներկայացվում Ազգային ժողով: Նոր ԾԲԾ-ն օժանդակել է 10 նախարարությունների նոր ձեւաչափով եռամսյակային հաշվետվություններ ներկայացնել ՖԷՆ 2008 թ. ապրիլի կեսից:

- Ծրագիրը համագործակցել է պիլոտային նախարարությունների եւ ՖԷՆ-ի հետ ֆինանսական կառավարման գործող համակարգերի, այդ թվում՝ գանձապետարանի եւ բյուջեի կատարման համակարգերի մանրամասն գնահատման համար: Այս աշխատանքն օգտագործվել է ծրագրային բյուջետավորման կիրառման ռազմավարության եւ ժամանակացույցի մշակման համար՝ նպատակ ունենալով հանրային ֆինանսական կառավարման տարբեր կարեւոր կողմերի համար ներդաշնակ առաջընթաց ապահովել:

- 2007-ին ԾԲԾ-ն պատրաստել է 2008թ. պետական բյուջեի բոլոր փաստաթղթերի ամբողջական մոդելը նոր մոտեցումով ու ձեւաչափերով՝ բյուջեի առաջարկվող փոփոխությանն ընդհանրական պատկեր տալու համար: Արդյունքում 2008թ. հունվարից բյուջեի վերանայված ձեւաչափը սկսել է օգտագործվել ամբողջ կառավարությունում:

- Ծրագրի աշխատակիցները հանրային ծառայողների ուսուցումն ապահովել են ՓԷՆ-ի ուսուցման կենտրոնի միջոցով, որի հետ կանոնավոր եւ փոխհամաձայնեցված համագործակցություն է իրականացվում: Ուսուցողական մոդուլները երկուսն են՝ կատարողականի պլանավորում ու վերահսկում եւ ծրագրային բյուջետավորման հիմունքներ ու մեթոդոլոգիա: ԾԲԾ-ն ՓԷՆ-ի ուսուցման կենտրոնում խորացված ուսուցում է տրամադրելու 135 քաղծառայողների, իսկ կենտրոնի ուսուցիչների միջոցով շարունակական վերապատրաստում է անցնելու 600 քաղծառայող՝ ծրագրային բյուջետավորման հիմունքներին ծանոթանալու համար:

Ծրագրի միջնաժամկետ ազդեցությամբ է պայմանավորված կառավարության կողմից պետական բյուջեի կազմման լիովին նոր մոտեցման եւ բյուջեի փաստաթղթերի վերափոխված ձեւաչափերի ընդունումը:

### *Հայացք դեպի ապագան*

Այս բարեփոխումների շարունակականությունը կարելի է ապահովել ողջ կառավարության՝ ծրագրային բյուջետավորմանն անցնելու միջոցով, որին կարելի է հասնել 2008-2009 թթ.-ին իրականացնելով հետեւյալ քայլերը.՝

- պետական բոլոր մարմինների բյուջետային ծրագրերի ձեւավորում՝ համաձայն ծրագրային բյուջետավորման ձեւաչափի, եւ 2010թ. բյուջեի պատրաստում այդ ձեւաչափով՝ ներառելով ոչ ֆինանսական կատարողականի տեղեկատվությունը,
- եռամսյակային հաշվետվությունների պատրաստում բոլոր պետական մարմինների կողմից, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների պատրաստում ու ներկայացում ֆինանսների նախարարություն եւ Ազգային ժողով վերը նշված 14 պետական մարմինների կողմից,

- բյուջեի օրենքի վերանայում, որպեսզի այն ապահովի բյուջետային փաստաթղթերի պատրաստում՝ համաձայն ծրագրային բյուջետավորման պահանջների,

- ունակությունների զարգացում ֆինանսների նախարարությունում եւ մյուս պետական մարմիններում՝ ծրագրային բյուջետավորման շարունա-

կական իրականացման համար (ԾԲԾ-ն ֆինանսների նախարարությանը եւ նրա ուսուցման կենտրոնին կփոխանցի վերապատրաստման համար անհրաժեշտ բոլոր նյութերն ու մոդուլները,

- ֆինանսների նախարարությունում ներմուծել եռամսյակային եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների վերահսկման եւ գնահատման մեխանիզմներ,

- կարճաժամկետ հատվածում հարկաբյուջետային վերահսկման գործող մեխանիզմների, այդ թվում՝ գործող գանձապետական համակարգի եւ բյուջեի կատարման գործընթացների պահպանում:

## ՀՀ կառավարության կողմից պիլոտային ծրագրերի արդյունքների տարածման ուղղությամբ նախաձեռնվող քայլերը

Հաշվի առնելով 2008թ. վերջին Հայաստանում ՄԶԳ-ի գործունեության եզրափակման որոշումը՝ ՄԶԳ-ն ակտիվորեն խրախուսել է իրականացված պիլոտային ծրագրերի արդյունքների տարածումը: ՄԶԳ-ի փորձի եւ նվաճումների խարսխումը ԱՀՌԾ-ի վերանայված տարբերակում ՀՀ կառավարությանը հնարավորություն կընձեռի հետամուտ լինել զարգացման իր օրակարգին այլ աղբյուրներից՝ մասնավորապես ԵՄ Նոր հարեւանության եւ գործընկերության գործիքների ֆինանսավորումից:

## ՄԶԳ տարածաշրջանային ծրագրերը

ՄԶԳ-ն ֆինանսավորում է տրամադրել «Եվրասիա» հիմնադրամին՝ «Եվրոպական ինտեգրման շուրջ երկխոսությանը քաղաքացիական հասարակության մասնակցության խրախուսում» տարածաշրջանային (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) ծրագիրն իրականացնելու համար, որի նպատակն է խթանել հանրային քաղաքականության տեղական կազմակերպությունների նոր ձեւավորվող կարողությունների զարգացումը՝ քաղաքականության վերլուծությունների, կառավարության ու Եվրոպայի հարեւանության քաղաքականության շրջանակներում ընդգրկված այլ երկրներում իրենց գործընկեր կազմակերպությունների հետ առաջարկներ պատրաստելու միջոցով:

2005-06 թթ. ընթացքում ՄԶԳ-ն աջակցություն է տրամադրել Ջրային տնտեսության պետական կոմիտեին (250 հազար ֆունտ ստեռլինգ)՝ ջրային հատվածի ֆինանսավորման ազգային ռազմավարություն մշակելու համար: Ծրագրի նպատակն էր բարելավել այս հատվածում համա-

գործակությունը եւ ներդրումների հարցում համաձայնեցված մոտեցում մշակել: Ռազմավարությունը հաջողությամբ մշակվել եւ իրականացվում է Համաշխարհային բանկի ու այլ նվիրատու կազմակերպությունների աջակցությամբ: Հայաստանում կուտակված փորձը ԵՄ Ջրային հապ-վածի նախաձեռնության շրջանակներում ներկայացվել է Վրաստանի եւ Մոլդովայի գործընկերներին:

## ՄԱՍ VII

## *Հարցազրույց Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման գերատեսչության հայաստանյան գրասենյակի ղեկավար ԱՐՏԱՇԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ հետ*

***- Ինչպե՞ս է հիմնադրվել Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարությունը, եւ որո՞նք են հիմնական նպատակները:***

- Մեծ Բրիտանիայի կառավարությունն իր գաղութների շարունակական զարգացման պատասխանատվությունը գիտակցել է 1929թ., երբ ընդունվել է Գաղութային Զարգացման Ակտը: 1961թ. ստեղծվում է Տեխնիկական համագործակցության դեպարտամենտը՝ օգնության ծրագրերի տեխնիկական մասն իրականացնելու նպատակով: Իսկ 1964թ. արդեն հիմնվում է Անդրօվկիանոսյան զարգացման նախարարությունը, որ ղեկավարվում էր համապատասխան նախարարի կողմից: Այս նոր կառույցը համատեղում է Տեխնիկական համագործակցության դեպարտամենտի, Արտաքին գործերի, Համագործակցության նախարարությունների, Գաղութային ծառայությունների եւ կառավարության մյուս դեպարտամենտների՝ անդրօվկիանոսյան օգնության ապահովման գործառույթները:

1970թ. նախարարությունը լուծարվում է, եւ Անդրօվկիանոսյան զարգացման նախարարի գործառույթները փոխանցվում են Արտաքին գործերի եւ Համագործակցության հարցերով պետքարտուղարին: Անդրօվկիանոսյան զարգացման աշխատանքն արդյունքում ստանձնում է Անդրօվկիանոսյան զարգացման վարչությունը, որն Արտաքին հարաբերությունների եւ Համագործակցության գրասենյակի կազմում էր:

1974թ. կառավարությունը հայտարարում է, որ Անդրօվկիանոսյան զարգացման վարչությունը կրկին անկախ նախարարություն պետք է լինի: Ինչեւէ, 1979թ. նոյեմբերին նախարարությունը կրկին վարչության է վերափոխվում:

1997թ. Անդրօվկիանոսյան զարգացման վարչությունը փոխարինվում է Միջազգային զարգացման դեպարտամենտով, որը գլխավորում է պետքարտուղարը: Վերջինը գործում է (2003թ. հունիսից) պետնախարարի (2007թ. հունիսից), երեք խորհրդարանականների աջակցությամբ: Միջազգային զարգացման պետքարտուղարը դեպարտամենտի գործունեության համար ձեւականորեն պատասխանատու է Խորհրդարանի առջեւ:

Միջազգային զարգացման գերատեսչությունն (ՄԶԳ) ապահովում է Մեծ Բրիտանիայի օգնությունն աղքատ երկրներին, աշխատում ծայրահեղ աղքատությունից ազատվելու ուղղությամբ:

Աղքատության նվազեցմանն ուղղված զարգացումը կարող է ապահովվել տարբեր քայլերի միջոցով, ինչպես օրինակ հակամարտությունների հաղթահարումը, առեւտրի զարգացումը, կլիմայական փոփոխությունների կանխումը, առողջապահության եւ կրթության զարգացումը:

Շուրջ մեկ միլիարդ մարդ՝ աշխարհի բնակչության մեկ հինգերորդ մասը, ապրում է ծայրահեղ աղքատության պայմաններում, ինչը նշանակում է, որ նրանք ապրում են օրական ավելի քիչ քան 65 փունտ ստեռլինգով: Տասը միլիոն երեխա մահանում է մինչեւ հինգ տարեկանը՝ հիմնականում կանխելի հիվանդություններից: Ավելի քան 13 միլիոն երեխա դպրոց չի հաճախում:

ՄԶԳ-ն աջակցում է երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը՝ պայքարելով աղքատության հիմնական պատճառների դեմ: ՄԶՆ-ն արձագանքում է նաեւ բնական եւ մարդածին աղետների դեպքում:

ՄԶԳ-ի գործունեությունը հետեւյալ համընդհանուր նպատակների մաս է կազմում՝

- կրճատել ծայրահեղ աղքատության եւ քաղցի պայմաններում բնակվող մարդկանց թիվը,
- տարրական կրթություն ապահովել բոլոր երեխաների համար,
- խրախուսել սեռական հավասարությունը եւ կանանց առավել ուժեղ ձայնի իրավունք տալ,
- նվազեցնել մանուկների մահացության աստիճանը,
- բարելավել մայրերի առողջական վիճակը,
- պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի եւ այլ հիվանդությունների դեմ,
- ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը,
- ապահովել զարգացման ուղղությունը որդեգրած հաստատությունների համագործակցությունը:

Սահմանված նպատակները միասին կազմում են ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման (ութ) նպատակները», որոնք պետք է իրականացվեն մինչեւ 2015թ.: Այս նպատակներից յուրաքանչյուրն ունի իր որոշակի նշանակետերը:

***- Ինչպե՞ս է ՄԶԳ-ն իրականացնում իր գործունեությունը:***

- ՄԶԳ-ն համագործակցում է կառավարությունների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի եւ այլոց հետ: Այն աշխատում է նաեւ բազմակողմ այնպիսի հաստատությունների հետ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի գործակալությունները, Եվրոպական հանձնաժողովը:

ՄԶԳ-ն գործում է ավելի քան 150 երկրում, այն կենտրոնակայաններ ունի Լոնդոնում եւ Արեւելյան Քիլբրայդում՝ Գլազգոյի մոտ, 64 գրասենյակ՝ արտասահմանում: ՄԶԳ աշխատակազմը 2400 անձից է բաղկացած, որոնց կեսն աշխատում է արտերկրում:

***- Ո՞ր տարածաշրջաններում է ներգրավված Միջազգային զարգացման գործակալությունը:***

- ՄԶԳ-ը գործում է բոլոր մայրցամաքներում՝ բացի, բնականաբար, Արեւմտյան Եվրոպայից, Հյուսիսային Ամերիկայից եւ Ավստրալիայից:

ՄԶԳ-ն աշխարհագրական չորս տրոհում ունի՝

- Արեւելյան եւ Կենտրոնական Աֆրիկա,
- Արեւմտյան եւ Հարավային Աֆրիկա,
- Եվրոպա, Մերձավոր Արեւելք, Ամերիկաներ, Կենտրոնական եւ Արեւելյան Ասիա,
- Հարավային Ասիա:

Հայաստանը, բնականաբար, երրորդ խմբում է՝ եվրոպական հարեւանության եւ Կենտրոնական Ասիայի թիմում:

***- Հայաստանում գերատեսչության գործունեությունը սկսվել է 1997թ., մինչդեռ ՀՀ-Մեծ Բրիտանիա դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռեւս 1991թ., ինչո՞վ է դա պայմանավորված:***

- Հայաստանում ՄԶԳ-ն սկսել է գործել 1997 թվականից: Մինչեւ այդ՝ 1995թ. ի վեր, Հայաստանին օժանդակություն էր տրամադրվում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության «Know how» հիմնադրամի կողմից՝ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան միջոցով: Մինչեւ այդ 1993 թվականից ուղղակի համագործակցություն էր իրականացվում Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ:

***- Միջազգային զարգացման գերատեսչության գլխավոր նպատակն աղքատության կրճատումն է, այս առումով ի՞նչ առաջընթացի մասին կարելի է խոսել Հայաստանում:***

- Օրինակ՝ աղքատության ցուցանիշը Տավուշում 2004-2006թթ. ընթացքում 30.7%-ից նվազել է մինչեւ 23.5%-ի, Գեղարքունիքում՝ 59.9%-ից 29.8%-ի (աղբյուրը՝ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայություն):

# ՄԱՍ VIII
# ԱՆԳԼԱԽՈՍՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Անգլախոսների միությունը միջազգային կրթական բարեգործական կառույց է, որի նպատակն է խթանել «միջազգային շփումներն ու կապերի հաստատումը անգլերենի միջոցով»: Աշխարհը կարիք ունի շփման, եւ անգլերենը գործիք է դրան հասնելու. թերեւս այսպես կարելի է հակիրճ նկարագրել միության նպատակը: Անգլախոսների միությունը ստեղծվել է Առաջին աշխարհամարտից հետո՝ 1918 թ.՝ նպատակ ունենալով սերտ հարաբերություններ հաստատել անգլերեն խոսող մարդկանց միջեւ: Ժամանակի ընթացքում այն վերաճել է համաշխարհային կազմակերպության՝ ավելի քան 50 երկրում հիմնադրելով մասնաճյուղեր: Միության առաջին նախագահներից է եղել Ուինսթոն Չերչիլը:

Անգլերենը պաշտոնական կամ հատուկ կարգավիճակ ունի շուրջ 75 երկրում, որտեղ լեզուն կրողների թիվն անցնում է 2 միլիարդից: Անգլերենը՝ որպես երկրորդ լեզու, օգտագործում է 375 միլիոն մարդ, շուրջ 750 միլիոնի համար անգլերենը օտար լեզու է: Վիճակագրության համաձայն՝ աշխարհում չորս մարդուց մեկն այս կամ այն մակարդակով խոսում է անգլերեն:

Լոնդոնում գտնվող Անգլախոսների միությունը հետամուտ է իր հիմնական նպատակին՝ անգլախոսների համաշխարհային ցանցը որպես միջոց ծառայեցնել միջազգային հարաբերությունները զարգացնելու համար:

Կառույցի գործունեությունը բազմաբնույթ է. միությունը առանցքային եւ հրատապ թեմաների շուրջ միջազգային համաժողովներ, սեմինարներ եւ հանդիպումներ է կազմակերպում: Անգլախոսների միությունը փորձում է հնարավորինս հասանելի լինել ամբողջ աշխարհի երիտասարդներին, խրախուսում նրանց խոսել անգլերեն: Այդ նպատակով Միությունն իրականացնում է փարաբնույթ կրթական միջոցառումներ, այդ թվում՝ նաեւ միջազգային երիտասարդական փոխանակաման ծրագրեր: Ամբողջ աշխարհում ամեն տարի 4000 դպրոցական, ուսանողներ, ավելի քան 3000 ուսուցիչ եւ կրթական ոլորտի այլ մասնագետներ մասնակցում են միության կրթական միջոցառումներին:

Անգլախոսների միությունը մասնաճյուղ ունի նաեւ Հայաստանում: Այն աչքի է ընկնում իր հետաքրքիր նախաձեռնություններով ու բազմաբնույթ, հեռանկարային ծրագրերով:

## ՄԱՍ IX

***Հարցազրույց Անգլախոսների միության գլխավոր տնօրեն ՎԱԼԵՐԻ ՄԻՏՉԵԼԻ հետ***

***- Ո՞րն է Անգլախոսների միության գլխավոր նպատակը:***

- Միության առաջնային խնդիրը անգլախոսների միջեւ գլոբալ փոխըմբռնման ձեռքբերումն է: Գրող եւ լրագրող Իվեն Ռենչը 89 տարի առաջ Լոնդոնում հիմնել է այս միությունը: Առաջին աշխարհամարտի սարսափների հետեւանքով ստեղծված կառույցի միջոցով հիմնադիրը ձգտում էր խաղաղություն սփռել: Այժմ էլ մեր նպատակին հասնելու համար մենք շարժվում ենք երկու ճանապարհով. նախ՝ կրթական ծրագրեր ենք իրականացնում, ու քանի որ չենք կարող դա միայնակ անել, որպես երկրորդ քայլ՝ մասնաճյուղեր ենք հիմնում: Այսօր աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, մեր ներկայացուցիչներն ունենք:

***- Քանի՞ երկրում է գործում ձեր կազմակերպությունը: Հայաստանից բացի՝ Հարավկովկասյան տարածաշրջանի այլ երկրներում, օրինակ՝ Ադրբեջանում կամ Վրաստանում, մասնաճյուղեր ունե՞ք:***

- Այսօր լիարժեք գործում ենք 46 երկրում: Հայաստանի հետ համագործակցություն սկսելուց 3 տարի անց ներկայացուցչություն հիմնեցինք նաեւ Վրաստանում: Անգլախոսների միության այդ երկու մասնաճյուղերի գործունեությունն էլ նշանակալի է:

***- Ինչ կարճաժամկետ ծրագրեր ունեք:***

- Տարբեր երկրներում իրականացվող մեր ծրագրերն առաջին հերթին վերաբերում են հրապարակախոսությանը, որի համար հատուկ մրցույթներ ենք անցկացնում: Շատ կարեւոր է, որ երիտասարդները վստահ խոսեն իրենց հմտությունների, ունակությունների մասին: Մրցույթի ավարտին բանավեճեր ենք կազմակերպում մասնակիցների միջեւ, այդպիսով նրանք տեղեկատվություն, կարծիք են փոխանակում՝ ճանաչելով միմյանց: Հրապարակախոսության միջազգային մրցույթը կազմակերպվում է 38 երկրների միջեւ, որոնց թվում է Հայաստանը: Ի դեպ, շատ լավ հռետորներ ունեք:

Տարբեր երկրներում միջազգային խորհրդաժողովներ ենք կազմակերպում: Մարդկանց միավորելու 2 ճանապարհ ունենք՝ Լոնդոնում գործող անգլերենի խումբը, միջազգային ասպարեզում էլ՝ «Շեքսպիրյան աշխարհ» խորագրով վերապատրաստման դասընթացները: Վերջիններիս կարող են մասնակցել այն ուսուցիչները, ում համար անգլերենը երկրորդ լեզու է: Անգլախոսների միության բոլոր մասնաճյուղերից ընտրվում է 20 ուսուցիչ՝ մասնակցելու մեկշաբաթյա դասընթացին: Յուրաքանչյուր տա-

րի կազմակերպում ենք նաեւ «Օքսֆորդի փակ քոլեջ» խորագրով խորհրդաժողով, որի թեման միջազգային հարաբերություններն են: Մասնակիցները տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ են՝ լրագրողներ, գիտնականներ, երիտասարդ ձեռներեցներ: Նրանք ունկնդրում են տարբեր թեմաների շուրջ ելույթ ունեցող փայլուն հռետորների, պատկերացում կազմում մեր եւ այլ ժողովուրդների մշակույթների մասին, որն էլ մեր հիմնական նպատակն է: Նպաստավոր միջավայր ենք ստեղծում, որ մարդիկ՝ հատկապես երիտասարդները, շփվեն միմյանց հետ ու ճանաչեն մյուսների մշակույթը:

***- Կարո՞ղ ենք ասել, թե ձեր կազմակերպության իրականացրած միջոցառումների հիմնական ուղղվածությունը մշակութային է, թե՞ ձեր գործունեությունն այլ ոլորտներ էլ է ներառում:***

- Մշակույթը համաշխարհային երեւույթ է, ուստի անգլերեն լեզվին եւ գրականությանը նվիրված, ինչպես եւ մշակութային բազմազանությունն ընդգծող բազմաթիվ միջոցառումներ ենք կազակերպում: Սակայն ունենք նաեւ ժողովրդավարությանը նվիրված ուսանողական ծրագիր, երբ ԱՄՆ-ից ժամանած 10 ուսանողներ հանդիպում են բրիտանացի խորհրդարանականների հետ, միեւնույն ժամանակ բրիտանացի երիտասարդների խումբ էլ ուղեւորվում է Միացյալ Նահանգներ՝ հանդիպելու ԱՄՆ սենատորների: Նման փոխանակման ծրագրեր ենք իրականացնում նաեւ Ֆրանսիայի հետ: Բայց ցանկություն կա համագործակցության շրջանակներն ընդլայնելու, որ ներգրավենք նաեւ այլ երկրներ:

***- Կպատմե՞ք Անգլախոսների միության հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության հեռանկարների մասին:***

- Առաջինն, ինչ տպավորվել էր, երբ առաջին անգամ Հայաստան եկա, հայերի չափազանց ջերմ հյուրընկալությունն էր: Հենց այդ ժամանակ հիմնեցինք Անգլախոսների միության հայաստանյան գրասենյակը, որը մեզ հնարավորություն է տալիս կապ պահպանել հայերի հետ: Ասեմ, որ Միության այդ մասնաճյուղը բավական ակտիվ է: Հայ մասնակիցներ ունենք նաեւ Ելույթների եւ բանավեճերի մեր կենտրոնում: Վերջին տարիների ընթացքում շատ մասնակիցներ ենք ունեցել, ում մասին հպարտությամբ ենք խոսում. նրանք այժմ դասավանդում են ձեր համալսարաններում: Շատ լավ կլինի, որ մեր հայ գործընկերները նման ոգեւորությամբ աշխատեն նաեւ հետագայում: Հաջորդ տարի Անգլախոսների միության 90-ամյակն է՝ երիտասարդացման 90 տարիներ. չէ՞ որ մեր եռանդուն աշխատանքի շնորհիվ է, որ այսօր համաշխարհային մակարդակով լուրջ անելիքներ եւ ասելիք ունենք: Մեր գրասենյակը բազմաթիվ նախաձեռնություններ ունի, հատկապես ուսանողական, քանի որ ծրագրերի հիմնական նպատակը ուսուցումը խթանելն է, ուսուցիչներին խրախուսելը: Տարբեր ոլորտների մասնագետներին կոչ ենք անում աջակցել Հայաս-

փանի Անգլախոսների միությանը, միություն, որ գլոբալ ընտանիքի մաս է: Եթե ինչ-որ մեկը ցանկանա այցելել բոլոր այն երկրները, որտեղ գործում ենք, մենք կարող ենք դռներ բացել նրանց առջեւ. հայերը շատ շփվող են, մարդասեր ու ցանկալի հյուր են ամեն տեղ:

***-Ի՞նչ կմաղթեք հայ երիտասարդներին:***

-Կցանկանայի, որ հայ երիտասարդները կրթված լինեն. դա նաեւ Անգլախոսների միության գլխավոր նպատակն է: Հայաստան այցի ընթացքում համոզվեցի, որ ձեր երկրում որակյալ կրթություն է ապահովվում: Կոչ եմ անում բոլորին օգտվել այդ հնարավորությունից եւ սովորել անգլերեն, քանի որ անգլերենն այսօր համաշխարհային լեզու է. այն օգնում է դռներ բացել, կամուրջներ կապել տարբեր մշակույթների եւ երկրների միջեւ: Կարծում եմ՝ շատ կարեւոր է պահպանել սեփական ինքնությունը: Իսկ մեր միությունը հնարավորություն է տալիս ամենքին պատմել իր երկրի մասին: Մեր դռները բաց են Հայաստանում Անգլախոսների միության ամեն նոր անդամի համար:

# ՄԱՍ X

## *Հարցազրույց Անգլախոսների միության հայաստանյան գրասենյակի նախագահ ՆՈՒՆԵ ԲԵՔԱՐՅԱՆԻ հետ*

***- Ե՞րբ է հիմնադրվել Անգլախոսների միության հայաստանյան մասնաճյուղը եւ ե՞րբ է սկսել ակտիվ գործունեությունը:***

- Հայաստանյան մասնաճյուղը հիմնադրվել է 1992թ., չի կարելի ասել, որ գործում էր լիարժեք մասնաճյուղ, գործում էր միայն Գործադիր Կոմիտե: Հայաստանյան մասնաճյուղի հիմնադիրը համարվում է տիկին Օդիթ Բազիլը, որը Մեծ Բրիտանիայում այն ժամանակվա ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանի հետ մեկտեղ հիմնադրեցին այդ մասնաճյուղը, այսինքն՝ տվեցին այդ գաղափարը: Տիկին Օդիթ Բազիլն այդ վաղ տարիներին այցելեց Հայաստան, հավաքեցին մի խումբ մարդիկ, ովքեր ցանկացան աշխատել. պետք է նշեմ, որ սա բարեգործական միություն է: Մեծ աշխատանք կատարվեց, քանի որ այդ տարիներին Հայաստանում նման գործունեություն ծավալելը բարդ էր:

***- Պայմանականորեն ո՞ր ժամանակաշրջանից կարելի է խոսել Միության ակտիվ գործունեության մասին:***

- Միությունը շատ ավելի ակտիվ սկսեց գործել 1995-96թթ., երբ գրանցվեցինք այստեղ որպես կազմակերպություն, եւ գործունեությունն առավել լայն տարածում գտավ, թեեւ մինչեւ այդ Գործադիր Կոմիտեն, որը գործում էր տիկին Կարինե Հակոբյանի ղեկավարությամբ եւ տիկին Սեդա Գասպարյանի մասնակցությամբ: Սակայն, երբ մենք անդամներ ունենալու իրավունք ստացանք, Միությունը սկսեց առավել ակտիվ գործել:

***- Հայաստանում ունենք ԲՈՒՀ-եր, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, որոնք ունեն օտար լեզուների մասնագիտացված ֆակուլտետներ, եւ թվում է՝ Միությանն աջակցող հիմնական բազան հենց դրանք պետք է լինեին: Ի՞նչ աջակցություն է ստացել կառույցը պետական կառույցների կամ ԲՈՒՀ-երի կողմից, կա՞ր համագործակցություն:***

- Այո՛, օժանդակություն կար ի սկզբանե, որը շարունակվում է նաեւ այսօր, որովհետեւ մեր հիմնական նպատակը մատաղ սերունդն է: Չեմ ուզում ասել, թե ձգտում ենք բոլորին անգլախոս դարձնել, նպատակներն ուրիշ են. խոսքը մեր երկիրը, մեր արժեքները, մեր երիտասարդներին անգլերենով ներկայացնելն է, քանի որ մենք պետք է հաշվի նստենք օրվա ռեալիաների հետ եւ տեսնենք, որ մենք ներկայանալու կարիք ունենք աշխարհին հասու լեզվով, ինքնությունը պահպանելով հանդերձ՝ աշխարհին պետք է ներկայանանք պատշաճ լեզվով: ԵՊՀ-ն առաջին

իսկ օրվանից մեծ աջակից է եղել, ինչը մեր ռեկտոր ակադեմիկոս Արամ Սիմոնյանի շնորհիվ էր, նա յուրաքանչյուր հարցում մեզ եղել է սատար, անգամ գրասենյակ տրամադրելու, ինչպես նաեւ ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի դեկանի ջանքերով, ով գիտակցում էր, որ մեր համատեղ գործունեությունը մեր ուսանողների, մեր երիտասարդության համար է: Աջակցություն ենք ստացել նաեւ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ տիկին Սեդա Գասպարյանից, ով մեր Միության հիմնադիրներից է, կառույցի պատվավոր փոխնախագահը: Ցանկանում են նշել նաեւ Սլավոնական համալսարանի օտար լեզուների ամբիոնը տիկին Արմինե Սիմոնյանի գլխավորությամբ, Ինտերլինգվո համալսարանը, Բրյուսովի՝ օտար լեզուների համալսարանը, այսինքն՝ միշտ աջակցություն ենք ունեցել ոչ միայն ԲՈՒՀ-երից, այլեւ դպրոցներից: Պետք է ասեմ, որ վերջին տարիներին համագործակցության դաշտը շատ ակտիվ չէ, բայց այն գործում է:

***- Ելնելով Անգլախոսների միության ընդհանրական գերակայություններից՝ կա՞ արդյոք դրանց տրոհում ըստ երկրների: Կարելի՞ է ասել, որ հայաստանյան մասնաճյուղի գերակայությունները տարբերվում են մյուս գրասենյակների գերակայություններից, թե՞ հետեւում եք ընդհանրական որոշումներին:***

- Միությունն ի սկզբանե այնքան ճիշտ է մտածված եղել, որ յուրաքանչյուր երկիր կարող է տեղավորվել այդ չափորոշիչներում եւ հավուր պատշաճի ներկայացնել իր երկիրը:

***- Խոսեցինք մեր պետական հաստատությունների՝ մասնավորապես ԲՈՒՀ-երի հետ համագործակցության մասին: Արդյոք համագործակցո՞ւմ եք բրիտանական կառույցների, օրինակ՝ Բրիտանական խորհրդի կամ մեր երկրում Մեծ Բրիտանիայի դեսպանատան հետ:***

- Մինչեւ Հայաստանում Բրիտանական խորհրդի գրասենյակի բացվելն ակտիվ համագործակցում էինք Միացյալ Թագավորության դեսպանատան հետ, որը կատարում էր նաեւ խորհրդի գործառույթները: Համագործակցել ենք նաեւ HSBC բանկի հետ, բայց, ցավոք, այժմ այդ հարցում որոշակի ընդմիջում ունենք: Բրիտանական խորհրդի բացումից հետո շատ սերտ է համագործակցությունը, պետք է նշեմ, որ ճարտասանության արվեստի մրցույթի հետ կապված բոլոր հոգսերն առ այսօր ստանձնում է Բրիտանական Խորհուրդը:

***- Վերջին շրջանում ձեր գործունեության հիմնական ուղղությունները որեւէ փոփոխություն կրե՞լ են, թե՞ ոչ:***

- Ո՛չ, մենք ունենք շարունակականություն մեր քաղաքականության մեջ, որովհետեւ փոփոխությունների առիթ էլ չունենք:

- ***Ի՞նչ հիմնական գործառույթներ է իրականացնում Անգլախոսների միության հայաստանյան մասնաճյուղը:***

- Ես ուզում եմ ճշգրտել, քանի որ կա թյուր կարծիք, թե մենք անգլերեն ենք սովորեցնում: Անգլերեն հաճույքով կսովորեցնեինք, եթե այդպիսի ծրագիր ունենայինք: Մենք աշխատում ենք մարդկանց հետ, ովքեր անգլերենին արդեն տիրապետում են, այսինքն՝ մեր ոլորտը հիմնակրթական է, բայց ոչ կրթական զուտ անգլերենի ուսուցման իմաստով: Օրինակ՝ մեզ մոտ կարելի է սովորել, թե ինչպես անգլերենով ճառ արտասանել կամ անգլերենով բանավեճ վարել: Առանց համեստության պետք է նշեմ, որ ճարտասանության դիսցիպլինը Հայաստան է ներմուծվել մեր շնորհիվ, որովհետեւ Լոնդոնում ամեն տարի կազմակերպվում է ճարտասանության միջազգային մրցույթ, որին մասնակցում ենք արդեն տասը տարի: Մեր մասնակցությունից առաջ Լոնդոնում նույնիսկ տեղյակ չէին, թե ովքեր են հայերը: Մինչեւ Լոնդոնում մրցույթին մասնակցելը իրականացվում է հայաստանյան փուլը, որին մասնակցում են Գյումրիից, Վանաձորից, Արարատից: Կանխավ տրվում են հայտարարություններ, երիտասարդները տեղյակ են եւ սպասում են մրցույթին: Մասնակիցները կենտրոնական գրասենյակի կողմից նախօրոք սահմանված թեմայի շուրջ ճառ են արտասանում անգլերենով: Առաջին երկու հաղթողները Բրիտանական Խորհրդի հովանավորությամբ մեկնում են Լոնդոն 10-օրյա այցով՝ մասնակցելու լոնդոնյան փուլին:

***- Միջազգային մրցույթում ունե՞նք հաջողություններ:***

- Ցավոք, դեռեւս առաջին կամ երկրորդ չենք գրավել, թեեւ մեր մասնակիցները ոչնչով չեն զիջում մյուսներին, ասում եմ ամենայն պատասխանատվությամբ, հինգերորդ, վեցերորդ տեղերը գրեթե ամեն տարի ունենում ենք, մեզ նման փոքր երկրի համար դա էլ վատ արդյունք չէ: Հունվարից արդեն հայտնի է դառնում թեման, ապրիլի սկզբին կազմակերպվում է նախընտրական փուլը, այնուհետեւ՝ վերջին փուլը, որը շատ պատասխանատու է ընթանում, որովհետեւ մրցավարները հիմնականում լեզվակիր անձինք են:

***- Բացի ճարտասանության մրցույցթից՝ ի՞նչ հիմնական այլ ծրագրեր կան, եւ ինչպիսի՞ք են նախատեսվում:***

- Կցանկանայի նշել մեր Բանավեճի ակումբի մասին, ցանկացողներին հրավիրում ենք մասնակցել դրան, որովհետեւ բանավեճի եւ ճարտասանության արվեստները շատ կարեւոր ենք համարում: Բրիտանական Խորհրդի հետ որոշակի ծրագրեր են նախատեսվում, որոնք կընդգրկեն նաեւ Արցախը, նախատեսվում են որոշակի մշակութային ծրագրեր, որոնք հստակեցման փուլում են: ԵՊՀ հետ համագործակցության ծրագրեր կան, որոնք մշակման փուլում են:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ 8

ԳԼՈՒԽ I
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

ԳԼՈՒԽ II
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 33
ՄԱՍ I Հին աշխարհից միջնադար 34
ՄԱՍ II Թյուդորների հարստությունը 49
ՄԱՍ III Ստյուարտների հարստությունը 59
ՄԱՍ IV Տասնութերորդ դար 66
ՄԱՍ V Տասնիններորդ դար 73
ՄԱՍ VI Քսաներորդ դարի սկիզբը 80
ՄԱՍ VII Քսաներորդ դարի ավարտը 87

ԳԼՈՒԽ III
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 91

ՄԱՍ I Քաղաքական համակարգը 92
ՄԱՍ II Ընտրական համակարգը 96
ՄԱՍ III Պահպանողական կուսակցություն 97
ՄԱՍ IV Լեյբորիստական կուսակցություն 100
ՄԱՍ V Լիբերալ-դեմոկրատների կուսակցություն 104
ՄԱՍ VI Հյուսիսային Իռլանդիայի քաղաքական կուսակցությունները և օրենսդիր իշխանության մարմինը 106
ՄԱՍ VII Շոտլանդիայի քաղաքական կուսակցությունները և օրենսդիր իշխանության մարմինը 109
ՄԱՍ VIII Ուելսի քաղաքական կուսակցությունները և օրենսդիր իշխանության մարմինը 111
ՄԱՍ IX Հարցազրույց Պահպանողական կուսակցությունից Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ Ժուսթին Գրինինգի հետ 113

**ԳԼՈՒԽ IV**

**ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ** 116

ՄԱՍ I Ռադիո - եւ հեռուստաընկերություններ 117

ՄԱՍ II Տպագիր մամուլ, գրքեր 119

ՄԱՍ III Հարցազրույց Բրիտանական «Channel 4» հեռուստաընկերության լրատվական ծրագրի խմբագիր Բեն Մոնրո-Դեւիսի հետ 120

ՄԱՍ IV Հարցազրույց «BBC World Service»-ի ռուսական բաժնի պրոդյուսեր Մարկ Գրիգորյանի հետ 124

**ԳԼՈՒԽ V**

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ** 127

ՄԱՍ I Կրթական համակարգը 128

ՄԱՍ II Կրթական միջազգային ծրագրեր 132

ՄԱՍ III Հարցազրույց Սասեքսի համալսարանի Եվրոպական ինստիտուտի համատնօրեն, Եվրոպական տնտեսական ինտեգրման պրոֆեսոր Ջիմ Ռոլլոյի հետ 134

ՄԱՍ IV Հարցազրույց Սասեքսի համալսարանի պրոֆեսոր Դեւիդ Դայքերի հետ 136

ՄԱՍ V Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» հոգաբարձու Լորդ ՄակՔլասքիի հետ 138

ՄԱՍ VI Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» տնօրեն Էմմա Մաքլեննանի հետ 142

ՄԱՍ VII Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» փոխտնօրեն Քեննեթ Մունրոյի հետ 144

ՄԱՍ VIII Գիտությունը 145

**ԳԼՈՒԽ VI**

**ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՍՊՈՐՏԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ** 148

ՄԱՍ I Մշակույթ 149

ՄԱՍ II Սպորտ 154

**ԳԼՈՒԽ VII**
**ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ** 160

ՄԱՍ I Հայ-բրիտանական հարաբերությունները 161
ՄԱՍ II Հայ-բրիտանական խորհրդարանական կապերը 162
ՄԱՍ III Հարցազրույց Հայաստանում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Էնթոնի Քանթորի հետ 164
ՄԱՍ IV Հարցազրույց Մեծ Բրիտանիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանի հետ 167
ՄԱՍ V Հարցազրույց Լոնդոնի հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրեն Ռուզան Թաթուլյանի հետ 171
ՄԱՍ VI Հարցազրույց դերասանուհի, Լոնդոնի հայկական կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի Ժենյա Ներսիսյանի հետ 174

**ԳԼՈՒԽ VIII**
**ՀԱՅ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՎԱՇԱՓՈՎ** 175

ՄԱՍ I Եվրոպական հարեւանության քաղաքականություն 176
ՄԱՍ II Հարցազրույց Պահպանողական կուսակցությունից Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ Ժուսթին Գրինինգի հետ 180
ՄԱՍ III Հարցազրույց Սասեքսի համալսարանի Եվրոպական ինստիտուտի համատնօրեն, Եվրոպական տնտեսական ինտեգրման պրոֆեսոր Ջիմ Ռոլլոյի հետ 182
ՄԱՍ IV Հարցազրույց Սասեքսի համալսարանի պրոֆեսոր Դեւիդ Դայքերի հետ 185
ՄԱՍ V Հարցազրույց «Ջոն Սմիթի հոգաբարձուների խորհրդի» փոխտնօրեն Քենեթ Մունրոյի հետ 188

**ԳԼՈՒԽ IX**
**ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ** 189

ՄԱՍ I Բրիտանական խորհուրդ («British Council») 190
ՄԱՍ II Հարցազրույց Բրիտանական խորհրդի Հարավարեւելյան Եվրոպայի տարածաշրջանային ծրագրերի համակարգող Քոյմ Մաքգիվերնի հետ 193

ՄԱՍ III Հարցազրույց Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակի տնօրեն Արևիկ Սարիբեկյանի հետ 197
ՄԱՍ IV «Կառուցել խաղաղություն՝ ուսումնասիրելով հակամարտությունը» 200
ՄԱՍ V Հարցազրույց «International Alert» ՀԿ գլխավոր քարտուղար Դեն Սմիթի հետ 202
ՄԱՍ VI Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման գերատեսչությունը Հայաստանում 206
ՄԱՍ VII Հարցազրույց Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման գերատեսչության հայաստանյան գրասենյակի ղեկավար Արտաշես Դարբինյանի հետ 216
ՄԱՍ VIII Անզլախոսների միություն 219
ՄԱՍ IX Հարցազրույց Անգլախոսների միության գլխավոր տնօրեն Վալերի Միտչելի հետ 220
ՄԱՍ X Հարցազրույց Անգլախոսների միության հայաստանյան գրասենյակի նախագահ Նունե Բեքարյանի հետ 223

| | |
|---|---|
| *Ծրագրի ղեկավար՝* | Կարեն Բեքարյան |
| *Հեղինակային խումբ՝* | Աննա Կարապետյան |
| | Աննա Մկրտչյան |
| | Նանե Ավագյան |
| *Թարգմանիչներ՝* | Իզաբելլա Բարխուդարյան |
| | Նունե Մելքոնյան |
| *Խորհրդատուներ՝* | Հայկուհի Կաթրջյան |
| | Մանվել Ղումաշյան |
| | Տիգրան Պետրոսյան |
| *Խմբագիր՝* | Աննա Մկրտչյան |
| *Սրբագրիչ՝* | Լևոն Խաչատրյան |
| *Համակարգչային ձևավորումը՝* | Նարա Մենդելյանի |
| *Կազմի ձևավորումը՝* | Նարա Մենդելյանի |
| *Տեխնիկական օժանդակություն՝* | Լիլիա Ամիրխանյան |

---

| | |
|---|---|
| *Project Manager* | Karen Bekaryan |
| *Authors group* | Anna Karapetyan |
| | Anna Mkrtchyan |
| | Nane Avagyan |
| *Translators* | Izabella Barkhudaryan |
| | Nune Melqonyan |
| *Consultations by* | Haykuhi Katrjyan |
| | Manvel Ghumashyan |
| | Tigran Petrosyan |
| *Editor* | Anna Mkrtchyan |
| *Proofreader* | Levon Khachatryan |
| *Layout* | Nara Mendalyan |
| *Design* | Nara Mendalyan |
| *Technical support* | Lilia Amirkhanyan |